

1529

Մ. Ներսիսյան

ՀԱՅԵՍՖԵՐՅԱՆ  
ՀԵՂԱՓՈԽՄԻԹՅՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ



ԴԱՅԿՈՒԽՎՐԱՅ. 1935

9(47-925)

70-63

05 OCT 2011

Հ. Կ. Կ. (թ) Կ.Կ.-ին Կիջ ԿՈՒՍՊԱՏ ԻՆՍՏԻՏՈՒՏ

3(Կ. 325)

Ա-63

22-27

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



25

20/10

1 JUL 2013  
100

13628

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴ՝ ՀԱՂԹԱԿԱՆ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ XV ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՐԹԻՎ

Տեխնիկական խմբագիր՝ Մ. Եղբիկ  
Շապիկի նկարը Տ. Խաչվանեյանի  
Արքագրիչ՝ Վ. Զինեցյան

Գլավվետ Ը-79. Հրատ. 323  
Պատվեր 1232 Տիրած 5000  
Պետհրատի տպարան

М. Нерсисян  
НОЯБРСКАЯ РЕВОЛЮЦИЯ В АРМЕНИИ  
Партиздат, Эривань, 1935



4960-91a

2546

Տանջված ու բազմաչարչար, անտանի ու դաշնակների գրասրտությամբ սպի, քայլայման և գաղը-ի մատնված Հայաստանը, բոլոր «բարեկամների» կողմից այդ խարված Հայաստանն, այժմ ձեռք ե բերել իր ազատությունը նրանով, վոր իրեն հայտարարել ե խորհրդային յերկիր:

Վոչ Անգլիայի՝ հայկական շահերի այդ «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, վոչ Վիլսոնի տիտրանչակ 14 կետերը, վոչ ել Ազգերի Լիգայի մեծադղորդ խոստումները՝ Հայաստանի կառավարման նրա «մանդատով» հանդերձ՝ չկարողացան (և չեյին կարող) Հայաստանը փրկել կոտորածից ու ֆիզիկական բնաջնջումից, միայն խորհրդային իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերականգնման հնարավորություն:

Հայաստանի և նրան շրջապատող մուսուլմանների միջև գոյություն ունեցող դարավոր քշնամանիքը լուծվեց մի հարվածով՝ Հայաստանի, Թյուրքիայի ու Ադրբեջանի աշխատավորների միջև յեղայրական համերաշխություն հաստատելու միջոցով:

Թող գիտենան բոլորը, ով պետք ե գիտենա, վոր այսպես կռչված հայկական «պրոբլեմը», վորի վրա ապարդյուն կերպով գլուխ եյին ջարդում իմաստիալիստական գիպլոմատիայի եին գայլերը, լուծելու կարողություն ունեցավ միայն խորհրդային իշխանությունը:

Կեցցե Խորհրդային Հայաստանը:

Ի. ՍՏԱԼԻՆ

ՅԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ

Նոյեմբերյան հեղափոխությանը նվիրված մեր ներկա գլոր-  
քույկը նպատակ չունի այդ հեղափոխության մանրամասն պատ-  
մությունը տալու: Նրա նպատակն է միայն ընդհանուր գծերով  
և հանրամատչելի ձևով պատկերել Հայաստանի բանվորական ու-  
աշխատավորական ժամաների վոչ հեռափոր անցյալի պատմու-  
թյունը, նրանց կյանքն ու 1920 թ. նոյեմբերի 29-ի հաղթական  
հեղափոխությունը ծնող նրանց պայքարը: Թե նա վորքանով է  
արդարացրել իրեն, այդ արդեն ընթերցողը կտեսնի, մենք մի-  
այն այստեղ ավելորդ չենք համարում հիշատակել այն հանդա-  
մանքը, վոր զրգույկը պատրաստվել և շատ կարճ ժամանակա-  
միջոցում և վորովես այդպիսին կունենա, անկասկած, վորոշ թե-  
րություններ:

## ՅԱՐԵՎԱՆԻ ԿՐԻ ՏԱԿ

Յարական Ռուսաստանը, վորին այժմ կարելի յէ Հիշել մի-  
այն սոսկումով ու անեծքով, չատ հաճախ անվանվում եր «Ժո-  
ղովուրդների բանտ»։ Յեվ այդ անվանարկումը ճիշտ եր։ Յա-  
րական Ռուսաստանը, իսկապես մի մեծ բանտ եր, ուր շղթայ-  
ված բազմաթիվ ժողովուրդներն իշխող ռուս ճորտատեր-ֆեո-  
դալների դասակարգի կողմից յենթարկվում եյլն վայրենի կե-  
ղեքման ու անորինակ շահագործման։ Յարական Ռուսաստանը,  
իսկապես, մի զարհուրելի բանտ եր, վորտեղ պատմությունը  
հյուսվում եր գրեթե միայն աշխատավորական բազմամիլիոն  
մասսաների հառաջանքներով, արցունքով և արյունաներկ պայ-  
քարով։

«Անցյալում, —գրում ե ընկ. Ստալինը, —Ռուսաստանը ցա-  
րերի և դահիճների Ռուսաստանն եր։ Ռուսաստանն ապ-  
րում եր նրանով, վոր կեղեքում եր նախկին ռուսական  
իմպերիայի կազմի մեջ մտած ժողովուրդներին։ Ռուսաս-  
տանի կառավարությունն ապրում եր իր կողմից հարստա-  
հարման յենթարկված ժողովուրդների, դրանց թվում և  
ռուսական ժողովրդի հյութերի ու ուժերի հաշվին։

Յեվ ահա այդ «ժողովուրդների բանտում», ցարերի և դա-  
հիճների այդ Ռուսաստանում բազմաթիվ յեղբայրակից ժողո-  
վուրդների հետ միասին յերկար ժամանակ Ակման ու կեղեքման  
ելին յենթարկվում նաև Հայաստանի աշխատավորական զանդ-  
վածները։

Յարական կառավարությունը Հայաստանը, ինչպես և վողջ  
Անդրկովկասը, հրով ու սրով նվաճեց 19-րդ դարի առաջին  
տասնամյակներում։ Յարական բանակներն արդեն 1801 թվին

գրավեցին Անդրկովկասի սիրտը՝ Թիֆլիսը։ Այնուհետև իբար հետեւց նվաճվում ելին Բագուն, Գանձակը (Կիրովաբաղը) և Անդրկովկասի մյուս կարևոր կենտրոնները։ Յերկարասե ու կատաղի կոփներից հետո, 1827թ. հոտեմբերի 1-ին, ցարական կառավարության գնդերը, գեներալ Պասկեվիչի հրամանաւարությամբ գրավում են նաև Յերևանը։ Այսպիսով՝ արդեն անցյալ դարի 20-ական թվականներին Հայաստանը, վորտեղ մինչ այդ իշխում և կեղեքում ելին իրանական (պարսկական) խաները, բնիկերն ու հայ մելիքները, ընկում եր ցարիվո՞ի յերկաթե կրօնիների տակ։

Գրավելով Անդրկովկասը, ոուս ճորտատեր – պոմեջիկների իշխանությունը հանդիսացող ցարական կառավարությունը, Հայաստանը, ինչպես և վողջ Անդրկովկասը, դարձնում ե իր սովորական գաղութներից մեկը։ Հենվելով տեղի կալվածատերեցի ու աղնվականության վրա, ցարիվո՞ն անմիջապես սկսում ե զաղության իր վայրենի կեղեքումներն ու թալանները, թալաններ, վորոնք շարունակվում են մինչև ցարիվո՞ի վերջին որերը, մինչև 1917թիվը։

Նայելով Անդրկովկասի վրա, վորպես իր զաղութներից մեկի վրա, ցարական կառավարությունն ամեն կերպ խանգարում եր Անդրկովկասի և Հայաստանի տնտեսական ու կուլտուրական զարգացմանը։ Յարական կառավարությունը գիտավորյալ կերպով Հայաստանում, ինչպես և վողջ Անդրկովկասում, չեր կաղմակերպում ու առաջ մզում արտադրությունը։ Եա չեր հինուում արդյունաբերություն՝ գործարաններ, Փարբիկաներ և այլն։ Այդ ուղղությամբ կատարվող ամեն մի քայլ հանդիպում եր ցարիվո՞ի կողմից խիստ արգելքների։ Հայաստանը, ինչպես և վողջ Անդրկովկասը ոուս կալվածատեր-պատեշչիկների ու բուժությունաբերություն՝ գործարաններ, Փարբիկաներ և այլն։ Այդ ուղղությամբ կատարվող ամեն մի քայլ հանդիպում եր ցարիվո՞ի կողմից խիստ արգելքների։ Հայաստանը, ինչպես և վողջ Անդրկովկասը ոուս կալվածատեր-պատեշչիկների ու բուժությունաբերություն՝ գործարաններ, Փարբիկաներ և այլն։ Այդ Հայաստանի գերը միայն հումույթ մատակարարող մի հետամնաց յերկիր։ Ոուս բուժությունական Հայաստանում շկաղմակերպելով և վոչ մի արդյունաբերական կարևոր ձեռնարկ, մեծ ազահությամբ, սակայն, քամում եր նրա վերջին հյութը, տանում եր հումույթ, ինչպես որինակ՝ բամբակ և այլն մթերքներ։ Բայց Հայաստանի գերը միայն դրանով չեր սահմանափակում։ Հայաստանը, վորը վեր եր ածվել ոուսական իմպերիայի մի նահանգի, բացի հումույթ մատակարաբերուց, դարձել եր նաև ոուս բուժությունական արդյունաբերական ապ-

բանքները սպառող շուկա։ Անդրկովկասը տեսք ե սպառեր և իսկապես սպառում եր Ռուսաստան-Մետրոպոլիայի արդյունաբերական ապրանքները։

Յարական կառավարությունն ամեն միջոց ձեռք եր առնում շայաստանի աշխատավորությունը խավարի և անկուլտուրականության մեջ պահելու համար։ Յարկոմի վայրենի բյուրոկրատիան արգելում ու դաժան կերպով հետապնդում եր ամեն մի կուլտուրական գործ։ Նա վակել եր տալիս դպրոցները (1881, 1896, 1903 և այլ թվականներին), կուլտուր-կրթական ընկերությունները, թերթերը, ժուռանակները և այլն։ Բանտարկվում ե աքսոր ելին ուղարկվում կուլտուրական գործի շատ ակտիվ գործիքներ։ Փակելով հայկական գլորոցները, և նրանց փոխադուրծիքներ։ Փակելով հայկական գլորոցները, յարական չերեն բացելով հատ ու կենտ ոուսական գլորոցներ, յարական չենովնիկոմի, ոուսականացման վայրենի քաղաքականություն եր վարում։ Հայաստանացման վայրենի քաղաքականություն եր վարում։ Հայաստանում, ցարական միապետության տիրապետության որով, թևատարած իշխում եր անդրագիտությունը և հետամնացությունը։ Բավական ե հիշել այն հանդամանքը, վոր 1907թին հենց կառավարական ավյալների համաձայն՝ ամբողջ Յերևանի համաձայն գանգոսների մեջ մտնում ելին եջմիածնահանդում (իսկ Յերևանի նահանգի մեջ մտնում ելին եջմիածնի, նորնի, Սուրբալուի, Շարուր-Դարալագյաղի, Նախիջևանի, Նոր-Բայբայգետի, Ալեքսանդրոպոլի և Յերևանի գավառները) պետական, մասնավոր ու յեկեղեցական բոլոր տիպի գլորոցների ընդհանուր թիվը հաշվում եր միայն 250։ Բավական ե հիշել այն, վոր 1897թ. ցարական կառավարության կողմից կատարված վիճակարական տվյալների համաձայն, նախկին Յերևանի գավառի աղդաբարնակչության (չհաշված քաղաքները) 94,2 տոկոսն անդամանքության մեջ աղդաբարնակչության 97,1 տոկոսն եր անգրագիտում աղդաբարնակչության 95,3 տոկոսը։ Հետաքրքիր ե հիշել նաև այն հանդամանքը, վոր ցարական կառավարության ավյալների համաձայնը, միայն 1913թ. ամբողջ Ալեքսանդրապոլի գավառում կար միայն յերկու բժիշկ և յերկու Փելդչեր, Յերևանի գավառում յերկու բժիշկ և յերկու Փելդչեր, եջմիածնի գավառում յերկու բժիշկ և յերկու Փելդչեր, Նոր-Բայազետի գավառում կար միայն մեկ բժիշկ և մեկ Փելդչեր։ Կուլտուրությունը և

ոողապահությունը, ինչպես տեսնում ենք, դոյլություն չունեն ցարիզմի ռազմա-Ֆեոդալական իմպերիալիտի լծի տակ հեծեծող Հայաստանի աշխատավորական մասսաների համար: Լայն մասսաները խարիստում եյին տղիտության ու խավարի մեջ: Յելարդ գրությունն անընդհատ շարունակվում եր մինչ 1917 թ., մինչ Հայաստանի խորհրդայնացումը: Այդ պատճառով ել Հայաստանը մինչև 1917 թիվը, մինչև խորհրդայնացումը ներկայացնում եր տնտեսապես ու կուլտուրապես անսահման հետաքաջաց մի յերկիր:

Յարիզմի տիրապետության շրջանում դժոխային ձնչումների, զատան շահագործման ու կեղեցման եյին յենթարկվում Հայաստանի աշխատավորական զանդվածները: Հավատարիմ իր պոմանչիկական եյությանը, ցարական կառավարությունն ամեն կերպ պաշտպանում, հովանավորում եր տեղի կալվածատերերի, բուրժուազիայի և ընդհանրապես ունեսոր խավերի շահերը: Խըլ-վում եր գյուղացիության վերջին հողակտորները: Գյուղացին դառնում եր բոլորովին ընչազուրկ և հողագործի: Հսկայական կալվածքներ եյին ստանում ուսւ և տեղի ազնվականները: Յարական կառավարությունն ուժեղացնում, ամրացնում եր ճորտաւիրական հարաբերությունները: Հայաստանում, ինչպես և վող Անդրկովկասում ճորտաւիրական հարաբերությունների մնացորդները ցարիզմը պահպանում եր մինչև իր անկումը:

Այսպես, որինակ, Եջմիածնի վանքը, վորը գեռես անհիշելի ժամանակներից հանդիսանում եր Հայաստանում ամենախոշոր կալվածատերը, մինչև հեղափոխությունն ուներ գյուղեր, վորոնք վանքին շարունակ տալիս եյին բաղմաթիվ հարկեր և կատարում եյին նրա համար զանազան պարապալորությունները: Յարական վոստիկանի ու ժանդարմի սվինների ուժով Հայաստանի կալվածատերերը մինչև վերջն ել դաժան ձնշման ու անորինակ կեղեցման եյին յենթարկում Հայաստանի աշխատավորական-գյուղացիական մասսաներին: Գյուղացու վղին, սակայն, նստած եր վոչ միայն կալվածատերը, այլև գյուղի կուլակը, վաշխառուն, առևտրականը և այլն, վորոնք տղրուկի պես ծծում եյին աշխատավոր գյուղացու վերջին հյութը, վերջին կաթիլ արյունը: Յարական կառավարությունն ել իր հերթին զանազան հարկերի անվան տակ իլուսմ եր գյուղացու վերջին կոպեկը: Աշխատավոր գյուղացին խեղդվում եր կալվածատերերի, գյու-

ղական կուլակների, վաշխառուների, առևտրականների և ցարական չինովնիկների ու վոստիկանների այդ միացյալ վոհմակի ձեռքում: Ծայր աստիճան աղքատ և քայլքայլած եր գյուղացու տնտեսությունը: Պարբերաբար կրկնվում եր ահռելի չափեր ստացող սովոր, վորը շարունակ մահվան եր դատապարտում բարձահաղար մասսաների:

Փոքրաթիվ այն բանվորությունը, վորը՝ կար Հայաստանում ցարիզմի տիրապետության ըրջանում, գտնվում եր նմանորինակ ստրկական ու դժոխային պայմանների մեջ: Բանվորն ամրող-ջապես հանձնված եր գործարանատիրոջ և խաղալինի քմահաճույքին: Նա աշխատում եր անընդհատ որական 14—18 ժամ ամենածանր պայմաններում, կեղտի, խոնավություն մեջ և ստանում շատ չնչին աշխատավարձ: Ապահովագրության, բանվորի իրավունքի պաշտպանության մտուն, իհարկե, վոչ մի խոսք չեր կարող լինել: Բանվորությունն ամրողջովին հանձնված եր բուրժուազիային և ցարական վոստիկանության կամայականություններին ու բոնություններին: Ծեծ, հայհոյանք, բանտարկություն, տուգանք և այն ահա ամենորյա սպասելիքները, վոր ուներ բանվորը գործարանատիրոջից և ցարական կառավարության վոստիկանությունից, նրա սարսափ տարածող ժանդարմերիայից:

Հայաստանի աշխատավորական մասսաների կացությունը, սակայն, գյոխային և զառնում, հատկապես 1914 թ. բոնկվող իմպերիալիստական պատերազմի տարիներին: Չորս տարուց ավելի տեսող այդ պատերազմը, վոր մղում եյին իմպերիալիստական պետությունները գաղութային թալանների ու հափշտակությունների համար, մի չտեսնված չարիք հանդիսացավ ինչպես բոլոր յերկիրների, նույնպես և մասնավորապես Հայաստանի աշխատավորական զանգվածների համար, չնորհիվ այն ավանտյուրիստական քաղաքականությանը, վոր վարում եր դաշնակցությունը հոգուտ իմպերիալիստական խմբակների, հոգուտ հայրության հաղարավոր հայ աշխատավորության բնախնջումն այդ պատերազմի ընթացքում՝ հանդիսանում ե դաշնակցության վարած քաղաքականության որինաչափ արդյունքը: Եր ահռելիությամբ պատմությանը մինչև այդ անհայտ իմպերիալիստական պատերազմը բերում եր չտեսնված ավերումներ, մասսայական կոտորածներ ու ջարդեր, տնտեսության

իսպառ քայլայում, ոով և մահ։ Յեկ տասնյակ տարիների ընթացքում ցարական ոազմա-Փետրալական իմպերիալիզմի ծանրու յերկաթյա գարշապարի տակ հեծեծող Հայաստանի աշխատավորական դանդանածոցի թշվառությունը կատարյալ եր դառնում համաշխարհային սպանդանոցի այդ դաժան տարիներում։

## ՓԵՏՐՎԱՐՅՈՒՆ ՀԵՂԱՓՈԽՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

1917 թ. փետրվարին, սակայն, վերջապես, չըջվում և «արյունով ու կեղտով լցված Ռոմանովների միավետության սայլը»։ Ընկնում ե ցարական միապետությունը։ Ընդամենը մի քանի որվա ընթացքում Փետրվարյան հեղափոխության հորձանքի հարվածներից թալալզոր ե լինում դարերով կանդուն մնացած ուռւս ճորտատեր-Փետրալների գիլտատուրան հանդիսացող վայրենի ցարիզմը։ Սակայն Նիկոլայ Արյունաբրույին հաջորդեցին թաղապարական գահի նախկին խորհրդականներ վսեմափայլ Եշիանները՝ Լվովները, Գուչկովները և Միլյուկովները։ Իշխանությունն անցավ ուռւս իմպերիալիստական բուրժուազիայի կոսակցությունների, ակայաբրիստների ու կաղետների, ձեռքը։ Ռուսական նախկին կայսրության մեջ մտած այն բոլոր ժողովուրդները, վորոնք մինչև այդ հեծեծում Ելին դաժան ցարիզմի կրունկների տակ, այժմ ընկնում են ուռւս իմպերիալիստական բուրժուազիայի ծանր լծի տակ։

Այսպիսով, Փետրվարյան հեղափոխությունից հետո, Ռուսաստանի բանվոր դասակարգի և աշխատավորական մասսաների գրության մեջ եյական փոփոխություններ տեղի չունեցան։ Այսպես կոչված Ժամանակավոր կառավարությունը չլուծեց և չեր ել կարող լուծել բազմամիլիոն բանվորական ու աշխատավորական մասսաներին հուզող հարցող և վոչ մի հիմնական տնտեսական կամքաղաքական հարց։

«Ակտյաբրիստների ու կաղետների, Գուչկովների ու Միլյուկովների կառավարությունը, գրում եր Լենինը դեռևս այդ կառավարության կազմակերպման առաջին խոհ որերին, 1917 թ. մարտ ամսին, —չի կարող տալ ։ Վո՞չ էլ քայլապուրյուն, վո՞չ հաց և վո՞չ ել ազատություն։

Իւղաղություն չի կարող տալ, վորովհետեւ նա պատերազմի կառավարություն ե, իմպերիալիստական սպանդանոցը չարունակելու կառավարություն ե, զավթումների կառավարություն ե...

Հաց չի կարող տալ, վորովհետեւ այդ կառավարությունը բուրժուական ե...

Ազատություն չի կարող տալ, վորովհետեւ այդ կալվածատիրական — կազիտալիստական կառավարություն ե, ժողովրդից վախեցող կառավարություն ե» (Լենին, Հատոր 20, եջ 19)։

Բուս իմպերիալիստական բուրժուազիան, սակայն, մասսաներին խաբելու և իր յերերվող տիրապետությունն ամրացնելու նպատակով իր, այսպես կոչված՝ Ժամանակավոր կառավարության մեջ հրավիրեց «սոցիալիստ» պնակալեզներին։ Ժամանակավոր կառավարության գլուխը վորոշ ժամանակ դարձավ «սոցիալիստ» կերենսկին։ Սակայն այդ «սոցիալիստները» ևս, վորհապարակ եյին բերվել ուռւս բուրժուազիայի կողմից որպավորածող հեղափոխական շարժումների առաջն առնելու համար չեցին կարող, իհարկե, եյական փոփոխություններ մտցնել բանվորական և աշխատավորական մասսաների կացության մեջ։ Նրանք ուռւս իմպերիալիստական բուրժուազիայի խրավիլակներն ու հնազանդ կամակատարներն եյին, վոր իրենց ձեռքերով կատարում եյին ուռւս հակահեղափոխական իմպերիալիստական բուրժուազիայի գործը։ Պարզ ե, վոր այդ «սոցիալիստներից» կազմված Ժամանակավոր կառավարությունն ել պրոյետարական և աշխատավորական մասսաներին չեր կարող տալ և իսկապես չովեց վորեւե նոր բան։ Այդ Ժամանակավոր կառավարությունը, սակայն, վոչինչ չովեց հատկապես Անդրկովկասի և ընդհանրապես այսպես կոչված «Ժայրամասերի» ցարիզմի նախկին դղութների աշխատավոր մասսաներին։

«Փետրվարյան հեղափոխությունը, —գրում եր ընկեր Ստալինն Անդրկովկասի մասին, —եյական փոփոխություններ չմտցրեց յերկրի (Անդրկովկասի—Մ. Կ.) աշխատավոր դաստկարգերի գրության մեջ։ Զինվորները, գյուղի այդ ավելի քան հեղափոխական տարրերը, գեռ ուղմանակա-

տումն եյին։ Իսկ բանվորները, վորոնք իրեն դասակարգ յերկրի տնտեսական հետամնացության շնորհիվ թույլ եյին ընդհանրապես, դեռ չեյլն ամրացել իրեն կազմակերպված միավոր և արքեցված վիճակումն եյին դանշում ձեռք բերած քաղաքական ազատությունների հետևանքով, ըստ յերկութիւն չմտածելով առաջ գնալու մասին։ Ամբողջ իշխանությունը մնում եր ունեոր դասակարգերի ձեռքին։ Վերջներս ամուր կառչել եյին իշխանությունից ու սպասում, ուրախությամբ եսերամենշերիան ստրատեգներին թույլ տալով թմբեցնել բանվորներին ու դյուղացիներին ուռւսական հեղափոխության բուրժուական բնույթից սոցիալիստական հեղաշրջման անիրագործելի լինելու և այլնի վերաբերյալ խմասուն ձառերով» (Ստալին, «Անդրկովկասի հականեղափոխականները սոցիալիզմի դիմակի տակ», «Պրավդա», 1918 թ., №№ 55—56)։

Այսպիսով, տասնյակ տարիներից ի վեր ցարական ռազմա-Փեռական իմպերիալիզմի ծանր գարշապարի տակ հեծեծող Անդալական դամպերիալիզմի ծանր գարշապարի տակ հեծեծող Անդրկովկասի բանվորա-դյուղացիական զանդվածները ցարիզմի դըրակումից հետո ևս շարունակում եյին մնալ շահագործող տապալումից հետո ևս շարունակում եյին մնալ շահագործող դասակարգերի տիրապետության ծանր լծի տակ։ Փետրվարյան հեղափոխությունից հետո ևս Անդրկովկասում շարունակվում եյին դասակարգային այն հարաբերությունները, ինչ վոր ցարիզմի տիրապետության ըրջանում։ Այսպես, որինակ, փաստ և, վոր դեռևս 1918 թ. Անդրկովկասում շարունակվում եյին ճորտատիրական-կալվածատիրական հարաբերությունները։

«Թիֆլիսի, Յելիզավետոպոլի և Բագվի նահանգները, — գրում եր ընկ. Ստալինը 1918 թ. մարտ ամսին, — չափազանց հարուստ են ճորտատեր թուրք բեկերով ու վրացի ֆեոդալ իշխաններով, վորոնք հսկայական լատիֆունդիան ունեն իրենց տիրապետության տակ, վորոնք իրենց տրամադրության տակ հատուկ զինված բանդաներ ունեն, վորոնք իրենց ձեռքի մեջ են պահում թուրք, հայ և վրացի դյուղացիների բախտը» (Ստալին, նույն տեղը)։

Սակայն այդ ճորտատիրական-կալվածատիրական հարաբերությունները շարունակվում եյին ինչպես Անդրկովկասի այդ ժամանակում, նույնպես և Հայաստանում։ Այսպես, որինակ, Փեմասերում,

ուրբավարյան հեղափոխությունից հետո խոշոր կալվածատիրությունը գեռ շարունակում եր իր գոյությունը լուսում, Դարաւագյազում, Եջմիածնում և ուրիշ տեղերում։ Գյուղացիական աղբարային ամեն մի շարժում ժամանակավոր կառավարությունը ամենախիստ կերպով ճնշում եր։ Գյուղացիության տնտեսական կյանքը մնում եր նույն վատթար ու ծանր դրության մեջ։ Չեր փոխում նաև բանվորության դրությունը։ Անդրկովկասի բուրժուազիան շարունակում եր քամել բանվորության վերջին հյութը։

Ուստի իմպերիալիստական բուրժուազիայի իշխանությունը հանդիսացող Լիվու-Կերենսկու տիրահռչակ կառավարությունն այսպիսով սրբադրում եր Անդրկովկասի բուրժուազիայի և կալվածատերերի սեփականատիրական «սրբազն» իրավունքներն ու բոլորովին անվտանգ եր դարձնում նրանց շահերը։ Լիվու-Կերենսկու ժամանակավոր կառավարությունը, սակայն, վոչ միայն ամեն կերպ ապահովում եր Անդրկովկասի բուրժուազիայի և կալվածատերերի իշխանությունը տեղի աշխատավորական մասսաների վրա, այլև ինչպես ուռւս, նույնպես և Անդրկովկասի այդ ունեոր դասակարգերի շահերի համար շարունակում եր մեղել իմպերիալիստական պատերազմը, վորից ավելի ու ավելի քայլայիլում ու կործանման եյին հասնում աշխատավորական հօծ մասսաները։

Անդրկովկասի ունեոր դասակարգերը, այսպիսով, գժդուհելու տոփիներ չունեյին։ Նրանք, ընդհանրապես, իրենց շահերի հարազատ թարգման վրաց մենշևիկների, դաշնակների ու մուսավաթիստների միջոցով ձեռք եյին մենառում ուռւս իմպերիալիստական բուրժուազիայի կառավարությանը, փարվում եյին նրա վիճին, և կապում իրենց բախտն այդ կառավարության հետ։ Լիվու-Կերենսկու կառավարությունը հարազատ եր նրանց համար։ Անդրկովկասային հականեղափոխությունը, ի դեմս վրաց մենշևիկյան, դաշնակցական ու մուսավաթական կուսակցությունների, խունկ ու մոմ եր ծխում հականեղափոխական ժամանակավոր կառավարության համար և յերբեք հարց չեր բարձրացնում Անդրկովկասը Ռուսաստանից կտրելու, այն «անկախ» հայարարելու մասին։ Անդրկովկասի ալիրող բուրժուազիալիստիրական դասակարգի կառավարության համար և յերբեք հարց չեր բարձրացնում Անդրկովկասը Ռուսաստանից կտրելու, այն «անկախ» դասակարգի կառավարության դեմոկրատիան» (վրաց մենշևիզմը,



դաշնակներն ու մուսավաթիստները) ռուսական «գեմոկրատիայի» հետ ելին, շարժվում ելին ռուսական «կենտրոնական կառավարության» (ժամանակավոր կառավարության) սանկցիաներով և թողնում ելին իրենց սանձերը վերջինիս ձեռքբերում։ Անդրկովկասի այդ հակածեղափոխական կուսակցություններն անդամ «պայքարում ելին Ֆինլանդիային և Ռուսականային անկախություն տալու դեմ հանուն միասնական, անբաժանելի բուրժուական Ռուսաստանի» (Լ. Բերիա, «Անդր. բոլշ. կազմակերպության պատմության հարցի շուրջը», Հայկուսհրատ, 1935 թ., էջ 197)։

Անդրկովկասյան հակածեղափոխությունը լավ հասկանում եր, վոր սպառնացող պրոլետարական հեղափոխության դեմ կռվելու և իր տիրապետող գիրքն Անդրկովկասում սպահպանելու համար անհրաժեշտ ե կոթնել ուսւ հակածեղափոխության վրա։ Յեկ նա այդ բանը մտածված կերպով անում եր ի փառս Անդրկովկասի ունեոր դասակարգերի։

Այսպիսով, Փետրվարյան հեղափոխությունը, ինչպես վող Ռուսաստանում, նույնպես և Անդրկովկասում ու Հայաստանում, բանվոր դասակարգի աշխատավորական խավերի դրության մեջ հյական փոփոխություններ չմացրեց։ Անդրկովկասի և Հայաստանի ունեոր դասակարգերը ժամանակավոր կառավարության հովանավորությամբ Փետրվարյան հեղափոխությունից հետո ևս շարունակում ելին դեռևս իրենց ճիրաններում պահել Անդրկովկասի աշխատավորական մասսաներին։

## ՀՈԿԵՏՐԵՐԸ ՅԵՎ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄՌԱՋԻՆԴՐ

Շուտով, սակայն, պայթում ե Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։ Բարիկադային կատաղի կոխներում տապալվում ե ուսւ բուրժուազիայի որապակաս կառավարությունը և նրա խղճուկ փլատակների վրա կանգնում ե պրոլետարիատի հզոր դիկտատուրան։ Ռուսաստանում ոկտում ե ծածանվել Խորհուրդների իշխանության կարմիր դրոշը։ Սոցիա-

լիստական հեղափոխության սրբնթաց ալիքները տարածվում են նաև զեպի հարավ, գեպի Անդրկովկաս։ Հոկտեմբերյան հեղափոխության մեծ կոչին արձագանքում են նաև Անդրկովկասում։ Անդրկովկասի ունեոր դասակարգերը և նրանց հարազատ կուսակցությունները սարսափի յեն մատնվում։

«Հոկտեմբերյան հեղափոխությունը խստորեն վոխեց դրությունը», — գրում եր ընկ. Ստալինն Անդրկովկասի մայն 1918 թ.։

«Նա մի հարվածով շրջեց բոլոր հարաբերությունները, դնելով իշխանությունն աշխատավոր դասակարգերի ձեռքն անցնելու հարցը։ «Վողջ իշխանությունը բանվորներին ու դյուզացիներին» կոչը վորոտի նման տարածվեց յերկրում։ Վոտքի հանելով հարստահարված մասսաներին։ Յերբ Ռուսաստանի հյուսիսում արձակված այդ կոչը կյանքի վերածվեց այնուհետ, Անդրկովկասի ունեոր դասակարգերն ակնհայտնի տեսան, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունն ու Խորհրդային իշխանությունն անխօսավելի մահ են բերում։ Իրենց համար։ Դրա համար ել Խորհրդային իշխանության դեմ պայքարելու հարցը, կյանքի ու մահու հարց դարձավ նրանց համար» (Ստալին, «Անդրկովկասի հակածեղափոխականները սոցիալիզմի դիմակի տակ», «Պրավդա», 1918 թ., №№ 55—56)։

Հոկտեմբերյան հեղափոխությունը, սակայն, ամեն ինչ խառնեց նաև Հայաստանում։

«Նա վորպես մի աղատարար վարոս, ինչպես ամենուրեք, այնպես ել մեղ մոտ լուսավորեց ճնշված ու հարստահարված մասսաների դասակարգային գիտակցությունը և նրանց ցույց ավեց աղատարման ճանապարհը» (Ա. Խանջյան, «Մայիսյան ապստամբությունից դեպի նոյեմբերյան Հաղթանակը», Կուսհրատ, 1935 թ., էջ 7)։

Յեկ ահա Հոկտեմբերյան հեղափոխությունից սարսափի մատնված Անդրկովկասի և Հայաստանի այդ հակածեղափոխությունն իր գոյությունը փրկելու համար շտապում եր պայքարի յենել սոցիալիստական մեծ հեղափոխության, Խորհրդային Ռուսաստանի դեմ։ Անդրկովկասի հեղափոխական-սոցիալիստա-

կան շարժումները ճնշելու և Հոկտեմբերյան հեղափոխության ծավալվող ալիքների դեմ կռվելու համար շուտով կազմակերպվում ե Անդրկովկասյան հակածեղափոխության մի ընդհանուր ֆրոնտ : Անդրկովկասյան վանդեան (հակածեղափոխությունը) անմիջապես կազմակերպում ե այսպես կոչված Անդրկովկասյան կոմիսարիատը և ապա Անդրկովկասյան սեյմը՝ Անդրկովկասի ունիոր դասակարգերի կառավարական այլ որպանները :

«Սնդրկովկասի բոլոր գլխավոր ազգությունների ունելվոր խավերի կոտըցիայի համար,—դրում եր ընկ. Ստամինը,—ստեղծվում ե Անդրկովկասյան կոմիսարիատ... Յերկիրը «վողջ ազգաբնակչությունը»՝ Խորհրդային իշխանության դեմ մզկող պայքարում «համախմբելու» համար կազմվում ե այսպես կոչված «Անդրկովկասյան սեյմ» (Ստալին, նույն տեղը) :

Անդրկովկասյան հակածեղափոխության այս նորաստեղծ կառավարական որդանները՝ Անդրկովկասյան կոմիսարիատը և Անդրբրկովկասյան սեյմը, չհապաղեցին Խորհրդային Ռուսաստանի և Անդրբրկովկասի ներքին հեղափոխական շարժումների դեմ պատրաստվող իրենց պայքարում։ Նրանք անմիջապես գործի յեն գիտում։ Իրենց այդ պայքարը հաջող վարելու և հուսալի ձեռքերում դնելու համար Անդրկովկասյան հակածեղափոխությունը (վրացական մենչեմիկները, դաշնակցականները և մուսավաթիստները) ձեռք եցին մեկնում գերման-թրքական իմպերիալիզմին և դաշն եյին կնքում նրա հետ՝ Խորհրդային Ռուսաստանի դեմ կովելու և անդրկովկասյան հեղափոխական շարժումները ճընչելու նպատակով։ Նույն այդ գերման-թրքական խմաներիալիզմի հովանափորությամբ ու ոժանդակությամբ անդրկովկասյան հակածեղափոխությունն Անդրկովկասը կտրում-անջապում է հեղափոխական Ռուսաստանից և այն «անկախ» և հոչակում։

Հոչակելով Անդրկովկասն «անկախ» հանրապետություն, Անդրկովկասյան սեյմն իրեն հայտարարում եր այդ «անկախ» յերկրի տերն ու տնօրինը, չնայած նրան, վոր այդ ժամանակ Անդրկովկասի փաստական տերերը՝ գերմանական իմպերիալիզմի ոկուպանտ գեներալներն եյին։ Այսպիսով գերմանական հենց այդ ոկուպանտ գեներալների հովանավորությամբ իշխանությունը Անդրկովկասում անցնում է Անդրկովկասյան սեյմի մեջ ծաղկելունը կազմաձագային հակառակության հու-

սակցությունների՝ վրացական մենչևիների, դաշնակցականների  
ու մուսավաթիստների ձեռքը։ Անդրկովկասյան հակածեղափո-  
խությունը կարծես թե հաղթանակում եր՝ թվում եր, թե Ան-  
դըրկովկասի հակածեղափոխական այդ կուսակցությունները  
վերջապես հասնում են իրենց նպատակին և արդեն կարող են  
հաշտ ու համերաշխ իշխել Անդըրկովկասի վրա։ Թվում եր,  
թե հակածեղափոխական կուսակցությունները մի ընդհանուր լեզու  
յեն դառել և այնուհետեւ կշարունակեն իշխել միասին Անդըրկով-  
կասում։ Սակայն այդ թվում եր միայն առաջին հայցքից։  
Իրականում այդ կուսակցությունների մեջ չեր կարող լինել և  
չեղավ իսկապես քիչ թե շատ տեսական համաձայնություն։ Այդ  
կուսակցությունները, ընդհակառակն, ունենին շահերի խմբ  
հակասություններ և չերին կարող վաղ թե ուշ միմյանց չըդկտել։

Յեթև Անդրկովկասի Հակահեղափոխական այդ յերեք կուսակցություններին՝ վրաց մենչեւիներին, դաշնակցականներին ու մուսավաթիստներին մի ընդհանուր ճակատով միացնում եր նրանց պայքարը Խորհրդային Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորական և գյուղացիական հեղափոխական շարժումների ղեմ, ապա այդ չի նշանակում, իհարկե, վոր Անդրկովկասի Հակահեղափոխական կուսակցությունների միջև չկային ներքին տարածայնություններ, շահերի խիստ սուր հակասություններ։ Հակահեղափոխական այդ կուսակցություններից ամեն մեկը, բացի ընդհանուրից, ուներ իր առանձին, ուրույն ծրագիրը, նրանցից ամեն մեկը հրապարակ եր կոչված պաշտպանելու Անդրկովկասի բուրժուազիայի և կալվածատեր դասակարգի ազգային տարրեր համաձների շահերը և, վորպես այդպիսիք, հասկանալի յե, վոր նրանք չեյին կարող յերկար ժամանակ միա- սին իշխել ու մի ընդհանուր լեզու դանել։

Յեթէ դաշնակցական կուսակցությունն աշխատում եր հայ բուրժուազիայի տնտեսական ու քաղաքական ծրագրերի իրականացման համար, ապա մուսավաթական կուսակցությունն ել աշխատում եր թուրք բուրժուազիայի և կալվածատեր դասակարգի տնտեսական ու քաղաքական ծրագրերն իրագործելու համար։ Արաց մենչեւկներն ել իրենց հերթին ձգտում եյին իրագործել վրաց բուրժուազիայի և ունեոր խավերի նպատակները, նրանց տնտեսական ու քաղաքական ծրագրերը։ Իսկ Անդրկովկասի բուրժուազակալվածատեր դասակարգերի այդ յերեք ազգային

տարբեր հատվածները գաղուց արդեն պատրաստվում նշին սրեր ճոճել իրար դեմ նրա համար, թե ո՞վ պետք է տնտեսապես ու քաղաքականապես իշխի Անդրկովկասում, թե ո՞ւմ պետք է պատկանեն Անդրկովկասի շուկաները, հանքային հարստությունները, կավածքները և այլն: Հենց այդ հակասությունների հիման վրա ել ողարդ ե, վոր Անդրկովկասյան սեյմի մեջ մտած յերեք պը-խալոր հակածեղափոխական կուսակցությունները՝ վրացական մենչեւիկները, դաշնակները, մուսավաթիստները չեյին կարող յերկար ժամանակ միասին իշխել, չեյին կարող յերկար ժամա-նակ միասին աիրապետել Անդրկովկասի վրա: Յեվ իրոք: Շատ չանցած այն որից, յերբ անդրկովկասյան հակածեղափոխու-թյունն ստեղծեց «Անդրկովկասյան սեյմը» և Անդրկովկասը կըտ-րեց, անջատեց Բուսասատանից, շատ շուտով, յերեւան յեկան այդ կուսակցությունների ներքին տարածայնություններն ու տարրեր շահերը: Անդրկովկասյան սեյմի հիմնման առաջին որերից իսկ սկսած արդեն ամեն մեկը ձորում եր իր կողմը և խոռոք չեր կարող լինել, իհարկե, միատեղ աշխատանքի մասին: Այսպես, որինակ, Անդրկովկասը Բուսասատանից անջատելու ակտից (ապ-րիլի 9-ից) յերկու որ հետո միայն Անդրկովկասյան սեյմի կա-ռավարության կարինետից դաշնակցական մինիստրները հրա-ժարական տվեցին, պատճառաբանելով իրենց այդ քայլը նրա-նով, վոր վրացական մենշևիկները, ի գեմս սեյմի կարինետի արտաքին դորձերի մինիստր Զիսենկելու, այնպիսի քաղաքակա-նություն են վարում, վորը վոչ միայն նկատի չի ունենում դաշ-խակցության շահերը, այլև ընդհակառակ ամեն իերալ վիճակ ու բրում այդ շահերին: Մենքնեկիների ու մուսավաթիստների մեջ ևս ներքին տարածայնություններն այն պատճանի եյին հաս-նում, վոր նրանք սեյմի նիստերում դիմակները մի կողմ դրած ոնցնհատ կովում ու իրար հացեյի սպառնալիքներ եյին կար-յում:

Տարածայնություններն Անդրկովկասյան սերմում, սակայն, քոնի գնում, այնքան սրվում էին: Վերջապես իրար բավական բղկացելուց հետո, 1918 թ. մայիսի 26-ին, կարճատև գոյությունից հետո, ցրվում է Անդրկովկասյան սեյմը և նույն դերմանտաճկական խմբերիալիզմի հովանավորությամբ սեյմի տեղ հանդես են դալիս Անդրկովկասում յերեք առանձին «անկախ պետություններ»: Սեյմի ցրման հենց նույն որը, մայիսի 26-ին,

վրաց մենչեթիկները շտապով Վրաստանը «անկախ հանրապետություն» են հռչակում և իրենց հայտարարում այդ «հանրապետության» տերն ու տնօրինը: Յերկու որ հետո մուսավաթիստները՝ Աղքարեջանի թուրքք բուրքուազիայի և կալվածատերերի այդ կուսակցությունը ևս, Աղքարեջանը հռչակում ե «անկախ հանրապետություն»:

Հետ չելին մնում, իհարկե, նաև դաշնակցականները: Երանք ևս մայիսի 28-ին (1918 թ.) վորոշում են Հայաստանն «անկախ» հայուսարարել և իրենց դիկտատուրան հաստատել այնտեղ: Այդ նպատակով, ժամանակավորապես, մինչև կառավարության կաղմանը դաշնակցությունը Հայաստանի «դիկտատոր» տեր ու տնօրին եր հայուսարարում թիֆլիսում գործող Հայ Ազգային խորհրդին՝ (այսինքն՝ նույն իրեն դաշնակցականների խորհրդողին): Վերջապես հունիսին թիֆլիսում կաղմանը և դաշնակցական կառավարությունը, վորը և Ազգային խորհրդի հետ միասին հուլիսի 17-ին գերմանական և տաճկական սպանների ուղեկցությամբ ու հովանավորությամբ ժամանում ե Յերևան և իշխանությունը Հայաստանում վերցնում իր ձեռքը: Ողոսոսով 1-ին Յերևանում բացվում ե դաշնակցական կառավարության «Հայաստանի խորհրդարանը», այլ կերպ ասած դաշնակցականների «պառլամենտը»: Նորածնունդ դաշնակցական կառավարությունն սկսում է գործել: Ակավում ե դաշնակցական Հայաստանի կյանքն իր բոլոր «յերանելիքներով»:

ԵՄՊԵՐԻԱԿԱԶՄԸ ՅԵՎ ԴՈՏՆԱՑՈՒՆ ՀԱՅՈՒԹՅԵ

Դաշնակցական պետականության ծնունդը, վոր տեղի ունեցած 1918 թ. մայիսին, ինչպես ասացինք, կատարվեց զերմահական իմպերիալիզմի և սուլթանական Տաճկաստանի հովանավորությամբ ու սժանդակությամբ: Այդ «պետականությունը», սակայն, այնուհետև ևս իր խղճուկ գոյությունը քաշ տվեց զերմանա-տաճկական իմպերիալիզմին հաջորդող անդլո-Փրանսական իմպերիալիզմի սվինների ուժով: Յեթէ Հայ բուրժուազիայի իշխանությունն իրականացնող դաշնակցական կառավարությունը, չնայած որեց-որ աճող բանվորա-պյուղացիական հեղափո-

խական շարժումներին, այնուամենայնիվ կարողանում եր գի-  
մադրել և իր գոյությունը քաշ տալ մինչև 1920 թ. նոյեմբեր  
ամիսը, ապա այդ միայն չնորհիվ միջազգային իմպերիալիզմի:  
Այսպիսով, դաշնակցական կառավարությունը և՛ իր ծնունդով,  
և՛ իր մոտ յերկու և կես տարվա կյանքով մեծ չափով պարտա-  
կան եր սկզբում գերման-տաճկական, հետագայում անդո-  
ֆրանս-ամերիկյան իմպերիալիզմին:

Սակայն ի՞նչ շահ, քաղաքական ի՞նչ նպատակ եր հետա-  
պրնդում միջազգային իմպերիալիզմը, յերբ նա հովանավորում  
եր դաշնակցությանը, յերբ նա դաշնակցություն կուսակցության  
հետ միասին հիմնում եր դաշնակցական Հայաստանն ու ամեն  
կերպ հովանավորում նրան:

Ամենահիմնական նպատակը, վոր հետապնդում եր միջաշ-  
դային իմպերիալիզմը, այդ՝ պայքարն եր Խորհրդային Ռուսաս-  
տանի, սոցիալիստական հեղափոխության դեմ:

Միջազգային իմպերիալիզմը, վոր Հոկտեմբերյան հեղափո-  
խության առաջին իսկ որերից սկսել եր իր բնտերվենցիոնիս-  
տական գործողություններն ընդում նորաստեղծ Խորհրդային  
Ռուսաստանի, ցանկանում եր ինչպես Հայաստանը, նույնպես և  
ամրող Անդրկովկասը դարձնել Խորհրդային Ռուսաստանի դեմ  
կռվող հակահեղափոխական ուժերի մի պլացըլարմ: Հովանավո-  
րելով դաշնակցական Հայաստանին, միջազգային իմպերիալիզմը  
նպատակ ուներ այն դարձնել հակահեղափոխական ուժերի բա-  
զաներից մեկը սոցիալիստական հեղափոխության դեմ կռվելու  
համար: Յեկ իմպերիալիստական պետությունները չեյին սխալ-  
վում: Դաշնակցական Հայաստանը, ինչպես և մենչեմիկյան  
վրաստանն ու մուսավաթիստական Աղբբեջանը, իր ամբողջ գո-  
յության ընթացքում, իսկապես դարձավ հակախորհրդային Փոքր-  
պոստ, հակախորհրդային մի բազա, ուր միախառնվում եյին  
իմպերիալիզմի, մոնարխիստ սպիտակ-գվարդիական գեներալներ  
Դենիկինի, Վրանդելի և տեղի հակահեղափոխական ուժերը Խոր-  
հրդային Ռուսաստանի և ընդհանրապես սոցիալիստական հե-  
ղափոխության դեմ միահամուռ կերպով կռվելու համար:

Իմպերիալիստական պետությունները, հօվանավորելով դաշ-  
նակցական, ինչպես նաև վրաց մենչևիկիների ու մուսավաթիստ-  
ների կառավարությունները, վոչ միայն Խորհրդային Ռուսաս-  
տանի դեմ հաջող կռվելու և դեպի Արևելք ծավալվող սոցիալիս-

տական հեղափոխության ալիքների դեմ պատճեններ կանգնեցնե-  
լու իրենց ծրագրերն եյին իրականացնում, այլև միաժամանակ  
Հայաստանում, ինչպես և վողջ Անդրկովկասում գաղութային  
թալանների ու շահազգործման նոր որյեկտներ, հատկապես Բագ-  
վի հարուստ նավթահանքերը, իրենց ձեռքը գցելու նպատակ-  
ներն եյին հետազնդում: Յեկ այստեղ ևս իմպերիալիստական  
պետություններն իրենց հաշիվների մեջ չեյին սխալվում: Դաշ-  
նակցական Հայաստանը, իսկապես իր ամբողջ գոյության ըն-  
թացքում դառնում եր իմպերիալիզմի գաղութային թալանների  
ուրիշականներից մեկը, իսկ դաշնակցական կառավարությունը, վոր  
հայ բուրժուազիայի «պետականությունն» եր մարմնավորում,  
Անդրկովկասի վրա իրենց թաթերը դրած իմպերիալիստական  
պետությունների ձեռքերում մի խրավիլակ ե դառնում և նրա  
«անկախությունն» ել թղենու մի տերև՝ այդ նույն իմպերիա-  
լիստական պետությունների իսկական նպատակները ծածկելու  
համար:

Դաշնակցական Հայաստանը, վաստորեն իմպերիալիստական  
պետությունների սովորական գաղութներից մեկն եր, ուր իմ-  
պերիալիստ գիշատիչները բացարձակ թալաններ եյին անում և  
իրենց այնուես պահում, ինչպես ՍՓրիկայի և Ավստրալիայի  
իրենց գաղութներում: Այդ գաղութային թալանները կատար-  
վում եյին այնքան բացարձակ կերպով, վոր անդամ իրենք,  
դաշնակ շեֆերը, չեյին կարող չտեսնել: Ահա միքանի փաստեր:

1919 թ. դաշնակցության բանակի հրամանատար գեներալ  
Նազարենկովը դաշնակցական կառավարության մինիստրի հա-  
շեյով դրված զեկուցման մեջ գրում եր հետևյալը.

«Գեներալ-մայոր Սիլիկովի տված տեղեկությունների  
համաձայն, քրիտանական զինվորական իշխանությունները  
Ղարսից մեծ պարտիաներով գուրս են տանում փամփուշտ-  
ներ և արկեր (ռումբեր), ինչպես նաև բամբակ, ավտո-  
մոբիլային գույք և այլն, բացի դրանցից տարված են 6  
թնդանոթներ» (Պետ. արխիվ, Փոնդ 66, գործ № 1.9 (11):

Ինչպես տեսնում ենք դաշնակ գեներալը հենց ինքն և խոսո-  
վանում, վոր անդիմական իմպերիալիզմը Հայաստանում վարում  
եր գաղութային կողոպուտների ու թալանների իր սովորական  
պահաքականությունը: Յեկ իր այդ կողոպուտներն ու թալան-

ներն անգլիական իմպերիալիզմն անում եր, իհարկե, վոչ միայն շարսում, այլև դաշնակցական Հայաստանի բոլոր մասերում ու անկյուններում: Սակայն այդ բավական չեր: Վորպեսդի Հայաստանում իր դաղութային թալաններն ավելի հաջող կատարի, անգլիական իմպերիալիզմն ստեղծում եր իր սեփական աղմինխառացիան, վորի ձեռքում և գտնվում եր յերկրի փաստական իշխանությունը: Նույն թվին դաշնակցության կողմէց Ղարսի նահանդապետ նշանակված դեներալ Կորդանովը ներքին դործոց մինխառացությանը գրում եր այն մասին, վոր անդլիացիաները նահանդի իշխանությունն ակնհայտորեն կենարոնացնում են իրենց (Անգլիայի կողմից ստեղծված) աղմինխառացիայի ձեռքբերում և վոր բոլորովին հաշվի չեն առնում դաշնական կառավարության աղմինխառացիային:

«Թեներալ Բիչը, — գրում եր Կորդանովը, — Հայտարարեց, վոր Ղարսի նահանդի նահանդապետ և նշանակվել Տեմպերլեյը և առաջարկեց նրան դիմել բոլոր դեսպերում: Ինձ զարմացրեց այն, վոր նորին գերազանցությունը (տեսեք, թե ինչ սորբական լեզվով և խոսում դաշնական դեներալն անգլիական դեներալի մասին, Մ. Ն.) և վոչ մի խոսքով չէիչեց Հայկական աղմինխառացիայի մասին» (Պետ. արխիվ, Փոնդ № 66, գործ № 1.9 (11):

Ուստի իշխանությունը դաշնակցական Հայաստանում դանվում եր փաստորեն Հայաստանի ու վողջ Անդրկովկասի վրա իրենց դիշատիչ թաթերը դրած իմպերիալիստական պետությունների ոկուլանտ դեներալների ու սպաների ձեռքբերում: Դաշնակցության կուսակցական և դաշնակցական կառավարական որդանները շարունակում եյին մասսաների աչքին «անկախության» թողփէլ, սակայն, իրականության մեջ, դաշնակցական պետական բոլոր որդաններն ամբողջովին շարժվում եյին իմպերիալիստական պետությունների ոկուլանտ դեներալների ու ովֆերների կամքով ու թելադրությամբ: Յել այդ թելադրությունը լինում եր բոլոր դործերում, ընդհանուր և արտաքին քաղաքականության հարցերից սկսած մինչև ներքին ամենավորը հարցերը: Այսպէս, 1919 թ. մարտին, անգլիական անդրկովկասյան վորաճամատարության ներկայացուցիչ լեյտենանտ-գնդապետը մի հատուկ դրությամբ՝ ուղղված դաշնակցական կառավարության

արտաքին գործոց մինխառացին, ուղղակի պահանջում, հրամայում եր, վորպեսդի դաշնակցական կառավարությունն անհապաղ լիկվիդացիայի յենթարկի Ալեքսանդրովոլում գործող բոլշևիկան կոմիտեն, իսկ նրա զեկավարներին խիստ պատժի յենթարկի: Ահա այդ չափազանց բնորոշ գրությունը.

«Նորին վսեմության հայկական համբավետության Արտաքին գործերի նախարարին.

Զերդ վսեմություն.

Անդրկովկասի բրիտանական գորքերի հրամանատար գեներալը տեղեկացնում է վստահելի աղբյուրներից, վոր մի բոլշևիկյան կոմիտե և հաստատվել Ալեքսանդրովոլում և վորոշ ժամանակից ի վեր ակտիվ պրոպագանդ և տանում բանվորական դասակարգերի, բանակի և յերկաթուղային ծառայողների մեջ: Այս հարցն արգեն հանձնված ե Ալեքսանդրովոլի հայկական վոստիկանության ուշադրությանը, վորն իր հերթին տեղեկացրել և հայկական կառավարությանը՝ ինտրի առարկա յեղող կոմիտեյի դրյության մասին: Մինչև հիմտ այնուամենայնիվ կառավարության կողմից վոչ մի քայլ չի արվել: Հրամանատար գեներալը ուրախ պետք ե լինի, յեթե ձերդ վսեմափայլությունը հիմտ ամմիշական քայլեր անի՛ ճնշելու վերև հիշված բոլշևիկյան կոմիտեյին;

Թելադրում ե նաև, վոր այս կոմիտեյի դեկանարները պատշաճ կերպով պատժվեն» (Պետ. արխիվ, Փոնդ 55, գործ № 12 (2):

Անդրկովկան ոկուլանտ դեներալներն ու ովֆերները, ինչ պես ահսնում ենք, համարձակ ու կարուկ կերպով թելադրում, կարլագլում եյին դաշնակցական կառավարությանը՝ անհել արկամ այն իրենց հարկավոր յեղած դրժը: Աւրիշ բան ել չեր կարելի սպասել, իհարկե: Դաշնակցական Հայաստանի տերն ու տնօրինները չե՞ վոր այդ իմպերիալիստական պետություններն եյին:

Յեթե, սակայն, 1919 թ. դաշնակցական Հայաստանում իշխողը գերազանցաւ անգլիական իմպերիալիզմն եր, ապա 1919 թվականի վերջերից արգեն դաշնակցական Հայաստանի տերն ու տնօրինը դառնում եր ամերիկյան իմպերիալիզմը:

Յերբ Անգլիան հեռացավ Անդրկովկասից ու եվակուացիայի յինթարկեց իր ուժերը, ապա վորպես դաշնակցական Հայաստանի մանդատյոր «Հովանավորող» հանդես յեկավ ամերիկական իմակերիալիզմը:

Շուտով ամերիկյան ապա Հասկելը նշանակվում է Հայաստանի դիրագույն կոմիսար և ուղարկվում է Յերևան՝ դաշնակցական Հայաստանը «Հովանավորելու»: Դաշնակցական Հայաստանի նոր տերը՝ ամերիկյան իմակերիալիզմը, ավելի բացահայտ կերպով և իր գաղութային քաղաքականությունը վարում, չվիճելով այդ բանում անդիմական իմակերիալիզմին: Սկսվում է Հայաստանում գաղութային թալանների մի նոր, ավելի բացահայտ ու դաժան ետապ: Ամերիկյան իմակերիալիզմը դաշնակցական Հայաստանին նայում է ճիշտ այնպես, ինչպես վոր իր մյուս գաղութային յերկիրներին: Ահա մի քանի որինակներ այդ մասին:

1919 թ. դեկտեմբեր ամսին Քաջազնունուն ուղղված իր մի նամակում Ալ. Խատիսյանը գրում է հետեւյալը.

«... Ամերիկացիք սկսել են վերջին ժամանակներս իրենց իրավունքը համարել միջամտել մեր ներքին գործերին այնպիսի չափերով, վոր ուղղակի խանգարում են մեր աղմինիստրացիայի անկախ գործունեյությանը: Նրանք կազմում են իրենց հատուկ միջիցիան, ձգտում են իրենց ձեռքն առնել պարենավորման բոլոր գործը և այլն, և այլն, հակառակ կառավարության ու ժողովրդի ցանկության» (տե՛ս «Խորհ. Հայաստան» № 279, 1924 թ.):

Դաշնակ շեֆի այս խոստովանությունը, սակայն, ամբողջ՝ իրականությունը չի արտահայտում: Իրականության մեջ իսկապես հենց առաջին իսկ որերից դաշնակցական Հայաստանի ամբողջ աղմինիստրացիան ու պետական ապարատը գտնվում եր ամերիկացիների ձեռքին: Ամերիկյան իմակերիալիզմը Հայաստանում ուներ իր սեփական բանտերը, վորտեղ նա անարդել կերպով բանտարկում եր Հայաստանի բոլոր «անբարեհույս» և «կասկածելի» քաղաքացիներին: Այսպես, որինակ, 1920 թ. ապրիլին, դաշնակցական մի կոմիտե դաշնակցական կառավարության արտաքին գործոց մինիստրությանն ուղղած իր մի գրության մեջ ի միջի այլոց գրում եր հետեւյալը.

«... Յերևանի մեկ ամերիկյան կոմիտեն իր առանձին

բանտն ունի, ուր չնչին պատճառներու համար՝ շարաթներով կրանտարկվեն մեր ընկերներն ու պետության քաղաքացիները»:

Ունենալով իր ձեռքում դաշնակցական Հայաստանի աղմինիստրացիան ու վորոտկանությունը, ամերիկյան խմբերիալիզմը բոլորովին անարգել կերպով սկսում է իր գաղութային թարանները: Տնտեսապես քայլքայլած, կատառարոֆիկ վիճակի հայրանում է սած Հայաստանից ամերիկյան իմակերիալիզմը կարողանում է այնուամենայնիվ դուրս տանել զգալի քանակությամբ հարստություններ: Այսպես, որինակ, ամերիկյան իմակերիալիզմը կարողացավ Հայաստանից տանել վոչ քիչ քանակությամբ անտառնութեր: Սակայն դեռ այդ բավական չեր: Ամերիկյան կոմիտեներն անգամ չելքն քաշում թալանել, առանց այն ել թալանված, ծայր աստիճան աղջատացած Հայաստանի գյուղացիությանը: Ահա մի որինակ այդ մասին: Դաշնակցական կառավարության ներքին գործոց մինիստրությունն ի պատճառական գանգան բողոքների, 1920 թ. մարտի 31-ի թվակիր գրությամբ նոր-Բայազետի գալառային կոմիսարին տեղեկացնում եր հետեւյալը.

«Սույն մարտի 17-ին Նոր-Բայազետի բնակիչ Բալագյողյանը և Զարությունյանները հեռագրում են, վոր իրենցից Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչներն Որոշըլու գյուղում բռնի կերպով իսկել են 17 դուրս տալվար, այդ առթիվ մեր սույն մարտի 17-ի 1158 գրությամբ խնդրել ելինք Հասկելի ներկայացուցիչ գնդապետ Տելֆորդին, վորպեսովի վերջինս կարգադրի, վոր արդարիս կամայականություններ չլատարվեն Ամերիկյան կոմիտեի անունից» (Պետ. արխիվ, Արտաքին գործոց մինիստրություն, գործ № 1827):

Իհարկե, դաշնակ մինիստրների «խնդրեմները» և դիմումները չելին կարող վոչ մի հետեւանք ունենալ: Ամերիկյան իմակերիալիզմի ներկայացուցիչները շատ հանդիսատ կերպով շարունակում ելին գաղութային թալանները, թափ տալով իրենց մատները «խնդրեմներով» հանդես յեկող դաշնակ մինիստրների վրա: Ամերիկյան իմակերիալիզմի ներկայացուցիչները, սակայն, դրանով չելին բավականանում նրանք շատ հեռուներն ելին դրանով չելին բավականանում: Կատարելով իրենց գործությային թալանները, նրանք դնում:

միաժամանակ զվարճանալու համար ծաղրում եյին կարիքի և սովորական ճիրաններում գալարվող Հայաստանի աշխատավորությանը, մի բան, վոր արդեն հասնում եր անպատկառ ցինիկության ամենաբորձը աստիճանին։ Ամերիկյան իմպերիալիզմի ներկայացուցիչները՝ «վսեմաշուք» պարուները և տիկինները, անպատկառ կերպով ծաղրում եյին հենց իրենց իմպերիալիստական քաղաքականության դոհ դարձած Հայաստանի աշխատավորությանը։ Ահա մի որինակ։ Դաշնակցության կենտրոնական որդան «Հառաջ»-ն ստիպված եր տեղակորել իր եջերում շատ փափկորեն գրված հետեւյալ ինֆորմացիան։

«Դիլիջանում ամերիկյան ներկայացուցիչ կալիստան՝ Դենի-Ֆեյլը դադթականության չորեր բաժանելիս սկսեց հավաքված ամբոխին չպրաել չորի կտորներ։ Ամբոխը հարձակվեց չպրաված չորի վրա։ Շատ յերեխաներ և կիներ վունատակ յեղան։ Կապիտանը չպրառում եր չորերը և անվերջ ծիծառում։ Ամերիկութիները լուսանկարում եյին այդ վայրենի տեսարանը։ Հասարակությունը վրդովված և այս վարժունքի առթիվ» (տես «Հառաջ», 1920 թ., № 20)։

Յեվ այսպես. ամերիկյան իմպերիալիզմը, լինելով դաշնական Հայաստանի խոկական տերն ու անորեններից մեկը, անարդել կերպով վարում եր իր գաղութային թալանները և խայտառակ կերպով ծաղրում մասսաներին։ Իսկ դաշնակցական կառավարությունը, վոր հանդիսանում եր միջաղղային իմպերիալիզմի հլու ազնուուրան, լիզում եր Հայաստանը դադութային թալանների որյեկտ դարձրած իմպերիալիստական այդ պետությունների ներկայացուցիչների վոտքերը և ամեն կերպ աշխատում եր ամբացնել նրանց խայտառակ ու գաֆան լուծը Հայաստանի բանվորա-դյուուղացիական զանգվածների վզին։ Զավիադանց բնորոշ և, վոր դաշնակցական կառավարությունը վոչ միայն փորձ չեր անում թեկուզ դիմադրելու Հայաստանը բացահայտորեն թալանող իմպերիալիստական դիշատիչների վայրենի դործողություններին, այլև ընդհակառակին ամենակտրուկ կերպով արդելում եր վորեւ «քննադատություն» այդ պետությունների ու նրանց ներկայացուցիչների հացեյին։ Այսպես, որինակ, դաշնակցական կառավարության նախադահ չ. Ոհանջանը 1920 թ. հոկտեմբերի 21-ին մի դադտնի հրահանգ և ուղ-

ղում ներքին գործոց մինիստրությանը, վորտեղ ասվում եր հետեւյալը.

«Մամուլի զանագան որդաններում պակաս չեն հաճախ այնպիսի հոդվածներ կամ լուրեր, վորոնք ուղղված են դաշնակցների դեմ, ինչ-լոր վատ կերպով կանորադառնա մեր պետական շահերի վրա։ Վորտեսդի միանդամ ընդմիջության վերջ տրվի անցանկալի այդ յերեւյթին, անհրաժեշտ ենք գտնում, վոր ներքին գործոց նախարարությունը ժողովի հրավիրե մամուլի և այլ նմանութինակ պրոպագանդային հրատարակչության ներկայացուցիչներին և տա անհրաժեշտ հրահանգ, վորպեսզի զգուշանան դաշնակցների և ի մասնավորի Անդվիո դեմ ուղղված գրություններ հրատարակելուց» (Պետ. արխիվ, Մինիստրների խորհուրդ, գործ № 116)։

Դաշնակցական կառավարությունը, այսպիսով, ամենայն ջշտությամբ կատարում եր իր՝ վորպես միջաղղային իմպերիալիզմի մի ստոր ազենտի խայտառակ գերը։ Դաշնակցական կուսակցությունը գիտակցարար Հայաստանը դարձնում եր միջաղղային գիշատիչ իմպերիալիզմի թալանների որյեկտը, դաղութը։ Նա ամեն կերպ աշխատում եր Հայաստանի մասսաների վզին դրված իմպերիալիզմի գաղութային ծանր լուծն ամուր և հաստատուն պահել։

Դաշնակցական կուսակցության այսորինակ տակտիկան, իհարկե, վո՞չ թյուրիմացության և վո՞չ ել պատահականության արդյունք եր։ Դաշնակցությունը շատ լավ հասկանում եր, վոր իր «ողետականության» գոյությունը հնարավոր կլինի միայն իմպերիալիստական այդ պետությունների «հովանու» տակ։ Նա լավ գիտեր, վոր հայ բուրժուազիայի և կուլակության դեմ ծավալվող հեղափոխական շարժումները կարող ե ճնշել և այդ բուրժուազիայի տիրապետությունը, չնայած և խղճուկ ձևով, կարող ե շարունակել ու պահպանել միայն իմպերիալիստական պետությունների ստոր ազենտը դառնալով։ Յեվ հաշվի առնելով այս հանդամանքը, դաշնակցությունը, հայ բուրժուազիայի այդ մարտական կուսակցությունը, գիտակցարար դառնում եր միջաղղային իմպերիալիզմի ազենտուրան և աշխատում եր ամեն կերպ Հայաստանը վորեւ մի իմպերիալիստական պետու-

Թյան գաղութը դարձնելու իր ծրագիրն իրականացնել։ Վոր իրոք այդ այդպես եր, վոր իրոք դաշնակցությունը գիտակցաւար հայաստանը դարձնում եր իմպերիալիզմի գաղութը, այդ մասին կարելի յե բերել մի քանի փաստեր։ Ահա նրանցից մի քանիսը.

1919 թ. փետրվարի 4-ին դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստր Ս. Տիգրանյանը դաշնակցական կառավարության մինիստրների նախագահին ուղղված իր մի գեկուցման մեջ նորից պնդում եր այն բանի վրա, վոր անհրաժեշտ և չուսափույթ կերպով Հայաստանը վերջնականորեն կցել մի վորեե հղու, ուժեղ իմպերիալիստական պետության, դարձնել այն վորեե մեկի գաղութը, վորովհետեւ, նրա կարծիքով, այդ ճանապարհով միայն կարող եր գոյություն ունենալ դաշնակցության պետականությունը։ Իր այդ գրության մեջ Ս. Տիգրանյանն ի միջի այլոց գրում եր հետեւյալը.

«... Վորեե հղու պետության զորեղ հովանավորության անհրաժեշտությունը Հայաստանի ապահով վոյության և բարգավաճման համար մեր հանրությունից ճանաչված էիմունքներից մեկն ե։ Կարծում եմ, վոր ժամանակն այդ պրոաեկտուբայի խնդիրը հատուկ քննության առնել։ Մենք մեր դատը պիտի մի զորավոր փաստաբանի աջակցության տակ դնենք։ Անհրաժեշտ ե, վոր հենց սկզբից ճարվի և ասպարեզ բերվի այդ պրոաեկտոր փառաբանը։»

Ինչպես տեսնում ենք Հայաստանը մի վորեե զորեղ իմպերիալիստական պետության գաղութը դարձնելու ծրագիրն այսուեղ, չնայած իր խորամանկ դիպլոմատիկական լեզվի, գրված և բավական պարզ։ Հայաստանն իմպերիալիստական պետությունների գաղութը դարձնելու հարցը, սակայն, վոմանք դնում եյին բոլորովին բացահայտ։ Այսպես, որինակ, դաշնակցական կուռակացության հայտնի չեֆերից մեկը՝ Նիկոլ Աղքալյանը, վորն այն ժամանակ դաշնակցական կառավարության այսպես կոչված հանրային կրթության մինիստրն եր, 1920 թ. հունվարի 31-ին, Ալեքսանդրովում (այժմյան Լենինական) դաշնակցության համալսարանի բացման առթիվ արտասանած իր ճառում ասում եր հետեւյալը.

«Արևմուտքի հետ մենք կապվելու յենք վոչ միայն տընտեսապես, այլև քաղաքական ու գիտական խմաստով... Մենք պետք ե արտադրենք հում նյութ և թող Յելբոպան մշակե այդ։ Եել քանի շուկա կլինենք հում նյութի, միշտ կլինենք քաղաքակիրթ պետությունների հետ և այդ արդեն իսկ պատիվ ե մեզ։ Յեթե մենք կարողանանք այդ մեծ քաղաքակիրթության մեր փոքրիկ մուրճը խփել՝ այդ իսկ պատիվ ե մեզ» (տես «Հայաց», 1920 թ., № 26)։

Իսկապես կոմենտարիաներն ավելորդ են։ Դաշնակ չեֆը պարզորեն արտահայտում եր Հայաստանը գաղութ դարձնելու դաշնակցության ծրագիրը։

Այդ կուսակցությունը խոնարհաբար իր վեցն եր ծոռում իմպերիալիստական պետությունների լծի տակ և գիտակցարար աշխատում եր Հայաստանը դարձնել նրանց գաղութը, վորովհետեւ նա լավ գիտակցում եր իր դերը, պարզ գիտակցում եր, վոր այլ կերպ նա չեր կարող թեկուզ և կարճատե ժամանակով առաջովել հայ բուրժուազիայի իշխանությունը, բայց յեթե պայքար կազմակերպելով Խորհրդային Հայաստանի համար գլուխ բարձրացնող Հայաստանի բանվորության ու աշխատավորության կուռակցության դեմ, նրանց մարտական, կոմունիստական կուռակցության դեմ։ Յեկ, իսկապես, դաշնակցական Հայաստանն իր ամբողջ գոյության ընթացքում փաստորեն դառնում եր իմպերիալիստական պետությունների սովորական գաղութներից մեկը։

## ԱՆԳԵՐՁ ՊԱՏԵՐԱՋՄԱՆ ՈՒ ԶԱՐԴԵՐ

Դաշնակցական Հայաստանն իր ամբողջ գոյության ընթացքում, սակայն, զառնում եր նաև անվերջ պատերազմների ու ջարդերի մի զարհուրելի թատերաբեմ։

Իր յերկու և կես տարվա գոյության ամբողջ ընթացքում դաշնակցական կառավարությունն անընդհատ պատերազմական գործողությունների մեջ եր դտնվում և շարունակ կոփներ եր մղում հարևան յերկիրների հետ։

«Դաշնակցական բախտախնդիրներն իմպերիալիստների խարդախ հաշվինքներին և հայ բուրժուազիայի շահագործողական տեսչերին հազուրդ տալու թելագրանքով, «Մրացյալ Աղասի և Անկախ Հայաստանի» ցավով եյին բռնվել և ամբողջ յերկրը պատերազմական ճամբարի եյին վերածել» (Ա. Խանջյան, «Մայիսյան ապատամբությունից դեպի Նոյեմբերյան հաղթանակը», էջ 14—14):

Իր «պետականությունը» Հայաստանում հիմնելու առաջին իսկ որերից սկսած դաշնակցությունը հայ բուրժուազիայի կապիտալիստների ներդրման ու կուտակման նպատակով տենտորեն աշխատում եր նոր տերիտորիաներ, նոր շուկաներ ձեռք բերել, յերկրը լայնացնել, թալանի ու շահագործման պիտանի նոր յերկրամասեր գտնել: Հավատարիմ իր դասակարգային եյությանը, դաշնակցությունն սկսում եր տենչալ «միացյալ» և «ծովից-ծով Հայաստանի» մասին, Տաճկաստանի վեց վիլայեթների, Սիջերկրական ծովի ափին ընկած հարուստ Կիլիկիայի, Բաթումի յերկաթուղարծի և բազմաթիվ այլ տերիտորիաների մասին: Դաշնակցությունը ձգտում եր մի այնպիսի «Միացյալ Հայաստանի», վորը միացներ Սև ծովը Կասպից ծովի հետ և այս յերկուսն ել Սիջերկրական ծովի հետ: Դաշնակցությունը ձգտում եր ունենալ մի հսկայական ընդարձակ տերիտորիա և այն դնել հայ բուրժուազիայի ու իմպերիալիստական պետությունների կապիտալների տրամադրության տակ: «Միացյալ Հայաստանի» բազմախոսառում հեռանկարները, գրավիչ հարըստությունները քուն և հանդիսատ չեյին տալիս հայկան բուրժուազիայի կուսակցությանը՝ դաշնակցությանը, վորը և փըրփուրը բերանին սկսում եր աշխատել այլ ուղղությամբ:

Սակայն հասկանալի յե, վոր եր այդ նվաճողական ծրադրերը դաշնակցությունը ձգտում եր իրագործել Հայաստանի սահմանակից հարևան յերկիրների հաշվին: Իսկ դաշնակցական Հայաստանի սահմանակից յերկիրներում այն ժամանակ իշխում եյին նույն «սորտի» նացունալիստական-չովինիստական կուսակցություններ, կուսակցություններ, վորոնք վոչ միայն չեյին կարող հանգուրժել դաշնակցության ագրեսիվ քայլերը, այլ չենց իրենք իրենց հերթին տարված եյին նվաճողական. նոր յերկրամասեր, նոր տերիտորիաներ գրավելու այդ նույն տենչով: Հարցը կարող ե վորոշել միայն զենքը, պատերազմը: Յեկ

դաշնակցությունը չքաշվեց զենքից ու պատերազմից: Նա, ընդհակառակը, մեծ անբարտավանությամբ դիմեց իր սովորական հայրուկային-ավանտյուրիստական քաղաքականությանը: Դաշնակցությունն սկսեց սուր ճոճել: Յեկ ահա Անդրկովկասյան սեմի քայլայումից ընդամենը հինգ ամիս հետո, դաշնակցական կառավարությունն առաջին մեծ պատերազմն ունեցավ մենաշեկյան Վրաստանի հետ: 1918 թ. դեկտեմբեր ամսին լոռու և Սխալքալակի կապակցությամբ պայմեց դաշնակ - մենշևիկյան պատերազմը: Սկսեց դաշնակցության կոչերի, աղղերի շարանը «Հայրենիքի», «Հայ ազգի փրկության» համար: Սակայն աշխատավորությունն առաջին անդամը չեր, վու լսում եր դաշնակ-խմբապետների այսորինակ կոչերը. նա սկսում եր հասկանալ, թե ըստ եյության ինչ պատերազմ եր այդ պատերազմը, ինչ նպատակներ եր հետապնդում նա և դրա համար ել չարձագանքեց դաշնակցական կառավարության կոչերին: Հայ աշխատավորությունը չդնաց Փրոնտ՝ «ազգը փրկելու»: Դաշնակցական կառավարությունն սկսեց գործադրել իր գամեան տեսումը, մտրակները:

Հրատարակվեցին դեկտեմբեր, հրամաններ ու ահարեկումներ: Այսպես, որինակ, դաշնակցական կառավարության զինվորական «նախարար» գեներալ-մայոր Հայվերդյանը հրաման սրճակեց, թե.

«Յես կարգադրություն եյի արել բոլոր նրանց, վորոնք չեն գտնվում զորամասերում, կատարեն իրենց պարտքը զինվորական ծառայության, բայց քերը կատարեցին իրենց պարտքը: Այդ պատճառով ներկա հրամանով նորից կոչ եմ անում ու հայտարարում, վոր բոլոր նրանք, վորոնք ըստ սույն հրամանի 4-րդ կետի ժամանակամիջոցին չեն ներկայանա հավաքական կենտրոններն ու չեն ստանա այնտեղից համապատասխան վկայականներ, կհամարվեն կավի մասնակցելու հրամանից իսկսափողներ և կենթարկվեն

### ՄԱՀՎԱՆ ՊԱՏԺԻ

Զրկվելով իրենց բոլոր ստացվածքի իրավունքից...»:

Այսպիսի ահարեկումների ու տեռորի միջոցով, սակայն, Փրոնտ քշվեցին բանվորական-աշխատավորական մասսաները՝

արյուն թափելու բուրժուազիայի դրամանների համար։ Սկսվեց դաշնակ-մենչեւիկյան առաջին պատերազմը։ Սականվածներ յերկու կողմից։ Ամեն որ այսորինակ հեռագրեր, թե՝

«Յեկատերինովիկելի, 20 դեկտեմբերի. — Գիշերն անցալ Հանդիսա, հայկական զորամասերը Յեկատերինովիկելի մոտ կորցրել են սպանված 6 ռոբերտ և 230 զինվոր, վերավորվածներին նրանք կարողացան տանել, վոր յերեսմ և ճանապարհի վրա մնացած արյան հետքերից» («Մշակ», 1918 թ. դեկտեմբերի 23, № 203)։

Այսպես շարունակ մի ամսից ալելի, ամեն որ կոտորածներ, արյունհեղություն, աշխատավորության արյուն հայ — վրայ բուրժուազիայի համար։ Սակայն վոչ միայն արյունհեղություն, կոտորածներ, այլև զրա հետ միասին գյուղերի, շրջանների ամբողջական ավերումներ, թալաններ, աշխատավորական տնտեսությունների վոչնչացում և խորտակում։ Բայց ի՞նչ փույլթ այդ բոլոր պատերազմ սարքով հակահեղափոխական ուժերի համար։ Զե՞ վոր նրանք մտածում եյին իրենց դասակարգային նպատակների մասին։ Դաշնակ պարոններն այդ պատերազմի ժամանակը՝ որինակ, հրաժում, ուրախանում եյին։ Յերբ կատարվում եր այդ չտեսնված վոճրագործությունը, ավերումներն ու կոտորածները, այդ նույն ժամանակ պարոն Վրացյանը ցինիկորեն խմբավետ-մասուղերիստ Դրոյին հեռագրում ե.

«Դործող բանակ, Դրոյին. — Սիրելի Դրո, Հ.Հ. Դաշ. Փրակցիան, կենտրոնական կոմիտեն և բյուրոն ջերմապես վաղունում են քեզ, քո ընկերակիցներին և քո դեկավարության տակ գտնվող հերոսներին, Ուզումլարից մինչև Խրամ տարված փայլուն զինվորական գործողությունների համար։ Փառք և պատիվ նրանց, վորոնք ընկան հայրենիքի հանդեպ իրենց ունեցած պարտականությունները կատարելիս» («Զանգ», 1918 թ., № 85)։

Այսպիսով, դաշնակցական լիդերը վողջունում ե կոտորածները, արյունհեղությունները, պատերազմը, վոր բերում եր իր հետեւց գյուղերի ու շրջանների ավերում, տնտեսական կյանքի անկում, և վորպես այդ բերորի հետեանք, համատարած սով, թշվառություն ու մահ։

Սակայն ինչո՞վ վերջացավ այդ վոճրագործությունը՝ դաշնակ-մենչեւիկյան այդ պատերազմը։

Մի ամբողջ ամսից ավելի կոտորածներ, գյուղերի ավերում ապրելուց հետո հանդես յեկալ միջազգային իմպերիալիզմը և իր թաթը դրեց վիճելի շրջանների վրա։ Այն տերիտորիան, վոր համար կոփվ եյին մղում դաշնակներն ու մենչեւիկները, գիշատիչ իմպերիալիզմը, այսպես կոչված՝ «չեղոք զոնա» հռչակեց և մինչև խորհրդայնացումը գիշատիչ շահագործման ու թալանի յենթարկեց։

Պետք ե նկատել, վոր դաշնակ-մենչեւիկյան այդ պատերազմը, ինչպես և բոլոր այն պատերազմները, վորոնք տեղի եյին ունենում հետագայում դաշնակների, մենչեւիկների ու մուսավաթիստների միջև, ամեն կերպ հրահրվում եյին Անդրկովկասի վրա իրենց թաթերը գրած իմպերիալիստական պետությունների կողմից։ Հավատարիմ «բաժանիր վոր ակրես» հայտնի սկզբունքին միջազգային իմպերիալիզմն իր տիրապետությունն Անդրկովկասում ամրացնելու և տեղի վասար կառավարություններին իրեն հետ ավելի ամուր կապելու նպատակով, շարունակաբար հրահրում եր դաշնակ-մենչեւիկյան և մուսավաթական կոխմներն ու ստեղծում բռնֆերական «չեղոք զոնաներ»։

Սակայն դաշնակցական կուսակցությունը չեր կարող սահմանափակվել միայն մենչեւիկյան Վրաստանի գեմ կոփվ մղելով։ Նա իր դասակարգային եյությանը դավաճանած կլիներ, յեթէ նորից չշարունակեր իր խայտառակ ջարդարար ավանտյուրիստական քաղաքականությունը։ Յեկ իրոք դաշնակ-մենչեւիկյան առաջին պատերազմից շատ չանցած դաշնակցությունը պատերազմների մի ամբողջ շարք սկսեց Ադրբեջանի և Տաճկաստանի դեմ, անընդհատ պատերազմների մի յերկար շարան, վորը շարունակվեց մինչև դաշնակցական կառավարության վերջին որը։ Նորից կոչեր, ուղերձներ, կաթողիկոսական կոնդակներ, հայրենիքի, հայ ազգի փրության համար, այժմ արդեն «անհավատների» «մուսուլման» «տաճկական հորդաների դեմ»։ Նորից անսանական չովինիվով հաղեցված կոչեր ու ազգեր։

Սակայն այդ կոչերն ու կոնդակները ևս չեյին կարող վորեն արձագանդ գտնել աշխատավորական մասսաների մեջ։ Դաշնակցական այս քարոզները չեյին կարող այլևս հիմարացնել, թշմքեցնել բանվորա-գյուղացիական մասսաների մոքերը։ Անդերջ

ու անընդհատ պատերազմներում յեղած ավերումներ, թշվառություններ ապրած և բուրժուակալակային դաշնակցական դիկտատուրայի ծանր, դաժան լուծը կրող մասսաներին այլևս չեր արելի խարել: «Հայրենիքի, ազգի փրկության» կոչերն ու ազգերը լավ ծանոթ եյին մասսաներին. վերջիններս շատ լավ դիտեյին նրանց խական եյությունն ու նպատակը: Աշխատավորական մասսաները կտրականապես հրաժարվում եյին Փրոնտ մեկնել: Նրանք չեյին ուղղում դնալ և ընկնել հայ բուրժուազիայի շահերի համար: Սկսվում են մասսայական դժողովություններ, տրտունջներ ու համատարած դասավարություն Փրոնտից: Մասսաներն ուղղակի հրաժարվում են Փրոնտ մեկնելուց: Դաշնակցական կառավարությունը բանեցնում եր իր սովորական միջոցները, նորից դիմում եր իր դաժան ռեժիմին: Ստեղծվում եյին դիմուրական արտակարդ դատարաններ, որենքներ եյին հրատարակում դասավարության դեմ:

Եերենք դաշնակցական կառավարության հրատարակած հետեւյալ դեկրետը.

«1. Դասավեճները 1918 թ. հուլիսի 24-ին նախարարների խորհրդի հաստատած որենքի համաձայն, յենթարկվում են մահվան պատժի դիմուրական դաշտային դատարանի միջոցով: Նրանց ամբողջ շարժական և անշարժ դրավվում ե հոգուտ պետական դանձարանի:

2. Դասավեճների հետ ապրողներն ու նրանց ակնհայտնի թադցնողները յենթարկվում են 1—6 տարի բանտարկության և նրանց չարժական ու անշարժ դույքը դրավվում ե հոգուտ պետական դանձարանի»:

Այսորինակ դաժան միջոցներով ու ահարեկումներով դաշնակցությունն այս անդամ ևս հայաստանի հոծ զանդվածներին նորից Փրոնտ և քշում:

Յեւ մտրակի հարվածների տակ քշվում եյին Փրոնտ, իհարկե, բանվորներն ու աշխատավոր գյուղացիները, իոկ կուլակները, բուրժուաները և ամեն տեսակ մասսերիստներ ազատ դրսնում եյին քաղաքներում, հանձնվելով լիրք խրախճանքի և կատարում եյին ամեն տեսակի ասպատակություններ:

Ահա մի փոքր իլյուստրացիա այդ մասին: Ներքին գործոց

մինիստրին նույն այդ մինիստրության աշխատակիցներից մեկը 1920 թ. մարտին «միամտորեն» բողոքում է, վոր՝

«Սույն մարտի 22-ին, յերեկոյան ժամը 5-ին դուրս գալով Աստաֆյան փողոց, յես հանդիպեցի 2-րդ քաղաքամասի կոմիսարի ողնական վոմն Վարդանյանին, վորը դասալիքներ հալավելով անցնում եր Աստաֆյան փողոցով դեպի գալառական կոմիսարիատ: Վո՞րքան արդարացի յեր կատարվում այդ դասավեճների ձերբակալությունը. այդ յես կասկածում եմ և յես իրավունք ունեյի կասկածելու, վորովհետև շատերի և նույնիսկ իրեն՝ Վարդանյանի ներկայությամբ ազատ ու քաջարի անցնում եյին Աստաֆյան և այլ փողոցներով հազարավոր դասավանքներ իրենց մառագերներով: Մի՞թե այդ նկատելի չեր Պ. Վարդանյանին, վորն իր առջև կողիտ ուժի աղղեցության տակ՝ տանում եր ցնցոտիների մեջ խեղճ ու վողորմելի բազմաւթյունը դեպի գալառական կոմիսարիատը: Ինչո՞ւ չեյին ձերբակալվում այդ մառվերիստ կոչված դասավանքները, վորոնք ազատորին անցնում եյին ու ծալլրում այդ խեղճ բաղմությանը...» (Պետ. արխիվ, ներքին գործոց մինիստ. գործ 1827):

Այսպես մտրակների ուժով հավաքում և բռնի կերպով Փրոնտ եյին քշում «խեղճ ու վողորմելի բազմությանը», իսկ քաղաքի փողոցներում վիստող հաղարավոր մառվերիստ տղերին ազատ դրսնում, զվարճանում և հեղնորեն ծիծաղում եյին «խեղճ» բազմության վրա:

Դաշնակցական կառավարության անընդհատ տեսող պատերազմները կուլ եյին տալիս դեռ շատ այդպիսի «խեղճ» ու «վողորմելի» բազմություններ, գեր հայաստանի բանվորական, աշխատավորական մասսաների ծոցից դուրս եյին դալիս հաղարներ, տասնյակ հազարներ՝ դաշնակցության սարքած սպանդում ընկնելու համար: Հայաստանի աշխատավորությունը դաշնակցական այդ անընդհատ պատերազմների ընթացքում տալիս եր անվերջ զոհեր: Գյուղերն ամայանում եյին աշխատունակ ձեռքերից և հենց այս պատճառով խոսք չեր կարող լինել տնտեսության մշակման մասին: Սակայն անընդհատ պատերազմները միայն յերկրի աշխատունակ ձեռքերը չեր, վոր կլանում եյին,

այլև գրա հետ միասին, վոր ավելի սոսկալի յեր, ամբողջ գյուղ շեր, ըրջաններ, անդամ գալառներ մոխրակույտերի եյին վերածվում: Կաղմակում եյին թշվառ, գոյության վերջին հնարավորություններից զուրկ գաղթականական խոշոր զանդվածներ, վորոնք հոսում եյին գեռես տեղից չչարժված վայրերը և այնակի առանց այն ել անտանելի կացությունն ավելի վատթարացնում: Այսպիսի պայմաններում, հասկանալի յե, վոր ժողովրդական տնտեսությունը քայլայվում ու խորտակվում եր մինչեւ վերջը:

Սակայն հայ բուրժուազիայի մարտական կուսակցությունը, նրա անամնական շովինիզմը չեր կարող բավարարել միմիայն «արտաքին Փրոնտում» ջարդեր կազմակերպելով: Նա այդ պիտի աներ և «ներքին Փրոնտում»: Հայաստանի տերիտորիայում աղբում եր բավական թվով մահմեղական աղքարնակչություն. դաշնակցությունը ծրագրեր եր կազմում այդ «այլացեղ» աղքարնակչությանը «մաքրել» յերկրի վրայից, իսպառ ջնջել նրանց: Հայ բուրժուազիայի տնտեսական – քաղաքական շահն այդ եր սպահանջում: Յեվ շուտով դաշնակցությունն անցնում եր գործի: Դաշնակցական մառվերիստները և խմբապետները շուտով կատարում են իրենց զաղրելի, ուև գործը: Որենքից դուրս հայտարարելով թուրք աղքարնակչությանը՝ նրանք կազմակերպում են ջարդեր ու չտեսնված թալաններ Շարուրում, Զանգիբասարում, Բոյուք-Վեդիում և այլն: Կոտորում, սպանում, թալանում են թուրք խաղաղ աղքարնակչությանը և ամբողջական գյուղեր, ըրջաններ ու դավառներ մոխրակույտերի վերածում: Յեվ հայ բուրժուազիան հրճվում եր սրանով: Յերբ, որինակ, դաշնակ խմբապետները մտան Բոյուք-Վեդի, ամբողջապես ավելի ու թալանի մատնեցին տեղի թուրք աշխատավորությանը, ստեղծեցին այնտեղ արյան բաղնիս, հայ բուրժուաներից մեկը՝ Աֆրիկյանը Նոր-Բայազետից մեծ պափոսով հեռագրում եր այդառիթիվ.

«Անհուն բերկրանքով չնորհավորում եմ հայ դորքի վառավոր հաղթությունը. ընկալ Բոյուք-Վեդին, վոր մի ամբողջ տարի կապարի ծանրությամբ ձնշում եր հայության սիրտը, վոգին, պատիլը, կեցցե հավերժ Հայաստանի կառավարությունը և նրա կամքն իրագործող հայ

ինչ փույթ հաստափոր բուրժուային, վոր ավերում եյին դյաւդեր ու ըրջաններ, վոր ստեղծում եյին թշվառների և սովամահների մի հակա բանակ, վոր յերկրի գրությունը սոսկալի յեր դառնում ու վողջ աշխատավորական մասսան տնքում եր դժոխային կացության մեջ: Զե՞ վոր այդ բոլորն արմում եր հենց այդ նույն հայ բուրժուազիայի շահերի, նրա գրանների համար, չե՞ վոր այդ բոլորը հենց նրա ծրագրերի իրագործումն եր:

Յեվ այսպես, շարունակաբար կռիվներ, անընդհատ պատերազմներ Վրաստանի, Աղբբեջանի և Տաճկաստանի դեմ, յերկրի խաղաղ թուրք աղքարնակության ջարդեր, կոտորածներ: Ամենուրեք գյուղերի, ըրջանների ու գալառների ավերումներ, թալաններ և, վորպես հետեանք այս բոլորի, ժողովրդական տնտեսության քայլայում և սովալլուկ զաղթականական հոծ զանդվածների առաջացում, —ահա դաշնակցական Հայաստանի պատկերը:

## ԲՈՂՈՔՈՒՄ ՀԱՐՑԸ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՐ ՀԱՅՈՒՄ

Հայաստանը դաշնակցության տիրապետության ժամանակ և ընդհանրապես, մինչեւ խորհրդայնացումը, չուներ խոչըր գործարանային արդյունաբերություն և իր անտեսական կառուցվածքով հետամնաց գյուղատնտեսական մի յերկիր եր: Սակայն, այնուամենայնիվ, չնորհիլ այն հանդամանքի, վոր գեռես ցարական ուաղթա-ֆեոդալական իմպերիալիզմն իր գաղութային թալանների համար ինչպես վողջ Անդրկովկասում, նույնպես և Հայաստանում անց եր կացը և յերկաթղիծ, ստեղծել եր դեպոներ, հատ ու կենտ գործարաններ ու հանքային արտադրություն, չնորհիլ նաև նրան, վոր գեռես նույն այդ ցարական կառավարության տիրապետության ժամանակ հայ բուրժուազիան ամբողջության միջին կապիտալները կուտակելու համար արդեն սկսել եր մի շարք պրիմիտիվ գործարաններ (չուգունի, գինու և ողու, տալարաններ, սղոցարաններ և այլն) կառուցել, —ահա այդ խկ պատճառով ել Հայաստանը ևս մինչեւ խորհրդայնացումն ուներ բանվորության վորոշ կադր: Բանվորության հենց այդ կադրն եր,

վոր 1920 թ. մայիսյան մասսայական շարժումների ժամանակ դառնում եր հեղափոխական այդ շարժումների հեղեմոնը և Հայաստանի գյուղացիական-աշխատավորական մասսաների առաջնորդը: Ճիշտ է, Հայաստանում ցարիզմի ժամանակ գոյություն ունեցող այդ միքանի արդյունաբերական ձեռնարկությունների մի մասը դաշնակցության դիկտատորայի ժամանակի իսպառ քայլային, սակայն, այնուամենայնիվ, դաշնակցության տիրապետության ժամանակ ևս Հայաստանում գործող յերկաթզծում, դեպոներում, դարաժներում և մի շարք արդյունաբերական ձեռնարկություններում (տպարաններում, սղոցարաններում և այլն) էնստրունացված եր բանվորության մի թիվ, վորն այն ժամանակվա Հայաստանի պայմաններում այնքան ել փոքր չեր: Այսպիսով, դաշնակցական Հայաստանում, ուր իսպառ բացակայում եր խոշոր գործարաններին արդյունաբերությունը, չնայած վոչ շատ խոշոր քանակությամբ, կային և գործում եյին բանվորական կադրեր, վորոնք և, ըստ եյության, ղեկավարում եյին դաշնակցության տիրապետության դեմ ուղղված բոլոր հեղափոխական - սոցիալիստական շարժումները:

Ի՞նչ դրության մեջ եր գտնվում, սակայն, Հայաստանի այդ անվլորությունը դաշնակցության տիրապետության շրջանում: Ի՞նչ քաղաքականություն եր վարում դաշնակցություն կուսակցությունը բանվորների նկատմամբ:

Դաշնակցությունը դաշնակցություն չեր լինի, յեթե նա իր տիրապետության ընթացքում չվարեր հակարանվորական, բուռ-ժուական - հակահեղափոխական քաղաքականություն։ Յեզ իս-կապես։ Դաշնակցության ամբողջ տիրապետության ընթացքում և վոչ մի լուրջ փորձ չարվեց դոնե այս կամ այն կերպ թեթե-վացնելու Հայաստանի բանվորության անտանելի ծանր գրու-թյունը։ Զնայած թղթի վրա կար գրված մի շաբաթ որենքներ բանվորական որվա, բանվորական աշխատանքի և այլ պայման-ների մասին, այնուամենայնիվ գրանք բոլորն ել մնում ելին վորպես լոկ որենքներ, միայն վորպես բանվորությանը խարե-լու միջոցներ։ Իրականության մեջ բանվորության գրությունը դաշնակցության տիրապետության շրջանում անսահման ծանր ու անտանելի յեր։ Բանվորական որը դաշնակցական դժոխքում տեսում եր մինչև 16, անդամ մինչև 18 ժամ, աշխատավարձն անսահման ցածր եր, շահագործումը կատարվում եր ամենա-

վայրենի ճեկրով ու չափերով։ Զկար վոչ մի սոցիալական ապահովագրություն, բանվորությունն ամրողապես հանձնված երդորարանատերի և խողեյինների քմահաճույքներին ու կամայականություններին, վորոնք նրանց վրա գործ եյին դնում ամեն տեսակ ճնշումներ ու բռնություններ։ Իսկ յեթե բանվորությունն այդ ճնշումներին ու շահագործմանը պատասխանում եր գործադուներով և փորձում եր պայքարել տերերի դեմ, ապա դաշնակցական կառավարությունն անմիջապես ամենախիստ միջոցներով պատժում եր «խռովարար» բանվորներին, այդպիսով ամենահավատարիմ պաշտպանը կանդնելով գործարանատերերի և խողեյինների շահերի համար։

Աակայն խոսենք փաստերով, նրանք պերճախոս են:

1918 թ. սեպտեմբերի 29-ին «Խոսք» լրագրում տպադրված եր թերթի խմբագրության ուղղված Յերևանի բանվորներից մեկի նամակը, վորը հետեւյալ կերպ եր նկարագրում իրենց դրությունը.

«Մենք հանձնված ենք խողեյինների քմահաճույքներին ։ Մեղ վորքան ուղղում՝ աշխատեցնում են։ Յեթև դուք շարաթ որելն անցնեք մեղ մոտ, կտեսնեք, վոր մենք առավոտյան ժամը 7-ից մինչև գիշերվար ժամը 12-ը վոտքի վրա յենք։ Ճաշելու և թեյելու համար մեղ տրվում ե մի ժամ։ Նշանակում ե 16 ժամ անընդհատ աշխատում ենք։ Յերբ մի անգամ փորձ արինք բողոքելու, մեղ իսկույն լուցնել տվին, առարկելով, թե «արտաքին թշնամին մոտ ե» (աե՛ս «Խոսք», 1918 թ. սեպտեմբերի 29, № 2)։

«Արտաքին թշնամու» պատրվակի տակ, ինչպես տեսնում ենք, հայ բուրժուան և խողելինը բանվորին աշխատեցնում ելին մինչև 16 ժամ։ Վոր բանվորները դաշնակցության տիրապետության ժամանակ աշխատում ելին 18 ժամ, այդ չեր ժխտում դաշնակցության այն ժամանակվա գլխավոր որդաններից մեկը, «Զանդ» լրագրության այն ժամանակվա գլխավոր որդաններից մեկը, գեկտեմբերին գործում էր.

«Գործարանները, աղան վոր միշտ վերելից են նայել նրանց (այսինքն՝ բանվորներին, Մ. Ն.) վրա, նրանց շահագործում են տարբիներ շարունակ, միշտ աշխատեցնելով»

յերկար ժամեր, շատ անգամ 15—18 ժամ և եւլ ավելի»  
(տե՛ս «Զանդ», 1918 թ. գեկտեմբերի 11, № 78):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, դաշնակցական Հայաստանում բանվորական որը տեսում եր 15—18 ժամ, շատ դեպքերում անգամ եւլ ավելի: Դաշնակցության համար այսորինակ յերեվույթները, ինչպես տեսնում ենք, վո՞չ անսովոր և վո՞չ եւլ անսովունելի եյին համարվում: Զե՞ վոր հարկավոր եր ուժեղացնել «ազգային» կապիտալը, իսկ այդ, իհարկե, կարելի յեր անել միայն բանվորության հաշվին, նրանց արյուն-քրտինքով:

Սակայն դաշնակցության տիրապետության ժամանակ Հայաստանի բանվորության կացությունն այնքան վատթար, անտանելի յեր, վոր անգամ դաշնակցական կառավարության այսպես կոչված «խնամատարության ու աշխատանքի» մինիստրն առիված եր հրապարակորեն խոստովանել բանվորների ու «ցածր աստիճանի ծառայողների» սոսկալի ծանր կացությունը: Այսպես, որինակ, 1919 թ. ողոստոսի 28-ին դաշնակցական կառավարության այդ մինիստրությունը հրապարակեց մի կոչ, վորի մեջ, ի միջի այլոց, ասված եր հետեւյալը.

«Վերջին ժամանակներս թե՛ բանվորության և թե՛ ծառայողների կողմից բազմաթիվ գիմումներ են լինում աշխատանքի մինիստրությանն այն բռնությունների և կամայականությունների մասին, վորոնց յենթակա յեն բանվորությունը և ծառայողները՝ թե՛ հասարակական, թե՛ մասնավոր և նույնիսկ պետական հիմնարկներում: Յուրաքանչյուր հիմնարկության կառավարիչ, յուրաքանչյուր արհեստանոցի կամ գործարանի տեր առանց քննության կամ որենքով վորոշված ժամանակամիջոցի աղղարարման՝ արձակում և պաշտոնից այս կամ այն բանվորին կամ պաշտոնիային՝ սովոր մատնելով տնտեսական այս ծանր պայմաններում ծառայողի ընտանիքը: Շատ տեղերում աշխատեցնում են 11—15 ժամ: Բացի այդ, շատ դեպքերում թույլ և տրվում դեպի աշխատողը գործատերերի և կառավարիչների կողմից վերին աստիճանի կոպիտ վերաբերմունք ու մինչեւ անգամ հայՀոյանք ու ծեծ» (Պետ. արխիվ, ներք. գործ. մին. գործ № 1843):

Նույն այդ մինիստրությունը, 1920 թ. հունիսի 28-ի № 1137

դրությամբ, նախարարների խորհրդին բանվորը – ծառայողների որոշում վրա վատացող սոսկալի դրությունն արտահայտում է հետեւյալ միքանի ժլատ խոսքերով.

«Թե՛ պետական և թե՛ հասարակական ու մասնավոր հիմնարկությունների և ձեռնարկությունների ծառայողներն ու բանվորներն որեցոր աղքատանում են՝ ծախելով ինչ-վոր ունեն՝ իրենց և ընտանիքի գոյությունը պահպանելու համար: Յեվ չկա վոչ մի հիմք մտածելու, վոր այս բոլորը ժամանակավոր յերկություն» (Պետ. արխիվ, նախարարների խորհուրդ, № 158):

Դաշնակցության տիրապետության ժամանակ Հայաստանում բանվորության գերազանց մասը կենտրոնացած եր յերկաթուղու վրա: Այդ պատճառով ավելորդ չի լինի միքանի վաստեր դըրսենորել առանձնապես յերկաթուղու բանվորության կացությունից: Այսպես, որինակ, յերկաթուղու շրջանային դաշնակցական կոմիտեն 1920 թ. սեպտեմբերի 10-ին «Հ.Հ. վարչապետին» դեկուցում եր, վոր՝

«Հ.Հ. յերկաթուղիների բանվորության անտեսական դրությունը սոսկալի յեվ: Ամենաղլխավոր և անհրաժեշտ պատճառը հացի չլինելու խնդիրն ե: Յերբորդ շրջանի բանվորությունն ամբողջ տարվա ընթացքում կանոնավորապես չի ստացել հաց: Ավելի սոսկալի չափերի հասավ հացի խնդիրը մասնավորապես մայիսյան դեպքերից հետո... որինակ, ստացված և ալյուր 1) մայիսի 13 որվահամար կես ֆունտ ծառայողներին և ¼ ֆունտ ընտանիքի անդամներին. 2) հունիսի 16 որվահամար նույն չափով. 3) հուլիսի լրիմ, իսկ 4) ողոստոսի 1-ից վոչ մի ֆունտ ալյուր մինչեւ որս» (Պետ. արխիվ, նախարարների խորհրդի գործ № 154):

Յեվ վորովհետեւ այդ պատճառներով յերկաթուղու վրա շարունակար լինում եյին գործադրություններ, ընդհարումներ բանվորների ու դաշնակ խմբապետների միջև, այդ պատճառով եւ դաշնակ կառավարության «նախարարապետը» ստիպված յեղավաշքախարուկ խաղալու համար մի իր թե «քննիչ հանձնաժողով» ուղարկել յերկաթուղու բանվորների ու ծառայողների

դրությունը պարզելու համար։ Այդ հանձնաժողովը, վորը, ի-հարկե, մատների արանքով նայեց իրերի գրությանը, 1920 թ. սեպտեմբերին կազմեց մի գեկուցում՝ ուղղված «Հ.Հ. պարոն նախարարապետին», վորն այնուամենայնիվ բնորոշ և չատ հետաքրքիր, չնայած նրան, վոր այդ գեկուցումը, իհարկե, չատ բաներ չեր կարող պարունակել։ Այդ գեկուցումն սկսվում է հետեւյալ կերպ։

«Զեր կարգադրության համաձայն հանձնաժողովը քըն-նելով Յ-րդ ուսունի յերկաթուղու ծառայողների ու բան-վորների գրությունը, պատիվ ունի գեկուցելու հետեւյալը։

Ա. Հացի խնդիրը—Հանձնաժողովս քննելով բանվոր-ների գրությունը հացի տեսակետից, գտավ, վոր իսկապես անբավարար և յեղած, մինչև որս տրված ոժանդակու-թյունը։ Այս ըջանի ծառայողներն ու բանվորներն ալյուր ստացել են։

Մայիս ամսին 13 որվա համար  $\frac{1}{2}$  (կես) Փունտ ծառա-յողին և  $\frac{1}{4}$  (քառորդ) Փունտ ընտանիքի չնչին։ Հունիս ամսին 16 որվա համար  $\frac{1}{2}$  (կես) Փունտ ծառայողին և  $\frac{1}{2}$  (կես) Փունտ ընտանիքի չնչին։ Հուլիս ամսվա 25 որվա համար  $1\frac{1}{4}$  (մեկ և քառորդ) Փունտ ծառայողին,  $\frac{1}{3}$  (մեկ յերրորդ) Փունտ ընտանիքի չնչին։ Իսկ ոգոստոսից մինչև որս այս ըրովեյին վոչինչ չի ստացված։ Քաղաքի շուկայից հաց գնելը բանվորների համար նույնպես անհնար և, վո-րովհետև նախ յերկար ժամանակ և պետք սովորելու հա-մար և յերկրորդ հաճախ չի ճարվում։ Շուկայի հացից ոգոստողների թիվը չատ չնչին և, ըստ տրված տեղեկու-թյունների միայն 10 տոկոսը։

Բ. Ռոմիկները—Հակառակ բազմաթիվ անգամ կատար-ված դիմումների, ոռօճիկները կանոնավոր և ժամանակին չեն տրված։ Այսպես, հուլիս ամսվա ոռօճիկը վճարված և, ոգոստոսի ոռօճիկը մինչև որս չի ստացված։

Գ. Վառելիք և հագուստ—Չնայած վոր բանվորների և ծառայողների ոռօճիկից կպահվի վառելիքի և լուսալորու-թյունից հատուկ տոկոսը, ապրիլ ամսից սկսյալ վոչ մի վառելիք չի տրված։ Զի տրված մասնավորապես բանվոր-ներին հատուկ հագուստը։ Շատ պարզ և, վոր ներկա պայ-

մաններիս մեջ բանվորը հնարավորություն չունի հաղուստ դնելու, վոր իր ծառայությանն անհրաժեշտ ե։

Դ. Հիվանդություններ.— Շնորհիվ այս աննպաստ պայ-մաններին հիվանդությունները մեծ ծավալ են սնացել ծա-ռայողների և օրանց ընտանիքների մեջ։ Համաձայն բժշկի վկայության՝ ներկայիս ծառայողների 80 տոկոսը հիվանդ են գլխավորապես մալարիայով։ Այս կացության հետեւան-քով ծառայողների ու բանվորների մեծ մասը չի ուզում այլևս մնալ իր ծառայության մեջ» (Պետ. արխիվ, նախա-րարների խորհրդի գործ № 154)։ (Ընդգծումները մերն են, Ս. ն.)։

Այդպես եր ահա յերկաթուղու բանվորության դրությունն ըստ դաշնակ կառավարության քննիչ հանձնաժողովի։ Սակայն, իհարկե, ինչպես մենք վերն ասացինք, այդ հանձնաժողովը յեր-կաթուղու բանվորության իրական դրությունը չեր կարող և չեր ել ցանկանում արձանագրել։ Նրա խնդիրն եր աչքակապուկ խա-ղալ, ցույց տալ, թե իբր դաշնակցական կառավարությունն եւ մտահոգված և բանվորների գրությամբ, խարել մասսաներին, վոր այսորինակ թշվառության պատճառն իրենք չեն, վորաես-ղի դրանով կասեցնեն բանվորության հեղափոխական յելութ-ները։ Այդ հանձնաժողովի «քննությունից» հետո յերկաթուղու բանվորների կացությունն ավելի ևս վատթարացավ։ Ուրիշ կերպ ել չեր լինի։ Դաշնակցությունը դաշնակցություն չեր լինի, յե-թե նա չկողապտեր ու չշահագործեր բանվորությանը։ Յեկ ի-րոք։ Այդ հանձնաժողովի «քննությունից» չատ չանցած յերկա-թուղուց՝ անդամ դաշնակ բժիշկ նազարյանը՝ Յերեանի գաշնակ-ցական քաղաքային կոմիտեյին հեռադրում եր։

«Բավական յերկար ժամանակ և անցել, վոր քննիչ հանձնաժողովը, ձեր և պարոն նախարարապետի կողմից նշանակված, այցելեց, ծանոթացավ յերկաթուղու բանվոր-ների ու ծառայողների գրության հետ, բայց մինչև որս մենք վոչ մի պատասխան չենք ստացել։ Այսոր արդեն դի-ձը կանգնել և ու բանվորները չեն դուրս յեկել աշխատե-լու՝ հաց չլինելու պատճառով։ չեն աշխատում Արաքս կա-յարանից մինչև Ուլուխանլու և շուտով չեն աշխատելու նաև մյուս տեղերում։

իսկ ինչ վերաբերում ե յերկաթուղարքին միլլցիայի սխրագործություններին՝ վերջ չունի. յերեկ մենք ականատես յեղանք նորից մի ծեծի, վորի մասին ձեզ տեղեկացրել ենք: Անդրում ու պահանջում ենք վերջ տալ մեր տանջանքներին՝ թե՛ տնտեսական և թե՛ իրավական» (Պետարիկ, նախարարների խորհրդի դորժ № 154):

Ինչպես ասացինք այդպիսի դրությունն ընդհանուր եր: Վոչ պակաս դաժան շահագործման եր յենթարկվում ուրիշ վայրերում աշխատող բանվորությունը: Դիցուք հենց լենինականում Ավինյանի և Մալխասյանի տաղարաններում կամ հենց ամերիկյան գործարանների բանվորները: Այդ գործարաննատերերը, այս կամ այն պատրվակով, ըստ դաշնակցական կառավարության որենքների, լոկուտ ելին հայտարարում ու բազմաթիվ բանվորների դուրս քշում փողոցը: Ենի վերջին գործարաններում ու արհեստանոցներում աշխատող փոքրաթիվ բանվորությունը շարունակաբար դուրս եր քշվում մի այնպիսի ժամանակ, յերբ գործազրկությունն առանց այն ել ուներ ահռելի չափեր, յերբ մի վորեւ տեղ դործ դանելը, ինչ տիսի աշխատանք ել լիներ, այդ միենույն և, անկարելի յեր:

Գտնվելով ահա այսորինակ տնտեսական, իրավական ծանր պայմաններում, իրենց ուսերի վրա կրելով դաշնակ-իմբասիտական կարգերի ծանր լուծը, հասկանալի յե, վոր Հայաստանի բանվորությունը, մասնավորապես յերկաթդի վրա աշխատող բանվորները, շարունակ գործադուներ ելին անում և ընդհանր վում գործարանատերերի, դաշնակ խմբավետների հետ: Դաշնակցություն կուսակցությունն ապահովում, սրբագործում եր Հայ բուրժուաներ՝ Աֆրիկյանների, Մալխասյանների, Դաստիարակությունների, Ղասարյանների և այլոց «սեփականությունը». Նրանց «իրավունքները». նա պահպանում եր նրանց անձեռնմխելիությունը և ամենավճռական կերպով ճնշում բանվորական ամեն մի դործագուլ, ճեղափոխական-բանվորական ամեն մի յելույթ: Վորպես նմուշ կատարվող բազմաթիվ դեպքերից կարելի յե հիշատակել հետեւյալը: 1919 թ. հոկտեմբերին յերկաթդի բանվորությունը պատրաստվում ե հոկտեմբերի 20-ին գործադուլ յենթարկելու հայտարարելու: Դաշնակցական ագենտներն այդ բանն իմանում են և գեռ յերկու որ առաջ, հոկտեմբերի 18-ին, իրենց կենտրոնական որդան «Հառաջ»-ի «Սպասվող գործադուլը» խո-

րագերը կրող խմբագրականում ազդարարում են. — «Գործադուլը սարսափելի յե և յերկիրը (այսինքն՝ դաշնակցությունը, Մ. Ն.) չի ների այդ քայլը: Գործադուլն իրավամբ կնկատվի ընդհանուր հակապետական և հակաժողովրդական մի ակտ, պատճառ յեղողները չեն կարող ներլիւ» («Հառաջ», 1919 թ. հոկտեմբերի 18, № 23):

Այսպիսով, գեռևս գործադուլից շատ առաջ, յերբ նա դեռ տեղի չեր ունեցել, այլ միայն ապամուռ եր, դաշնակցությունն ահարեկում եր բանվորությանը, ազդարարելով, վոր ինքը գործադուլավորների նկատմամբ կլինի անողոք ու վճռական: Յեվելուք, ինչպես ասացինք, ամեն մի գործադուլի մասնակից բանվորների նկատմամբ նա վարվում եր ծայր աստիճան անողոք ու վճռական կերպով՝ ճնշելով գործադուլները, փրկելով «սրբազն սեփականության» իրավունքները, պահպանելով աշխատավորական մասսաների հաշվին կուտակվող հայ բուրժուազիայի կապիտալները:

## ՊԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԳՐԱՐԱՅԻՆ - ԳՅՈՒՂԱՅԻՍԱԿԱՆ ՔԸՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ագրարյայն-դյուլացիական ի՞նչ քաղաքականություն եր վարում դաշնակցությունն իր պետականության ըրջանում:

Դաշնակցության ագրարյայն-դյուլացիական քաղաքականությունը զտարյուն բուրժուակային-կալվածատիրական եր: Զնայած նա մասսաներին խարելու նպատակով հաճախ հայտարարություններ եր անում հողային ոեֆորմների մասին և թղթի վրա ընտրում եր ինչ-վոր հողային կոմիտեներ, դրանք բոլորը, սակայն, լոկ խոսքեր ելին: Դաշնակցությունն իր ամբողջ տիրապետության ընթացքում և վոչ մի լուրջ փորձ չարեց կատարել հողային ոեֆորմ, և վոչ մի փորձ չարեց կոնֆիսկացիայի յենթարկելու հայտառանի կալվածատիրական հողերը: Դաշնակցությունը, ընդհակառակն, ամեն կերպ հովանավորում եր կալվածատերերին և այդ պատճառով ել դաշնակցության ամբողջ տիրապետության ընթացքում, մինչև խորհրդայնացումը, Հա-

յաստանում շարունակվում եր խոշոր հողատիրությունը։ Մյու-  
պես, որինակ, ամբողջ Լոռու գավառում, վոր այն ժամանակ  
հայտարարված եր չեզոք դոնա և անմիջականորեն կառավար-  
վում եր Անդրկովկասի փաստական տերերը հանդիսացող իմպե-  
րիալիստական պետությունների և դաշնակների ու վրաց մենշե-  
վիկների միացյալ ուժերով, մինչև վերջն ել, այսինքն՝ մինչև  
խորհրդայնացումը շարունակվում եր խոշոր հողատիրությունը։  
Լոռում տիրապետող այդ խոշոր հողատիրության մասին գետես  
1920 թ. «Լոռվա գյուղացիության ձայն» լրագիրը դրում էր  
հետեւյալը։

«Լոռում մինչև այժմ շարունակվում ե նույնիսկ խոշոր  
հողատիրությունը։ Մի Սուլեյման Ալի ողլի, մի Հասան  
Բեղ և Յեղիպարով, և այլ բեղեր մինչև որս ել չահաղոր-  
ծում են Քյորպլույի, Այրումի, Լճակաճորի և մյուս գյու-  
ղերի գյուղացիությանը։ Մի Սոսնանց Վասիլ մինչև որս  
ել կալվածատեր և 1135 դեսյատին սքանչելի վարելահողի։  
մի Արամյան մինչև որս ել «իր» անտառներից վաղոններով  
փայտ ե կրում ու հաղարներով ծախում, իսկ ավելի մանր  
ազնվականներ ու հողատերեր՝ զանազան Արղությաններ,  
Շահվերդյաններ, Քալանթարյաններ, Բաշբեյուք Մելիք-  
յաններ և այլն, և այլն, շտապում են ծախծիսել, խեղճ  
գյուղացոց փողը պոկել… Հողային խնդիրը Լոռում են  
կետի վրա յե կանգնած, ինչ բնապետական ռեժիմում։  
Յերբ Մղարթեցիք ու Ղաչաղանցիք փորձեցին դիպչել կալ-  
վածատիրության՝ Ալվահվերդու կոմիսարիատից, անդ-  
լիքական գուբերնատորից ինչ-վոր թուղթ բերին թե՛ խելոք  
կացեք, ձեր պամեշչիկներին միք նեղացնիլ» (տե՛ս «Լոռվա  
գյուղացիության ձայն», 1920 թ. փետրվարի 1, № 2)։

Շարուրի շրջանում դաշնակցության տիրապետության ժամա-  
նակ կային և գործում եյին կառավարության բարեացակամ  
հովանավորությամբ միքանի խոշոր կալվածատերեր։ Այդտեղ  
աչքի եյին ընկնում Դեղոովների կալվածքները, վորոնք բռնում  
եյին հսկայական հողային տարածություններ։ Դեղոովները դաշ-  
նակցական կառավարությանը մատակարարում եյին միայն հա-  
ցահատիկ տարեկան 8000 փութ։ Այդ շրջանում եր նաև Շե-  
րեմետեվների հսկայական կալվածքը։

Եջմիածնի գավառում, ինչպես այդ հայտարարում եր 1919  
թվականի դեկտեմբերի 23-ի դաշնակցական պառաւմնենտի նիս-  
տում դաշնակ պետական գործիչ Սահակ Թորոսյանը, կային 32  
կալվածատերեր, վորոնք տիրապետում եյին ահագին հողային  
տարածությունների (տե՛ս «Հառաջ», 1920 թ., № 6)։ Նույն  
այդ գավառում, ինչպես նաև մյուս շրջաններում, ինչպես հայտ-  
նի յե, Եջմիածնի վանքն ուներ հսկայական տարածություններ։  
Այդորինակ կալվածատերեր կային դաշնակցական Հայաստանի  
դրեթե մյուս բոլոր վայրերում։ Յեվ գաշնակցական կառավարու-  
թյունը, ինչպես ասացինք, ամեն կերպ պաշտպանում, հովանա-  
վորում եր այդ կալվածատերերին և խստորեն ճնշում եր բոլոր  
այն գյուղացիական յելույթները, վորոնք ուղղվում եյին ընդ-  
դեմ այդ կալվածատերերի։ Թե ինչպես եր գաշնակցական կա-  
ռավարությունը պաշտպանում խոշոր հողատերերին, կալվածա-  
տերերին և ինչպես եր նա կովում մի կտոր հողի ձգտող գյու-  
ղացիության գեմ, այդ մասին պարզորեն խոսում ե հետեւյալ  
փաստը։

1919 թ. Զալալովլում, կուրթան, Վարդաբլուր և հարեան մի  
քանի գյուղերի՝ Խան-Աղայանների նախկին ճորտ գյուղացիու-  
թյունը փորձում ե բռնի կերպով իւլել Խան-Աղայանների կալ-  
վածքները, ընդարձակածավալ ու արդավանդ դաշտերն ու ան-  
տառները։ Վորոշ ժամանակ հողագուրի գյուղացիությանը հա-  
ջողվում ե վոճն պրապորչչիկ Անիելի որով ոգտվել Խան-Աղա-  
յանների կալվածքներից։ Սակայն շուտով «մեծապատիվ» տիկ.  
Վերդինե Խան-Աղայանը և իր վորդի Նիկոլայ Խան-Աղայանը  
դիմում են դաշնակցական կառավարության «վսեմափայլ» ներ-  
քին գործոց մինիստրին։ Դաշնակցական կառավարությունն այդ-  
քանն իմանալուն պես իսկույն խիստ միջոցներ ե ձեռք առնում  
«խոռվար» և «անկարգ» գյուղացիության դեմ, դուրս ե քշում  
նրանց կալվածքներից, հեռացնում ե իր պաշտոնից կառավարիչ  
Անիելին և «աղնվատոհմ» վնեմաշուր Խան-Աղայանների բոլոր  
իրավունքները վերականգնում ե։

Դաշնակցական կառավարությունը, սակայն, միայն հին,  
արդեն գոյություն ունեցող կալվածատերերի շահերը պաշտպա-  
նելով չեր սահմանավակլում։ Դաշնակցության տիրապետու-  
թյան շրջանում ստեղծվում եր բարձրաստիճան պաշտոնյաններից,  
դաշնակ մինիստրներից ու խմբապետներից կալվածատերերի մի

նոր շերտ : ԽԵԼՈՎ թուրք և հայ գյուղացիությունից ահադին հողեր, դաշնակցական կառավարությունն այդ հողերը հատկացնում եր իր խմբապետներին, իր կառավարական բարձր պաշտոնյաներին և այլն : Ընչաղուրկ և հողաղուրկ գյուղացիությունը, վոր կյանքի և մահու պայքար եր մղում մի կտոր հող ստանալու համար, վոչ միայն դաշնակցության ժամանակ վոչինչ չեր ստանում, այլև, ընդհակառակն, կորցնում եր այն, ինչ վոր ուներ : Դաշնակցական կառավարությունն առանձնապես հողային տարածությունները դրավում եր թուրք գյուղացիությունից, վորոնց նա անխնա կոտորում եր, «սրբման-մաքրման» եր յենթարկում իր վայրագ շովինստական ծրագրերն իրականացնելու նպատակով : Բնաջնջված թուրք գյուղացիության և հայ գյուղացիության ձեռքից խլված հողերը դաշնակցական կառավարությունը բաշխում եր իր պառամենտի անդամներին և նրանց խոշոր հողատերեր, կալվածատերեր դարձնում : Դաշնակցության տիրապետության ժամանակ մեծ քանակությամբ հողեր ստացան, այսպես, որինակ, դաշնակ պառամենտի անդամներ Հ. Տերտերյանը, Սիրակ Գրիգորյանը, Պերճուհի Բարսեղյանը, Արամ Սաֆրաստյանը, Վարվառե Սահակյանը և մինիստըրների կանայք՝ տիկ. տիկ. Հայկանուշ Գյուլիսանդարյանը, Ռլդա Արարատյանն ու վերջապես պետական բարձր սատիճանի պաշտոնյաներ՝ Կամսարականը, Թաղկոս Թուշյանը և այլն (տե՛ս «Սոցիալիստ-հեղափոխական», 1920 թ. ապրիլի 27, № 12) :

Դաշնակցության տիրապետության ժամանակ գրեթե բոլոր դաշնակցական մինիստըրները, խմբապետները, «բարձրաստիճան պաշտոնյանները» ձեռք եյին գցել իրենց համար սեփական կալվածքներ : Այդ կալվածքները նրանք ստացել եյին ամենաբարձր կերպով, աշխատավորական զանգվածների հաշվին : Դաշնակցական կառավարությունը բոնի կերպով դուրս եր քչում հողամասերից գյուղական աղբարնակությանը և այն սրան կամ նրան տալիս կապալով՝ տասնյակ տարիների ժամկետով : Այս մասին ահա մի որինակ : Դիլիջանի գավառի Աչաղուր գյուղի համայնքի տրամադրության տակ եյին, սկսած 1912 թ., «Դանաղուն» կոչված բավական լայնածավալ արոտառեղիները, վոր գտնվում են Դալիդաղ լեռան լանջում, գեղի Բորչալու և Լոռի տանող լեռնային ճանապարհի վրա : Այդ արոտառեղիներից միշտ ոգում վել և Աչաղը գյուղական համայնքը և այն նրա արամադրու-

թյան տակ ե յեղել : Դաշնակցական կառավարությունը, 1919 թ. հոկտեմբերի 4-ին, № 5396 կարգադրությամբ հրահանգում ե գյուրս քեւ աշաջուրցիներին այդ արոտավայրերից : ԽԵԼՈՎ «Դաշնաղուն» արոտավայրերն Աչաղուր գյուղի համայնքից և նույն նաղուն » արոտավայրերին Աչաղուր գյուղի համայնքից և նույն աղավառի համայնական վարչության նախադահ Ներսես Զաղեթյանը 1920 թ. հունվարի 9-ին դիմում ե դաշնակցական կառավարությանը այսպես կոչված՝ պետական գույքերի գլխավոր վարչությանը՝ այդ տերիտորիան իրեն հատկացնելու : Յել պետական դույքերի գլխավոր վարչության պետ պարոն Տոլյարը (վորը նույնպես կալվածքներ ուներ Յերևանի ըմակայքում), վորով առանց տատանվելու, այդ ամբողջ Աչաղուրը և հարեւան գյուղերի բում և կերակրվում եր ամբողջ Աչաղուրը և հարեւան գյուղերի աղգաբնակությունը, հանձնում ե Ներսես Զաղեթյանին 1920 թ. մարտի 3-ին, 99 տարի կապալակարգով (տե՛ս «Գյուղացու ձայն», 1920 թ., № 1) :

Դաշնակցությունը, ինչպես տեսնում ենք, վոչ միայն չեր կաղը խոշոր հողատիրությանը և կալվածատիրությանը, այլև կաղը հողատիրությանը և կալվածատիրերի ու հողատերերի նոր շերտեր :

Դաշնակցության հակասամատավորական այդ քաղաքականությունը, սակայն, տարվում եր վոչ միայն հողի նկատմամբ, թյունը, սակայն, ապահովությանը և կալվածատիրությանը, այլ ձյուղերի վրա : այլև տարածվում եր նաև ռանեսության այլ ձյուղերի վրա : Անդամ հենց գետերը, լճերը, վորոնցից ողտվում եյին շրջակա գյուղերի բնակիչները՝ ձուկ վորսալով, տրվում եյին կապալով գյուղերի բնակիչները՝ ձուկ վորսալով, և կուլակին : Այսպես, որինակ, Սևայս կամ այն բուրժույն և կուլակին : Այսպես, որինակ, Սևայս լճի և շրջակա գետերի ողտագործման մասին այն ժամանակ «Փողովուրդ» թերթի թղթակիցը գրում եր .

«Նորադուզ, նուեմբերի 10.—Ծովից ու զետից այս աշնանը ձկնորսության կապալը մեր գյուղից իւլվեց ու տրվեց մասնավոր մարդկանց՝ չափազանց ցածր վարձով՝ միայն 35 հազարով՝ Մեր գյուղը պատրաստ եր դրանից ել ավելի տալու, բայց Նոր-Բայազետի կուլակները և զոռաբները խլեցին մեքանից գեռ հնուց մեր և հարեւան յոթ գյուղերի ապրուստի գլխավոր միջոցը և հանձնեցին իրենց մարդուն՝ Ակրտիչ Սֆրիկյանին, վոր իր մեջքի հետեւ ունենալով քաղաքագլուխին՝ իր յեղուրը, այժմ ել 12 զինվոր և ուղարկել հսկելու, վոր ծովից գողություն ըլինի : Այս նոր

տնաեսական ձնշումը նպաստեց մեր գյուղացիների արտա-  
գաղթին, թեև ճանապարհներն ամբողջապես չեն բացվել,   
քայլ մեր դյուլից ամեն որ միքանի ընտանիք և առանձին  
մարդիկ են դնում թիֆլիս և Ռուսաստան աշխատանք գրա-  
նելու : «Սովոր կմեռնենք», — ասում են բոլորը և հուսա-  
հատական դըռության մեջ գրսից մի լույս ծագելու յեն սպա-  
սում» (տե՛ս «Ժողովուրդ», 1918 թ. նոյեմբերի 25, № 38) :

Ծնորհիլ դաշնակցական այդ բուրժուական, հակառակատա-  
վորական քաղաքականությանը, դաշնակցության՝ վողջ տիրա-  
պետության ընթացքում գյուղն ապրում եր չերտավորման այն-  
պիսի մի ուժեղ պրոցես, վորի հետևանքով արագ կերպով բա-  
ժանվում է յերկու բևեռների, յերկու ծայրերի: Մի բևեռում  
միքանի կուլակներ և վաշխառուներ, վոր կենտրոնացրել եյին  
իրենց ձեռքում գյուղի աշխատավորական մասսաների ամբողջ  
կայքն ու գույքը, հողերը, դաշտերը, այդիները և կորացրել,  
բազմապատկել եյին իրենց կապիտալները, իսկ մյուս բևեռում  
գյուղի աշխատավորական հողագուրկի, գոյության վերջին մնա-  
ցորդներից զուրկ հոծ, թշվառ զանդվածներն եյին, վոր զոր-  
ծաղուրկների հսկայական բանակ կազմելով, մի կոտր հացի հա-  
մար թափառում եյին ամեն տեղ, մուրում, ճաճախ կոտորվում  
սովոր, իսկ լավագույն դեպքում ստրկական պայմաններով աշ-  
խատանքի մտնում այս կամ այն բուրժույթի, կուլակի և վաշ-  
խառույթի մոտ:

թե իրոք Հայաստանի գյուղն ի՞նչպիսի պրոցես և ասլրել  
դաշնակցության արագետության որով, այդ մասին մենք այս-  
տեղ կը բենք միայն մի յերկու փաստ։ 1919 թ. հունիսի 14-ին  
«Հայաստանի հանրապետության ներքին գործոց մինիստրին ներ-  
կայացված մի զեկուցման մեջ, ի միջի այլոց, ասված և հետե-  
կյալը».

«Անցյալում յես հարդո մինիստրությանդ զեկուցում ե-  
մի տվել գալառական ժողովրդի ծայր աստիճան սեփակա-  
նագրկության նկատմամբ, ուր ասված ե, վոր հարուստ  
դասակարգն ուստի կը հանդամանքից սպեկուլացիայի յե-  
յենթարկում և հափշտակում յերկրագործ ժողովրդի ամ-  
բողջ ունեցվածքը՝ տան կարասիքից սկսած մինչեւ նրա ար-  
տերը և այլն։ Յես վերջերս յեղա Համարլույի ըջանում».

ուր Փիդիկապես ու տնտեսապես խպառ քայլայլած ժողովուրդն ամենաչնչին զնելով ծախսել ե այդինքը, տներն ու ամբողջ տարլա բերքը...» (տե՛ս Պետ. արխիվ, ներք. գործ. մին. գործ № 1809):

Այդ իրականությունը տեսնում ելին նաև դաշնակ-պորտՓե-  
լավոր ու անպորտՓել բազմաթիվ մինիստրներն ու նախարար-  
ները, վորոնք, սակայն, հրճվում և թող ելին փչում աշխատա-  
վոր գյուղացիության աշքերին։ Ինքը, տիրահռչակ Վրացյանը,  
վոր այն ժամանակ կոչվում եր «Գյուղատնտեսության և պետա-  
կան գույքերի նախարար», 1920 թ. հուլիսի 20-ին «Հ.Հ. նա-  
խարարների խորհրդին» ուղղած իր մի գրության մեջ ասում է  
հետեւյալը.

Սյոսպիսով, չքավոր ու միջակ գյուղացին ծախում ելին իրենց  
ունեցվածքը՝ Փիղիկական գոյությունը պահպանելու համար,  
իսկ գյուղի կուլազներն իրենց ձեռքն ելին կենտրոնացնում քայ-  
լուղի գյուղացիության ունեցվածքը: Իր ժամանակի մի մաս-  
քայլող գյուղացիության տվյալների համաձայն, Ալեքսանդրո-  
նավոր վիճակաբրության տվյալների համաձայն, Ալեքսանդրո-  
վորի գավառի Համամլուի Մրգանի տասնչորս գյուղերի բոլոր  
ծխերի միայն 8 տոկոսն եր ունեոք, իսկ 92 տոկոսը՝ չքավոր:  
ծխերի միայն 8 տոկոսն եր ազգաբնակություննից թալան-  
ուրիշ խոռօվ գյուղի 92 տոկոսն ազգաբնակություննից գուրկ, սոված,  
ված, հափշտակված եր ու ամեն միջոցներից զուրկ, սոված,  
իսկ ամբողջ գյուղն իր դաշտերով, հողերով ու բոլոր հարստու-  
թյուններով գտնվում եր այդ 8 տոկոսի, այսինքն՝ գյուղի կու-  
լազների և վաշխառումների ձեռքին: Բայց ավելի վատ դրություն  
եր ապրում Հայաստանի մնացած գյուղերի գյուղացիությունը:  
Դա ապահով լրացնում եր դաշնակցական կառավարության հարկա-  
յին քաղաքականությունը, վորը կապարի ծանրությամբ ընկ-  
նում եր աշխատավորական մասսաների վրա և նրանց վերջնա-

Կանորեն մատնում կատարյալ թշվառության, սովոր և մահվան:

Հայաստանի գյուղացիության կացությունը դեռ այն ժամանակ «կոմունիստ» թերթը հետևյալ կերպ եր նկարագրում.

«Թերեւ աշխարհի վոչ մի անկյունում այնպիսի արագությամբ չի աճում թշվառների, խեղճերի, շահագործվողների բանակը, վորավիսի արագությամբ այդ կատարվում ե Հայաստանի գյուղերում։ Իրականությունը ներկայացնում ե մի սոսկալի պատկեր։ Այն աշխատավոր գյուղացին, վորը յերկար տարիների արյուն-քրտինքով ձեռք եր բերել մի զույգ յեղ, այսոր ստիլված ե ծախել կուլակին այդ յեղները, յուր ընտանիքը քաղցի ու մերկության անողոք ճիրաններից գոնե ժամանակավորապես փրկելու։ Այդպիսիների թիվը գյուղում կազմում ե ամենախոշոր տոկոսն աղդաբնակության։ Ծախելով լծկանը, գյուղացին յուր ընտանիքով հաղիկ ամիս ու կես կամ ամենաշատը յերկու ամիս կարողանում ե ապրել։ Այսուհետեւ հնարավորություն չունենալով սեփական տնտեսությամբ դրազգելու, նա ծախում ե յուր բանվորական ուժը գյուղի կուլակին, վորը նրան աշխատեցնում ե դաշտերում, այդիներում և անտառներում։ Բայց վորովհետեւ գյուղում կուլակների թիվը համում ե միայն մի քանիսի, ընչազուրկ դարձող գյուղացիների՝ հարյուրների, մյուս կողմից՝ գյուղում կան նաև յեկլոր բանվորներ (գաղթականներ), ուստի և առաջ ե գալիս անդործ ու քաղցած կիսապրոլետարիատի մի ըստվար բանակ, վորը յուր վրա կրում ե լքվածության, տանջվածության, մերկի ու քաղցի սոսկալի կնիքը։ Աղքատների ու անդործների, հալածյաների ու շահագործվողների թիվն աճում ե որերով ու ժամերով, մյուս կողմից ել գյուղու տնտեսությունը փաստորեն աղդաբնակության միքանի տոկոսը կազմող միայն կուլակների ձեռքումն ե գտնվում, վորոնց հովանավորում ե դաշնակցական կառավարությունը հանուն «աղքային կապիտալի» ուժեղացման։ Յեկ այս ամենի հետևանքով արագորեն աճում ե գյուղական թշվառացած հոծ մասսաների դժգոհությունն ընդդեմ կուլակների ու սրանց հովանավորող կառավարությանը» («Կոմունիստ», Բագու, 1920 թ. ապրիլ, № 2)։

Ամեն կերպ հովանավորել կարվածատերերին, կուլակներին և ունկորներին։ Ճնշել, կեղեքել, հողագուրկ և իրավագուրկ դարձնել Հայաստանի աշխատավոր գյուղացիությանը — այս երահա դաշնակցության աղքարային-գյուղացիական քաղաքականության վողջ իմաստը։

## Պ.Շ.Ն.Ս.Կ.Ց.Ս.Ա.Ն. «ՊԵՏՈՒԹՈՒԹՅՈՒՆ» „ԳՈՀԱՄԱՆԵՔԸ“

Դաշնակցական Հայաստանի պատկերը, սակայն, լրիվ չենի, յեթե գոնե թեթևակի կերպով չխօսենք այն մասսայական և սխտեմատիկ բնույթի կրող թալանների, կողոպուտների, կաշառակերությունների ու կամայականությունների մասին, վորոնք կատարվում ելին դաշնակցական Հայաստանում՝ դաշնակ բանակի, մատուցեատների, խմբավետների, մինիստրների ու այլ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից բանվորա-գյուղացիական մասսաների նկատմամբ։

Անվերջ կողոպուտներ, թալաններ ու բռնություններ, եքըցեսներ, մարդասպանություններ, կաշառակերություն, ավազակություն և այլն։ Ահա դաշնակցական կառավարության «գոհարները», վորոնք շամեցուցիչ հարվածի պես իջնում ելին առանց այն ել հյուծված և թշվառության գիրկն ընկած Հայաստանի աշխատավորական մասսաների դիմին։

Դաշնակ բանակի թալանչի ոֆիցեները, խմբավետներն իրենց խմբերով, արյան բաղնիսներ սարքով հազարավոր դաշնակ մատուցերիստները, կաշառակեր ու դեղձարար դաշնակ պետականության բազմաթիվ պաշտոնյաները, սկսած գյուղի տանուտերներից, լիազորներից մինչև դաշնակ սորտֆելավոր մինիստրներից միքանի փաստական բանակի անդամների անսահման ծանրը — ահա այն վոհմակը, վոր մասսաների անսահման ծանր կացությունը դարձնում եր կրկնակի անտանելի, ուղղակի կոչմարային։

Ահա միքանի փաստեր այն մասին, թե ինչպիսի չաեսնված չարիք և պատուհաս ելին հանդիսանում դաշնակ բանակի ոֆիցերները, դաշնակ խմբավետները, դաշնակ կառավարության պաշտոնյաները Հայաստանի աշխատավորական մասսայի համար։

Դեռևս 1918 թ. ոկտոստոս ամսին դաշնակցական կառավարության այսպէս կոչված ռազմական նախարար դենքալ-մայոր Հախվերդյանն արձակում ե իր № 13 հրամանը, վորտեղ գրում եր.

«Ամեն որ ստացվում են բողոքներ և արձանագրություններ դուքքի կողմից բնակչության վրա կատարած անկարգությունների մասին: Վոչ միայն առանձին զինվորները, այլև ամբողջ ջոկատները՝ յենթասպանների, ավագ յենթասպանների և նույնիսկ սպանների առաջնորդությամբ անձնակիանաբար վերցնում են հաց, անասուններ ու այլ մթերքներ, խլում են նույնպես դրամ, արժեքավոր իրեր, տնային գույք: Տալուց հրաժարվողներին ծեծում են, վիրավորում և նույնիսկ գնդակահարում. չեմ կարող թույլ տալ նման դրություն, յերբ դորքերը, վորոնք պիտի պաշտպանեն ժողովրդին արտաքին և ներքին թշնամիներից իրենք դառնում են ժողովրդի թշնամիները: Դժբախտ ազգաբնակությունն իր իսկ դորքերի անկարգություններից վրկվելու համար պատրաստ և փախչել Տաճկաստան և ընդունել տաճկականություն ու մահմեդականություն, միայն թե ազատվի դորքերի ասպատակություններից» («Կառավարական լրաբեր», 1918 թ., № 5):

Դրությունն այնքան սարսափելի յեր, վոր անդամ դաշնակառավության «դենքալ-մայորն» ստիլված եր խոստովանել իրականությունը: Բայց նրա հրամանները, «չեմ կարող թույլ տալ»-ները, իհարկե, չեյին կարող դրությունը փոխել: Զե՞տալ ինչպես ժողովրդական առածն և ասում՝ «Ճուկը դլիսիցն է հոտում»: Դաշնակցական կառավարության և նրա դանազան մինիստրների ու դենքալաների այդորինակ բաղմաթիվ հրամաններն ու վորոշումները չեյին կարող դրությունը գոնե մազաչափ անդամ փոխել դեպի լալը: Ընդհակառակը, քանի դնում դրությունն այնքան ավելի վատթարանում եր: Հաջորդ տարին, 1919 թ. ոկտոստոսին Դարալագյաղի գավառային կոմիսարը ներքին գործոց մինիստրությանը գեկուցում ե իր գավառի մասին հետեւյալը.

«Չորականների կամայական գործունեյությունը հարստահարության և հասցնում գալառի առանց այն ել կեղեքված ժողովրդին. նրանց ամենորյա և բաղմագիսի պա-

հանջներն ու նրանց կատարել տալու միջոցները ծայր առաջանական զգվեցրել են դյուղացիությանը: Աբող տարածները շատ անգամ չեն վերադարձվում. յեզները մորթուովում են, ձիերը, ջորիները, եշերը ծախվում կամ փոխարինվում են վատերով. վոչ մի հնարավորություն չկա ստուգելու այդ դեպքերի հեղինակներին: Գյուղացիք ուղղակի ոմքակոծում են կոմիսարիատին՝ ինդրելով՝ հետ ստանալու ժեկի եշը, մյուսի սայլը, ձին կամ ջորին... ավելորդ և հիշել այդիների և բանջարանոցների մասին, վորոնք ուղղակի սիստեմատիկ վոչնչացման են յենթարկուում» ((Պետ. արխիվ, ներքին գործոց մին. գործ № 1619):

Կամ ահա վերցնենք հենց դաշնակցական կառավարության անկախ ու միացյալ Հայաստանի» մայրաքաղաքը, այնտեղ, ուր նստում եյին գանձակ ջոշերը, ուր նիստեր եր ունենում դաշնական ախրահոչակ «պառլամենտը»: Այստեղ նույնպես թաղավորում եյին համատարած բոնությունները, թալանն ու կողովուածը: Հենց նույն 1919 թ. ոկտոստոսի 18-ի դաշնակ կառավապուածը: Հենց նույն կոչված խնամատարության մինիստրությունը բության այսպիս կոչված խնամատարության այս կամ այն վարարվում են զինվորական իշխանության այս կամ այն վարարվում անհատ սպանների, կամ քաղաքային ինքնության, կամ անհատ սպանների, միավարության և միլիցիայի կողմից, չե հենված վոչ մի նավարության և միլիցիայի կողմից, չե հենված վոչ մար, քաղաքական գործիքի և վոչ ել վորեւ ժամանակավոր արած կարգադրությունը և վոչ ել վորեւ ժամանակավոր արած կարգադրությունը և վոչ ել վորեւ ժամանակավոր արած կարգադրությունը և առաջարկում ե ձրիաբար:

1. Յուրաքանչյուր սպա իր իրերը ստեղափոխելու համար՝ քաղաքում կամ քաղաքից դուրս՝ ինքն անձամբ, կամ զինվորների ձեռքով պատահած սայլը բռնի գրավում և տանում բանեցնում ե ձրիաբար:

2. Յուրաքանչյուր զինվորական վարչության պետ, կամ միլիցիայի միջոցով, կամ յուր զինվորների՝ հավաքել և տալիս գյուղերից քաղաք ազրանք բերող սայլապաններին և քչել և տալիս Դամարլու, Սուրմալու, Եջմիածին և այլն։ Շատ դյուղացիներ տեղից-տեղ տեղափոխելով մնում են դուրս շաբաթներով։ Կորցնում են իրենց պահող միակ լըծկան յեղները, ջարդում արաբան և դատարկաձեռն հետ դառնում։

... 3. Յուրաքանչյուր միլիցիոներ կամ զինվոր (հաճախ նաև մասնավոր մարդեկ) բաղարից հավաքում են սայլերին այս կամ այն պատրվակով, տանում քաղաքից դուրս՝ յուրաքանչյուր սայլից վերցնելով՝ 200—300 ռուբրի՝ արձակում են։ Այս մի շարաթ և յետ հետեւյթին և իսկապես կատարվում է այն, ինչ-վոր յերակայել անդամ դժվար է...։

5. Առավոտ գիշերով միլիցիոներները և զինվորները թղթով կամ առանց թղթի լցված շուկան ծեծի և ջարդի տակ հայտագում են սայլերը։ Գյուղացիք շատ անդամ իրենց յեղները ծածուկ արձակում, վախցնում են, թողնելով սայլերը շուկայում կամ կազարմաների դռներին...։

... 7. Առավոտ գիշերով զինվորներն ու միլիցիոներները խմբեր կազմած կամ անհատաբար հայոց նոր գերեզմանատնից սկսած մինչև քաղաքի շուկան կտրում են սայլերի ճամբաները, վերցնում են բերած ապրանքը կամ դրամ և ապա բաց թողնում։ Քաղաք համեմուկ շուկայում կատարվում է նոր թալանը ժամը 4—5-ին» (Պետ. արխիվ, ներքին գործոց մին. գործ № 1420)։

Յեթե այսպես եր գրությունը կենարոնում, այսպիսի բռնություններ, թալաններ եյին տեղի ունենում «մայրաքաղաքում»՝ դաշնակ ջոջերի քթերի տակ, ապա հասկանալի յե, թե ինչ կլիներ ծայրամասերում, վորտեղ գործում եյին վոչ միայն դաշնակ զինվորները, մառզերիստները, այլև դյուղական կուլակները։ Յեկ գրությունն, ինչպես ասացինք, քանի գնում վատթարանում, ծանրանում եր։ Փոքրիկ որինակ ևս, այժմ արդեն 1920 թ. ոգոստոսից։ 1920 թ. ոգոստոսին Դարալագյազի գառապետախն գեկուցում են գալառի գյուղերից։ Այսպես, որինակ, Բաքենդ գյուղից գեկուցում են։

«Մեր դյուզն յեկած զինվորությունը վերջնականապես քայլացից մեզ։ Բոլորիս տեսողի յենթարկելով տանում ու անխնա վչացնում են մեր գույքն ու կարողությունը, խոտըն ու յոնչաները, վչացնում ու քայլայում են այդիները, վոտի տակ տալով խաղողի ծառերը, մինչեւ անդամ մեկուներից իրենց ձեռքով մեղք են հանում։ Խոտի հարցն այնպես սուր բնույթ և կրում, վոր գյուղացիներս վրդով-ված ու հուզված չփառենք, թե ում դիմենք, մեր բոլոր գանգատները մնացել են ձայն բարբառ անապատի... գյուղից շատերը ծեծված են զինվորների կողմից» (Պետ. արխիվ, նախարարների խորհրդի գործ, № 116)։

Որինակներ վորքան ասեք կարելի յե բերել դաշնակցական տիրապետության տակ յեղած ամեն մի անկյունից, վորովհետեւ այդ թալաններն ու կողոպուտներն առանձին դեսքեր չեյին, այլ մասսայական ու համատարած։ Յեկ այդ ավագակությունները, կողոպուտներն ու թալանները, իհարկե, միայն զորքի, զինվորականների կողմից չեյին կատարվում։ Ավելի սարսափելի ու անտանելի ասպատակություններ կատարում եյին դաշնակցական բազմաթիվ պորտաբույծ խմբավետները, վորոնք հայտնի եյին ամենքին իրենց վայրագությամբ ու բռնապետությամբ։ Սրանք մահ ու սարսափ եյին տարածում քաղաքներում, իրենց խմբերով շրջում եյին գյուղերը և կողոպուտներ ու անտանելի բռնություններ գործադրում, վերջնականորեն ավերում ու քայլայում գյուղերը, կործանման հացնում աշխատական զանգվածներին։ Բերենք այդ մասին մեկ որինակ։ Դաշնակ կառավարության ներքին գործերի բաժնի կառավարչի անունով կրիստուլախ գյուղից զըռում եյին։

«Մի ինչ-վոր Ղազո, վոր իրեն անվանում և Դալի Ղազար, և Նժդեհի ջոկատը, կրիստուլախ գյուղում անկարգություններ են անում և թալանում աղջանակությանը, արածացնում դաշտերն ու այգիները։ Շրջանային կոմիսարն ուժ չունի կովելու այդ բանդաների զեմ։ Նույնովիս անկարգություններ են անում գեներալ Նազարետկովի պահակախումբը և շտաբի զորամասի գումակի զինվորները։ Գումակի պետ Տէր-Մարտիրոսյանի հրամանով կերցնում են ցանքակերը։ Թափանձանոք խնդրում ենք շտապ կարգադրու-

թյուն, վորպեսզի վերջնականապես չքայքայլի տղթաբնակությունը և արհեստական սով չստեղծվի»:

Սակայն կողոպուտներ ու բռնություններ կատարողները միայն դորքը և խմբապետները չեյին: Այդ սե խայտառակ դործին ամենաակտիվ կերպով մասնակցում եր դաշնակցական ամբողջ պետական ապարատը: Ամեն տեսակ պաշտոնյաններ, սկսած գյուղական լիազորներից մինչև պատվարժան մինիստրները, իրենց հերթին կատարում եյին սանձարձակություններ, բռնություններ ու կողոպուտներ: Ահա մի որինակ այդ մասին: Ներքին դործոց մինիստրին Նոր-Բայազետից շտապ հեռագրում են.

«Շըջանումս անիշխանությունը գնալով հոկայական չափերի յե հասնում, վոստիկանական իշխանությունն անհանդուրժելի վոտնածդություններ և կատարում, կաշագակերությունը հոկայական ծավալ և ստացել, կատարում են այնպիսի բռնություններ և գաղանություններ, վորոնք սուլթանների իշխանությանը միայն հատուկ են»: (Պետ. արխիվ, ներ. դործ. մին. գործ, № 1617):

Ինչպես տեսնում ենք, հետ չեյին մնում նաև դաշնակցական կառավարության բազմաթիվ վորքը ու մեծ պաշտոնյանները, վորոնք հափշտակում, կլանում եյին աշխատավորական մասսաների վերջին միջոցները: Զենք խոսում այստեղ առանձնապես դաշնակ մինիստրների և այլ մեծամեծ պաշտոնյանների անթիվ ու անհամար և սարսափելի կերպարանք ստացած զեղծումների, կաչառակերությունների մասին, վորովհետև նրանք հանրահայտ փաստեր են: Բայց ավելորդ չենք համարում այստեղ մի որինակ ևս բերել՝ ցույց տալու դաշնակ պետականության ստորին՝ գյուղական ապարատների պաշտոնյանների անհամար թաւանների ու կողոպուտների մասին: «Ժողովուրդ» թերթի թըակիցը, որինակ, Նոր-Բայազետից գրում եր.

«Մեր գավառի ժողովրդի գրությունն անտանելի յե և անարխիան հետզհետե խորանում ե: Ուրիշ կերպ չեր կարող լինել, վորովհետև ամեն տեսակ պաշտոնյաններ, բաղմաթիվ լիազորներ շարունակ զեղծումներ են կատարում և որինակ տալիս հակապետական քայլերի: Այսպես, ինքնապաշտանություն կազմակերպող մի լիազոր, թողած այն

դործը, վորի համար ուղարկված ե, կատարում և դործակալի, հաշտարար դատավորի, հաշտարար միջնորդի, կոմիսարի, ուսի և այլ պաշտոններ: Գանդատավորներից ու մեղավորներից «սիեցրաչներ են առնում», իսկ սպանություն յեղած զեղքում՝ «արյունի դիմեր» վերցնում: Բաղմաթիվ դողեր տիրոջ աչքի առաջ ծախում են իրերը. բաղմաթիվ մարդասպաններ ման են գալիս՝ վոչ մի ուշադրություն դարձնող չկա: Միայն ամեն ծակից մի լիազոր և դուրս գալիս և սպանալով ստիպում և գյուղացուն լրձկանը ծախել և գրում ե իրենց շտարը—«վոր զենք ծախէն նամակաբերին»: Մկանի ե զանազան խմբերի մուտքը գրված: ինչ անկարգություններ են անում այդ «մառզերիստ հյուրերը»՝ ավելորդ և մանրամասն գրել, բավական և ասել, վոր ժողովուրդը զգված ասում և տաճիկները դան սրանից լավ ե»: («Ժողովուրդ», նոյեմբերի 1, 1918 թ., Յերևան):

Յեկ այսպես թալանում, կողոպտում եյին դաշնակ վորքերը, սպաները, խմբապետները, մառզերիստները, փոքր ու մեծ բաղմաթիվ պաշտոնյանները: Մակայն այդ թալանների և կողոպտուաների հետ միասին հանդես եր գալիս դաշնակցական դժոխքի սարսափներից ամենասարսափելին՝ սիստեմատիկ լրույթ ստացած մարդասպանությունները, ավելի ճիշտ ասած՝ «մարդակերությունը»: Ամեն որ լուրեր եր ստացվում դաշնակցական «դրախտավայրի» բոլոր անկյուններից այն մասին, թե անհայտ վոճրագործներն ահազեն քանակությամբ մարդիկ են սպանել, մորթել ու թալանել: Յերբ գյուղացիները փորձում եյին վորեն տեղ գնալ, նրանց հենց ճանապարհին կողոպտում և հաճախ մորթուում եյին: Բավական ե հիշել միայն Յերևան—Աշտարակ, Յերևան—Եջմիածին, Եջմիածին—Աշտարակ տանող ճանապարհների անպատճելի վոճիրները: Յեկ այդ վոճիրները կատարվում եյին վոչ միայն ծայրամասերում, ըրջաններում ու ճանապարհներում, այլև հենց կենտրոններում, անդամ հենց «մայրաքաղաքում»: Ահա դաշնակցական մի թերթի վկայությունն այդ մասին.

«Գրեթե ամեն որ և ամեն կողմե մեղի հասնե գողության, մարդասպանության, թալանի, ծեծի ու բռնությանց

լուրեր։ Վաղարշապատի մեջ ներկա ամսույս սկզբին հաշվելով տասն և հինգ որվա ընթացքին տեղի ունեցել է տասնհինգ մարդասպանության դեպք, այսինքն՝ յուրաքանչյուր որ մեկ հոգի զոհվել է անհայտ ձեռքերով։ Միայն ապրիլի 13-ին տեղի ունեցել է մարդասպանության 4 դեպք։ Նույն պատկերը հարակից հայելումներով և ավելի այլանդակ գույներով գոյություն ունի և մյուս շրջաններում։ Ավելի հեռուները յերթալու պետք ալ չկա։ Ահա Յերևան, վոր մայրաքաղաքի պատիվ ունի ու կսպավեր գեթ, վոր ամեն ջանք և միջոց չի խնայվեր անդորրությունը պահպանելու, կներկայանա քառոսային և խոռվատանջ վիճակին մեջ։ Պողության դեպքերը ամեն գիշեր և բոլոր անկյունները, սպանության և վիրավորման դեպքերը հատհատ և հաճախ յերեքով, չորսով, ծեծ, բոնություն անհանգուրժելի շարժ ու ձեեր մեր աչքերը կխոթվեն խոլական ժամանակ մը. մարդիկ գիշերները դուրս դաշեն կզուշանան, ժողովի, յերեկույթի հաճախելե կվախենան, տեսակ մը յերկյուղ, անորոշ անվստահություն մը համակեր և ամենքը։ Պետք կա հիշելու ամեն գիշեր տեղի ունեցող հրածգության մասին, վորոնք յերբեմն ամրող քաղաքին մարտադաշտի մը յերեկույթ կուտան։ Անոթիները և սովորաները չեն, վոր կխոռվեն հանրային անդորրությունը։ Դժբախտաբար անոնք գառներուն նման վիզներին ծուած ճաշարանների փեղկերի առջե կամ փուռին դիմաց մահվան կսպանեն արտակարգ անդորրությամբ։ Զարիքը կուշտերեն, չափազանց շատ հղբացածներեն կուգա, չարագործությունը արհեստի վերածող և գեխության ու հափշտակության մոլոցքով բռնված ստահակներեն կուգա» («Աշխատանք», 1919 թ. 26 ապրիլի, № 12)։

Ինչպես տեսնում ենք, անգամ դաշնակ թերթուկն ստիպված էր խոստվանել այն հասկանալի հանգամանքը, վոր այդ բոլոր թալանները, կողոպուտները, ավաղակություններն ու մարդասպանությունները հենց իրենց՝ դաշնակների, համփաների, հարուստների, կուշտերի դորձն եր, վոր նրանց այդ «հրաշալիքներն» իրենց ամբողջ ծանրությամբ իջնում եյին աշխատավորական մասսաների դիմին, և առանց այն ել քայլքայման դուռը հասած նրանց տնտեսությունները վերջնականորեն կործա-

նում ու բազմահազար ընչաղուրկ, թալանված, կողոպտված, դոյության վերջին մնացորդներից զուրկ մասսաներին դաժան սովոր և մահվան մատնում։

## ՏԵՇԵՍՍԱԿԱՆ ԱՌԵԱԼԻՑ ԴԱՇՆԱՅԻՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Դաշնակցական կառավարության ձեռնարկած անընդհատ պատերազմները, ազգային փոքրամասնությունների վայրենի ջարդերն ու պողբումները, դաշնակ խմբագետների թալանները, ավերումներն ու բռնությունները հայաստանի առանց այն ել չափազանց աղքատ ու հետամնաց ժողովրդական տնտեսությանը չտեսնված փլուզման և անկման եյին գատապարտում։ Յեվ անտեսական այդ կատաստրոֆիկ անկումը կատարվում եր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։

Գործարանային արդյունաբերությունը դաշնակցական հայաստանում գրեթե խալառ բացակայում եր։ Հայաստանը դաշնակցության տիրապետության շրջանում չուներ զրեթե և վոչ մի քիչ թե շատ կարևոր արդյունաբերական ձեռնարկություն։ Յարիզմի տիրապետության շրջանում գաղութային թալանների նպատակով հայաստանում հիմնած հատ ու կենտ արդյունաբերական ձեռնարկներն ել դաշնակցության իշխանության շրջանում ամբողջին կործանվել ու քայլքայի եյին։

«Յերկրի միակ աչքի ընկնող դործարանը՝ Շուստովը, վոր աղդայնացման եր յենթարկվել դաշնակցական կառավարության կողմից, փաստորեն չեր աշխատառում։ Վերջնականապես կոնսերվացիայի եյին յենթարկվել զափանի և Ալլահվերդու պղնձահանքերը, փակվել կամ կրծատել եյին իրենց արտադրությունը՝ յեղած մանրմունը դործարանների ու արհեստանոցների մեծ մասը։ Յերկաթուղային տրանսպորտը, ժողովրդական տնտեսության այդ արյունատար յերակը, գտնվում եր նույնական վերին աստիճանի անմիթար վիճակում։ Յեթե նկատի ունենանք, վոր Հայաստանը չունի իր վառելիքի սեփական բազման և դաշնակցական իշխանության որով նրա թշնամական հարաբե-

բություններն Ադրբեջանի հետ թույլ չեյին տալիս այդ պակասը ծածկել նորմալ ներմուծումով, ապա պարզ կլինի, թե ինչու իրերի իրական դրությունն եյին արտացոլում դաշնակցական յերկաթուղային տրանսպորտի շուրջը հյուսված զանազան անելությունները»: (Ա. Խանջյան, «Մայիսյան ապստամբությունից գեղի Նոյեմբերյան հաղթանակը», Կուսարատ, 1935 թ., էջ 14):

Դաշնակցական Հայաստանի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը կազմում եր Հայաստանի 1914 թ. արտադրանքի միայն 8 տոկոսը: Մի չնչին թիվ, վորը ցույց է տալիս դաշնակցական Հայաստանի արդյունաբերության վիճակն ու դերը ժողովրդական անտեսության մեջ: Դաշնակցական Հայաստանը փաստորեն զուրկ եր արդյունաբերությունից:

Դաշնակցական Հայաստանի ժողովրդական անտեսության հիմնական ճյուղը հանդիսանում եր գյուղատնտեսությունը, վորը, սակայն, նույնպես հասել եր իր քայլքայման ամենահռավոր յեղերին: Ահա միքանի տվյալներ.

Նախ և առաջ ի՞նչ վիճակի մեջ եյին գտնվում գյուղատնտեսության համար վճռական դեր ունեցող գյուղատնտեսական արտադրական հիմնական գործիքները, գործիքներ, տուանց վորոնց հնարավոր չե գյուղատնտեսական արտադրությունը:

Հայտնի յե, վոր մինչև խորհրդայնացումը Հայաստանի գյուղատնտեսությունը բոլորովին ծանոթ չեր մեքենայական արտադրության հետ: Մեքենայական արտադրությունը, գյուղատնտեսության պրոդրեսիվ, զարդացած ձևերը, մինչև խորհրդայնացումը Հայաստանում խսպառ բացակայում եյին: Գյուղատնտեսության մեջ արտադրության հիմնական գործիքները շարունակում եյին մնալ հին նահապետական պրիմիտիվ արտադրության միջոցները՝ արորը, գութանը, գերանդին, մանդաղը և այլն:

Սակայն գյուղատնտեսության արտադրության այդ պլրիմիտիվ գործիքներն անդամ դաշնակցականների տիրապետության ժամանակ սոսկալի չափով փչացել, պակասել եյին: Դաշնակառավարության «Մտատիստիկական կենտրուրոյի կառավարիչ» տիրահռչակ սպեցիֆիկ աղնակալեղ Բախչի Իշխանյանը 1920 թ. իր խմբագրությամբ ու ներածությամբ լույս ընծայած

«Հայաստանի գյուղատնտեսական վիճակագիրը 1919 թվին» հայաքածովի մեջ բերում եր հետեւյալ տվյալները.

Յերևանի նահանգում ամեն մի գյուղին գալիս եր միջին թվով.

1 Ա. թ ո թ . . . . .	1914 թ.	128 հատ	1919 թ.	32 հատ
2 Գութան . . . . .	"	21 "	"	8 "
3 Գերանդի . . . . .	"	246 "	"	43 "
4 Մանդաղ . . . . .	"	789 "	"	28 "

Ցույն հարաբերությունները Ղարսի շրջանի յուրաքանչյուր գյուղում հետեւյալ պատկերն եր տալիս.

1 Ա. թ ո թ . . . . .	1914 թ.	120 հատ	1919 թ.	19 հատ
2 Գութան . . . . .	"	19 "	"	2 "
3 Գերանդի . . . . .	"	194 "	"	31 "
4 Մանդաղ . . . . .	"	28 "	"	7 "

Զանգեզուրի գալարում հետեւյալ պատկերն եր ստացվում.

1 Ա. թ ո թ . . . . .	1914 թ.	20 հատ	1919 թ.	15 հատ
2 Գութան . . . . .	"	9 "	"	5 "
3 Գերանդի . . . . .	"	79 "	"	11 "
4 Մանդաղ . . . . .	"	148 "	"	65 "

Վերջապես այս նույն հարաբերությունն ամբողջ Հայաստանում, Հայաստանի ամեն մի գյուղում, միջին հաշվով հետեւյալ կերպ եր արտահայտվում:

1 Ա. թ ո թ . . . . .	1914 թ.	119 հատ	1919 թ.	27 հատ
2 Գութան . . . . .	"	19 "	"	6 "
3 Գերանդի . . . . .	"	280 "	"	37 "
4 Մանդաղ . . . . .	"	68 "	"	32 "

Նույն այդ աշխատության մեջ («Հայաստանի գյուղատնտեսության վիճակագիրը» 1919 թվին) Բախչի Իշխանյանը բերեառության միջակագիրը մասին թվական տվյալներ գյուղատնտեսության արտադրության հիմնական գործիքների վերաբերյալ, առաջարկություն խոստովանել նաև հետեւյալը.

«Գործիքների քանակական նվազման չափն ավելի ցայտունակներով ե արտահայտվում առանձին գալարում. այսպես, որինակ, Ալեքսանդրոսովի գալարում արորի միջին թիվն ամեն մի գյուղին 294 հատից՝ 1914 թ. րորի միջին թիվն ամեն մի գյուղին 294 հատից՝ 1914 թ.

բություններն Ադրբեջանի հետ թույլ չելին տալիս այդ պակասը ծածկել նորմալ ներմուծումով, ապա պարզ կլինի, թե ինչու իրերի իրական գրությունն ելին արտացոլում դաշնակցական յերկաթուղային տրանսպորտի շուրջը հյուսված զանազան անեկդոտները»: (Ա. Խանջյան, «Մայիսյան ապստամբությունից դեպի Նոյեմբերյան հաղթանակը», Կուսհրատ, 1935 թ., էջ 14):

Դաշնակցական Հայաստանի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը կազմում եր Հայաստանի 1914 թ. արտադրանքի միայն 8 տոկոսը: Մի չնչին թիվ, վորը ցույց է տալիս դաշնակցական Հայաստանի արդյունաբերության վիճակն ու դերը ժողովրդական տնտեսության մեջ: Դաշնակցական Հայաստանը փաստորեն զուրկ եր արդյունաբերությունից:

Դաշնակցական Հայաստանի ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղը հանդիսանում եր գյուղատնտեսությունը, վորը, սակայն, նույնպես հասել եր քայլաբան ամենահեռավոր յեղքերին: Ահա միքանի տվյալներ.

Նախ և առաջ ի՞նչ վիճակի մեջ ելին գտնվում գյուղատնտեսության համար վճռական դեր ունեցող գյուղատնտեսական արտադրական հիմնական գործիքները, գործիքներ, տուանց գործնդնարավոր չե գյուղատնտեսական արտադրությունը:

Հայտնի յե, վոր մինչև խորհրդայնացումը Հայաստանի գյուղատնտեսությունը բոլորովին ծանոթ չեր մեքենայական արտադրության հետ: Մեքենայական արտադրությունը, գյուղատնտեսության պրոդրեսով, զարդացած ձեւերը, մինչև խորհրդայնացումը Հայաստանում խաղառ բացակայում ելին: Գյուղատնտեսության մեջ արտադրության հիմնական գործիքները շարունակում ելին մնալ հին նահապետական պրիմիտիվ արտադրության միջոցները՝ արորը, գութանը, գերանդին, մանգաղը և այլն:

Սակայն գյուղատնտեսության արտադրության այդ պրիմիտիվ գործիքներն անդամ դաշնակցականների տիրապետության ժամանակ սոսկալի չափով փչացել, պակասել ելին: Դաշնակառավարության «Ստատիստիկական կենտրուրոյի կառավարիչ» տիրահռչակ սպեցիֆիկ պնակաւեղ Բախչի իշխանությունը 1920 թ. իր իմբագրությամբ ու ներածությամբ լույս ընծայած

«Հայաստանի գյուղատնտեսական վիճակագիրը 1919 թվին» հավաքածվի մեջ բերում եր հետեւյալ տվյալները.

Յերևանի նահանգում ամեն մի գյուղին գալիս եր միջին թվով.

1 Ա. թ ո թ . . . . .	1914 թ.	128 հատ	1919 թ.	32 հատ
2 Գութան . . . . .	"	21 "	"	8 "
3 Գերանդի . . . . .	"	246 "	"	43 "
4 Մանգաղ . . . . .	"	789 "	"	28 "

նույն հարաբերությունները կարսի ըրջանի յուրաքանչյուր գյուղում հետեւյալ պատկերն եր տալիս.

1 Ա. թ ո թ . . . . .	1914 թ.	120 հատ	1919 թ.	19 հատ
2 Գութան . . . . .	"	19 "	"	2 "
3 Գերանդի . . . . .	"	194 "	"	31 "
4 Մանգաղ . . . . .	"	28 "	"	7 "

Զանգեցուրի գալարում հետեւյալ պատկերն եր ստացվում.

1 Ա. թ ո թ . . . . .	1914 թ.	20 հատ	1919 թ.	15 հատ
2 Գութան . . . . .	"	9 "	"	5 "
3 Գերանդի . . . . .	"	79 "	"	11 "
4 Մանգաղ . . . . .	"	148 "	"	65 "

Վերջապես այս նույն հարաբերությունն ամբողջ Հայաստանում, Հայաստանի ամեն մի գյուղում, միջին հաշվով հետեւյալ կերպ եր արտահայտվում:

1 Ա. թ ո թ . . . . .	1914 թ.	119 հատ	1919 թ.	27 հատ
2 Գութան . . . . .	"	19 "	"	6 "
3 Գերանդի . . . . .	"	280 "	"	37 "
4 Մանգաղ . . . . .	"	68 "	"	32 "

Նույն այդ աշխատավայրում մեջ («Հայաստանի գյուղատնտեսության վիճակագիրը 1919 թվին») Բախչի իշխանյանը բերեառության վիճակի չըջանների մասին թվական տվյալներ գյուղատնտեսության արտադրության հիմնական գործիքների վերաբերյալ, ստիպված եր լինում խստովանել նաև հետեւյալը.

«Գործիքների քանակական նվազման չափն ավելի ցայտուն որինակներով ե արտահայտվում առանձին գալարում. այսպես, որինակ, Ալեքսանդրովովի գալարում արորի միջին թիվն ամեն մի գյուղին 294 հատից՝ 1914 թ. բորի միջին թիվն ամեն մի գյուղին 294 հատից՝ 1914 թ.

իջել է 33-ի 1919 թ., կամ վերջինս նվազել է ինն անգամ՝ կամ մոտ 900 տոկոսով: Գերանդիխերը նույն դավառում 422-ից իջել է 31-ի, կամ նվազել են տասներեք անգամ և կամ ավելի քան 1260 տոկոսով:

Այս տեսակ նվազեցման նույնպիսի որբնակներ դոնում ենք նաև մյուս դավառներում. որինակ, Ն. Բայազետում գերանդիխ նվազել է 583 հատից մինչև 70 հատ, կամ իջել է ավելի քան 8 անգամ: Հարսի շրջանում նույն գերանդիխ նվազել է 8—9 անգամ» (տե՛ս «Հայաստանի դյուլ. վիճակագր. 1919 թ.» Բ. Իշխանյանի խմբագրությամբ և ներածականով, Յերևան, 1920 թ., էջ 35):

Թե վորքան ճիշտ են «պրոֆեսիոնալ կեղծող» Բարչի իշխանի թվական տվյալները, այդ մի կողմ թողնենք: Սակայն, այնուամենայնիվ, մի քան պարզ է, վոր Բախչի Իշխանյանը, վորը խունկ ու մոմ եր ծխում դաշնակ մինիստրների ու խմբապետների առաջ, չեր կարող յերբեք Հայաստանի տնտեսական կացությունը պատկերացնել ավելի վատթար, վալեի ճնշել գույներով, քան այն, ինչ վոր կար իրականում: Յեկ վերջապես այդ տվյալները, վոր հայաքել եր Բ. Իշխանյանը, հրատարակած էն դաշնակ կառավարության այսպես կոչված «Պետական վիճակագրության գլխավոր բաժանմունքի» կողմից:

Այսպես ուրեմն, ինչպես տեսնում ենք, պրիմիտիվ, նոհապետական, հին, խղճուկ արտադրության միջոցների վրա հիմնված Հայաստանի գյուղատնտեսությունը, դաշնակ պետականության ժամանակ, կորցնում եր իր արտադրության անգամ տրդ խղճուկ միջոցների գրեթե 70, 80, 90 տոկոս:

Յեկ բնական եր տեսնել այդ բոլորից հետո գյուղատնտեսության աննախընթաց դեղորագայիան, ուղղակի կատարյալ քայլքայումը: Գյուղատնտեսական արտադրությունը, մշակումը, քառիս լայն իմաստով, գրեթե դադարել եր: Յանքերի տարածությունները կրծառվել եյին անառելի չափերով: Յանում, հողը մշակում եյին միմիայն գյուղական կուլակները. իսկ գյուղական միջակ, աղքատ զանգվածները, զրկված իրենց կտոր հողերը մշակելու համար անհրաժեշտ վորեւ արտադրության միջոցից, ստիպված եյին սովոր չմեռնելու, իրենց դոյությունը պահպանելու համար՝ վաճառքի համել իրենց մի կտոր հողը, պարտեզը, տունը, գույքը և այլն:

Այսպես, որինակ, Սուրբալիի գավառում մինչև դաշնական կառավարության տիրապետությունը ցանվում եր մոտ 15—20.00 դեսյատին ցորեն: Իսկ դաշնակցության տիրապետության որով ամենաշատը միայն 1000—1200 դեսյատին (տե՛ս «Սոցիալիստ-հեղափոխական», 1919 թ., № 15, սեպտ., Յերևան): Կամ Արարանում զիրտեղ ցանվում եր մինիմում 9000 դեսյատին հող, դաշնակցության իշխանության որով նույն տեղը ցանվում եր միմիայն 1500 դեսյատին (այս նույն տեղը): Կամ Ալեքսանդրոս պոլի գավառը, վորն առաջներում ցանվում եր 80.000 դեսյատին, դաշնակցության կառավարության ժամանակ ցանվում եր միայն 27.000 դեսյատին: Իսկ ամբողջ Հայաստանի պատկերն արտահայտում ե ստորև բերված աղյուսակը, վորը կաղմամած և կենտրիզմարի տվյալների հիման վրա:

Այսպես, ցանքերի տարածությունը դեսյատիներով.

1914 թ.	1919 թ.	1919 թ.
տեղել և մնացել և բարերմամբ	դեղել և մնացել և բարերմամբ	դեղել և մնացել և բարերմամբ

1 Հացարույսին .	247,766	71,778	29.0
2 Տեխնիքական բույսեր գլխավորապես բամբակակ .	10,736	584	5.4
3 Գետախնձոր .	6,392	1,691	26.5
4 Ցուղարեր բույսեր .	4,614	858	18.6
5 Բանջարանոցներ և բոստաններ .	3,440	628	18.2
6 Ճանովի խոտ .	4,004	175	4.4
Բոլոր տեսակի ցանքերը ընդամենը	276,957	75,714	27.3

Այսպիսով, Հայաստանում ցանվում եր 1914 թ. յիշած ցանքի 27,3 տոկոսը միայն:

Բամբակամշակության և այլեղործության մասին հատկապես կարելի յի ասել այն, վոր «բամբակամշակությունը ներկա Խորհրդային Հայաստանի սահմաններում 1914 թ. 10.590 դեսյատինի և 233.527 վութ մաքրած բամբակի բերքի գիմաց 1919 թ., այսինքն՝ դաշնակների որով յեղել և միայն 529 դեսյատին և 7.942 վութ, իսկ այդիների բերքը, մի շարք տվյալների համաձայն, 1919 թ. նախապատերազմյան բերքի 10—15%-ից չի անցել» (Ա. Խանջյան, «Մայիսյան ապստամբությունից գեպի նամբերերյան հաղթանակը», Կուտհրատ, 1935 թ., էջ 15):

Կարեսը և տեսնել նաև անասնապահության դրությունը դաշ-

հակցական Հայաստանում, վորովհետեւ այն ժամանակ դյուզատնեսության ամենահիմնական ճյուղերը յերկրագործությունն ու անասնապահությունն եյին։ Անասունների թվի վերաբերյալ յեղած կենսվիճարի տվյալները հետեւյալ աղյուսակին են տալիս։ Այսպես, անասունների թիվը՝

	1914 թ.	1919 թ.	1919 թ. առկ. հասցեի և բարերմամբ
1 Զի . . . . .	51,464	19,862	38,6
2 Կոչխար . . . . .	1,378,590	405,721	39,0
3 Ա. լ ծ . . . . .	186,003	65,183	35,8
4 Խ ո զ . . . . .	23,623	5,607	23,7
5 Խոշոր յեղջուրավոր անասուններ	688,594	229,512	33,6
Անասունների ընդ. թիվ	2,364,733	743,643	31,6

Այս բնագավառում ես, ինչպես տեսնում ենք, վիթխարի անկում եր տիրում։ 1919 թ. գաշնակ Հայաստանում յեղած անասունների թիվը լինի կազմում եր 1914 թվականի յեղած անասունների թիվի 31,6 տոկոսը միայն։

Հողժողկոմատի տվյալների համաձայն, յերկրագործությունը և անասնապահությունը Հայաստանում 1909—1913 թ.թ. և 1919 թվականի ընթացքում հետեւյալ պատկերն են ունեցել.

	1909—13 թ. (մէջ. տար.)	1919 թ. (Պաշտակ. առջանկ.)
1 Բուլոր ցանքերը (հեկտ.) . . . . .	305,500	78,490
2 Բամբակի ցանքը . . . . .	15,300	500
3 Խոշոր յեղջ. անասուն . . . . .	893,000	229,500
4 Մանր յեղջուրավոր անաս. . . . .	1,564,600	470,900

(Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. նոյեմբերի 29)։ Այսպիսով, յերկրագործությունը և անասնապահությունը դրեթե հավասար չափով քայլքայլած եյին։ առանց այն ել Երևանսիվ, պրիմիտիվ դյուզական արտադրությունը, ցարիզմի գաղութ հանդիսացող Հայաստանի հետամնաց, խղճուկ դյուզատնեսությունը գաշնակցական կուսակցության տիրապետության ժամանակ հասնում եր իր կործանման հեռավոր յեղրին։ Յեկ վորովհետեւ, ինչպես ասացինք, դյուզատնեսությունը դաշնակցական Հայաստանում ժողովրդական անտեսության միակ

հիմնական ճյուղն եր, ապա և դյուզատնեսության այդորինակ անկումն ու քայլքայումը պետք է վոր վճռական, ճակատագրական աղջեցություն թողներ Հայաստանի ժողովրդական լայն զանգվածների կացության վրա։ Գյուղատնտեսության այդորինակ դրության հետևանքով իսկապես ստեղծվում եր չտեսնված համատարած թշվառություն, դաժան սով և քաղց։

Դաշնակցական Հայաստանի տնտեսական չտեսնված անկման մասին պերճախոս կերպով խոսում են նաև այն թվերը, վորոնք յույց են տալիս, թե ինչպիսի արագությամբ և ահռելի չափեցույց եյին աղջանքների զները դաշնակցական Հայաստանում։ Այսպես, որինակ, դաշնակցական կառավարության առետրա-արդյունաբերական պալատի տված պաշտոնական տվյալների համաձայն, 1920 թ. յերկրորդ կեսում ապրանքների զները դաշնակցական Հայաստանում աճում եյին հետեւյալ չտփով։

Ա պ ր ա ն ք ն ե ր	Մայիս Ռդուստու Հոկտեմբ. Նոյեմբ.
1 Կաշի գոմեշն փ. . . . .	7,000 ռ. 16,000 ռ. 35,000 ռ. 75,000 ռ.
2 " տավարն ըր . . . . .	6,000 ռ. 12,000 ռ. 25,000 ռ. 50,000 ռ.
3 Քար աղ փութը . . . . .	1,500 ռ. 1,500 ռ. 15,000 ռ. 120,000 ռ.
4 Սալոն Փունտը . . . . .	50 ռ. 200 ռ. 1,200 ռ. —
5 Քարի փութը . . . . .	3,000 ռ. — 6,500 ռ. 15,000 ռ.
6 Ցորեն փ. . . . .	3,500 ռ. 3,500 ռ. 9,000 ռ. 25,000 ռ.
7 Վոշիարի միր փ. . . . .	250 ռ. 250 ռ. 500 ռ. 1,200 ռ.
8 Յ ո ւ զ փ. . . . .	500 ռ. 1,000 ռ. 2,000 ռ. 7,000 ռ.
9 Զ ո ւ . . . . .	22 ռ. 35 ռ. 80 ռ. 300 ռ.
10 Ն ա զ թ . . . . .	20 ռ. 200 ռ. 350 ռ. —
11 Ա ծուկ փութը . . . . .	200 ռ. 2,000 ռ. 4,000 ռ. 18,000 ռ.

Յեթե ըլինեյին անդամ և վոչ մի ուրիշ տվյալներ, ապա զների այս սոսկալի աճն արդեն ինքնին պերճախոս վկայում ե այն մասին, թե անտեսական անկման ու վլուզման ինչ կատաստրոֆիկ վիճակ եր ապրում Հայաստանը դաշնակցության տիրապետության ժամանակ։

## Ա ռ գ Յ Ե Վ Մ Ա Հ

Դաշնակցության վարած ավանտյուրիստական, հակաաշխատավորական քաղաքականության չնորհիվ աշխատավորական

Դանդվածների զբությունը դաշնակցության պետականության շրջանում դժոխային, կոչմարային եր գառնում այն աստիճան, վոր մասսաների Փիզիկական գոյության հարցն իսկ ուղղակի կասկածի տակ եր զրվում: Ամենասոսկալին դաշնակցական դրախտավայրում այդ մասսայական կերպարանք ստացած սովոր մահն եր, վոր յուրաքանչյուր որ, յուրաքանչյուր ժամ անխայրար հնձում եր գոյության վերջին մնացորդներից զուրկ, սովալուկ հաղարավոր աշխատավորների կյանքեր: Սով և մահահանակցական դժոխաքի ամենասոսկալի «յերանելիքները», վոր թեատրած իշխում ելին Հայաստանի բոլոր անկյուններում, բոլոր ավաններում ու գյուղերում, ամենուրեք, ուր կարաշխատավոր, գյուղացի կամ բանվոր:

Թե իսկապես ի՞նչպիսի գժոխային վիճակ են ունեցել Հայաստանի աշխատավորական մասսաները դաշնակցական Հայաստանում, այդ հստակորեն ցույց են տալիս հետեւյալ միքանի փաստերն ու դոկումենտները: Ահա նրանք:

1919 թ. մայիսի 17-ին դաշնակցական «Աշխատանք» լրագրի թղթակիցը Զավարաբատ գյուղից գրում եր հետեւյալը.

«Ժողովուրդը կմեռնի. վոչ մի տեղեն հուսո նշույլներ կերեին: Յերեք որվա թաղված մեռելներու միս, փողոցներու վրա վաղուրք ձղած կոչիկներու և արեխներու կտորներ, մուկ, կատու, չուն, արագիլ, սովորական կերակուր և դարձած ժաղովրդին համար: Բայց ասոնք ալ սպառեր են և ամենքը դաշտ ելեր և բառիս բուն նշանակությամբ անասունի նման կարածան: Յերեկ հանդիպեցանք Այնթափ-Քոչկեցի Սարդիս Մանուկյանին, վորը յուր հինգտարեկան մեռած յերեխայի փորը դատարկած և հեռադրաւարը պարանոցին անցուցած թեժ թոնրի մեջ կիսորովեր և կուտեր: Նման իրողություններ նոր չեն, և պատահած են Քիլաղարիս և Մոլլա-Բայազետ գյուղերու մեջ ալ: Բայց դաժան սովոր ամեննեն շատ արեմտահայ փախտականներու մեջ նվաճումներ ըրեր և, յեթե ողնության միջոցներ չըստեղծին՝ միջավայրնիս զարհուրելի գերեղմանոց մը պիտի դառնա շուտովի»:

Նույն թերթի նոր-հայագետի թղթակիցը հունիսի 27-ին (1919 թ.) գրում եր.

«Երջանս կապրի տնտեսական ծանր ճգնաժամ, մանավանդ վերջին որերս մարդակեր սովոր կհնձէ անխնա ու ապագա սերունդը կանհետի տակավ: Որական տասնյակներով ու քսանյակներով կմեռնին: Խոտակերությունը մեծ չափերի յե հասեր, այս կործանարար հանգամաքը բնականաբար կնպաստե մահացություններու սովարացման: Սովամահներու զիակներն ամեն ժամին աչքիու առջև կտանին վերեպմանոց: Իրիկուն ուշ ատեն, յերբ ուժ ունենաս այցելու փողոցները, մայր յեկեղեցու և այլ շենքերու անկյունները, պատի տակերը պիտի տեսնես տասնյակներով նվազած սովորելու, այլանդակորեն տարածված, վորոնց հեծկլտանքը ու աղեխառ լացումները անցողներու վրա անդոր են իրենց ուշադրությունը հրավիրելու»:

Եջմիածնի թղթակիցը հաղորդում եր.

«Եջմիածնի և շրջանի գյուղերու մեջ ապրող արևմտահայ և տեղական ժողովրդի սովար մասը բառիս բովանդակ ասումով սովամահ կըլլա, և որեցոր հյուծվելով կմեռնի: Սովը ատիպեր և, վոր շատերը ուտեն անսուրք կենդանիներ: Եջմիածնի վանքի ու աղարակի մեջ ապրող գաղթականները իրարու ձեռքեն կհափշտակեն սատկած շան դիակը՝ միսը տանելու համար: Փետրվարի 27-ին առավոտը, գաղթականները շուն մը մորթեցին ուտելու համար: Փետրվարի 28-ին յերեկոյան յերկու կին կատույի մը վիզը կորեր ելին և կաշին կըկըրթեցին՝ միսը ուտելու համար: Սովորական յերեւոյթ ե և այն, վոր անտեր կիները իրենց փոքրիկ ծծկեր յերեխանները կրերեն գաղտնի կծկեն Եջմիածնի վանքի դուռ վրա ու կհեռանան»:

Ենք ահա դաշնակցական պէտության հոգեսոր սյունը հանդիպացող այդ «Մայր աթոռի» պատերի տակ ընկած սովամենների թվի մասին «Արարատյան աշխատավոր» թերթը հաղորդում եք հետեւյալը.

«Գաղթականական բաժնի մեռել հավաքող սայլակը անտեր մեռելներ և հավաքել Վաղարշապատում».

Հունվարին	· · · ·	431 դիմակ
Փետրվարին	· · · ·	482 »

Մարտին . . . . . 618 »

Ապրիլին . . . . . 334 »

Հնդամենը 4 ամսում . . . . . 1865 դիմակ

Հետագա ամիսների համար նույն այդ վաղարշապատում «Մայր աթոռի» հովանու տակ մահացածների մասին «Զանդ» թերթի թղթակիցը հետեւյալ թվերն եր տալիս.

«Վեց ամսվա ընթացքում վաղարշապատի մեջ մեռած են 3800 դադթական.

Հունիսին . . . . . 469 մարդ

Հուլիսին . . . . . 611 »

Օգոստոսին . . . . . 706 »

Սեպտեմբերին . . . . . 547 »

Հոկտեմբերին . . . . . 672 »

Նոյեմբերին . . . . . 795 »

Հնդամենը . . . . . 3800 մարդ

Վերջերս որական մեռելներու թիվը 25—30-ի, նույնիսկ 40-ի հասավ»:

Վերև հիշված «Արարատյան աշխատավոր» թերթի դաշնական մի հոգվածադիրը թալինի ըրջանի, թալին-Մաստարա, Դյուլու, Ղրմըլլու, Դադալու, Մազարջուղ, Մեծ ու Փոքր թամաններ և Կոչ գյուղերի ազգաբնակչության շարժման մասին հայորդում եր հետեւյալ թվերը.

«Գաղթից առաջ թալին գյուղն ունեցել է 2.200 բնակիչ. այժմ ունի 1250 բնակիչ, այս գյուղում որական մեռնում են 8—10 մարդ, ամբողջ գյուղում բացի լիազորի չնից մի չուն չկա, չկա մի կատու, հասկանալի յե, թե ինչու. ազգաբնակությունը մերկ է, տների մեծադույն մասը ամայի յի ու քանդված»:

«Մաստարայում, կամ ինչպես տեղացիներից վոճանք ասում են, թալինի Լոնդոնում, որական մեռնում են 6—8 մարդ»:

«Դյուլու գյուղը ունեցել է 1.100 բնակիչ, այժմ ունի 550 բնակ. Ղրմըլլու „ 1.375 „ „ „ 515 „,  
Դադալու „ „ 950 „ „ „ 431 „,  
Մազարջուղ „ „ 515 „ „ „ 225 „

Թալին (մեծ) գյուղը ունեցել է 770 բնակիչ, այժմ ունի 250 բնակ.

Թալին (փոքր), „ 70 „ „ „ 13 „,  
Կ ո 2 „ „ „ 1.117 „ „ „ 670 „

Վերոհիշյալ թվերից պարզվում է, վոր թալինի շրջանի 8 հայկական գյուղերում նախ քան գաղթը յեղել է 11.247 բնակիչ, մահացել են 5940 հոգի: Թալինի 8 հայկական գյուղերում որական միջին թվով մեռնում են 60—70 մարդ: Յեթե թալինի հայությանն ամենակարճ ժամանակում ամենամեծ դարենի ողնություն չհասնի, դուք այնտեղի հայության վրա խաչ պետք ե զնեք»: Յեկ դաշնակական «միամիտ» թղթակիցը վերջացնում է իր հողվածը հետեւյալ տողերով. «Փափուկ աթոռներու բազմած պարոններ, ավտոմոբիլով շրջող ընկերներ ու քաղաքացիներ, լեզվամարտությամբ առավազող պարլամենտի պարոնայք, ճար ունեք՝ ողնության հասեք մահի ճիբաններում գալարվող ժողովրդին, ապա թե վոչ հենց այժմյանից դուք ավելորդ եք, մեղ մի խարեք, բավական եք»:

Այսորինակ փաստեր յեզակի չելին, իհարկե: Դժոխային դրությունն ընդհանուր եր, վոր ընդդրկել եր ամբողջ Հայաստանը: Այսպես, որինակ, ըստ մինիստրության կատարած ցուցակագրության, ուրիշ այլ չորս գյուղերի մասին թվերն առում ելին.

Դ յ ո ւ գ

Նախկին բնակ. թիվ մասել են այժմ

Բլուր (Սուրմալ.)	2650	1042
Գուրգուղուի (Եջմ.)	1800	800
Մարդարաբատ (Եջմ.)	4200	1308
Մոլլա-Բայազետ (Եջմ.)	1900	750

Սուրմալույի գալարի գյուղերի մասին «Սոցիալիստ-Հեղափոխական»-ի թղթակիցը զբում եր.

«Փանիկ գյուղում, վոր ունեցել է գաղթից առաջ 2500 անձ, մինչեւ մարտի 20-ը մնացել է 750 հոգի: Եղջիլարը՝ 2400, մնացել է 1050. Թեղըլլում՝ 1212, մնացել է 700. Ալի-Ղամարը՝ 1870, մնացել է 862. Ալեթլույում՝ 1200, մնացել է 450: Այսպես նաև մյուս գյուղերը՝ վերջին յերկու գյուղերն իրենցից ներկայացնում են կատարյալ դե-

բեզմանոցներ, Ալի-Ղամարում տուն, բակ չկա, վոր թաղ-ված մարդ չտեսնիի: Գյուղի գերեզմանոցում այս տարվա սովոր մեռածների թիվն ավելի շատ են, քան հարյուր տարվա ընթացքում: Ալեթլու մտա և միայն 15—20 հոգի վոտքի վրա տեսա և այն ել գեմքերն ուռած, մնացածները սովից պառկած հաց ելին աղերսում»:

Եւլ ահա այդ նույն Սուրբալույի մասին փետրվարի 2-ին, 1919 թվին, «Հառաջ» թերթի թղթակիցը հաղորդում եր.

«Սովը և համաճարակը կոտորում են ժողովրդին: Շատ տեղերում կերակրվում են կենդանիների և մեռած մարդկանց դիակներով, հաղարավոր վորուր, անտեր, ճանապարհների վրա սնվում են կենդանիների աղրով: Հաղարավոր դիակներ անտեր ու անթաղել են մնացել»:

Ալիի ցայտուն պատմություն եր անում «Աշխատավոր» թերթում ապրիլի 12-ին մի ճանապարհորդ, վորը շրջել եր իդիթքում: Նա պատմում էր.

«Առաջին անդամ կերթանք վորբանոցներից մեկը, այն-ամել իրարու վրա կուտակված են բազմաթիվ յերեխաների կմախքացած դիակներ. մահվան ձորի մեջ տարուքերվող ստվերներու հման անհնար և կարծել, վոր այդ վողորմելիներն աղամորդու սերնդին կպատկանեն: Գերեզմանոցին մոտիկ և այն վորբանոցը: Բժիշկը կպատմե, թե ինչպես գիշերները կերթան նոր թաղված դիակներ դուրս կհանեն և կուտեն: Դուրս կդանք գերեզմանատումը, մարդկային ստվերներ կերեան, փորձառու բժիշկը կհասկանա՝ տեսեք արդեն դիակը դուրս կհանեն: Կերթանք այն կողմը: Մարդիկ մեզի կտեսնեն և ծուխի նման կաներեւոյթանան կողքի պարտեզների մեջ: Կտեսնենք գերեզմանը՝ կեսը բացված: Բժիշկը մեզ ցույց կտա ուրիշ գերեզմաններ, վորոնք բացված են, բայց բնակիչքը անհայտացած: Կանցնենք կողմնակի փողոցներ. ամեն կողմ թափված են կմախքացած մարդկային կերպարաններ, վորոնց մեջ շատերը ուժ չունին նույնիսկ բան մը իրերելու: Լուսթյան մեջ կփչեն իրենց վերջին շունչը: Կմտնենք վորջ մը՝ մեջտեղը վոտքի վրա կեցած և տարիքեն ամելի կանուխ ծերացած մարդ-

մը, վոր անձայն մաղերը կը վետե: Վոտքերին քոյլ պառկած ե դիակ մը հաղիվ 18 տարեկան: Մենք սարսափած վոչինչ չելինք կարող ըսել, հուղումը կսեղմեր մեր կողմը: Հաղիվ-հաղ մարդուն լեզուն բացվեցավ և անբացատրելի կողկողանքով մը ցույց տվալ դիակը և ըսավ «ընտանիքիս տասնութ անդամներեն ասիկա վերջինն եր. սա ալ դնաց: Ախ այն խոտերը տեսեք դուրս, բակի մեջ, անով կսնանվենք. անիկա մեսցուց վերջին բալիկս: Կորան բոլորը, ի սեր ասածո մեսցուցեք ինձի»:

Կամ ահա «Ժողովուրդ» թերթի թղթակիցը, վոր խմբադրության ասելով մի «արժանահավատ անձնավորություն» եր, Սուրբալույից հայտնում եր հետեյալը.

«Իմ հարկանիս տղան՝ իզդիրեցի Հայրապետ Սարգսյանը 33 տարեկան, մեռնում ե սովիթ, դիակը քաշ տալով ցցում են գյուղից դուրս մի այդում: (Ո՞վ ուժ ունի գերեզման փորելու) յերեք որ անցած՝ հարցնում եմ.՝ «Թաղեցի՞ք աբդյոք Հայրապետին, թե գետ այգումն ե»: պատասխանում են ինձ պատի տակ քաղցից բոլորովին ցամաքած մի քանի հողի թե՝ «Հները արդեն հողացել են այդ մասին. հաղար յերանի իրեն, վոր մեռավ պրծավ ես աշխարհի ցավերից, ջանդամը թե չները կուտեն, հո մարդ կդինջանա»: Հախվերիս գյուղում մի կին թեիցս ըռնելով քաշ տվեց ինձ արտաքնոցում պառկած իր յերեխայի մոտ, վորը իր աղտոտության միջից նորից ցորենի հատկները հավաքելով բերանն եր ձղում ու դրանով սնվում: Իզդիրեց Բլուր տանող ճանապարհի վրա մի ամիս ավելի մի ձի յեր սատկել, դիակը չները կերել ելին, չոր վոսկորներն եր մնում: Յերկու 8 և 10 տարեկան տղաներ, յերկու յեղայրներ՝ քարերով ջարդում ելին հոտած վոսկորները, միջի ուղեղը հանում, ուտում: Որինակները մեկ չեն, տասը չեն, հաղարներ չեն: Վո՞ր մեկը պատմել, վո՞ր մեկը նկարագրել»: («Ժողովուրդ», 1919 թ., № 15):

Այս միքանի որինակները Սուրբալույի մասին բավական են: Տեսնենք զբությունը մյուս գավառներում: 1919 թ. Ալեքսանդրոսովից Գյուղացիական Միության վարչությունը հեռադրում էր.

«Գավառում համատարած սով ե, վոր հնձում ե որական հաղարավոր կյանքեր, հաճախակի հիմանդրության դեպքեր են տեղի ունենում, վոր սպառնում ե փոխվել համաձարակի, սովամահության հողի վրա: Ամենուրեք աննկարագրելի հուսահատություն ե տիրում. դժգոհություններն ու արտօննչները որ-ավուր աճում են»:

Նոր-Բայազետից 1919 թ. հունիսի 13-ին հեռագրում ելին.

«Սովամահությունը գտնառում սոսկալի չափերի յի հասել. Դավի-Ղարդաշ դյուզում մի շարաթում մահացել են 70 մարդ»:

Նոր-Ախտայից մայիսի 7-ին հեռագրում ելին հուսահատություն.

«Առվեն որական հարյուրավորներ կմեռնին»:  
Նույն տեղից հունիսի 1-ին դրում ելին.

«Ամբողջ Ախտա, Յելենովկա շրջանի 40-ի մոտ բազմամարդ զյուղերը կղտնվեն համատարած լքումի և բնաջնջման նախորյակին: Վերջերս ամեն որ և ամեն զյուղերու մեջ մեռելներու թիվը զգալիորեն բարձրացած է. կմեռնին բնիկ և փախստական, մասնավորաբար՝ վերջինները»:

Աշտարակից փետրվարի 16-ին հաղորդում ելին.

«Փարբեր և Թաքիայի մեջ բնակվող զլիավորապես արևմտահայ վախսականությունը սովեն որական տառնյակներով կմեռնի: Թաղելու հնարավորություններ չկա նույնիսկ»:

Ահա միքանի տեղեկություններ նաև Յերևան քաղաքի մայիս, ուր նստում եր դաշնակ-խմբապետական կառավարությունը, ուր ճառում, խոսում ելին «Հայրենիքի, աղդի փրկիչները»: Այսպէս, հայտնի դաշնակ Վ. Խորենին 1919 թ. ապրիլին հեռագրում եր Թիֆլիս՝ «Աշխատավոր» թերթին՝ Յերևանի փողոցներում թափված սովամեռ դիակների մասին հետեւյալը.

«Թաղաքային տեղեկատուն (բյուլետենը) այսոր հայտարարում ե, —քաղաքում հավաքված ե 25 դիակ, նախորեցին՝ 38 դիակ»:

«Սոցիալիստ հեղափոխական» թերթը 1919 թ. № 1-ում Յերևանի մասին տալիս եր հետեւյալ տեղեկությունը.

«Բժշկասանիտարական տվյալների համաձայն, Յերևանի փողոցներից հավաքել են դիակներ՝

Հուլիսի 14-ին	• • . . .	23
Հուլիսի 15-ին	• • . . .	28
Հուլիսի 17-ին	• • . . .	21
Հուլիսի 18-ին	• • . . .	20
Ոգոստոսի 14-ին	• • . . .	50 և այլն

Այս թվերը վերաբերում են բացառապես փողոցներում թափված անտեր դիակներին: Սակայն այդ տեսակետից ել, իհարկե, դեռևս կասկածելի յեն, վորպես պաշտոնական տվյալներ:

«Յնայ տրամ» ժունիալն իր ժամանակ, 1919 թ., պաշտոնական տվյալների վրա հիմնվելով, 1919 թ. մահացության չափը միայն Յերևանում հաշվեց 14.000-ից ավելի: Այսինքն՝ միայն մի տարում՝ 1919 թ. Յերևան քաղաքում մահացել են սովոր և տիֆից 14.000 հոգուց ավելի:

Ուրիշ շրջաններից որինակներ մենք չենք բերում. այն, ինչ վոր այստեղ հիշատակված ե, բավական ե անհերքելիորեն հաստատելու համար, վոր սովոր ու մահը համատարած ելին դաշնակների տիրապետության տակ հեծեծող Հայաստանում՝ սկսած ամենահեռավոր ծայրամասերից մինչև կենտրոնը: Վողջ յերկիրը զալարվում եր սովոր ճիրաններում: Ահա այս մասին յերեմնի Արտաքին դործոց և Մինիստրների խորհրդի «Հայաստար» կոչված տիրապետական Ալ. Խատիսյանն անդամ ստիպված եր «Հառաջ»-ին հաղորդել, թե՝

«Սովոր ե թագավորում ամբողջ Հայաստանում: Առանց չափազանցության որական մեռնում են 3000 հոդի: Յերեկ, որինակ, Յերևանում հավաքեցին 41 սովամահների դիակներ...»

Հաց, հաց և հաց

Դրությունն իրոք, վոր սովակալի յի:

Ագնեցեք ինչով կարող եք:

Ագնեցեք քանի ուշ չե»:

Կամ ահա այդ նույն դրության մասին նույն «Հառաջ»-ի թղթակիցը դրում ե.

«Հայ ժողովրդի դրությունը յերբեք այն աստիճան ծանր և հուսատական չի յեղել, վորքան այսոր: Ամբողջ յերկրը ճգնաժամային մի սոսկալի վիճակ է ապրում — այդ հասկացողության ամենալարածակ խմառով: Մահվ համատարած իշխում ե Հայաստանի հորիզոնում, սովը համատարած և ամրող Հայաստանում: Ամեն կողմից միայն միջ և լոյում՝ «ժողովուրդը մեռնում է սովոց»: Յել հիրավի, գյուղ չկա, անկյուն չկա, վոր որական 10—20 զոհ չտա սովի: Քաղաքներում արդեն զոհերի թիվը միքանի տասնյակների յեն հասնում: Դուրս եք գալիս փողոց և տեսնում եք անթիվ ուրվականներ, նիշար վոսկրացած, վորոնք կարծես սովերներ լինեն և հազիվ են կարողանում իրենց թույլ վատքերը քաշ տալ: Ի՞նչ պիտի լինի սրա վերջը:

Նույն այդ թերթի «պատվարժան» թղթակիցը վետրվարի 19-ին (1919 թ.) դրում եր.

«Սովամահությունն ուղղակի համաձարակի բնակորություն և ստացել՝ այդ բառի ամենալայն հասկացողությամբ: Հարյուրներով — այս, նույնպես հազարներով՝ մեռնում ե հայ ժողովուրդը թե՛ մայրաքաղաքում, թե՛ դավառական մեծ քաղաքներում և թե՛ գյուղերում: Մարդարսափոյլ և նայում խնամատարության մինիստրության տեղեկադրերը (բյուլետենը) Յերեանի մասին, վոր լույս են տեսնում ամեն որ: Միայն մայրաքաղաքի մեջ որական միքանի տասնյակ, յերեմն նույնիսկ հարյուրավոր մարդեկ են մեռնում սովամահությունից կամ նրա անմիջական ծնունդ տիֆից և այլ զանազան հիվանդություններից: Առվելի տիսուր են շրջաններից ստացված տեղեկությունները: Դյուզեր կան, վոր ուղղակի դատարկվել են: Տներ կան, վորոնց ոչախը բոլորովին հանդել է: Բոլոր գյուղերում առանց բացառության ազդարնակության կեսը, յերեմն նույնիսկ կեսից ավելին բնաջնջվել է»:

Գալիս եր 1920 թիվը, սակայն, իհարկե, դրությունը վոչ

միայն չեր լավանում, այլ ընդհակառակն ավելի վատթարանում եր: Այսպես ահա 1920 թվի գարնանը Հայաստանի հեռադրական գործակալությունը հաղորդում եր.

«Աբարանի գյուղերում կատարյալ սով ե. ինչպես, որինակ, կարանլու, Բաշաբարան, Գյողաքլու և այլ, և այլ գյուղերում սննդի պակասությունից տարածված են վարակիչ հիվանդությունները: Զրկված ամեն ինչից, աղղաբնակությունը կերակրվում է թեփով և շատ հաճախ դարմանով. բաշխումը կատարվում է անկանոն: Ցրտից, սովից, հիվանդություններից մահացության թիվը հասնում է ոռական 60-ի: Զրկված գյուղացիության վիճակն աննկարագրելի յե. անհրաժեշտ և շուտափիույթ և լայն ոգնության: Հակառակ պարագայում ժողովուրդը դատապարտված է մահվան»:

Կամ ահա դաշնակցական կենտրոնական որդան «Հառաջ»-ն իր «Վաթուն հինգ դիակ» վերնագիր կրող խմբագրականում գրում եր.

«Հունվարի 5-ին Յերեանում, փողոցներից հավաքված ե յերեք դիակ, աներից՝ 10 դիակ և հիվանդանոցներից՝ 52-ը, ընդամենը՝ 65: Այսպես և հազորդում փողոցներում փակցված պաշտոնական բյուլետենը: Մի բոպե փորձեցեք կենտրոնանալ այս թվերի վրա՝ որական 65 դիակ միայն մայրաքաղաքում՝ պետության աչքի առջե. հապա ի՞նչ է կատարվում գավառում, հետ ընկած անկյուններում, ասենք մի Դարալազյաղում կամ Նոր-Բայալպետում: Առվա ու ցուրտը հնձում են անինա ու անհաշիվ: Յել ամեն որ գերեզման իջնում հազարավոր կյանքեր»:

Բերենք նաև մի վերջին որինակ: Հենց նույն թերթի 1920 թ. № 5-ում «Հայ ժողովրդի բեկորները մեռնում են» վերնագրի տակ, թղթակիցն Ալեքսանդրոպոլից դրում եր.

«Ամբողջ 25 հազար ժողովուրդ Պոլիգոնում որեցոր, ժամեժամ իր շարքերն ե նոսրացնում: Քաղաքի քթի տակ՝ յերկու վերստի վրա համատարած դուրս և թագավորում: Սովուն ու ցուրտը հնձում ե մարդկային կյանքերը: Թշվա-

ուռթյունն աննկարագրելի յէ: Անցեք Պոլիդոն և տեսեք. շարան-շարան սարսափելի տեսարանները մթաղնում են մարդկային գիտակցությունը: Յերխասարդ կյանքերը՝ մերկ ու քաղցած իրենց վերջին տանջանքն են ապրում կեղտում ցնցուիների մեջ: Ամեն քայլափոխում կմախքացած կանանց ու ուժասպառ մանուկների սրտաճմլիկ աղաղակն ե թնդում: —

- Անոթի յենք, անոթի...
- Մեռանք անոթությունից...
- Հիվանդացանք անոթությունից...
- Հաց, փշուր մը հաց:

Դանաելի նկարագրած դժոխքի տանջանքների իրականությունն ե այդ Պոլիդոնը, վոր այսոր վերածվել ե մի սոսկալի սիրտ կտրատող վերեղբանոցի, ուր 25 հազար ժողովուրի բախտի վրա սկ խաչ ե դրված»:

Յեկ այսպես, 1920 թիվը դառնում եր Հայաստանի աշխատավորության համար համատարած սովոր ու մահվան տարի և այդ դժոխսային կացությունը շարունակվում եր մինչև դաշնակցական տիրապետության վերջին որը, մինչև նրա անկման ժամը և այդպիսով դաշնակցական վողջ տիրապետությունը, սկսած առաջին որից մինչև վերջին որը, դառնում եր աշխատավորական մասների սիստեմատիկ կոտորածների ու ջարդերի մի շրջան:

Մինչդեռ ունեորները՝ գյուղի կուլակներն ու քաղաքի առևտուրականները, ընդհանրապես բուրժուազիան, դաշնակցական թալանչի բաղմաթիվ հերոսները, ընդհակառակն, հղիանում և յին աշխատավորության արյան զնով, հարստանում ելին և շարունակ քեֆեր սարքում, զվարճանում: Այսպես, որինակ, այն ժամանակ, յերբ հենց «Հանրապետության» մայրաքաղաքում — Յերկանում փողոցներից որական հավաքում ելին սովոր զոհ զնացած միքանի տասնյակ դիմերեր, յերբ Յերկանի բաղմահագաղաք մասսան գտնվում եր անողոք, զաժան սովի ճիրաններում, ահա հենց այդ ժամանակ, Յերկանում, ամեն որ սիստեմատիկ կերպով հայ հարուստները, դաշնակ բաղմաթիվ «տղերքը» սարքում ելին ճոխ ինձույքներ ու քեֆեր: Գրությունն այնտեղ եր հասել, վոր անդամ դաշնակցական թերթի թղթակիցն սոխոված եր այդ մասին դրեւ հետևյալը.

«Գիշեր չի անցնում, վոր այս քաղաքի մեջ կամ մյուս թաղերում հարբած խմբերը գտնիսային աղմուկով, գոռալով ու զունայի խոզային ճշով չանցնեն փողոցներով: Յերբեմն կանգնում են փողոցի մեջտեղը և կատաղի հարայշ-հրոցով խմում, պարում ու հայշոյում ինչքան ներում են ուժերը, թակելով դափն ու փչելով խաժամուժ զունան: Յերբեմն լազաթի համար սկսում են ատրճանակ արձակել, սարսափ գցելով հարեւան տներում ապրող կանանց ու յերեխանների սրտին: Մարդ մնում ե զարմացած, վորտեղից են Յերեւանում այսքան շատ քեֆ անողները և ովքեր են այլ հարուստները, վոր ամեն գիշեր խմում են, ամեն որ հազարներ են ծախսում ու չի հատնում. ովքեր են համախորդներն այն վորջերի, զգվելի «կրիժոնների», վորոնցով Յերեւանն այնքան հարստացել ե վերջերս: Մի տեղ, ուր ամեն որ միքանի տասնյակ մարդ և մեռնում ու մից, անբարոյականություն ե քեֆն ու հարբեցողությունը»: («Հառաջ», 1920 թ., հունվարի 3, № 2):

Սակայն ի՞նչ բարոյականության մասին խոսք կարող ե լինել: Ի՞նչ փույթ հայ բուրժուազիայի համար մասսանների սիստեմատիկ բնաշնջումն ու կոտորածը, յերբ նա անգամ այդ հանգամանքների շնորհիվ իր կապիտալներն եր կուտակում, նոր արժեքներ եր դիղում: Հայ բուրժուազիայի «ականավոր» ներկայացուցիչները, ինչպես, որինակ, Մելիք-Աղարյանները, Թիֆլուսում և Բագվում ապրող մյուս հայ կապիտալիստները վոչ միայն սամասիրտ վերաբերմունք ունեյին դեպի Հայաստանի ժողովրդական մասսանները, այլև զբաղված եյին զանազան վայելքներով ու քեֆերով: Այն ժամանակ, յերբ Հայաստանում որական մոտ յերեք հազար մարդեց ավելի յեր վոչնչանում, որինակ, հենց Թիֆլիսի հայ բուրժուազիան զանազան փարթամ քեֆեր ու խրախճանքներ եր կազմակերպում:

Յեկ այսպես, մի կողմից՝ մի փոքր խումբ բախստախնդիրներ, բուրժուաններ ու կուլակներ, վորոնք ավելի ու ավելի յեն հարստանում, կեղեգում աշխատավորական մասսաններին, կապիտալներ են կուտակում, խրախճանքներ ու քեֆեր են կազմակերպում:

Իսկ մյուս կողմից՝ աշխատավորական հոծ զանդվածներ, վորոնք ամեն որ բնաշնջում, մեռնում եյին ամեն տեղ հազար-

ներով։ Ժողովրդական զանգվածները Փիզիկապեռ ամբողջութին բնաշնչվելու վտանգի եյին յենթարկված։ Դժոխային այդ դրությունը, սակայն, յերկար չեր կարող չարունակվել։ Աշխատավորական մասսաները պարզ ե, վոր պետք ե յելք փնտռելին այդ գրությունից դուրս դալու համար, իսկ միակ իսկական յելքը Հայաստանի խորհրդայնացումը՝ պրոլետարական հեղափոխությունն եր, վորի համար Հայաստանի բանվորա-դյուլացիական մասսաների ավանդաբեր պայքարում եր արդեն վաղուց։

**ՀԵՂԱՓՈԽԱԾԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀՅ.ՅԵ.ՅԵ.ՅՈՒՄ  
ՄԻՆՉ ՄՍՅԵՍՅԵ.Ն Ս.ՊՍՅԱ.ՄԲՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի բանվորական և աշխատավորական մասսաները սոցիալիզմի համար մղած իրենց պայքարն սկսել եյին դեռևս շատ տարիներ առաջ։ 1905 թվի հեղափոխության շրջանում, արդեն, Հայաստանի բանվորական-աշխատավորական զանգվածները, Անդրկովկասի պրոլետարիատի և գյուղացիության հետ միասին, մասնակցում եյին ցարական վայրենի կարգերի դեմ ուղղված Ռուսաստանի պրոլետարիատի և գյուղացիության մեծ ու հերոսական պայքարին։ Բոլշևիկյան կուսակցության, ընկեր Ստալինի հմուտ զեկավարությամբ զործող անդրկովկասյան կազմակերպություններն, արդեն, այդ շրջանում կազմակերպում եյին խոշոր հեղափոխական յելույթներ ու շարժումներ ինչպես Անդրկովկասի մյուս մասերում, նույնպես և Հայաստանում։ 1905—1907 թ. թ. բանվորական խոշոր գործադուլներ ու հեղափոխական յելույթներ են տեղի ունենում Ալահվերդու և Ղափանի պղնձահանքերում, Ալեքսանդրովով (Լենինականի) դեպոյում, յերկաթգծում, Յերևանի արդյունաբերական ձեռնարկություններում և այլուր։ Նույն այդ շրջանում տեղի յեն ունենում գյուղացիական խլոտումներ ու հեղափոխական շարժումներ Լոռում, Զանգեղուրում, Դարալադյաղում, Նոր-Բայազետում և Հայաստանի այլ մասերում։ Հայաստանի բանվորական և աշխատավոր գյուղացիության լայն մասսաները 1905 թ. հեղափոխության տարիներին արդեն ստանում են իրենց հեղափոխական մկրտությունը։ Յեկ 1905 թ. հեղափոխության այդ տարիներին ծայր առած Հայաստանի բանվորա-դյուլացիական մասսաների հեղափոխական յելույթները, թեև ընդհատումներով ու համեմատաբար ավելի թույլ կերպով, շարունակվում ե-

յին նաև հետագա տարիներում: Բավական ե հիշել, վոր իմպերիալիստական պատերազմի ծանր տարիներին, յերբ Հայաստանում իշխում եր ռեակցիան և դաշնակցական ու քույր կուսակցությունների անասնական շովինիզմը, հեղափոխական շարժումները Հայաստանում չեյին դադարում: 1916 թվի նոյեմբեր ամսին, որինակ, աեղի յեր ունենում Ղափանի պղնձահանքերի ու ձուլարանների 1·200 բանվորության խոչոր գործադուլը:

Հայաստանի, ինչպես և վողջ Անդրկովկասի բանվորության ու դյուլացիության հեղափոխական շարժումները, սակայն, նոր թափի, նոր իմաստ ու բավանդակություն եյին ստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: Հոկտեմբերյան հեղափոխության սփոած լույսի տակ դաշնակցական Հայաստանի բանվորներն ու աշխատավոր դյուլացիությունը, բոլշևիկյան կուսակցության տեղական կազմակերպությունների ղեկավարությամբ, պայքար սկսեցին ընդդեմ դաշնակցության, ընդդեմ իմպերիալիզմի, հանուն սոցիալիստական հեղափոխության, հանուն խորհրդային կարգերի՝ Հայաստանում: Արդեն 1917 թվի նոյեմբեր ամսին Հայաստանի մի շարք մասերում տեղի ունեցան բոլշևիկների ազգեցության տակ գտնվող զինվորների ու աշխատավորության յելույթներ ընդդեմ դաշնակցության ու անդրկովկասյան հակածնեղափոխության կառավարական որդան «Անդրկովկասյան կոմիսարիատի»: Այսպես, որինակ, 1917 թ. նոյեմբերի 27-ին (14-ին) Յերևանում գտնվող 5 և 6-րդ զնդերը, տեղի աշխատավորության ակտիվ մասնակցությամբ, և բոլշևիկների ղեկավարությամբ, Յերևանում կազմակերպում են մի մեծ միտինգ-դեմոնստրացիա՝ պահանջելով պայքար ծավալել անդրկովկասյան հակածնեղափոխության (վրաց մենշևիկների, դաշնակների, մուսավաթիստների և այլն) դեմ, ցրել անդրկովկասյան հակածնեղափոխության բուռ «Անդրկովկասյան կոմիսարիատը» և իշխանությունը հանձնել խորհուրդներին: Միտինգից հետո բարձահաղար զինվորներ և աշխատավորներ բոլշևիկների ղեկավարությամբ կազմակերպում են մեծ ցույց-թափոր, վորը նվազախմբերով անցնում ե Յերևանի փողոցներով: Ցուցարանների լոգումներն եյին. «Յերևլ Անդրկովկասյան կոմիսարիատը», «Իշխանությունը տալ խորհուրդներին», «Հետևել Թուսաստանի որինակին» և այլն: Այս թափորի ժամանակ ցուցա-

բարները միքանի անդամ զինված ընդհարումներ են ունենում դաշնակցության խմբերի հետ:

Նույն այդ ամսում տեղի յեն ունենում բանվորական մի շարք գործադրույններ Յերևանում ու Եջմիածնում: Միաժամանակ Ղամարլույի և Ղարաքիլիսայի քաղցած ազգաբնակությունը կատարում ե մի շարք եքացեսներ ու հեղափոխական յելույթներ ընդդեմ դաշնակցության: Գործադրույններ և խոսվություններ տեղի յեն ունենում նաև Զանգեզուրի գալառային կենտրոնում՝ բանվորության ու ծառայողների մեջ: Այսպիսով, Հոկտեմբերյան հեղափոխության առաջին խոկ որերից սկսած, Հայաստանում զարգանում եր մասսաների հեղափոխական պայքարը դաշնակցության դեմ: Յեղ այդ պայքարն որեցոր ավելի ու ավելի խորանում ու ծավալվում եր: Աշխատավորական մասսաներն սկսում եյին ավելի ու ավելի համախմբվել բոլշևիկյան լողունքների շուրջը: 1917 թ. դեկտեմբեր ամսին, որինակ, դաշնակցական «Արեվ» լրագրի թղթակիցը գանգատվում եր այն մասին, վոր բոլշևիկները Ղափանում մեծ ազդեցություն ունեն և վոր բոլշևիկների ղեկավարությամբ բանվորությունը և գյուղացիությունն ընդհարումների մեջ են մտնում տեղական դաշնակցական կոմիտեների հետ: Նույն այդ դեկտեմբեր ամսում տեղի յեն ունենում բորչալույի գյուղացիության ապստամբական յելույթներն ընդդեմ տեղի կալվածատերերի: Գյուղացիներին հաջողվում ե զինված ուժերով խել կալվածատերերի մի շարք կալվածքները ու անտառները:

1918 թ. հունվար ամսին դաշնակցության «Հորիզոն» լրագիրը ահազանգ եր տալիս այն մասին, վոր զորքերը «Վարակված» են բոլշևիզմով, վոր բոլշևիկների սրբազնանդան մեծ հաջողություններ ունի բանակում: Նույն թվի մարտ ամսին դաշնակցական հայտնի խմբագետ Անդրանիկը ղեկուցում եր այն մասին, վոր ինքը Սարիղամիշ յեղած ժամանակ ականատես ե յեղել, թե ինչպես բանակի մեծ մասը տարված ե բոլշևիզմով և թշնամորեն ե արամադրված դեպի դաշնակցությունը: Սարիղամիշում բոլշևիկների ազգեցությունն այնքան մեծ եր, վոր 1918 թ. փետրվարին տեղի զինվորությունը և աշխատավորությունը բոլշևիկների ղեկավարությամբ իշխանությունը վերցնում են իրենց ձեռքը: Այդ առթիվ 1918 թ. փետրվարի 6-ին Սարիղամիշից «Մշակ» լրագրին հաղորդում եյին հետեւյալը.

«իշխանությունը բոլցեկների ձեռքին եւ Զինվ. հեղափ. կոմիտեն ձերբակալել եւ հայկական զինվորական վարչության անդամներին և բանակի կոմիսարին։ Կայտրանն այրված եւ Ռւնեցած տեղեկությունների համաձայն բանակի պաշարը սպառվել եւ Դրությունը կրիտիկական ե»։

1918 թ. մարտ ամսին գյուղացիական խոշոր ապստամբություն եւ տեղի ունենում Բորչալույում և Շուլավերում։ Ապրաւամբ գյուղացիությունը իւլում եւ կալվածատերեր Արամյանների ու Հարությունյանների կալվածքները։ Նույն մարտ ամսին հակադաշնակցական յելույթներ տեղի յեն ունենում Շամշադինի շրջանում և Ներքին Գյողարդարայում։ 1918 թ. մայիս ամսում Ալլահվերդու պղնձածուլարանի բանվորները հայտարարում են գործադուլ և սուր կոնֆլիկտի մեջ մտնում գործարանատերերի հետ։ Հունիսի 6-ին Յերևանում դանվող զինվորությունը և տեղի աշխատավորությունը հակադաշնակցական մի խոշոր ցույց են կազմակերպում։ Ոգոստոս-սէպտեմբեր ամիսներին տեղի յե ունենում զինված ընդհարում Աբարանի, Յեղվարդի շրջանի աշխատավոր գյուղացիության և գաշնակցական խմբավետական զորամասերի միջև։ Սեպտեմբերի 26-ին Յերևանում տեղի յե ունենում խոշոր ցույց ու զինված ընդհարում։ Այս վերջին անցքի մասին հակածեղափոխական, բուրժուական «Ժողովուրդ» թերթը տալիս եր իր ժամանակ հետեւյալ ժլատ ինֆորմացիան։

«Սեպտեմբերի 26-ին Յերևանում տեղի ունեցավ փողոցային ցույց, վորը կազմակերպել եյին Սուրմարիվի շրջանի գաղթականները։ Նրանք սկզբում ներքին գործոց մինիստրության, հետո կոմենդանտի աների առաջ հայտաքույթներ կազմեցին և անկարգ աղաղակներով պահանջում եյին իրենց վերադարձնել ծննդավայրը։ Ժամը 4-ին ամբոխը ցրելու համար յերևացին 8 ձիավոր զինվորներ, վորոնք մարակներով սկսեցին ծեծել հավաքվածներին, մի յերկուսը մինչեւ իսկ հրացանների կոթով եյին ծեծում։ Ամբոխը մի փոքր տեղի տվեց, բայց բուլվարից քարերի և հողի տարափով փախցրին այդ ձիավորներին։ ողը լի յեր հայհոյանքներով և աղաղակներով։ Կոմենդանտի տան մոտ յերկար սպասելուց հետո և ներքին գործոց մինիստրին տեսնելուց հետո, ամբոխի մի մասն Աստաֆյան փողոցով

դիմեց մինիստրի բնակարանը։ Մութն ընկնելուն պես ամբոխը ցրվեց» («Ժողովուրդ», Յերևան, 1918 թ., № 14)։

Հոկտեմբերի 20-ին Նոր-Բայազետի չքավոր գյուղացիության և գաշնակցական միլիցիայի միջև տեղի յե ունենում խոշոր զինված ընդհարում։ Այս առթիվ իր ժամանակ դաշնակցական շնորհագույն» թերթը հաղորդում եր հետեւյալը։

«Հոկտեմբերի 20-ի գիշերը համաձայն իշխանության կարդաղության, Նոր-Բայազետի միլիցիապետ Բուրթել Թառումյանը 40 միլիցիոներով շրջապատում ե «Գոլակներ» կոչվող ծովափիք, վորտեղ Ղազաղ և Ղուլալի գյուղի զինված ամբոխը, կառավարության պահանջի հակառակ, վորոսում եր Սևանա լիճը հարստացնող և լցնող «Գոլակ» տեսակի ձուկը։ Լուսարացին այդ գյուղերի 130—150 հոգի զինված ամբոխը սկսում ե զիմալբություն ցույց տալ միլիցիային։ Ամբոխին ողնության են գալիս գյուղերից։ Սկսվում ե կատաղի կոխի միլիցիոների և ամբոխի միջև, վորը տեսում ե չորս ժամ։ Շնորհիվ միլիցիապետ Բուրթելի հմտության, նրան հաջողվում ե չորս ժամու կովից հետո փախուստի տալ ամբոխին, վորոնք կորցնում են յերեք մարդ սպանված և չորս մարդ վիրավոր, իսկ միլիցիապետը կորուստ չի ունենում»։

Այսորինակ հեղափոխական յելույթներ, սակայն, ավելի հաճախակի ու ավելի մեծ չափով տեղի եյին ունենում 1919 և 1920 թվականների ընթացքում։ Հայաստանի բանվորական ու աշխատավորական մասսաների հեղափոխական յելույթները, քանի գնում, այնքան մեծ թափ ու կազմակերպվածություն եյին ստանում։ Առանձին մանր ընդհարումների ու անկազմակերպ տարերային յելույթների փոխարեն 1919 թ. ընթացքում հրապարակ են զալիս խոչը ու ավելի կազմակերպված ապստամբական գարժումներ։ Դաշնակցական կառավարության գեմ 1919 թվի ընթացքում ապստամբվում են արդեն ամբողջական գյուղեր, հաճախ միքանի գյուղեր միատեղ։ Այսպես, որինակ, 1919 թ. հունիս ամսին զորակոչի կապակցությամբ դաշնակցական կառավարության գեմ միատեղ ապստամբվում են Շամշադինի, Ղըզի, Նորաշենի, Վերին Կարմիր Աղբյուր, Բերդ, Թովուզ և այլ գյուղերի աշխատավոր գյուղացիունը։ Նմանորինակ ապրա-

տաժբական խոշոր շարժումներ տեղի ելին ունենում նաև Դարավագյաղի գավառում։ 1919 թ. հոկտեմբերին, որինակ, ապրստամբում եր Մարտիրոս գյուղը, վորի որինակին և հետեւում են հարեան մյուս դյուզերը։ Համեմատաբար ավելի խոշոր քնութեյին նաև բանվորության հեղափոխական յելույթները։ Փոքր, անկազմակերպ գործադուլների փոխարեն 1919 թ. հանդես են գալիս ավելի կազմակերպված ու խոշոր գործադուլներ և բանվորության հեղափոխական յելույթներ։ 1919 թ. մարտ, հունիս, սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին, որինակ, բավական մեծ գործադուլներ տեղի յեն ունենում յերկաթուղային բանվորության մեջ։ Նույն թիվ հուլիս և դեկտեմբեր ամիսներին բավական կազմակերպված կերպով գործադուլ են հայտարարում Յերեանի փոստ-հեռուղարական ու տպարանների բանները և ծառայողները։ Գործադուլներ տեղի ելին ունենում նաև Ալեքսանդրովում (Լենինականում)։ գործող տպարաններում և արդյունաբերական այլ ձեռնարկություններում։

Գալիս և 1920 թիվը, դաշնակցական դաժան ոեժիմի տակ տնքող ու կեղեցվող բանվորա-գյուղացիական մասսաների հեղափոխական յելույթներն ավելի յեն ծավալվում ու խորանում։ Հունվարի սկզբներին Ալեքսանդրովովի (Լենինականի) կայարանի գեղոյի ու գծի բանվորները պարենավորման հարցերի առիթով խոշոր ընդհարման մեջ են մտնում դաշնակցական կառավարության հետ։ Կատարյում են բարձաթիվ ձերբակալություններ, չտեսնած եքսցեններ ու բոնություններ բանվորության նկատմամբ և ապա հեղափոխական ցուցյեր ու յելույթներ։ Այդորինակ ընդհարումներ և յելույթներ փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին տեղի յեն ունենում նաև յերկաթգծի Յերեանի կայարանում, Յերեանի ու Ալեքսանդրովի ջուլհականոցներում, տպարաններում և ուրիշ տեղեր։ Ապրիլին բռնկվում է Հայաստանի բանվորության ընդհանուր մի գործադուլ, վորոն ընդդրկում և ամբողջ յերկաթգծի ընդհարումներ, Յերեանի ու Ալեքսանդրապոլի գործարանները, տպարանները և այլ մասնավոր ու պետական ձեռնարկություններ։

1920 թ. փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին նորից տեղի յեն ունենում աշխատավոր գյուղացիության բարձաթիվ ըմբուտացումներ, զինված յելույթներ ու ընդհարումներ Դաղախ-Շամշադինում, Նոր-Բայազետում, Դարալաղյաղում և այլ շրբ-

ջաններում։ Գրեթե նույն ժամանակ կատարվում են մի շարք հոգումներ և յելույթներ Սարիղամիշում, Զանգեզուրում և Դիլիջան-Իջևանում տեղավորված զինվորական մասերի մեջ։ Դաշնակցական կառավարության դեմ ուղղված Հայաստանի բանվորության ու աշխատավոր գյուղացիության այս բազմաթիվ ըմբուտացումներն ու հեղափոխական յելույթները զեկավարում ու կազմակերպում եր Հայաստանի կոմունիստական կուսակցությունը։ Հատկապես 1919 թվից սկսած, Հայաստանի կունիստական կուսակցության կազմակերպությունները հօկայան աշխատանքներ եյին կատարում մասսաներին հեղափոխական դաշնակցությունը տակ ուղղությամբ։

«Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները հատկապես 1919 թվից ուժեղ թափ են տալիս աղիտացիոն և կազմակերպական աշխատանքներին, վորոնք պարարտ հող են դաշնում հայ բուրժուազիայի կուսակցության՝ դաշնակցության տիրապետության տակ հեծեծող մասսաների ըբրձանում։ Դաշնակցության տիրապետության շատ կարճ ժամանակմիջոցն անդամ բավական յեղավ, վորսկեսղի նավերջնականապես ցույց տար բանվորական և աշխատավորական մասսաներին իր հրեշտավոր գեմքը, վորսկեսղի այդմասսաների աշքում ավելի ու ավելի բարձրանար բոլցեկիների կուսակցության հեղինակությունն ու հմայքը, վորսկեսղի նրանց դասակարգային ինքնաճանաչողությունն ու ինքնագիտակցությունը գնալով աճեր ու խորանար» (Ա. Խանջյան, «Մայիսյան ապաստմբությունից դեպի նոյեմբերյան հաղթանակը», եջ 21—22)։

Բանվորական և աշխատավորական մասսաներին կոմունիստական դաստիարակություն տալու և նրանց դաշնակցության տիրապետության դեմ վոտքի հանելու համար հսկայական աշխատանք եր կատարում նաև Հայաստանի կոմունիստական յերենի սեժիմի ու դաժան տեսողի պայմաններում Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և Հայաստանի կոմիտեի կազմակերպություններն անդուլ և հերոսական աշխատանքներին տանում դաշնակցության հակահեղափոխական գեմքը մեր-

կացնելու, մասսաների դասակարգային գիտակցությունը զարդացնելու և նրանց հեղափոխական պայքարի ուղին հանելու համար։ Յեղ Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպությունների այդ աշխատանքներն իզուր չեն անցնում։ Դաշնակցության տիրապետության դեմ դեռևս տարիներ առաջ սկսած Հայաստանի բանվորության ու աշխատավոր գյուղացիության հեղափոխական ըմբոստացումները, յելույթներն ու շարժումներն արագորեն ավելի ու ավելի ծավալվում, խորանում են և 1920 թ. մայիսին արգեն ծնում ե մայիսյան հերոսական ապստամբությունը։

## ՍԱՅՍՅՈՒՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Դաշնակցություն կուսակցության դեմ մինչև 1920 թ. մայիսի առ տեղի ունեցած Հայաստանի բանվորության ու աշխատավոր գյուղացիության հեղափոխական յելույթներն ու ըմբոստացումները, սակայն, գալիք ահեղ փոթորկի միայն նախանշաններն են։ Ինքը փոթորկից՝ դա մայիսյան ապստամբությունն եր, վոր կատարվում եր հետեւյալ պարագաներում։

Մոտենում եր 1920 թ. մայիսը։ Մասսաները ձախանում ու ավելի եյին հեղափոխականանում։ Դեպքերն ավելի եյին զարդանում ու հասունանում։ Ապրիլի 28-ին խորհրդայնանում և Ադրբեյջանը։ Այդ լուրը չտեսնված կերպով վորելում ու անհամբեր և գարձնում դաշնակցության տիրապետության տակ յերկար ժամանակ տառապած հեղափոխական մասսաներին։ Միւժամանակ մոտենում եր համաշխարհային պրոլետարիատի միջազգային որը՝ մայիսի 1-ը, վորը տոնելու համար բանվորական – աշխատավորական մասսաները, Հայաստանի կոմունիստական կուսակցության (այն ժամանակ «Արմենկոմի») դեկայարությունը, դեռևս շատ որեր առաջ տենդագին նախապատրաստություններ եյին տեսնում՝ հեղափոխական յելույթ կազմակերպելու դաշնակամբապետական դիկտատուրայի դեմ։ Յեղ իրոք, մայիսի 1-ին դաշնակցական Հայաստանի գրեթե բոլոր հիմնական մասերում՝ Ալեքսանդրոսկում, Յերեանում, Ղար-

սում, Սարիղամիջում, Ղարաքիլիսայում և այլն, հեղափոխական բանվորությունը և աշխատավորությունն «Արմենկոմի» գլխավորությամբ չտեսնված հեղափոխական հուժկու ցուցյեր և յելույթներ կազմակերպեցին։ Ցուցարարների մարտական լողունդներն եյին։ «Կեցցե Խորհրդային իշխանությունը», «Կեցցե կոմկառակցությունը», «Կորչի դաշնակցությունը», «Բագունընկավ, հերթը Յերեանին ե» և այլն։ Դաշնակցությունը և, «Քույր» կուսակցություններ՝ սպեցիֆիկները, եսերները և այլն, փորձեցին մասսաների այդ հեղափոխական ցուցյերը և բողոքները շեղել դասակարգային պայքարի դժիգ և տանել այն՝ խաղաղ տոնական լողունդների տակ։ Սակայն այդ նրանց չհաջողվեց։ Հենց մայիսմեկյան այդ ցույցերը յեկան ակնհայտորեն ապացուցելու, վոր աշխատավորական մասսաներն ի դեմս դաշնակցության, պարզ տեսնում եյին իրենց վոխերիմ, դասակարգային թշնամուն։ Մայիսմեկյան այդ որերը պարզեցին, վոր դաշնակցությունը չունի վորեւ լուրջ, ամուր պատվանդան յերկում, վոր մասսաները հեղափոխականացել են սպասածից ավելի, վոր նրանք գնում են կոմունիստական կուսակցության հետեւից և պատրաստ են վճռական կովկի դուրս գալու դաշնակների իշխանության դեմ հանուն պրոլետարիատի դիկտատուրայի։ Այդ ցույցերը Հայաստանում իրոք այնքան հուժկու, մասսայական և մարտական եյին, վոր ցնցեցին դաշնակ պետականության հրմքերը, այնքան հեղափոխական բնույթ ունեյին, վոր դաշնակցությունը սարսափի մատնվեց։

Վորպես մայիսմեկյան այդ ցույցերի իլյուստրացիա, կարելի յե բերել Ալեքսանդրոպոլի (Լենինականի) դեպքերը։ Այստեղ մայիսի մեկի առթիվ կոմունիստական կուսակցության կողմից կազմակերպված ցույցին մասնակցում են կազմակերպված ձեռովուն հեղափոխական վորով լի միքանի հազար բանվորներ ու աշխատավորներ։ Սկզբում քաղաքում ցույց, միտինգ են կազմակերպում և ապա կազմակերպված շարքերով գնում զորանոցները։ Այդտեղ զինվորական մասերը միանում են ցուցարարներին, նորից կազմակերպում միախնդ, վորտեղ արդեն բացահայտ հեղափոխական ճառեր, մարտական լոգունդներ են բաց թողնում ու կոչ անում զինված ապստամբության համար։ Այստեղ հենց առաջին անդամ հրապարակորեն, վորպես բոլշևիկ, հանդես եղալիս դրահապատի պետ ընկ. Սարգիս Մուսայելյանը և իր հա-

Վաստարմությունը հայտնում պրոլետարական հեղափոխությանը, Խորհրդային իշխանությանը: Միտինդը վողջույնի հեռագիր և ուղարկում Ադրբեջանի Հեղիոմին և ապա զինվորական մասերի հետ միասին, պատրաստ ապստամբության համար, վերադառնում և նորից քաղաք: Քաղաքում դաշնակներն իրենց առկում պրովոկացիոն գնդակ են արձակում ցուցարարների վրա և նրանց հասցեյին (հատկապես Խորհրդային Ադրբեջանի հասցեյին) պրովոկացիոն բացականչություններ անում: Ամբողջովին հեղափոխականորեն տրամադրված ցուցարարներն իսկույն հետապնդում են դաշնակներին, ունենում են ընդհարում նրանց հետ և ապա մտնում դաշնակցության ակումբը և քար ու քանդ անում այն: Գրեթե մոտավորապես այսորինակ ցույցեր ու մետինդներ տեղի ունեցան նաև այլ վայրերում՝ Յերեանում, Ղարսում, Սարիդամիշում և այլն: Մայիսեկյան ցույցերն ըստ երկության ապստամբության սկիզբն եյին: Մայիսի մեկից սկսած հատկապես Ալեքսոլում տիրում եր ապստամբական դրություն, տիրում եր յուրատեսակ յերկիցիանություն և հայտնի չեր, թե ովքե՞ր են քաղաքի փաստական իշխանության տերերը, —կոմունիստները, թե դաշնակները:

Ահա այսպիսի պայմաններում, վոխանակ մայիսի մեկից հենց անմիջապես հետո սկսելու ապստամբական վճռական դորժությունները, «Արմենկոմը» զեռևս հալաղում եր վճռական դորժությունների անցնել, և ձգձգում՝ ապստամբության անցնելու դորձը:

Բայց կատարված փաստի առաջ կանգնած լինելով արդեն, վերջապես յերկար ձգձգումներից ու ատանումներից հետո, մայիսի 5-ին «Արմենկոմը» ապստամբության սանկցիա յետ տալիս և այդ նպատակով Ալեքսանդրովով և ուղարկում իր յերկուներկայացուցիչներին, վորոնց մասնակցությամբ և կաղմակերսով ուժ և ուղմահեղափոխական կոմիտե: Վերջինս մայիսի 6-ի դիշերը վորոշում և ապստամբությունն սկսել և իշխանությունը դրավել մայիսի 8-ին: Սակայն Ալեքսանդրովովն ապստամբների կողմից ուղմական միջոցներով գրավվեց և Խորհրդային հայտարարվեց միայն մայիսի 10-ին, թեև փաստորեն Ալեքսանդրովում ապստամբներն իշխանության տեր եյին դեռևս որեր առաջ, վորովհետեւ, գաշնակցության պետական ու կուսակցական յերկուոտ գործիչները, զգալով իրենց անխուսափելի անկումը,

Նախապես փախուստի եյին դիմել: Միաժամանակ Ալեքսանդրովի շրջակա գյուղերում (հատկապես Քայլթառլիի շրջանում) ապստամբը գյուղացիները կռվի յեն բռնվում դաշնակ խմբակետների, կուլակների հետ, նրանց գուրս են քչում գյուղերից, կազմակերպում ուղմահեղափոխական կոմիտեներ ու հայտարարում Խորհրդային իշխանություն: Ալեքսովի զինվորները, հատկապես, բուռն վոգեռությամբ ընդունում են Խորհրդային իշխանության հաստատումը և պատրաստակամություն են հարցնում կռվել Խորհրդային իշխանության համար մինչև վերջը: Կազմվում ե բանվորների հատուկ գվարդիա, վորը կռվում ե առաջին շարքերում: Բայց Կարմիր բանակի շտարի պետ եր նշանակված ցարական սպա Կորդանովը, դաշնակցական յուրայիններից մեկը, վորին հաջողվում ե պրովակացիայի ու ստոր գավաճան գործունեյության միջոցով գրությունը ծանրացնել, հուսալբություն առաջ բերել բանակի մեջ և հնարավորություն տալ դաշնակցական բանդաներին շրջապատել քաղաքը: Սրան միացան նաև ապստամբության ղեկավարության գործած սկաները, վոչ վճռական գործողությունները, պարենի պակասությունը, գավաճանությունը և այլն, վորոնք բոլորը միասին ծանր գրություն եյին ստեղծում ապստամբների համար: Մայիսի 11-ին զրահապատը, Սուսայելյանի ղեկավարությամբ, Անի—Աղին գծի վրա ընդհարվում ե Սեպուհի բանդաների հետ, վորից հետո տեսնելով, վոր զրահապատի հետ հեշտ չի գործունենալ, Սեպուհը, թողնելով դիմը, անցնում ե գյուղերը և նրանց վրայով առաջ շարժվում գետի քաղաք: Միքանի ընդհարումներ ունենալուց հետո, վերջապես, Սեպուհը մայիսի 13-ին ապստամբներին ուղարկում ե վերջնագիր, վորով պահանջում ե հանձնել: Սակայն անկախ այս վերջնագրից միքանի ընդհարումներ ունենալուց հետո, ապստամբները մայիսի 13—14-ի գիշերն ստիպված են լինում թողնել քաղաքը, վորից հետո Ալեքսանդրովով են խուժում դաշնակցական խմբերը:

Ղարսում կազմակերպված Թաղմհեղկոմը ևս մայիսի 10-ին գարաժի, յերկաթդժի բանվորության, բերդի հրետանու յերկու վաշտի և պարետային վաշտի ուժերով կատարում ե ապստամբություն և Ղարսում հայտարարում ե Խորհրդային իշխանություն: Դեռևս մայիսի 9-ի վաղ առավոտից ապստամբում են բերդի միքանի Փորտերի զինվորությունը: Ապստամբներին միտ-

նում են նաև ըրջակա գյուղացիությունը։ Դաշնակները մի շարք փորձեր են անում դինաթափ անել ապստամբներին, բայց այդ նրանց չի հաջողվում։ Ալեքսանդրոսովովից խոստացված ել զրահապատճե ոգնության գալ ապստամբներին։ Բայց այդ զրահապատճե չի գալիս։ Զինվորության մեջ կազմալուծում և սկսվում։ Դաշնակները մայիսի 11-ին զրավում են կայարանը։ Հեղկոմի շտաբը տեղափոխվում է բերդ և այստեղից հրեատանային կրակ և բաց թողնում քաղաքի վրա։ Սակայն այդ չի ոգնում։ Ապստամբների անվճական գործողությունները, սիստեմը և մի շարք այլ հանդամանքներ, վերջինից պարտության են հասցնում։ մայիսի 13-ին ընկնում և նաև Ղարսը։

Սարիղամիշում ապստամբությունն սկսվում և մայիսի 11-ին։ Այստեղ ապստամբությունն ավելի լավ, ավելի հաջող եր կաղակերպված, չնորհիվ գծի բանվորության և այն ժամանակ այստեղ յեղած հեղափոխական գնդերից մեկի՝ 4-րդ զնդի։ Ապստամբությունն սկսվում և հակահեղափոխականների ձերքակալություններով։ Միքանի դիմադրության փորձեր ճնշվում են զենքով։ Սարիղամիշում ևս սպասում ենին Ալեքսանդրոսովի զրահագնացքին, բայց նա այստեղ ևս չհասավ։ Փորձ և արվում ոգնության գնալ Ղարսին, բայց այդ չի հաջողվում։ ուշ լինելու պատճառով։ Իմանալով Ալեքսանդրապովի և Ղարսի անկման մասին, և չկարողանալով միայնակ կովել դաշնակցության դեմ, ապստամբները Սարիղամիշում ստիպված են լինում մայիսի 18-ին զիջել քաղաքը, վորից հետո Սարիղամիշ և մտնում Սեպուհը և սկսում իր սովորական գաղանությունները։

Նոր-Բայազետում ապստամբությունն սկսվում և մայիսի 13-ին՝ Ղարանլուղից՝ ընկ. Սարուխանյանի գլխավորությամբ։ Կազմվում ե ռազմա-հեղափոխական կոմիտե, վորը ձերքակալում և ռազմաճակատի հրամանատար գեներալին՝ իր շտաբի հետ միասին։ Ապստամբները Ղարանլուղից շարժվում են Նոր-Բայազետ, վորոնց և միանում և ճանապարհին ընկած դյուղերի դյուղացիությունը։

Մայիսի 17-ին, միքանի ժամ տևող կովից հետո, ապստամբներին հաջողվում ե զրավել Նոր-Բայազետը։ Հաջորդ որը պարզ վում և, վոր դաշնակցական բանդաներն առաջ են շարժվում քաղաքի վրա։ Ապստամբները դիրքեր են բռնում քաղաքի շրջակայքում և սկսում կովել։ Մայիսի 18-ին և 19-ին ապստամբ-

ների շարքերը խցկված մի շարք պրովոկատոր սպաներ ամենատաք կովի ժամանակ իրենց խմբերով անցնում են դաշնակների կողմը։ Այս պրովոկացիոն, դավաճան գործելակերպի և մի շարք այլ հանդամանքների պատճառով, միքանի ժամ տևող տաք կովից հետո, դաշնակները 19-ին մտնում են քաղաք ու սկսում իրենց վայրագությունները։

Ղաղախ-Քարվանսարայի շրջանում ապստամբությունը ծավալվում է մայիսի 19-ին։ Մայիսի 22-ին ապստամբները, մի քանի ընդհարումներից հետո, զրավում են Դիլիջանը, սակայն այստեղ յերկար չեն կարողանում մնալ և հետ են քաշվում Ղաղախ-Շամշադին։ Սկսվում են կատարյալ քաղաքացիական կորիզներ, վորոնց ընթացքում Ղաղախի ապստամբ գյուղացիությունը ցուցաբերում և հերոսական պայքարի լավագույն նմուշներ։ Ապստամբները զրավում են իջևանը և ապա հետ հանձնում։ Խիզախ և բուռն վողելորությամբ կովող ապստամբներն Աչաջուր գյուղի մոտ վոհնչացնում են խմբավետ Մուրադի 63 հոգուց բաղկացած խումբը, սակայն վերջինից ստիպված են լինում ժամանակավորապես թողնել Հայաստանի սահմանները և անցնել Խորչըզային Ալբրեգան։

Զանդեղուրում ապստամբությունը սկսվում և մայիսի 20-ին։ Այդ որը ձերքակալվում են դավառական պաշտոնյանները, տեղական իշխանությունները, վորից հետո իշխանությունն անցնում և տեղի ռազմահեղափոխական կոմիտեյի ձեռքը։ Մայիսի 25-ին Դաշնակցությունը ցանկանում է զրաբարկել Սիսիան, ապստամբությունը ճնշելու համար, բայց իմանալով այս մասին, զրաբարերը հետ են կանգնում և հրաժարվում են հրամանները կատարել։ Մայիսի 27-ին, մի քանի գյուղերի հետ միասին ապստամբվում և Խնձորեսկը, բայց հարկ յեղած ոժանդակություն չստանալու պատճառով, մի քանի ընդհարումներից հետո ընկնում է։ Հունիսի սկզբներին ապստամբներն ստիպված են լինում թողնել նաև Սիսիանը։

Ապստամբություններ ավելի կամ պակաս հաջողությամբ տեղի յեն ունենում կաղզվանում, իգդիրում, Ղարաքիլիսայում և այլուր։

Բայց նրանք բոլորն ել շուտով պարտվում են։

Այսպիսով, մասսայական ապստամբություններ կատարվում են, բայց Արմենկոմը և ապստամբությունների ղեկավարությու-

Նը հանդես են բերում թուլություն և տակտիկական սխալներ։ Նրանք գործը չեն կարողանում կազմակերպել ըստ հարկին, չեն դիմում վճռական միջոցների՝ հակառակորդի դեմ պայքարելու և նրան վերջնականապես խորտակելու համար։ Բնդհակառակը, հակառակորդի նկատմամբ հանդես են բերում մեծ «բարեհողություն», լիբերալիզմ և փափկանկատություն։ Չեն ձերբակալում ու բանտարկում դաշնակցության հայտնի գործիչներին և լիդերներին, այլ նրանց դործողությունների համար ազատ սպարեզ են տալիս։ Արմենկոմը և ապստամբությունների անմիջական դեկավարությունն ապստամբություններից հետո ել շարունակում են իրենց տատանվող քաղաքականությունը, դրեթե ինքնահոսի թողնելով պայքարի ընթացքը, փոխանակ արդեն սկսված գործը բոլցեիկորեն դեկավարելու և վճռականորեն մինչև վերջը հասցնելու։ Փոխանակ հարձակման, վճռական գործունեյության, Արմենկոմը դիմում և պաշտպանության։ Բայց սա գեռ բոլորը չեն։ Արմենկոմը և ապստամբությունների անմիջական դեկավար որդանները՝ ուղարձեղիոմները կատարում են նաև այլ սխալներ։ Թույլ եր աշխատանքը նաև բանակում, գյուղում։ Ապստամբության դեկավարությունը վորոշ տեղերում վստահում են թողնել սպայական նախկին կազմի ձեռքը, վորոնց դվասվոր մասն ապստամբության կրիտիկական մոմենտին դաշվաճանում և անցնում են դաշնակ-խմբապետական ուժերի կողմը։ ապստամբած առանձին շրջանների մեջ կապը չի հաջողվում պահպանել, ապստամբությունները չեն կատարվում միաժամանակ, նրանց աշխատանքները չեն զուգակցում միմյանց հետ, վորոնի հետևանքով և մայիսյան ապստամբությունը ջատվում ե առանձին մասերի և հեշտ պարտվում։

Խոսելով մայիսյան ապստամբության պարտության պատճառների մասին, ընկ. Խանջյանը գրում է հետեւյալը.

«Արմենկոմը, Հայաստանի բոլցեիկների այն ժամանակ-վա կենտրոնը — չկարողացավ գործի վերածել ապստամ-բության արվեստի այն հիմունքները, վոր Լենինը՝ յելնելով Մարքսի դրույթներից, շարադրում է այսպես։ Շերբեք խաղ չանել ապստամբության հետ, այլ սկսելով այն, հաստատապես գիտենալ, վոր հարկավոր և դնալ մինչեւ վերջ։

2) Անհրաժեշտ և ուժերի մեջ գերակշռություն ստեղծել վճռական տեղում, վճռական մոմենտին, քանի վոր այլապես ավելի լավ պատրաստված ու կազմակերպված հակառակորդը կվոչնչացնի ապստամբներին։

3) Յերբ ապստամբությունն սկսված ե, պետք ե գործել մեծագույն վճռականությամբ և, անպայման, անպատճառ անցնել հարձակման։ «Պաշտպանությունը մահ և զինված ապստամբության համար»։

4) Պետք ե աշխատել հանկարծակիի բերել հակառակորդին, վորսալ մոմենտը, քանի դեռ նրա զորքերը ցիրուցան են։

5) Հարկավոր ե ամեն որ գեթ փոքր հաջողություններ ձեռք բերել (կարելի յեւ ասել ամեն ժամ, յեթե խոսքը վերաբերում է մեկ քաղաքի), ինչ գնով ել թեկուղ լինի՝ պահպաններով բարոյական գերակշռություն։

6) Մարգսը զինված ապստամբության վերաբերյալ բալոր հեղափոխությունների դասերը հանրագումարի բերեց «պատմության մեջ հեղափոխական տակտիկայի մեծագույն վարպետի՝ Դանտոնի բառերով։ «Համարձակություն, համարձակություն և կրկին համարձակություն»։

Արմենկոմը չկարողացավ կատարել ապստամբության հաղթանակի այս հիմնական պայմանները։ Նա գուրկ գտնվեց բոլցեիկյան այս անհրաժեշտ հոտառությունից և հեռատեսությունից՝ իրերի միջազգային և ներքին տվյալ դասավորության պայմաններում հեղափոխական անմիջական սիտուացիայի անխուսափելիությունը կանխատեսելու, նրան կազմ ու պատրաստ, հեղափոխական դործողությունների միասնական պլանով և ուժերի ճիշտ դասավորումով դիմավորելու համար։ Անգամ, յերբ այլ անմիջական հեղափոխական սիտուացիան փաստ եր գառել, այլ գեեցուամ և Արմենկոմը դեռ չեր կարողանում իր համար պարզել այլ և անհապաղ գործի գիմել։ Նա, ինչպես և Ռազմա-հեղափոխական կոմիտեն, Անդրսանդրովում ապրում պատմամբության անցնելուց հետ ևս դանդաղաշարժ ու անվճռական գոտնվեցին և հարձակողականի փոխարեն, պաշտպանողական դիրք ընդունեցին։ Արմենկոմն ու ՌՀԿ-ն թշնամու թույլ կողմերը չկարողացան ողտագոր-

ների լեռներում և ձորերում, խուլ անկյուններում և բանտերում: Ամբողջական գյուղեր վոչչացան, մասսաները տեսորի և ահաբեկման մատնվեցին: Դաշնակցության գործ դրած այլանդակ միջոցներից կարելի յէ հիշատակել թեկուղ միայն ընկ. ընկ. Մուսայելյանի, Ալլահվերդյանի, Ղարիբջանյանի, Մարուխանյանի, Մելքոնյանի գաղանային սպանությունները: Այսպէս, ուրինակ, ընկ. Ալլահվերդյանին, Մուսայելյանին և Ղարիբջանյանին յերկար ժամանակ բանտում պահելուց և տանջանքների յենթարկելուց հետո, վերջապես, ողոստոսի 14-ի գիշերը բռնությամբ տանում են Յերևանից դուրս, Քանաքեռի տակը և այնտեղ դնդակահարում ու դիմակներն այրում նավթով:

Ընկ. Արտաշես Մելքոնյանին բռնում են Աշտարակի շրջանի Ուշանավանք գյուղում, ծեծում ու ապա բերում Աշտարակ, այստեղ ևս չտեսնված տանջանքների ու պախարակման յենթարկելով, տանում են Եջմիածնի բանտը, վորտեղ նորից տանջանքների և չարչարանքների յենթարկելուց հետո, խմբապետ Համադաշոպի կարգադրությամբ իրը թե Յերևան տեղափոխելիս ճանապարհի վրա նախորոք պատրաստված մառլերիստների ձեռքով, դաշնակցական պառլամենտի անդամների ներկայությամբ դադանարար գնդակահարում են և դիմակը քաշ տալով հացնում Յերևան:

Ընկ. Հովհաննես Սարուխանյանի նկատմամբ գործ են դնում ինկվիզիցիոն սարսափելի տանջանքներ. ձիերի սուչից կապած կենդանի-կենդանի քարչ են տալիս փողոցներով, ծեծում, թքում յերեսին և վերջիվերջո կիսակենդան դրության մեջ, մեկ-յերկու որ հետո դնդակահարում:

Այսպես եր վարվում Հայաստանի հակահեղափոխությունը, դաղազած դաշնակցական խմբապետների դեկալարությամբ Հայաստանի ապստամբ բանվորների, աշխատավորների ու նրանց դեկապարների հետ: Դաշնակցություն կուսակցության սարքածության հետ հերոսական սպանդում հերոսաբար ընկան խիղախ ընկերներ՝ Ալլահվերդյանը, Սարուխանյանը, Ղարիբջանյանը, Ղուկասյանը, Մուսայելյանը, Փանյանը, Անոյանը, Մելքոնյանը, Աղքանը, Հակոբը, Զաքոսակովը, Մաահէկոն, Մկրտումյանը, Ալեքսեյկովը, Հակոբը չանդարյանը, Խրիստովսկին, Կուսմալյակին, Եյթուրարյանը, Իսկանդարյանը և բազմաթիվ այլ հայտնի և անհայտ ընկերներ:

Հակահեղափոխությունը, ուեակցիան հաղթանակում եր, սա-

կայն նա հաղթանակում եր միայն ժամանակավորապես: Մայխան ապստամբությունը Հայաստանում պարտվեց, բայց նա իր խոկ պարտվելով ճանապարհ հարթեց հաղթական նոյեմբերյան հեղափոխության համար:

«Մայխան ապստամբությունը Հայաստանում, —ասում են ընկ. Խանջյանը, —ապստամբությունները լենինականում, Ղարսում, Մարիղամիշում, Ն. Բայազետում, Դիլիջանում, Ղաղախում անբուժելի վերքեր բաց արին ազգայնական-բուրժուական Հայաստանի որդանիզմի վրա: Զնայած իր ժամանակավոր պարտության, մայխան ապստամբությունը անասելի չափով խորացրեց անդունդը՝ տիրող դասակարգերի և յերկրի բանվորական ու աշխատավորական լայն մասսաների միջև, մինչև վոր նոյեմբերին, —յերբ ծայրաստիձան սրբացնին Հայաստանի բուրժուական «Հանրապետության» ներքին և արտաքին հակասությունները՝ Ղաղախի ապստամբ գյուղացիների նոր հարվածը, զեռ մայխին բացված անդունդը գլորեց դաշնակների իշխանությունը»:

Յել իրոք, մայխան քաղաքացիական կատաղի կոփիներում կոփիված և գասեր ստացած Հայաստանի ապստամբ բանվորները և աշխատավոր գյուղացիները, Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, կարողացան մի հուժկու հարվածով հենց նորյին թվի նոյեմբերին, տապալել դաշնակ կառավարությունը և հաստատել Խորհրդային իշխանություն:

Մայխան ապստամբությունը—այդ սոցիալիզմի համար պայքարող Հայաստանի բանվորության ու աշխատավոր գյուղացիության առաջին մասսայական հեղափոխական շարժումն եր: Նա Հայաստանում սկիզբ եր դնում քաղաքացիական կոփիներին: Հերոսական մայխը հաղթական նոյեմբերի սկիզբն եր:

## ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՅԻՍԻՑ ԴԵԳԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՆՈՅԵՄԲԵՐԸ

Մայխան ապստամբությունը հաջորդեց ծանր ու դաժան ուեակցիան: Ճնշելով մայխան ապստամբությունը, դաշնակցա-

կան կառավարությունը շտապում եր «Հնագանդեցնել» ըմբոս-տացած մասսաներին և իր հաշիվը տեսնել «ազգի դավաճանների» հետ։ Անմիջապես սկսվում են մասսայական տեսորը, դաշնակ վայրենի ու արյունաբրու խմբավետների զազրելի վոճար-գործությունները և պատժիչ զորամասերի կոտորածներն ու զա-զանությունները։ Բոլոր այն գյուղերը, վորոնք ակտիվ մասնակ-ցություն ելին ունեցել մայիսյան շարժումներին, դաշնակցական կառավարության կողմից յենթարկվում են անլուր ճնշումների ու ավերումների։ Թե դաշնակցական բանդաները հեղափոխական աշխատավորական մասսաների դեմ ինչ զազրելի միջոցներ ելին դորձադրում, այդ մասին ավելորդ չեմ մի որինակ բերել։ Դար-սի գյուղերում դաշնակցական կառավարության կողմից կատար-ված այդ ճնշումների ու կեղեքումների մասին մի ականառես հետեւյալն ե պատմում։

«Բլագովորնոյե գյուղը, վոր գոնվում ե Ղարսից 5 վերստի վրա, մայիսի 12-ին շրջապատվեց Ղարսի ամբողջ կայազորով և մասուղերիստներով, գյուղի վրա յեր ուղղված ամբողջ բերդամրոցային հրետանին և առաջարկված եր թնդանոթից կրակ բանալու սպառնալիքի տակ հանձնել դեմքերը։ Հանձնեցին. վճարել 230.000 ռ. հարկ Անդրկով-կասյան կոմիսարիատի բոներով (վորոնք կառավարական չե-կերից թանգ են 5 անդամ)՝ վճարեցին։ Պահանջեցին յերեք միլիոն ռուբլի պատերազմական տուգանք, բայց վորովհե-տե գյուղացիները փող չունեցին, ի հաշիվ պատերազմա-կան տուգանքի՝ 100 ձի խլեցին, 10. հազարական ռուբլի գնահատելով յուրաքանչյուրը, մոտ 200 կթան կով հինգ հազարական ռուբլով, զավթեցին 400 վոչխար (4 վոչխարը մեկ կովի տեղ եր դնվում)։ Զորքը գյուղը վոտք դնելուց հետո՝ սկսեցին խուզարկությունները, վորոնք կատար-վում ելին շորեղենի, կոչելենի թալանի հետ միաժամա-նակ։ Դրանից հետո «Եկղեկուցիա» դրվեց. բերին զինվոր-ների մի գունդ, վորին մթերքներ պետք ե մատակարարե ազգաբնակությունը մի ամսվա ընթացքում։ Զինվորները և գլխավորապես սփեցերները ծեծում ու բռնություններ ելին գործ գնում գյուղացիների վրա։ Դրանով չբավակա-նանալով, այդ գյուղն այժմ 500 փութ կովի յուղի հատուց-ման պարտավորեցրին, չնայած վոր գյուղում մնաց ամե-

նալավ կովերից 200—300 հատ։ Մայիսից մինչև հունիսը դյուղացիներից գողացված ե մինչև 15 ձի, 25 խոշոր յեղ-ջուրավոր անսառուն և մինչև 50 վոչխար։ Հասարակու-թյունից պաշտպանության համար՝ պառամենա ուղարկ-ված ներկայացուցիչներին պատասխանված ե յեղել՝ «Ճեղ-բոլշևիկներից համար այդ գեռ քիչ ե»…։

Նովո-Սելիմ գյուղից վերցրած ե 20 ձի, 8 յեղ։ Կերա-կրելու համար մի ամիս հստած ե յեղել մի վաշտ զինվոր, բռնաբարված ե 18 կին, գանակոծված ե գյուղի ավագը (ստարչինան։ դաշնակները կոմիսարներ չեն ընդունում, քյոլիվաներ են նշանակում ըստ իրենց հայեցողության)։ Միքանի գյուղացի ծեծլել են, վերցված ե 17 փութ յուղ և անվճար բեղյատ են դրել պատերազմի ամբողջ ընթաց-քում։ 35 ձի, Փուրդոնների և մարդկանց հետ միասին, աշխատում են Փրոնտում…։

Նույն դրության մեջ են գտնվում նաև մյուս գյուղերը։ («Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հա-յատանում», 1932 թ., էջ 395—396)։

Նմանորինակ ճնշումներ ու թալաններ դաշնակցական կառա-վարության արյունախում բանդաների կողմից կատարվում ելին Հայատանի գրեթե բոլոր մասերում, բոլոր այն վայրերում, ուր բանվորությունը և աշխատավորությունը վոտքի ելին կանգնել դաշնակցության տիրապետությունն իրենց վկից թո-թափելու համար։ Խիստ ճնշումներ ու գաղանություններ տեղի ելին ունենում, հատկապես, Ղազախի, Շամշադինի, Զանգե-զուրի, Ալեքսանդրոպոլի, Նոր-Բայազետի և մյուս շրջաննե-րում։

«Մայիսյան բոլշևիկյան շարժումներից հետո, — դրում ելին իր ժամանակ Շամշադինից Բագվի «Կոմունիստ» լրա-գրին, — զաշնակցական կառավարությունը մինչև որս ել շարունակում ե իր գաղանային քաղաքականությունն ա-պլատամբների վերաբերմաբ։ Ամեն աեսակի ճնշումները, ծեծը, բանտարկությունը, սպանություններն ու բռնաբա-րությունները ծայր աստիճանի յեն հասած։ Գյուղացիներին թալանելն ու կաշառակերությունն ել նույնպես։ Կառավա-րությունն այդ միջոցների մեջ ե տեսնում իր իշխանու-

թյան հաստատ պահելու գրավականը։ Շամշադինի, Ղըզե-  
դյուղում սեպտեմբերի 23-ին սպանված՝ կառավարության  
աղենուների ձեռքով Միքայել Զարդարյանը, վորը հալած-  
վում եր իրեւ բոլցելիկ։ Դիմիջանում նորերս փողոցում  
գնդապետ Նիկիտ Զաղեթյանը հանում և ատրճանակն ու  
միքանի հարյածով տեղն ու տեղն սպանում Գր. Յինդիրա-  
րյանին»։

Դաշնակցական կառավարությունն իր այդ եկզեկուցիանե-  
ռով, Զարդերով ու անորինակ ճնշումներով նպաստակ ուներ  
խեղդել հեղափոխական շարժման ամեն մի փորձ և խեղդել հե-  
ղափոխական վոդին Հայաստանի աշխատավորական մասսաների  
մեջ։

Հայաստանի հեղափոխական շարժումները գլխատելու նպա-  
տակով դաշնակցական կառավարությունը, սակայն, առանձնա-  
պես կատաղի արշավանք եր սկսում Հայաստանի կոմունիստա-  
կան կուսակցության դեմ։ Դաշնակցական պետական մեխանիզմն  
իր ամբողջ ուժով դործի յեր դրվել կոմունիստներին վորսալու  
համար։ Դաշնակցության սպիտակ տեսորն սկսում եր իր առատ  
հունձը։ Սարքում եյին արյան բաղնիքներ։ Բանտարկվում և  
առանց դատի ու քննության գնդակահարվում եյին տասնյակ ու  
հարյուրավոր կոմունիստներ։ Ծանր ուեկացիայի այդ սև որերին  
Յերեանից Բագվի «Կոմունիստ» լրագրի հասցեյով ուղարկված  
մի նամակում Հայաստանի դրությունը հետեւալ կերպ եր պատ-  
կերացվում։

«Ծնկերներ, սպիտակ տեսորը Հայաստանում սոսկալի  
չասնում յե հասնում։

Վերաբերմունքը դեպի ձերբակալված կոմունիստները  
գնալով ավելի վատթարանում, ավելի լւտի կերպարանք  
ե ընդունում։

Առանց չափաղանցնելու կարելի յե ասել, վոր մայիսյան  
սարսափները վոչինչ են այն ամենի առաջ, վոր տեղի յե  
ունենում այժմ Հայաստանում։ Առանց դատի ու քննու-  
թյան վերջին 3 որվա ընթացքում բանտից դուրս են տար-  
ված ու գնակահար են արված մեր ամենալավ 11 ընկեր-  
ները...»

Հայաստանի բանտերում գտնվում են մոտ 500 հոգի։

Ծեծն ու չարչարանքը սովորական յերեսույթներ են։  
Իսկ բանափառ դուրս, Հայաստանի խուլ գյուղերում և  
քաղաքներում կառավարությունն իր աղենուների միջոցով  
վոչինչացնում ե ձեռքն ընկած կոմունիստներին (յուրաքան-  
չյուր կոմունիստի գլուխը գնահատված ե 5000 ու)։

Այդ անհրաժեշտ ե կառավարության տառապող, բայց  
չհուսահատվող մասսաների ճայնը խլացնելու համար։

Հայաստանի կառավարությունն իրեն չատ աղատ և  
զգում կոմունիստների վերաբերմամբ և նրանց հետ վար-  
վում ե ուղածին պես։

— Վրեժ, վրեժ ու վրեժ, ահա ինչ են աղաղակում  
սմենքը։ Գրում ու հավատացնում են, վոր «վոչ մի կո-  
մունիստ չի աղատվի նրանց ճեռքերից»։

Դավառում նույնական տեսորն ե թագավորում։

Նոր-Բայազետում դաշտային — զինվորական դատի վա-  
րոշմամբ գնդակահար են արված մեր յերկու սմենալավ  
զինվոր ընկերները։

Մի խոսքով Հայաստանի կոմունիստների մի մասը գըն-  
դակահար ե արված, մյուս մասը տառապում ե բանտե-  
րում։ Վերջներին նույն վիճակն ե սպասում։

Կառավարության այդ անձանց կամայականություննե-  
րը գյուղացիության մեջ դժոհության ձայներ են տա-  
ջացնում։ (Նույն տեղը, եջ 387)։

Սակայն վոչ դաշնակցական կառավարության այդ սպիտակ  
տեսորը, վոչ նրա Զարդարար կացինն ու մարտակը յերեք չեյին  
կարող վոչ ընկնել։ Հայաստանի բուլեթիկյան կուսակցությանը  
և վոչ ել կանգնեցնել Հայաստանի բանվորության ու աշխա-  
տավոր գյուղացիության հեղափոխական, հակաղաշնակցական  
շարժումները։ Դաշնակցական սպիտակ տեսորի այդ դաժան ո-  
րբերին դեռևս, յերբ անընդհատ ու անխափան աշխատում եյին  
դաշնակցության սարքած սպանդանոցներն ու արյան բաղնիք-  
ները, խոր պողպալիան քաշված Հայաստանի բոլցեթիկյան կու-  
սակցության կենտրոնական կոմիտեն մասնաներին նոր պայքարի  
դիմելու մարտական կոչեր եր անում։

«Ծնկեր բանվորներ, գյուղացիներ և զինվորներ! Հա-  
լածված ե արնաքամ յեղած կոմունիստական կուսակցու-  
թյունը չե, — գրում եր Հայաստանի բոլցեթիկյան կուսակ-  
ցությունը»։

յության կենտրոնական կոմիտեն, Հայաստանի բանվորներին և գյուղացիներին ուղղված իր մի կոչք մեջ, —վոր պետի ընկերվի այդ ժամանակավոր պարտությունից։ Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաները չեն, վոր երեսը զենքը պիտի ցած զնեն գաշնակցական ալաղակախմբերի հանդեել։ Այդ կուսակցությունը — կոտորում ու մորթուում և հայ հեղափոխական բանվորներին ու գյուղացիներին, նրանց ամենաանկեղծ ներկայացուցիչներին, ահա այդ կուսակցությունն և, վոր պիտի վերջիվերջո խորտակվի կոմունիստական հեղափոխության հուժկու հարմածների տակ։

Թաղ դողան նրանք վաղվա կոմունիստական հեղափոխությունից :

Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաներին, նրանց հեղափոխական կորոլին ու դասակարգային գիտակցության՝ կազմակերպվելու կոմունիստական կուսակցության գրոշակել չուրջը, հավաքելու ցըրված հեղափոխական ուժերը, վրաբեսդի ձեռք-ձեռքի տված Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի հետ միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական-դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի գրոշակը Հայաստանում:

ԿԵՐԵՑ ԽՈՐՀԱԳԻՆ ՀԱյաստանը:

ԿԵՐՊԵ ԱՐԱԵԼՔԻ ՀԵՂԱՎՈՒԽՈՒԹՅՈՒՆԻ :

ԿԵՐԵ 3-ՐԴ ԻՆՍԵՐՆԱԾԻՈՆԱԲ»:

Զնայած նրան, վոր Հայաստանի կոմունիստական կուսակցությունը կրում եր շատ ծանր կորուստ, այնուամենայնիվ, նա, իսկապես, և վոչ մի բողեք գենքը վայր չեր դնում։ Ամբողջապես հաղթական ապագայի հավատքով լցված Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները մայիսյան հերոսական շարժումները ճնշվելուց հետո անխօնչ ու անդուլ կերպով տանում ելին աշխատավորական մասսաներին կազմակերպելու, նրանց նոր պայքարի հանելու իրենց աշխատանքը։ Վերակառուցելով և վերադասավորելով իրենց շարքերը, Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները շուտով ծավալում ելին աշխատանք թե՛ բանվորության և թե՛ աշխատավոր դյու-

զացիության մեջ։ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություն-ների այդ աշխատանքներն այնքան խոչոր ու լայն ծավալ ելին ստանում, վոր ողոսառոս-սեպտեմբեմբեր ամիսներին արդեն դաշ-նակցական կառավարությունը լուրջ վտանգ ու անհանդասու-թյուն եր զգում որ-ալուր ծավալիող ու խորացող կոմունիստ-ների աշխատանքից։ 1920 թ. սեպտեմբեր ամսին, որինակ, Շի-րակի նահանգապետ Կարո Սասունին դաշնակցական կառավա-րակի նահանգապետ Կարո Սասունինին պետ Ոհանջանյանին զեկուցում և այն մասին, վոր կո-բության պետ Ոհանջանյանին զեկուցում և այն մասին, վոր կո-մունիստները յերկրում նորից խոչոր աշխատանք են ծավալել։

Հայաստանի բոլցիկիլյան կազմակերպությունները այդ աշխատանքը, սակայն, ինչպես միշտ, նույնպես և այս անդամ իդուր չեր անցնում: Համախմբվելով կոմունիստական կուսակցության կազմակերպությունների շուրջը, Հայաստանի բանլուրական ու աշխատավորական մասսաները մայիսյան ապստամբության պարտությունից հետո ևս շարունակում եյին իրենց յելույթները և հեղափոխական պայքարը դաշնակցության տիրապետության դեմ: Հերոսական մայիսյան ապստամբության ընթացքում ընկած մարտիկների արյունը դեռ չեր չորացել, յերբ ահա սկսվում եր հեղափոխական պայքարի մի նոր ալիք: Հունիսի սկզբներին Քանաքեռում կուտակված դաշնակցական զորքի մեջ տեղի յեն ունենում մասսայական դժողոհություններ ու առանձին յելույթներ: Դրանից քիչ անց, հունիսի 18-ից, վերսկսկվում են քաղաքացիական կոփլները Ղաղախ-Շամշդինում՝ կոմունիստական գործությամբ դործող գյուղացիության և դաշնամստների ղեկավարությամբ դործող գյուղացիության և դաշնակցական բանդաների միջև: Հուլիսի սկզբներից քաղաքացիական կոփլները վերսկսվում են նաև Զանգեզուրում և այլ շրջաններում: Յեվ մայիսին սկսած ու հունիսին և հուլիսին վերսկսած քաղաքացիական այդ կոփլները փոքր ընդհատումներով շարունակվում են մինչև Հաղթական Նոյեմբերյան հեղափոխությունը: Դեռևս մայիսից ծայր առած քաղաքացիական այդ կոփլները ճանապարհ եյին հարթում Հայաստանի Հոկտեմբերի՝ հաղթական Նոյեմբերի համար:

## ԱռԵՄԱՍՏԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՆՈՒԹՅՈՒՆԸ

Դաշնակցական Հայաստանին ղեպի անդունդ, ղեպի կործանում տանող վաղքը 1920 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ավելի ու ավելի արագանում եր: Հաղթական սոցիալիստական հեղափոխության համար արգեն ստեղծվում եյին բոլոր անհրաժեշտ նախադրյալները: Այն բոլոր նախապայմանները, ինչ վոր պահանջվում եյին հեղափոխության հաղթանակն ավագանվելու համար, դաշնակցական Հայաստանում հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին արդեն կային: Սակայն վորո՞նք եյին հաղթական հեղափոխության համար անհրաժեշտ այդ նախապայմանները.

«Հեղափոխության հիմնական որենքը,—դրում եր Լենինը 1920 թվին,— վոր հաստատված և բոլոր հեղափոխություններով և, մասնավորապես, բոլոր յերեք ռուսական հեղափոխություններով 20-րդ դարում, ահա թե ինչումն և կայանում: Հեղափոխության համար բավական չե, վոր շահագործվող ու ճնշված մասսաները գիտակցեն ըստ հնի ապրելու անկարելիությունը և պահանջեն փոփոխություններ. Հեղափոխության համար անհրաժեշտ ե, վոր շահագործողները չկարողանան ապրել ու կառավարել ըստ հնի: Միայն այն ժամանակ, յերբ «ստորին խավերը» չեն ուղում հինը և յերբ «վերին խավերը» չեն կարող ըստ հնի, միայն այն ժամանակ հեղափոխությունը կարող է հաղթել: Այլ կերպ այս ճշմարտությունն արտահայտվում է այս բառերով. Հեղափոխությունն անհնարին է առանց համազգային (թե՛ շահագործվողների, թե՛ շահագործողների շահերը չոչափող) ճշնաժամի: Նշանակում ե, հեղափոխության համար հարկավոր ե, նաև՝ հասնել այն բանին, վոր բանվորների մեծամասնությունը (կամ, գոնե, գիտակից, մտածող, քաղաքականապես ակտիվ բանվորների մեծամասնությունը) լիովին հասկանա հեղաշրջման անհրաժեշտությունը և պատրաստ լինի հանուն նրա իր կյանքը դուելու յերկրորդ՝ վոր կառավարող դասակարգերն ասլրեն կառավարական ճղնաժամ, վորը քաղաքականության մեջ և ներ-

քաշում նույնիսկ ամենահետամնաց մասսաներին... ուժապառ և անում կառավարությանը և հեղափոխականների համար հնարավոր է դարձնում նրա արագ տապալումը» (Լենին, Հատոր 25, էջ 223):

Հեղափոխության մեծ վարպետ Լենինի կողմից վերև հետապակված: «Համազգային ճղնաժամը», վորը նա համարում եր շատակած: «Հեղափոխության անհրաժեշտ նախապայմանը, դաշտաղթական հեղափոխության անհրաժեշտ նախապայմանը, դաշտաղթական հեղափոխության անհրաժեշտ նախապայմանը 1920 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին արդեն փաստ եր:

Դեռևս մայիսին ծայր առած ու հետագա ամիսներին ընդհատումներով շարունակված քաղաքացիական կովկները և աշխատավորական մասսաների հեղափոխական յելույթներն ու լմբուտացումները հոկտեմբեր և մասնավորապես նոյեմբեր ամսին անսահման լայնանում ու ծավալվում եյին: Դաշնակցության դաժանական տակ հեծեծող Հայաստանի բանվորության ու աշխատավոր գյուղացիության հեղափոխական շարժումներն այդ ամիսներին նոր և ուժգին վերելք եյին ապրում: Ժուլիոսի միակ ամիսներին նոր թափով վերսկսվում են Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նոր թափով վերսկսվում են Հոկտեմբեր-նոյեմբերին իջևանի, Շամշադինի, Ղափանի, Դիլիջանի, տաք կրիվներն իջևանի, Շամշադինի, Ղափանի, Դիլիջանի, Նոր-Բայազելի աշխատավորության ու դաշնակցական բանդաների միջև: Շիրակի գյուղացիությունը նոյեմբեր ամսում միջների միջև: Շիրակի գյուղացիությունը նոյեմբեր ամսում միջների միջև: Հակառակ կարողանում է շրջանից դուրս քչել դաշնակցական քառական որգաններին և հարուրարել «Սովորություն»: Կառավարական կոմիտեների և արտօնարել «Սովորություն»: Հանդեղուրում ևս աշխատավոր գյուղացիությունը, կոմունիստական կուսակցության տեղական կազմակերպությունների ղետական կուսակցության տեղական կազմակերպությունների ղետակալությամբ, հաճախ կարողանում եր շրջանից դուրս քչել դաշնակցական խմբերին, կազմել ուղղումներ և հայտարարել Ռուբրության իշխանություն: Հակառակավարական հեղափոխական յելույթներ տեղի եյին ունենում նաև Արարանի, Աշտարակի, Եջմիածնի և մյուս շրջաններում: Յեկա աշխատավոր գյուղացիության հակառական հեղափոխական այդ յելույթներն ու լմբուտությունները քանի զնում այնքան ավելի ու պակելի ծավալվում ու հզորանում եյին: Նոյեմբերի կեսերին արդեն այդ շարժումները հակայական ուժ և աննախընթաց ծավալ են ստանում:

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նոր թափ ու նոր ուժ և ատանում նաև բանվորության հեղափոխական պայքարը: Զնաւ-

յած նրան, վեր դաշնակցական կառավարությունը հեղափոխական բանվորության նկատմամբ գործադրում եր ամենազաժանքի միջոցներ, հետապնդումներ, վայրենի ճնշումներ ու հալածանքներ, այնուամենայնիվ հեղափոխական պայքարը Հայաստանի բանվորության մեջ վոչ միայն չեր թուլանում, այլ, ընդհանի կառական, ավելի ուժեղանում ու կաղմակերպված բնույթ և ստանում: Բանվորական հեղափոխական շարժման կենտրոնն ինչպես առաջ, նույնպես և այժմ մնում եր յերկաթուղին: Յերկաթուղուդի և դեպոների բանվորության գործադրումներն ու առանձին հեղափոխական յելույթներն այնքան հաճախակի ու սուրբնույթ եյին կրում, վոր դաշնակցական կառավարության հազրդակցության մինիստր տիրահռչակ Զամալյանն սպառնում. եր կախաղաններով: Զդալով հեղափոխության մոտենալը և նրա անխուսափելիությունը, բանվորությունը, Հայաստանի կոմունիստական կուսակցության տեղական կաղմակերպությունների գեկավարությամբ կաղմակերպվում ու նախազարդարաստվում եր:

Սակայն որեցոր աճող բանվորա-դյուլազիական հեղափոխական այդ շարժումներին միանում եր նաև դաշնակցական բանակը: Բոլշևիկյան կուսակցության պրոպագանդը և աղիտացիան իրենց գործն արդեն արել եյին: Բոլշևիկյան լողունդներն արդենց շուրջն եյին համախմբել զորքի մեծ՝ աշխատավորական մասը: Դաշնակցական բանակը յերբեք այնքան հեղափոխականացած չեր, վորքան 1920 թ. հոկտեմբեր ու նոյեմբեր ամիսներին: Զինվորության հեղափոխական յելույթներն ու ըմբուռությունները, հատկապես նոյեմբեր ամսին, հասնում են ամենաբարձր աստիճանին: Զորքերն այլևս չեն կուլում: Նրանք գիմազրում են դաշնակցական կառավարության հավատարիմ մնացած խմբապետական զորամասերին և մեծ խմբերով վերադառնում են իրենց գյուղերն ու հայտարարում այնուղղ Խորհրդական իշխանություն: Դաշնակցական կառավարության բանակը դառնակալ հառակ գուստական միակ համար է հակադաշնակցական համարների մեջ ամենամասն է այս ուժությունը և ամենամասն է այս ուժությունը: Դաշնակցական կառավարության գործադրությունը և մեծ ամբողջությունը կազմում են իրենց գյուղերի մասնակի հակադաշնակցական համարները մեջ ուժությունը կազմում է այս ուժությունը: Այս միքանի փաստեր այդ մասին: 1920 թվի նոյեմբերի վերջերին խմբապետ Սեպուհը, մայիսյան ա-

պլստամբների այդ դաշիճը, դաշնակցական կտորավարությանը Դիմիջանից հեռազրում եր.

«Այս բոպեյիս կապիտան Խաչատրյանը հաղորդում է, վոր յերկրորդ, վեցերորդ և առաջին ուղիղ-միլիցիոն վաշտը լքել են գերբերը և ցրվել տուն: Այսոր թողել են և գնացել նաև հինգերորդ և յերրորդ վաշտերը: Պահեստում (գերբերի վրա) մնում է չորրորդ վաշտը, վորի վրա հույզնել չեմ կարող: Հայտնում եմ, վոր դասավիճները փախչելով գյուղերում հայտարարում են իրենց կառավարությունը: Շրջանում աղմինիստրացիան իշխանություն չունի: Ճամապարհները կտրված են և վնասված: Բավականաչափ ուժ չունենալով, չեմ կարող համապատասխան միջոցների գիմել: Կապիտան Խաչատրյանը զեկուցում է, վոր Փրոնտը յիանդամայն բաց և մնացել: Պրովոկացիան և ադիտացիան մեծ չափեր են ընդունել: Պահանջվում է լուրջ միջոցների գիմել՝ դասավարությունը վերացնելու համար: Ներկայիս այդ վշջանը յենթարկվում է գեներալ Խանքարմովի դորարանին: Իմ կողմից վոչինչ ձեռնարկել չեմ կարող, ժանավանդ, վոր կապիտան Խաչատրյանը, դրությունը վերականգնելու համար, պահանջում է 300 ձիավոր, 2 թնդանոթ և գնդացիներ: Բողանիս գյուղում սպա Սախումյանը դասավարել և ժողովել և բանարկել՝ մասերը վերադառնելու համար: Դասավիճները հարձակվում են բանտի վրա՝ իրենց ընկերներին ազատելու համար և փորձել են ձերբակալելու սպա Սախումյանին, բայց նա ազատվել է: Ինչպես յերեսում է Բողանիսի և Ղազախի շրջանում տեղի յեն ունենում մեծ անկարգություններ: Կարգը վերականգնելու համար անհրաժեշտ և կտրուկ միջոցների գիմել: Ինչպես զեկուցում է ինքը՝ կապիտան Խաչատրյանը, հարկավոր են ձիավարներ ու թնդանոթներ՝ դասավարեներին հավաքելու, պատժելու և մասերի միջև վերաբաշխելու համար: Նրանց աեղ անհրաժեշտ և նշանակել Բողոնիսի և Ղազախի շրջանների համար նոր մասեր, վորպեսի հնարինի ապահոված համարել այս Փրոնտը: Յեթե կառավարությունը թույլ տա ինձ և տա թնդանոթներ, անմիջապես 300 ձիավոր կուղարկեմ այսուղղ՝ կարգը վերականգ-

նելու համար : Ներկայիս հնարավոր եմ համարում ձիավորներ ուղարկել այսուղ, վորովհետև մինչև զինադադարքարի վերջը դեռ ժամանակ կա: Յեթե վճռական միջոցների չղիմենք, նրանց գործողությունները կանդրադառնան այստեղի զորամասներին: Խնդրում եմ այս մասին տեղեկացնել զորահրամանատարության և հետևանքների մասին հայտնել ինձ առավոտը կանուխ»:

Նույն խմբապետ Սեպուհն իր մի այլ հեռագրի մեջ Դիլիջանից հաղորդում եր հետևյալը :

«Նախկին Զեղոք Գոտում դասալիքները դիմադրությունն են ցույց տալիս տեղական իշխանության: Միջոցներ են ձեռք առնված բոլշևիկների աղիտացիայի դեմ Զալալ-Ռուլու շրջանում»:

Դաշնակցական պառլամենտի անդամ Ավագյանն իջևանից հայտնում եր .

«Իջևանի և Բարսնայի շրջանում զորքը գումար-դունք ցըվում և ինքնակամ կերպով: Ուազմամբիլիցիոն գնդից չորս ջոկատներ յերեկ և այսոր ցըվել են. նախառարես ուրիշ ջոկատներ ևս մասամբ ցըված են յեղել, ճակատը հետզետե մնում և բոլորովին բաց: Գտնվում ենք ճիշտ հունիսի 19-ի կացության մեջ: Դասալիքները զնում են տուն իրենց զենքերով ու հակուստներով: Ադմինիստրացիան շատ թուրացել է: Դասալիքները տեղ-տեղ ցույց են տվել բնդիմություն և կարողացել են պահակների հսկողությունից խուսափել: Շրջանը կարող է ձեռքից գնալ: Խիստ անհրաժեշտ ե ուժեղ միջոցներ ձեռք տոնել: Գեներալի մասին մեր տեսակերը պարզ է, առաջն հերթին այս գիշեր իսկ պետք է կարգադրել, վոր Սեպուհը հայտարարվի այս շրջանի և ճակատների ընդհանուր զորահրամանատար, ինչպես եր հուլիս-օգոստոս ամիսներին, վորպեսզի կարելի լինի ուժերի նոր դասավորությունը գորությունը վերականգնել: բոպեները նշանակություն ունեն, աղաչափին խնդրում ենք տալ Սեպուհին լայն իրավունքներ: Վաղն անցած կրինենք իշեան՝ վտանգված շրջանների կարգը հաստատելու աշխատանքների համար»:

Նույնանման հեռագրեր դաշնակցական կառավարությունն առանում եր նաև բոլոր մյուս ֆրանսներից: Դաշնակցության բանակի հեղափոխականացումն ընդհանուր յերեսութ եր: Բոլորի համար պարզ եր, վոր դաշնակցության բանակն անցել և ժողովրդի, բանվորության և աշխատավոր գյուղացիության կողմը, և վոր նա այժմ պատրաստ ե կովկելու և արդեն կովում և սոցիալիստական հեղափոխության համար:

Այսպիսով, 1920 թ. Հոկտեմբեր-նոյնմբեր ամիսներին Հայաստանի բանվորությունը և աշխատավոր գյուղացիությունը և թե բանակը, այլ կերպ ասած՝ բովանդակ «ստորին խավերը», այլև «չեյխն ուղում չինը», «լովին հասկանում ելին հեղաացման անհրաժեշտությունը» և «պատրաստ ելին հանուն նրա իրենց կյանքը զոհելու»: Այս «համազգային ճգնաժամի» առաջին պայմանն եր:

Ի՞նչ գրություն ելին ապրում, սակայն, «վերին խավերը», նրա գաշնակցական Հայաստանի «կառավարող դասակարգը», նրա իշխանությունը հանդիսացող դաշնակցական կառավարությունը:

Հավատաբեր իր բուրժուական հակահեղափոխական եյությանը, դաշնակցական կառավարությունը 1920 թ. սկսել եր մի նոր ավանդուրիստական պատերազմ ազգային-ազատագրական պայքարի բովում գանվող Տաճկաստանի դեմ: Իր անբարտավանությամբ չափ ու սահման անցնող դաշնակցական կառավարության այս պատերազմը, վոր նզատակ ուներ իրականացնելու «Միացյալ» և «Ծովից-ծով Հայաստան» դաշնակցություն կուսակցության ավանդուրիստական լոգունդը, վերջանում եր մի չտեսնալած կրախով: Յեղ ուրիշ կերպ ել չեր կարող լինել: Այդ չտեսնալած կրախով: Յեղ ուրիշ կերպ կերպ էլ չեր կարող լինել: Այդ սկսում եր դաշնակցությունը հակառակ Հայաստանի ժամատանի ժողովրդական զանգվածների կամքի ու ցանկության, չուներ և վոչ մի հեղինակություն Հայաստանի աշխատավորական մասսաների մեջ: Այդ մասսաներն, ընդհակառակ դեմքերի կառավարական դաշնակցական կառավարության ձեռնարկած այդ պատերազմին, վորովհետեւ նա հակահեղափոխական, իմպերիալիստական պատերազմ եր: Դաշնակցական գորքը, վորը գլխավորագես բաղկացած եր նույն այդ աշխատավորական տարրերից, չեր կըսպաւմ: Զորքերի գասավերությունը դառնում եր մասսայական ու համատարած յերեսութ: Դաշնակցական կառավարությունն այդ յերեսութի առաջն առնելու և զորքին ահարեկելու համար դի-

մում եր ամեն միջոցի: Նա կախաղաններ եր կանդնեցնում՝ ռազմա-դաշտային ու արտակարգ դատարաններ եր հիմնում, մահվան պատիժն եր վերականգնում և այլն: Սակայն դրանք եւ չելին ոդնում: Դաշնակցության դորքի դասալքությունը, անհաղանդությունը և ըմբոստոթյունները մասսայական կերպարանք ելին ոտանում:

«Մեր դորքերը չեն կամենում կովել, ուզում են հաշություն: Այս պայմաններում անհնար և շարունակել պատերազմը»:

Այսպես եր հետագրում դաշնակցական կառավարության զինվորական մինիստրը վարչապետ Հ. Ոհանջանյանին՝ նոյեմբերի 5-ին: Նույն որը, գեներալ Սիլիկովը զեկուցում եր.

«Զորամասերն ինքնակամ թողնում են Փրոնտը, զինվորները փախչում են մասներից և նույնիսկ չեն կատարում իրենց պետքերի հրամանները: Լքումն ու կազմալուծումը դարձանում ե արագ տեմպերով»:

Գեներալ Շելկովիկովը նոյեմբերի 16-ին զեկուցում եր.

«Զինվորները բոլորովին չեն կուլում և ամրող վաշտերով վախուսատի յեն դիմում՝ թշնամու հեծելաղնդերի և լուսի գնդացիներով և կարմիր դրոշակներով փոքր խմբեր յերեալուն պես»:

Նույն գեներալը հաջորդ որը զեկուցում եր.

«Յերկրորդ գնդի հրամանատարը հայտնում ե, վոր իր գունդը միանգամայն անուազմունակ ե, վոր իր միակ հույսըն Աղարեկի (դաշնակցական խմբապետ, Մ. Ն.) զինվորներն են և սպավող կամավորները: Ղամարլում և շըրջակայքում կազմակերպված ե դասալիքների վորս, բայց դասալքումը տեղի յե ունենում դիշերները»:

Ոգտվելով դաշնակցական բանակի այսորինակ դրությունից, տաճկական զորահրամանատարությունն սկսում ե իր դործողությունները: Արևելյան Փրոնտի զորքերի հրամանատար Քյազիմիկարեքի վաշշան հոկտեմբերի 30-ին գրալում ե Ղարսը, իսկ նոյեմբերի 5-ին՝ Ալեքսանդրոսկովը (Լենինականը): Դաշնակցա-

կան կառավարությունն, այսպիսով, իր սկսած պատերազմում խայտառակ կերպով պարտվում ե: Նա կորցնում ե իր գլուխը: «Վերին խավերի» մեջ առաջ ե գալիս չտեսնված խուճապ:

«Վերջին որերի ընթացքում, —գրում եր «Հայաստանի ձայն» լրագիրը նոյեմբերի 8-ին, —մեր բանակի կրած կարգ մը անհաջողությունները ժողովրդի լայն խավերի մեջ առաջ բերած են խուճապային տրամադրություն... նույնապիսի խուճապային տրամադրություն կա կառավարական շրջաններում»:

Դաշնակցական կառավարության այդ խուճապն ավելի յերաժնում, սակայն, նոյեմբերի յերկրորդ կեսին: Նոյեմբերի վերջերում տեղի յե ունենում կառավարական խիստ սուր ճգնաժամ: Ընկնում ե Հ. Ոհանջանյանի կառավարությունը (կարինետը) և նրա տեղ ստեղծվում է կառավարական նոր կազմ՝ Ա. Վրացյանի գլխավորությամբ:

«Պետության ներսի կյանքի բնականոն ընթացքը, —աղդամարում եր Վրացյանն իր կառավարական գելլարացիայում, —խանգարված ե: Վարչական մեքենան թուլացած է մեծապես, Փինանսական և հաղորդակցության միջոցները քայլայված, արգարադատությունն անհնարին վիճակում, պարենի մուտքը դրսից կանգ ե առել, իսկ ներսի աղբյուրները ցամաքում են արագությամբ: Կայսեն չե և ժողովրդի հոգեկան դրությունը... յերկիրն ապրում ե ներքին ծանր տագնապ»:

«Վերին խավերի» անձարակությունը, կառավարական ճգնաժամը կատարյալ եր: Իսկ այս արդեն «համազգային ճղնաժամի» յերկրորդ պայմանն եր:

Այսպիսով, 1920 թ. նոյեմբեր ամսին դաշնակցական Հայաստանում ստեղծված եր մի դրություն («համազգային ճղնաժամը»—ինչպես ասում եր Լենինը), յերբ մի կազմից անսահման անել ու անհախընթաց վերելք եր ապրում Հայաստանի բանվորական և աշխատավորական զանգվածների քաղաքական ակադեմիությունը և հեղափոխական լայն շարժումները, իսկ մյուս

կողմից՝ անճարակացել, թուլացել եր հակահեղափոխությունը՝ դաշնակցական կառավարությունը:

Ստեղծված այդորինակ պայմաններում դաշնակցական կառավարությունը, պարզ ե, վոր այլիս յերկար չեր կարող շարունակել իր գոյությունը։ Նա պետք է ընկեր չուտով։ Յել իսկապես։ Նոյեմբերի սկզբներին արդեն հաշվվում եր այդ կառավարության անկման որերը։ Դաշնակցական կառավարության մոռակա անկման անխուսափելիությունն այնքան պարզ ու անվիճելի յեր, վոր դեռևս նոյեմբերի 10-ին, հեղտախուռության վախից, շտապով Յերևանը թողնում և արտասահման եյին մեկնում Խտալիայի, Անդլիայի, ինչպես և Վրանդելի դեսպանական ներկայացուցիչները։ Իրենց կաշին փրկելու համար դաշնակցական կառավարության շատ անդամներ ևս հրաժարվում եյին կառավարության կազմից և շտապով փախչում Յերևանից։ Այսպես, որինալ, հրաժարականներ են ներկայացնում և Յերևանից փախչում դաշնակցական կառավարության խնամատարության նախարար Ռ. Քաջրերունին, Փինանսների նախարարի ոգնական Շաթիրյանը և այլն։ Սակայն իր մահվան գալարումների այդ որերում ևս դաշնակցական կառավարությունը վերջին փորձներն ե անում իր գոյությունը փրկելու համար։ Նա իր չուրչն և համախմբում Հայաստանի ռեակցիոն, հակահեղափոխական բոլոր տարբերին։ Սպեցիֆիկների, հնչակյանների, ևսերների, ուսմեկալարների և հայ ժողովրդականների հետ միասին դաշնակցությունը վերջին ճիգն ե անում աճող հեղափոխական շարժման ալիքի առաջն առնելու։ Այդ նպատակով դաշնակցական կառավարությունը խաչակրաց արշավանք և սկսում «աղջի գալաճանների»՝ հեղափոխական բանվորության ու աշխատավորության դեմ։ Հայաստանը հայտարարվում է զինվորական դբության մեջ։ Կաղմքում ու շրջաններն են ուղարկվում պատժիչ դորամասներ՝ դաշնակ վայրենի խմբավետների դեկալարությամբ։ Ամբողջ թափով աշխատում են արտակարգ գատարաններն ու ռազմա-դաշտային տրիբունալները։ Դաշնակցական կառավարությունը, սակայն, գաման արշավանք և սկսում հատկապես կոմունիստական կուսակցության դեմ, վորը, մասնավորապես հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, ձեռնարկել եր լայն, ժամանական աշխատանքի և արդեն պատրաստվում եր իշխանությունը գրավելուն։ Դաշնակցական արյունարրու բանդաները

կոմունիստների ուղղակի «վորս» եյին կազմակերպում։ Կոմունիստների գեմ սկսված այդ արշավանքի մասին «Բանվորի կոմի» լրագիրը 1920 թ. հոկտեմբերի 20-ին գրում եր։

«Վերջին ժամանակներս դաշնակցական կառավարությունը, չքավականանալով բանտերով և զնդակահարություններով, Աստաֆյան փողոցի վրա կախաղաններ և բարձրացրել՝ կոմունիստներին կախելու համար։ Բանտերը լցված են կոմունիստներով։ Կոմունիստներ են աքսորված Մկան։ Ալեքանդրի բանտից կոմունիստներ են տեղափոխել Յերևան։ Ալեքպոլում զինվորական դրություն ե հայտարարված։ Վերջին ժամանակներս բավականաչափ կոմունիստներ են գնդակահարված, նրանց թվում 2 կին։

Բանտարկյաններն ստանում են  $\frac{1}{4}$  ֆունտ հաց։ Դիլիջանից մի շարք կոմունիստների փոխադրել են Յերևան՝ տաժանակիր աշխատանքի համար։

Սպասվող հեղափոխության դեմ կովելու նպատակով դաշնակցությունը 1920 թ. նոյեմբեր ամսին, միաժամանակ, ընդունում և այսպես կոչված «տաճկական որիենտացիա»։ Հայ բուրժուազիական ծայրահեղ չովինիստական այդ կուսակցությունը, վորը տաճնյակ տարբիններ չարունակ մասսաների միտքը թունավորում, թրքայացություն եր սերմանում և անընդհատ կոչեր անում Տաճկաստանի դեմ կոփլ մղելու համար, այժմ՝ սոցիալիստական հեղափոխության նախորեյին, ծունկ եր չոքում տաճկական զորքերի հրամանատարության առաջ և նրանից «դաշնությունը» ու «հարեանություն» հայցում։ Դաշնակցությունն սկսում էր խոսել այժմ այլ լեզվով։ Նրա համար «զարավոր թշնամին» մի ակնթարթում զպանում և «սրտակից բարեկամ»։ Դաշնակցությունը փոխում է իր տակտիկան։

Անդլիական իմպերիալիզմի ներկայացուցիչների խորհրդով ու անմիջական դեկալարությամբ, դաշնակցությունն շտապում և դաշնակ կնքել թրքական զորահրամանատարության հետ և ընդունել նրա՝ Հայաստան առկացնող բոլոր պահանջները, վորպեսովի գրանով ապահովի իր թիկոնները և հաջող կոփլ սկսի գլխավոր թշնամու՝ սոցիալիստական հեղափոխության դեմ։ Դաշնակցության «տաճկական որիենտացիան», այսպիսով,

«Երջում դեկլարացիան կոչ է անում».

Կյանքի յեր կոչվում սպասվող սոցիալիստական հեղափոխության դեմ ավելի հաջող ու կազմակերպված կոիվ մղելու համար:

Սակայն դաշնակցության թե այս «տաճկական որիենտացիան» և թե նրա վայրենի բանդաների արշավանքը կտմունիստների ու հեղափոխական աշխատավորության դեմ անզոր ելին հեղափոխության առաջ:

Նոյեմբերի վերջերին հեղափոխական շարժումներն աննախընթաց վերելք են ապրում: Բացահայտ հեղափոխական յելույթներ ու մասսայական շարժումներ տեղի ելին ունենում Շիրակում, Նորմայակետում, Եջմիածնում և մանավանդ Ղաղախ-Շամշադինում, Դիլիջանում ու Իջևանում: Բազմաթիվ գյուղերում արդեն մասսայորեն կազմակերպվում ելին ուղամահեղափոխական կոմիտեներ: Մթնոլորտը ծայր աստիճան ելեկտրականացած ու լարված եր: Բավական եր մի կայծ, վորպեսզի բռնկվեր հեղափոխության հրդեհն ամբողջ յերկրում: Հեղափոխության վոտնաձայնն արդեն լովում եր: Հեղափոխության պայթյունն սպասվում եր որեցոր, ժամեժամ: Վերջապես գալիս եր Հայաստանի բանվորական և աշխատավորական մասսաների այնքան տենչչալի որը՝ նոյեմբերի 29-ը: Այդ որը սպայթում և Հայաստանի Հոկտեմբերը՝ Հաղթական Նոյեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը: Նոյեմբերի 19-ին Ղաղախ-Քարվանսարայի (Իջևանի) աշխատավորությունը, Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, կարմիր դրոշ և բարձրացնում: Նոյեմբերի 29-ին ապօտամբները գրավում են Իջևանը (Քարվանսարա): Նոյեմ որն արդեն կազմակերպված Հայաստանի Արագմահեղափոխական կոմիտեն հրատարակում էր դեկլարացիան, վորով ամբողջ Հայաստանը հայտարարվում է Խորհրդային:

«Հայաստանի ապօտամբ ժողովրդի կամքով ու ցանկությամբ, — Հայտարարում եր Արագմահեղափոխական կոմիտեն, — Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունն այսորվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Այսորվանից Խորհրդային Հայաստանի կարմիր դրոշակը պաշտպանելու յէ նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից»:

«Ներկա ծանր պայմաններում ու լուրջ լուղեյին ընդունելով իշխանության ամբողջ պատասխանատվությունը, մենք Հայաստանի ժողովրդական ուժերին կոչ ենք անում մեզ աջակցել բանվորա-դյուլացիական իշխանության թշնամիների դեմ կուլելու և կանչում խորհրդային անդուր ստեղծագործական աշխատանքի»:

Նույն որը Հայաստանի հեղափոխական կոմիտեն Քարվանսարայից (Իջևանից) ուղարկում է Խորհրդային Ազգբեջան՝ Նարմանովին հետևյալ հետագիրը.

«Հետևելով Բազմի հերոսական պրոլետարիատի որինակին, Քարվանսարայի շրջանի ապստամբներն անխորտակ կամքով ձգտելով հաստատել բանվորա-դյուլացիական իշխանություն, գրավեցին Իջևանը: Կենտրոնական կոմիտեյի ղեկավարությամբ հաստատվեց Հեղկոմ: Ապստամբների կամքով մենք շարժվում ենք առաջ վերջնականապես ապահովելու համար հեղափոխական արևելքում իմակերիալիստական Անտանտայի աղենս դաշնակցական կառավարության իշխանությունը: Մենք համոզված ենք, վոր մեր հարեւան գաշնակից սոցիալիստական Խորհրդային Ազգբեջանը բարոյապես և նյութապես կաջակցի մեր նորմատակին հասնելու՝ Փոքր Ասիայի նախադուռը կազմող Հայաստանում Խորհրդային իշխանությունն ամրապնդելու գործում»:

Քարվանսարան (Իջևանը) գրավելուց հետո ապստամբները, հեղափոխական կոմիտեյի ղեկավարությամբ, շարժվում են Դիլիջանի ուղղությամբ: Ազգարնակչությունն ամենուրեք ուրախության արցունքներով և դիմավորում աղատարար հեղափոխական բանակին: Նոյեմբերի 30-ին ապօտամբները մտնում են Դիլիջան: Խորհրդայինանում է նաև Դիլիջանը: Դաշնակցական բանակները գլուխ կորցրած մակուսատի յեն դիմում: Հեղափոխական կոմիտեն նոյեմբերի 30-ին Դիլիջանից հետևյալ հեռագիրն է ուղարկում լենինին:

«Թող հայտնի լինի համաշխարհային հեղափոխության առաջնորդին, վոր Դիլիջանի և Քարվանսարայի շրջանների դյուլացիները, վրդովկած դաշնակցական կառավարության

Հանցագործ քաղաքականությամբ և յերկրում խորացող անարխիայով, ապստամբության դրոշ բարձրացրիմ:

Հայաստանի կոմունիստական կուսակցությունն այդ տարերային շարժման ղեկավարությունն իսկույն և թիվը վրա վեցը եց և կազմեց Հայաստանի Հեղկոմ, Հայաստանը հայտարարելով՝ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։

Առաջին հարվածը հասդիմած է :

Դիլիջան քաղաքում մեր ձեռքին ե

Վողեսրված ապստամբներն առաջ են նետպում վերջնականապես խորտակելու ատելի թշնամուն՝ Անտանտի գործակալին։ Յեկատարակելով նրանց կամքը, տղեական հեղում կազմելով, մենք առաջ ենք շարժվում, լիահույս լինելով, վոր սոցիալիստական մեծ Ռուսաստանի հերոսական Կարմիր բանակը։ Արեւելքի ճնշված ժողովուրդների աղատարարը՝ մեր այս դժվարին պայքարում իրական ողնություն ցույց կտա մեզ։ Հայաստանի բոլոր բանվորների և գյուղացիների կողմից մենք խնդրում ենք ժողկոմիսորհին՝ ցույց տալ այդ ողնությունը։

Պետք է նկատել, վոր յերբ Հայպստանի հեղափոխական կոմիտեն ողնություն եր ինքը ուրախ կային Ռուսաստանից, ինչպես տևանք նաև Խորհրդային Ազգբնականից, ասդա դա իսկապես մեծ անհրաժեշտություն եր: Յերբ նոյեմբերի 29-ին Հայաստանի բանվորներն ու աշխատավոր դյուլացիությունը հեղափոխության դրու ելին բարձրացնում, ասդա դրանով նրանք ապստամբում ելին վոչ միայն դաշնակցական կառավարության դեմ, այլև նրան հովանավորող միջազգային իմպերիալիզմի դեմ: Հայաստանի աշխատավորությունն, այսպիսով, իր դեմ ուներ յերկու թշնամի: Այդ յերկու թշնամու դեմ նա միաժամանակ չեր կարող կռվել առանց ողնության: Հայաստանի հեղափոխական բանվորությանը և աշխատավոր դյուլացիությանն անհրաժեշտ եր ողնություն, վորի համար և ահա հեղափոխական կոմիտեն՝ լենինի անունով ուղարկած իր հեռագրում Հայաստանի բանվորության և դյուլացիության անունից Խորհրդային Ռուսաստանից, ինչպես և Նարիմանովի անունով ուղարկած հեռա-

զրում՝ Խորհրդային Սովորեջանից, ողնություն եր խնդրում: Յեկանագործային Ռուսաստանի ու Ալբրեջանը չեն հապաղում: Նրանք այդ ողնությունը տալիս են հեղափոխության դրոշ բարձրացրած Հայաստանի բանվորությանը և աշխատավոր գյուղացիությանը: Հենց այդ ողնությամբ ել Հայաստանի ապստամբ մասսաները կոտրում են հակահեղափոխության վերջին գիմադրությունը և կերչնականորեն հաղթանակում:

Քարվանսարան (Իջևանը) և Դիլիջանը գրավելուց հետո ապօստամբները շարժվում են դեպի Յերևան։ Դեկտեմբերի 2-ին ապօստամբները և կարմիր զորամասերը մտնում են Յերևան։ Դեպի Քանաքեռ տանող ճանապարհի վրա և քաղաքի մուտքի մոտ բանվրական և աշխատավորական բաղմահազար մասսաները ցնծությամբ վողջունում են ապօստամբների և ազգատարար զորամասերի գալուստը։ Այդ որը յերեկոյան քաղաքային այցամու կազմակերպվում է բաղմամարդ միտինդ, վորտեղ հաղթանակող ապօստամբներին ու կարմիր զորամասերին Հայաստանի կոմունիստական կուսակցության կողմից վողջունում և դաշնակների բանտից նոր ազատված, Յերևանի կուսակցության կոմիտեյի այն ժամանակված քարտուղար Ս. Խանջյանը։ Իշխանությունն, այսպիսով, ամբողջ Հայաստանում անցնում է հեղափոխական կոմիտեյի ձեռքը։ Հայաստանի վրա ծածանվում է Խորհուրդների կարմիր և հզոր դրոշը։ Հայաստանն արդեն խորհրդավային եր։ Յեկայդ նորաստեղծ Խորհրդային Հայաստանին, Հեղկոմի նախագահ Ս. Կասյանի անունով, միջազգային հեղաշխատության մեջ վարպետ և բոլոր յերկիրների հեղափոխական բանվրության ու աշխատավորության առաջնորդ՝ Լենինը՝ Մոսկվայից գեկտեմբերի 2-ին իր հետեւյալ վողջուններ հոգում,

«Հանձին Զեկ՝ վողջունում եմ իմպերիալիզմի լծից առ զատված աշխատավորական Խորհրդային Հայաստանին; Զեմ կասկածում, վոր գործ կդնիք ամեն ջանք՝ յեղբայրական համերաշխություն հաստատելու Հայաստանի, Տաճակաստանի և Աղքարիջանի աշխատավորության միջնք»:

Նորաստեղծ Խորհրդային Հայաստանին վողջունում եր նաև  
նկ. Ստալինը: Խորհրդային Հայաստանին նվիրված իր հոդվա-  
ռում ընկ. Ստալինը գրում եր.

«Տանջված ու բազմաչափար, Անտանտի ու դաշնակ-  
ների գթասրտությամբ, սովոր, քայլքայման և զաղթի մատըն-

ված՝ Հայաստանը, բոլոր «բարեկամների» կողմէց այն խարված Հայաստանն այժմ ձեռք ե բերել իր ազատությունը նրանով, վոր իրեն հայտարարել ե խորհրդային յերկիր:

Վո՛չ Անդրվայի՝ հայկական շահերի այդ «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, վո՛չ վելսոնի տիրահռչակ 14 կետերը, վո՛չ ել Ազգերի Լիգայի մհծադդորդ խոստումները՝ Հայաստանի կառավարման, նրա «մանդատով» հանդերձ՝ չկարողացան (և չեյին կարող) Հայաստանը փրկել կոտորածից ու Փիղիկական բնաջնջումից, միայն Խորհրդային իշխանության գաղափարը Հայաստանին բերեց իսաղաղություն և աղդային վերածնդի հնարավորություն...

Հայաստանի և նրան ըրջապատող մուսուլմանների միջն գոյություն ունեցող դարավոր թշնամանքը լուծվեց մի հարվածով՝ Հայաստանի, Թյուրքիայի ու Աղբյրեջանի աշխատավորների միջև յեղայրական համերաշխություն հաստատելու միջոցով:

Թող գիտենան բոլորը, ով պետք ե գիտենա, վոր այսպես կոչված հայկական «պրոբեմը», վորի վրա ապարդյուն կերպով գլուխ եյին ջարդում իմպերիալիստական դիպոմատիայի հետ գայլերը, լուծելու կարողություն ունեցավ միայն Խորհրդային իշխանությունը:

Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը»:

Հաղթական Նոյեմբերյան հեղափոխության առաջին որերին գրված ընկ. Ստալինի այս տողերն արտահայտում են մարգարեական ճշմարտություն: Նոյեմբերյան հեղափոխությունն եր, վոր, իսկապես, Հայաստանի բաղմաջարչար բանվորական և աշխատավորական մասսաներին «փրկեց կոտորածներից ու Փիղիկական վոչնչացումից»: Նա, և միայն նա, Հայաստանի աշխատավորական մասսաներին տվեց իսաղաղություն և ստեղծագործական-շինարար աշխատանքի անսահման լայն հնարավորություն: Միայն Նոյեմբերյան հեղափոխությունը՝ Հայաստանի այդ Հոկտեմբերն ազատագրեց Հայաստանի բանվորական և աշխատավոր գյուղացիական մասսաներին դարավոր ճնշումից ու կեղեցումից: Նա, և միայն նա կարող եր տալ և տվեց Հայաստանի այսորված հոյակապ ներկան:

## Պատրիարք ԿոՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՏՈ

Հաղթական Նոյեմբերյան հեղափոխության առաջին իսկ ուրեմն սկսած հրապարակ են գալիս նոր անելիքներ, նոր մեծ ու դժվարին խնդիրներ: Հարկավոր եր կալել գեռևս գենքերը վայր դժվարին խնդիրներ: Հարկավոր եր կալել գեռեթե իսպառ քայլայլած ու կորկալոր եր վերականդնել գրեթե իսպառ քայլայլած ու կորկալուծանված ժողովրդական անտեսությունը, հարկավոր եր անցնել սոցիալիստական միարարության մեծ ու դժվարին խնդիրներին: սոցիալիստական միարարության մեծ ու դժվարին խնդիրներին հաղթական հեղափոխության մեջ և առաջ մինչև Նոյեմբերյան հեղափոխությունը թյունը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունն իր մարտական գրոշի շուրջն եր համարմբում Հայաստանի բանվորական և աշխատավորական մասսաներին ու անցնում նոր խրնդիրների լուծման ու իրագործմանը: Այդ նոր խնդիրների լուծման մեջ, այդ նոր պայքարում, Հայաստանի կոմունիստական կուսակցության այս անգամ ևս ոգնության եր հասնում Ռուսական կոմունիստական կուսակցության հզոր բարուկը: Ինչպատճանի կոմունիստական պետք միշտ, նույնպես և այժմ, Հայաստանի կոմունիստական պետք միշտ, նույնպես և այժմ, Հայաստանի կոմունիստական պարագային պրոլետարիատի և աշխատավոր մարդկության մեծ աշխարհի պրոլետարիատի և աշխատավոր մարդկության մեծ առաջնորդ, պրոլետարական հեղափոխության մեծ վարպետ Լենինի և նրա ամենամերձավոր գործակից, ամենանվիրված ու հետեղական դինակից Ստալինի անմիջական ցուցմունքներով ու ոժանդակությամբ: 1921 թ. ապրիլի 14-ին, որինակ, Անդրկովկասի և Կովկասի կոմունիստաների հասցեյով ուղարկած իր մինամակի մեջ միջազդային պրոլետարիատի մեծ հանձար Լենինը մանրամասնորեն դժում եր ինչպես անդրկովկասյան յեղայրակից մյուս Խորհրդային հանրապետությունների կոմունիստական կուսակցությունների, նույնպես և Հայաստանի կոմունիստական կուսակցության պայքարի ու աշխատանքների ուղին: 1922 թ. մարտ ամսին Լենինի և Ստալինի նախաձեռնությամբ ու զեկավարությամբ ստեղծվում ու ամրանում եր Անդրկովկասյան Ֆեդորացիան, —այդ «աղդային իսաղաղության որինակը, վոր չի կերացիան, —այդ «աղդային իսաղաղության որինակը, վոր չի անված բուրժուազիայի որով և անհնարին ե բուրժուական անդամական գրադերում» (Լենին), —այդ «Անդրկովկասի ժողովուրդների յեղարգերում» (Լենին),

բայրական համագործակցության անխորտակելի շնչը» (Բն-  
քիա) :

Պրոլետարիատի ու աշխատավորության մեծ առաջնորդներ լենինի և Ստալինի ամենորյա ղեկավարության տակ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ծավալում է իր սպայքարն ու Հերոսական աշխատանքները։ Զինված լենինյան-ստալինյան անպարտելի և մարտական ուսմունքով Հայաստանի կոմունիստական կուսակցությունն անխնա կերպով ջախճախում եր իր շարքերում հրապարակ յեկող դասակարգային թշնամու բոլոր գույնի աղենաներին։ Նա քայլ առ քայլ անխնա մերկացնում և ջախճախում ե իր շարքերում հանդես յեկող նացիոնալ-ռուկունիումը, սպեցիֆիզմը։ Համկոմկուսի կենտրոմի և Անդրյերկոմի ղեկավարությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ջախճախում ե նաև հակահեղափոխական արոցկիզմի, աջ և «ձախ» ուղղությունիստական թեքումների արտահայտություններն իր շարքերում և շարունակում ե մաքրել ու ամրացնել իր շարքերը, բարձրացնելով կուսակցական և վոչ կուսակցական բոլցեների քաղաքական մակարդակը, նրանց դաստկարգային զգոնությունը։ Անխնա ու անհաշտ պայքար մղելով դասակարգային թշնամու, նրա բոլոր տեսակի ու գույնի աղենաների, կուսակցության գլխավոր գծից կատարվող բոլոր շեղումների ու թեքումների դեմ, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը հավատարիմ լենինի և Ստալինի մեծ գործին, Անդրյերկոմի անմիջական ղեկավարությամբ, կարողացավ անհամբնթաց և փայլուն հաջողություններ ունենալ Հայաստանի սոցիալստական շինարարության բոլոր բնագավառներում։ 15 տարվա իր համառ և բոլշևիկյան պայքարի ու աշխատանքների չորսիվ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը կարողացավ յերեմնի խղճուկ և անսահման հետամնաց Հայաստանը դարձնել առաջավոր, սոցիալիստական ինդուստրիայի, առաջավոր, խոչոր գյուղատնտեսության ու կուլտուրայի յերկիր։ Յեվ Հայաստանի կոմունիստական կուսակցության այդ համառ աշխատանքի չնորհիվ ել այժմ Հայաստանի բոլոր մասերում ու անկյուններում ծիսում են բազմաթիվ գործարանների ու Փարբիկաների ծինելույզները։ Այդ աշխատանքների չնորհիվ ընդամենը 15 տարվա ընթացքում ծնվեցին բազմաթիվ արդյունարերական միավորներ լենինյականում (Տեքստիլ գործարաննը), Դա-

վալվում (Յեմշինը), Յերկանում (Յեմանիկական, Կարբիդի և այլ դորձարաններ), Կիրովականում (Քիմշինը), Հոկտեմբերյանում ու Արազլայանում (Բամբակի գործարաններ) և այլն, և այլն։ Մեր աչքերի առաջ այժմ ծնվում ու աճում են նորանոր արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ։ Բայցական և առել, վոր յեթե դաշնակցական Հայաստանի արդյունաբերության արտադրանքը կազմում եր ընդամենը 2 միլիոն ոուրլի, ապա կորհրդային Հայաստանում արդյունաբերության արտադրանքը 1934 թ. կազմեց 148 միլիոն ոուրլի։ Հոկտեմբական ու անհամբնթաց են Հայաստանի կոմունիստական կուսակցության հաջողությունները նաև գյուղատնտեսության բնագավառում։ Ընդամենը 15 տարվա ընթացքում Հայաստանի կոմունիստական կուսակցություններ կարողացավ դաշնակների որով խսկառ քայքայլածու կործանված գյուղատնտեսությունը վերականգնել և այն սոցիալիստական վերակառուցման յենթարկել։ Մեր յերկրի սոցիալիստական ինդուստրացումը բազա դարձավ գյուղատնտեսության վերականգնել և ամար ։ Խղճուկ, նահապետական արորի արտադրությունը փոխարինվեց տրակտորի, կոմբայնների, կալսիխների արտադրությամբ։ Յերբեմնի խավար գյուղը մուտք գործեց լուսատու ելեկտրոներգիան։ Հիմնվեցին բազմաթիվ մեքենա-տրակտորային կայաններ, կառուցվեցին մի շաբք նոր ջրանցքներ։ Հայաստանի խղճուկ, անսահման հետամնաց քահնովոնյան գյուղին փոխարինեց զարդացած ու առաջավոր կուտնեսական, սոցիալիստական գյուղը։ Հայաստանի գյուղացիական տնտեսությունների մոտ 80 տոկոսն այժմ արդեն ընդպրկված են կոլեկտիվ տնտեսությունների մեջ։ Դաշնակների Հայաստանը 1919 թվին գյուղատնտեսության արտադրանք եր տակիս 24 միլիոն ոուրլի արժողությամբ, իսկ Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսություններ գեռեւ 1931 թվին տվեց 107 միլիոն ոուրլու արտադրանք։

Հայաստանի կոմունիստական կուսակցության հաղթանակները հսկայական են և չտեսնված նաև կուլտուրական շինարարության բնագավառում։ Խորհրդային կառավարության համառ աշխատանքի չնորհիվ Հայաստանի աղջարնակչության 95 տոկոսն այժմ գրագետ է։ 1935 թվի սովորող աշակերտների թիվը կազմեց 214.500 հոգի։ 1934—35 թ.թ. գպրոցների թիվը դարձավ 1431։ Միայն գպրոցական շինարարության վրա 1934 թ.

3.333.500 սուբլի կապիտալ ներդրում և կատարվել։ Հայաստանի այժմ ունի համալսարան և բաղմաթիվ բարձրագույն դրագուցներ ու ինստիտուտներ։ Սննախընթաց թափակ աճում են գիտական յերիտասարդ նոր կադրերը։ Ընդամենը 15 տարում հըսկայական չափով աճեց և զարդացավ Խորհրդային Հայաստանի նաև դրականությունն ու արվեստը, տալով միութենական դրականությանն ու ավեստին մի շարք աչքի ընկնող, ճանաչված, նշանակալից գործեր։

Խորհրդային Հայաստանի նվաճումները հսկայական են նաև ժողովրդական առողջապահության բնագավառում։ Խորհրդային կառավարության հոգատար վերաբերմունքի չնորհիվ այժմ ամեն ըանվոր ու աշխատավոր ապահովված և բժշկական անհրաժեշտ ողնությամբ։ Աշխատավորական մասսաների կարիքները բավարարելու համար Խորհրդային Հայաստանի կառավարությունը բացել և անհրաժեշտ քանակությամբ ամբուլատորիաներ, հիվանդանոցներ ու զեղատներ։ Բժիշկների թիվը՝ գեռ 1934 թ. հասնում եր մոտ 600-ի։ Բանվորական ու աշխատավորական մասսաների համար բացված են բաղմաթիվ սանատորիաներ ու հանգստյան տներ։

Կյանքը Խորհրդային Հայաստանում դառնում է յերջանիկ ու կենսուրախ։ Ժողովրդական տնտեսության այդ հարածուն վերելքի հիման վրա հսկա քայլերով բարձրանում ե բանվորության ու կորտնտեսական մասսայի տնտեսական ու կուլտուրական մակարդակը։ Վոչ մի համեմատություն այլևս անցյալի են։

«Ի՞նչ համեմատություն կարող է լինել մասյլ ու սև անցյալի և ժաման ու պայծառ այսորվա միջև։ Հայաստանի ամբողջ աշխատավորությունը պրոլետարական հաղթական հեղափոխությամբ տերն ու տնորենը դառնալով իր սեփական կյանքի՝ կոմունիստական կուսակցությունը, զեկավարությամբ սանձահարում և Հայաստանի ժամանակակից այլ գործառնությունների վրա, քանի ելեկտրոկայաններ են լուսավորության մեջ և դեռ պիտի լուսավառվեն մեր յերկրի դանաղան վայրերում։

Կերպարանակոխվել ե մեր յերկիրը։

Կողմանտեսական հաղթական կարգի հիման վրա ավելի ու ավելի պետք ե բարձրանա մեր գյուղատնտեսության արտադրողականությունը։ Այլպիսով, Խորհրդային Միության և Անդրկովկասյան Փեղերացիայի անբաժան մասնիկը, Խորհրդային Հայաստանը նույնպես ամուր ու հաստատ բռնկել և սոցիալիստական ամենաբարդավաճ յերկիր գոռնալու ուղին, մասսաների համար ամենահարուստ և ամենակուլտուրական կյանք աղահովելու ուղին» (Ա. Խանջյան)։

Այսպես ե Խորհրդային Հայաստանի ներկան։ Նա այսոր իր կյանքի 15 տարում Խորհրդային Միության և Անդրկովկասի ժողովուրդների սերտ, յեղբայրական համագործակցության հիման վրա «Լենինի և Ստալինի մեծ կուսակցության զեկավարությամբ հսկայական քայլերով առաջ և ընթանում հաղթական սոցիալիզմի ուղիով և իր աղատ ու յերջանիկ ապագան և դարբնում» (Ա. Խանջյան)։

Վոչ մի բոսկ վայր չընելով զենքը գասակարդային թշնամիների ու նրանց գործականների դեմ, ծավալելով ամենորյաստեղծողործական վճռական պայքար հակահեղափոխական դաշնակցության, տրոցկիստների ու զինովյելիսականների տականքների դեմ, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, անդրկովկասյան Յերկրային կոմիտեյի ու նրա զեկավար ընկ. Բերլայի զեկավարությամբ, իրադորձելով ընկ. Ստալինի ցուցմունքները, տանում և Խորհրդային Հայաստանը գեպի նորանոր հաղթանակներ։

Յեկ Խորհրդային Հայաստանն այսոր Անդրկովկասի և Խորհրդային Միության բանվոր գասակարդի յեղբայրական ոժանդակությամբ և պայքարով ու արյունով ձեռք բերված իր 15 տարվա այդ փայլուն հաղթանակներն ե տոնում։

Z u d b L q u o

ՅԵՐԵՎԱՆ, ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ ՆԱԽԱԳԱՀ  
ԸՆԿ. ԿԱՍՅԱՆԻՆ

Հանձին Զեզ՝ վողջունում եմ իմպերիալիզմի լծից ազատված  
աշխատավորական Խորհրդային Հայաստանին։ Զեմ կառկածում,  
վոր Դուք զործ կդնեք ամեն ջանք՝ յեղբայրական համերաշխու-  
թյուն հաստատելու Հայաստանի, Տաճկաստանի և Ադրբեջանի  
աշխատավորության միջև։

Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի  
նախագահ՝ ԼԵՆԻՆ

Մասկով, Կըլէլ, 2 դեկտեմբերի 1920 թ.

## ԿԵՑՑԵ ԽՈՐՀՈՒՅՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ \*

Տանջված ու բազմաչարչար, Անտանակի ու դաշնակների գթասրտությամբ սովոր, քայլայման և գաղթի մատնված Հայաստանը, բոլոր «բարեկամների» կողմից այդ խարված Հայաստանը, այժմ ձեռք և բերել իր աղասությունը նրանով, վոր իրեն հայտարարել և խորհրդացին յերկիր:

Վո՞չ Անդիմայի՝ Հայկական շահերի այդ «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, վո՞չ վիլսոնի տիրահռչակ 14 կետերը, վո՞չ Ազգերի Լիգայի մեծադղորդ խոստումները՝ Հայաստանի կառավարման նրա «մանդատով» հանդերձ՝ չկարողացան (և չելին կարող) Հայաստանը փրկել կոտորածից ու Փիդիկական բնաջնջումից, միայն Խորհրդացին իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերականգնման հնարավորություն։

Հայաստանի և նրան շրջապատող մուսուլմանների միջև գոյություն ունեցող դարավոր թշնամանքը լուծվեց մի հարվածով՝ Հայաստանի, Թյուրքիայի ու Ադրբեջանի աշխատավորների միջև յեղայրական համերաշխություն հաստատելու միջոցով։

Թող գիտենան բոլորը, ով պետք է գիտենա, վոր այսպես կոչված Հայկական «պրոբլեմը», վորի վրա ասլարդյուն կերպով գլուխ ելին ջարդում իմպերիալիստական դիվլոմատիայի հին դայլերը, լուծելու կարողություն ունեցավ միայն Խորհրդացին իշխանությունը։

Կեցցե՛ Խորհրդացին Հայաստանը։

Ի. ՍՏԱԼԻՆ

## Յ-ՐԴ ԻՆԺԵՐՆԱՅԻՌԱԿԻ ԳՈՐԾԱԴԻԲ ԿՈՄԻՏԵՑԻ ՎՐԱՅՈՒԹՆԵԼ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԿՈՄԻՒՆ

Մուկվա—կոմունիստական ինտերնացիոնալի Գործադիբ կոմիտեն մեծ ուրախությամբ խմացալ Հայաստանում տեղի ունեցած հեղափոխության լուրը։

Պատմության մեջ առաջին անգամ Հայկական հարցը դրվում է ամբողջ աշխարհի աշխատավորական մասսաների շահերի տեսկետից։

Կոմունիստական ինտերնացիոնալը շատ ուրախ կլինի սպնելու Զեղ, իմպերիալիզմի դեմ պայքարելու և վիճելի հարցերին բարեհաջող լուծում տալու գործում։

Կեցցե՛ Խորհրդացին Հայաստան։

Կեցցե՛ Արևելքի ազգերի աղքատավորումը։

Կեցցե՛ Խորհրդացին իշխանությունն Արևելքում և ամբողջ աշխարհում։

\* «Պրավդա»-ի 1920 թ. դեկտեմբերի 4-ի համարում տպադրված ընկերության նույնանուն հոդվածից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿԱԿԱՆ)  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դ Ե Կ Լ Ա Ր Ա Ց Ւ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ  
Փրոլետարքներ բոլոր յերկիրների, միացե՛ք.  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Ընկերներ

Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ՝ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկական) կուսակցությունն այսորվանից Հայաստանը հայտարարում է սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։ Այսորվանից Խորհրդային Հայաստանի կարմիր գլուխակը պաշտպանելու յի նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից։ Անսահման ծանր և այն ժառանգությունը, վոր մնում է հավիտենապես անհետացող դաշնակցական կառավարությունից աղատադրված Հայաստանում։ Իր վոճարագործ քաղաքականությամբ նա յերեք տարվա ընթացքում վոչ միայն անընդունակ դժունվեց յերկիրը խաղաղ վիճակի հասցնելու, վոչ միայն ժողովրդին չաղատեց աղքատությունից ու կորստից, այլ դեռևս ցարի քաղաքականության տասնյակ հազարավոր գոհերի թվին ավելացրեց անոթեան հայերի անթիվ ու անհամար դնդեր, վորոնք հուսահատ դրության հասած՝ չորս դին մահ ու անեծք ելին տարածում։ Քաղաքներն ավեր, շենքերն ամայի ու անմարդաբնակ, յերկաթուղիները քար ու քանդ կանդ առած, ժողովրդի լավագույն զավակները սահմանավեճների ու աղղամիջյան ընդհարումների արդյունք անմիտ ու քմահաճ պատերազմներում սրածող, այն պատերազմներում, վորոնցով մնում ու սնվում եր

շաշնակցական կառավարությունը։ Վողը ու կական, աղի արցունքներ են, վոր լսվում ու հոսում են Հայաստանի մի ծայրից մյուսը։ Ու այժմ, իրեն խնամակալ Անտանտայից աչքաթող, յերեսի ձգած դաշնակցությունը, անարդ վախկուությամբ, համարյա առանց կոմի, ամբողջ յերկիրը հանձնելուց հետո, մի յերկու խղճուկ եսերների ու եսղեկների միջոցով և ուզում փրկել իր որհասական դրությունը։ Նա պատրաստ է ինչ գնով ել լինի հաշտություն կնքել միայն իրեն կաշին աղատել կարողանա։ Պարզ ե, վոր հաշտությունը ժողովրդի, յերկրի շահերից չի բղխում։ Դաշնակցությունն ե, վոր ուզում է վիրապատ Հայաստանում իր իշխանության առերևույթ տեսքը սեփական ձեռքերում պահել։ Բայց այդ իշխանությունն արդեն խլված է դաշնակցությունից ապստամբ ժողովրդի կամքով ու ցանկությամբ և նրան վերադարձ չկա։ Անհամար է ժողովրդի, բանվորության ու դյուղացիության շահերի գեմ կատարած վոճիրների թիվը։ Վորպիսի թափով են նրանք վառել աշխատավորության բուրժուական – նացիոնալիստական բնագիրները, վորպիսի լուիրը բնույթ և կրել նրանց՝ Անտանտայի իմպերիալիստական ծրագրերին աջակցել, վորքան սրեր են ճոճել հարեւանների հասցեյին՝ աղղամիջյան կոփլներ առաջացնելով։ Հայաստանի ժողովրդի արյունը քամելու։

Եեվ վորքան ավանտյուրիստական և յեղել դաշնակցական Հայաստանի արտաքին քաղաքականությունը, այնքան խիստ և յեղել նրա ներքին քաղաքականությունը, վորն իր աղիկարությամբ ու վայրենի արտահայտությունների շնորհիվ յերկիրն ամայացրել ե, ավեր դարձրել։

Բոլոք ճնշված ժողովուրդների պաշտպանը — Ռուսաստանի Խորհրդային իշխանությունը շատ անդամ և ցանկացել աղղել դաշնակցություն կուսակցության վրա։ Նրան խել Անտանտայի գիշատիչներից և այդպիսով հնարավորություն տալ բազմատանջ ու դաշնակցականներից գիլվահար Հայաստանի հաշստավոր ժողովրդին աղատ չունչ քաշելու։ Բայց վորսանակ ցանկալի հետեւանքների հասնելու, մենք տեսել ենք կոմունիստների նկատմամբ գործ գրած խստությունների՝ կախաղանների ու զնդականարությունների նորանոր քրքիջներ։ Ժողովրդական ցասման բռնկումը, վոր մայիսին ստացավ համաժողովրդական ապստամբության բնակության լսեղիկից արյան այն հեղեղներում,

վորոնցից չելին կշտանում գաղանացած մառւզերիստները։ Մեր այդ որինակ չունեցող կովով, վոր մենք ոկտել ելինք՝ Հայաստանի կառավարիչներն Անտանտայի թելադրանքով պատասխանցին մի անասելի վակիսանալիայով, վորի դեմ Խորհրդային Ռուսաստանը մինչև այժմ զգալի աջակցություն չկարողացավ ցույց տալ, վորովհետեւ գրադված եր քաղաքացիական կովի կարևոր ճականներում, վորոնք կլանում ելին նրա բոլոր ուժերը։ Ենաստանի հետ կնքած հաշտությունը և ցարական վերջին գեներալ Վրանգելի աննման պարտությունը, այժմ աղատում են Կարմիր բանակը։ Խորհրդային Ռուսաստանն այժմ ապստամբժողովրդի հրավերով հնարավորություն ունի յեղբայրական ողնություն ցույց տալու նրան ու Հայաստանն Անտանտայի գործակալների — դաշնակցական կառավարությունից փրկելու։

Նա այժմ հնարավորություն ունի յերկրի առողջ ուժերը հավաքելու, վերակենդանացնելու և Խորհրդային Հայաստանի խաղաղ աշխատանքի հիմքը դնելու։ Ազատ Խորհրդային Հայաստանի կարմիր դրոշակը հուսահատության ու դասնությունների անդնդից դուրս կրերի նրա աշխատավոր զավակներին։ Հաղթական Ինտերնացիոնալի առաջին հնչյունների հետ ընդմիշտ կանհետանա Հայաստանում դրյություն ունեցող ցեղական ու ազգային պառակտումների ուրվականը և տեղի կտա ժողովուրդների յեղբայրությանը նրանց առորյա կյանքում։ Հայաստանի դրյությունների լր ձեռքը կատնի ամբողջ հողը, վոր պատկանում եր բեղերին, խաներին ու մելիքներին՝ ինչպես և վանքապատկան, յեկեղեցապատկան ու մզկիթների սեփականություն համարվող հողերը։ Ժողովրդի ձեռքը կանցնեն անտառների հարստությունը, ջրերը, լճերն ու հանքերը — Հայաստանի աշխատավոր ազգաբնակության կարիքները բավարարելու համար։ Նույն նպատակով Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սեփականություն կհամարվեն ավելի կամ պակաս ծավալի գործարաններ, վորոնց ստեղծող բանվորները կարիքնանան աղատ աշխատանքի։ Մաղութի պակասության պատճառով կանք առաջանա այսինքն կարիքների նորից կորործեն Աղքարեջանի Խորհրդային իշխանության ողնությամբ և կրկին կվերականգնվի աղատագրված Հայաստանի ընդհատված կապը։

Խորհրդային Ռուսաստանը մեղ յեղբայրական ողնություն-

ցույց կտա, հնարավոր չափով հաց ու ճոթեղեն հասցնելով Աշխատավոր ինտելիցիան Խորհրդային Հայաստանին, նրա շինարարական գործին եր փորձով, մտավոր ունակություններով աջակցություն, մասնակցություն ցույց տալու կատարյալ հնարավորություն կտանա։ Անհապաղ ի չիք կհայտարարվեն Հայաստանի բոլոր պետական պարտքերն Անտանտային (մասնաւ Հայաստանի բոլոր պետական պարտքերն կառավարությունն վորապես Ամերիկայի), վոր դաշնակցական կառավարությունն ուղղում եր քամել Հայաստանի բանվորից ու դյուլացուց։

Խորհրդային Հայաստանի Հեղափոխական Կոմիտեն ապահոված և յեղբայրական Խորհրդային Աղքարեջանի յերաշխիքով և խորապես հավատում ե, վոր Հայաստանում Խորհրդային իշխանություն հաստատելով, ընդմիջտ վերանալու յեն այն վիճելի հարցերը, վորոնք պատճառ են դարձել յերկու յերկիրների բանվորների ու դյուլացիների արյան հեղեղներ թափվելուն։ Այս համոզումով մենք մեր Հեղափոխական վողջույնն ենք ուղարկում Աղքարեջանի աշխատավոր ժողովրդին, Բագվի պրոլետարիատին, իր Անդրկովկասի սոցիալիստական Հեղափոխական առաջապահ դուրի, վողջույններ ենք ուղարկում նաև Աղքարեջանի Հեղափոխական Կոմիտեին։

Հայաստանի Հեղափոխական Կոմիտեն լի յե հավատով, վոր նա վայելում ե նաև Տաճկաստանի աշխատավորության համանականը, այն ժողովրդի, վորն արդեն հասկացել ե Անտանտայի կրանքը, այն ժողովրդի, վորն արդեն հասկացել ե Արևելքի Հեղափոխականացման մեջ խոչըր դեր կատաված և Յավատում ենք, վոր իմպերիալիստական լծից աղատարելու։ Հավատում ենք, վոր իմպերիալիստական հեղ և իր հետ Սեփրի դաշդրվող ժողովրդական Տաճկաստանը մեղ և իր հետ Սեփրի դաշդրվող հակառակորդ համարելով, մեղ յեղբայրական ձեռք և մեկնում այժմ, յեր մենք տապալեցինք մեր թշնամուն և նրա հետ միասին կոխվ ենք մզում Անտանտայի դիւստիչների գեծ։ Մենք համոզված ենք նաև, վոր վոչ թե հաղթողի սուրբ և թե Աղքարեջային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի միջն կայանալիք հաշտության պայմանները, այլ Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի ահրդային Հայաստանի ու աշխատավորական համերաշխությունն ու հաղատայինությունը։

Ներկա ծանր պայմաններում ու լուրջ բոսեյին ընդունելով հշտանության ամբողջ պատասխանատվությունը, մենք Հայաստանության ամբողջ պատասխանատվությունը, մենք Հայա-

սուանի ժողովրդական ուժերին կոչ ենք անում՝ մեզ աշխացել  
բանվորա-գյուղացիական իշխանության թշնամիների դեմ կռվե-  
լու և կանչում խորհրդային անդուլ ստեղծադործական աշխա-  
տանքի:

Կեցցե՛ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրա-  
պետությունը:

Կեցցե՛ Ռուսական Ռուսաստանի հերոս Կարմիր բանակը:

Կեցցե՛ յեղայրական Խորհրդային Աղբբեջանը:

Կեցցե՛ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհր-  
դային Հանրապետությունը:

Կեցցե՛ Կոմունիստական Յերրորդ Ինտերնացիոնալը:

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային

Հանրապետության Հեղափոխական Կոմիտեյի

նախագահ՝ Ս. ԿԱՍՅԱՆ

1920 թ. նոյեմբերի 29

Դաշտական Քարտանսարա

### Ա Վ Ի Ս

ԴՈՎԼԱԹՅԱՆ ԻՍՍՀԱԿ

Անդամներ՝ ՄՈՒՎՅՅԱՆ Ա.ՍՔԱՆԱԶ

ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՍԱՀՈԿ

### ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿԸ

Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնական-  
ների հանրապետության կոմունիստ ընկերներին

Զերմագին վողջունելով Կովկասի Խորհրդային Հանրապետու-  
թյունները, յս ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, վոր նրանց  
սերտ միությունը կատեղծի աղջային խաղաղության մի այն-  
պիսի որինակ, վորը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և  
վորն անհնարին է բուրժուական հասարակարդում:

Սակայն վորքան ել կարեոր լինի ազգային խաղաղությունը  
Կովկասի ազգությունների քանվորների ու զյուղացինների միջև,  
քայլ անհամեմատ ե'լ ավելի կարեոր և պահպանել ու զարգաց-  
նել Խորհրդային իշխանությունը՝ իրմա մի անցում դեպի սո-  
ցիալիզմ։ Դժվարին, սակայն իրականացնելի մի խնդիր։ Սրա  
հաջող լուծման համար ամենից ավելի կարեոր ե, վոր Կովկասի  
կոմունիստներն ըմբռնեն իրենց դրության, իրենց հանրապետու-  
թյունների դրության յուրահատկությունը, վորը տարբերվում  
է ՌՍՖԻՀ դրությունից ու պայմաններից, ըմբռնեն մեր տակտի-  
կան նույնությամբ չընդորինակելու, այլ մտածված կերպով այս  
տակտիկան ձևափոխելու անհրաժեշտությունը, հարմարեցնելով  
կոնկրետ պայմանների տարբերությանը։

Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունը վոչ մի տե-  
ղից քաղաքական և ռազմական ոժանդակություն չեր ստանում։  
Ընդհակառակն, նա տարիներ ու տարիներ կռվում եր Անտանակ  
ռազմական արշավանքների ու նրա բլոկադայի դեմ։

Կովկասի Խորհրդային Հանրապետությունները քաղաքական և  
փոքր չափով ել ռազմական ոժանդակություն ստացան ՌՍՖԻՀ-  
ից։ Այս արմատական տարբերություն ե։

Յերկրորդ՝ Այժմ հարկ չկա վախենալու Անտանակ արշավան-  
քից, վոչ ել նրա ռազմական ոժանդակությունից, Վրաստանի Վ

Աղքաբեջանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների սպիտակ-գլազուրականներին։ Ռուսաստանը «գաղել և Անտանակ ձեռքերը» և այս նրան կհարկադրի, թերմս մի վորոշ ժամանակ ավելի զգուշ լինելու։

Յերբորդ։ Կովկասյան հանրապետություններն եւ ավելի գյուղացիական յերկրներ են, քան Ռուսաստանը։

Չորրորդ։ Ռուսաստանը տնտեսապես կտրված է յեղել և նշանակալից չափով կտրված ել մնում և առաջավոր կապիտալիստական յերկիրներից։ Կովկասը կարող է ե՞լ ավելի արագությամբ «կենակցություն» ու ապրանքափոխանակություն գրավութերել կապիտալիստական արևմուտքի հետ։

Սրանք բոլոր տարբերությունները չեն, սակայն, հենց մատնաշված տարբերություններն ել բավական են, վորպեսզի հասկանը այլ տակտիկայի անհրաժեշտությունը։

Ավելի մեղմություն, զգուշություն ու զիջողություն մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի և մասնակիության նկատմամբ։ Պետք է տնտեսապես ամեն կերպ, ուժեղ ու արագ կերպով ոգտագործել կապիտալիստական արևմուտքը նրա հետ կոնցեսիաների և ապրանքափոխանակության ֆալսիվականության ասպարեզում։ Նավթը, մարդանեցը, պարուիը (Տկվարչելի հանքերը), պղինձը—ահա տեղական հանքային հսկայական հարաստությունների շատ թերի շարանը։ Իիակատար հնարավորություն կա շատ լայն չափերով ծավալելու կոնսեցիաների քաղաքականությունն ու ապրանքափոխանակությունն արտասահմանի հետ։

Գետք և այս կատարել լայն չափով, հաստատակամորեն, հմտորեն, շրջահայց կերպով, ամեն կերպ այն ողտագործելով բանվորների ու գյուղացիների դրությունը բարելավելու համար, ինտելիգենցիային տնտեսական շինարարության ասպարեզ գրավելու համար։ Ոգտագործելով ապրանքափոխանակությունն իտալիայի, Ամերիկայի և մյուս յերկրների հետ, բոլոր ուժերով պետք ե զարգացնել հարուստ յերկրի արտադրողական ուժերը, սպիտակ ածուլը, վոստումը։ Վոռոգումը հատկապես կարևոր է հողագործությունն ու անասնապահությունը, ինչ գնով ել լինի, բարձրացնելու համար։

Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ — ահա թե ինչն է ինարավոր ու անհրաժեշտ

Կովկասի հանրապետությունների համար՝ ի տարբերություն ՌՍՖՍՀ-ից։ Ահա թե ինչն է հարկավոր ըմբռնել ու կարողանալ իրականացնել՝ ի տարբերություն մեզ տակտիկայից։

Մենք առաջին ճեղքն եյինք բաց անում համաշխարհային կապիտալիզմի մեջ։ Ճեղքը բացված է։ Կատաղի, գերմանական, ծամբ, գելարին, խիստ տանջալի պատերազմի մեջ մենք պաշտպանվեցինք սպիտակներից, ես-երներից, մենշևիկներից, վորոնց ուժանդակում եր Անտանտան իր բլոկադայով, իր ուղղմական ուղղությամբ։

Դուք, Կովկասի կոմունիստ ընկերներ, կարիք չունեք ճեղք բաց անելու, հարկավոր ե միայն, վոր դուք կարողանաք մեծ զգուշությամբ և սիստեմատիկությամբ ստեղծել նորը, ողտագործելով ճեղ համար ճենառու՝ 1921 թ. միջազգային կացությունը։ Թե՛ Յերբուան և թե՛ ամբողջ աշխարհը 1921 թ. ել այն չեն արդեն, ինչ վոր եյին 1917—18 թ.թ.։

Վոյ թե ընդորիթնակել մեր տակտիկան, այլ ինքնուրույն կերպով կշառագույն նրա յուրահամկության պատճենները, պայմանները և նրա հանրագումարները, կիրառել իր յերկրում 1917—1921 թ.թ. փորձի վոյ թե պար, այլ վոգին, իմաստը, դասերը։ Տնտեսապես միանդամից չենվել կապիտալիստական արտասահմանի հետ ունենալիք ապրանքափոխանակության վրա, ժամանություն չանել։ Թող տասնյակ միլիոն հանքային ամենամաժեքավոր արդյունքներ բաժին ընկնեն նրան։

Պետք է միանգամից աշխատել բարվոնել զյուղացիների դրությունը և ելեկտրիֆիկացիայի ու վոռոգման խոշոր աշխատանիներ սկսել։ Վոռոգումն ամենից ավելի պետք է և այն կվերստեղծի յերկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը գեղի սոցիալիզմ։

Ներողություն եմ ինդրում այս նամակի անփութության համար, նամակը յես պետք է գրեյի շոապ կերպով, վորպեսզի ուղարկեյի ընկ. Մյասնիկավի հետ, և կրկին անդամ լավագույն վողջույններ ու ցանկություններ եմ հզում Կովկասի Խորհրդային հանրապետությունների բանվորներին ու գյուղացիներին։

Ն. ԼԵՆԻՆ

Պառկամ, 1921 թ. ապրիլ 14  
(Անգլ., հ. XXVI, էջ 269—272)։

1920 թ. ՄԱՅԻՍ—ԴԵԿԵMBER

## ԱՆՑՔԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԽՐՈՆԻԿԱ \*

### Մ Ա Յ Ի Ս

10—30.—Հայաստանի կոմունիստական կուսակցության գրլխարությամբ Ալեքսանդրովովում (Լենինականում), Ղարսում, Սարիղամիչում, Բայրազետում, Դիլիջանում, Ղաղախում, Զանգեզուրում և այլուր տեղի ունեցան Հայաստանի հեղափոխական բանվորության և աշխատավոր գյուղացիության մասսայական, խոշոր ու հերոսական ապստամբությունը՝ ուղղված դաշնակցություն կուսակցության տիրապետության դեմ։ Դաշնակցությունը, սակայն, հենքելով ներքին և արտաքին ռեակցիոն հակահեղափոխական ուժերի վրա, կարողացավ ժամանակաշրջորակեսներ և կամքային համար պայքարի յելած Հայաստանի հեղափոխական ուժերի վրա, կամքային համար պայքարի յելած Հայաստանի հեղափոխական մասսաների այդ առաջին մասսայական ապստամբությունները։

### Հ Ո Ւ Ն Ի Ս

1.—Դաշնակցական բանդաները գնդապետ Բեկ-Մամիկոնյանի գլխավորությամբ մտան Շամշադինի ապստամբ գյուղերը։ Ակսեցին հետապնդումները, ձերբակալությունները, գյուղերի թալան ու ավերը։

Մամուլը հաճախակի արձանագրում ե, թե Հայաստանի մի շարք շրջաններից հեռազգեր ու թղթակցություններ են ստացվում ժողովրդի ապրած սարսափների մասին։ Սովոր իր դաժան հունձն և անում ընչազուրկ, հյուծված ժողովրդի մեջ։

1—10.—Ղարսի բանտում, բանտային դժնուակ պայքանների հետևանքով, կալանավորների մեջ տարածվեց տիֆը։ Ցեղանտիքը մեռնողներ, բանտարկյալները հացադուլ հայտարեցին և բժշկական հսկողություն պահանջեցին տիֆով հիվանդ քաղցանտարկյալների համար։

\* Ներկա իրանիկան կազմել ենք ընկ. Համո Գասպարյանի հետ միասին։

2.—Հրապարակվեց կառավարական հաղորդագրություն՝ «Ղարսի ուսաց, հունաց և թուրք Աղջային խորհուրդների հակապետական գործունեյության մասին»։ Դաշնակցական կառավարության այդ պրովինցիան հաղորդագրությունը պետք է սկսվի դներ դաշնակցության ալելի դաժան ու մասսայական հալածանքներին՝ այլազդիների նկատմամբ։

4.—Ալեքսանդրովովում (Լենինական) դաշնակցականները գնդակահարում են մայիսյան ապստամբության ակտիվ գործիչներ՝ Ալեքսովյի ապստամբության դեկավարներից՝ Սելյուանին, Փանյանին և Պրիբիլսկուն։

— Ըսկ Զիշերինը (Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար) Մոսկվայից հեռագիր և ուղարկում Յերևան՝ դաշնակցական կառավարության արտաքին գործերի նախարար Ուշանջանյանին, բողոքելով Հայաստանում բոլշևիկների նկատմամբ տեղի ունեցող հալածանքների ու մասսայական սպանությունների դեմ։

— Դաշնակցական պառլամենտը հողային հարցը «լուծելու» համար որենք հաստատեց, ըստ վորի վերացվում են հողային կոմիտեները և նրանց փոխարեն ստեղծվում են հատուկ մարմիններ։ Այդ որենքին իր ուժը պահում եր մինչև հոկտեմբերի 1-ը։

5.—Շամշադինի շրջանի տասը ապստամբ գյուղերի կարմիր պարափանները կովի բոնվեցին դաշնակցական գործամասերի հետ, շրջապատեցին շրջանային կենտրոնը և խուճապի մատնեցին տեղական իշխանությանը։

— Ղարսում դաշնակցական բանդաները գնդակահարեցին կոմունիստական կուսակցության մի շարք անդամների, վորոնց թվում Ռազինովին և Տեր-Գրիգորյանին։

8.—Յերևանում արտակարդ դատարանը բանտարկության դատապարեց իգորիսի հեղումի կազմը։

— Յերևանի արտակարդ դատարանը բանտարկության և տաժանակիր աշխատանքի դատապարեց մի շարք բոլշևիկ գործիչների։

— Դաշնակցական կառավարությունն որենք ընդունեց, վորով ընարում կր հատուկ հանձնաժողով՝ մայիսյան ապստամբության գործով «գրապիւլու համար»։

— Դաշնակցական սուետարարդունաբերական պալատի հրատարակած պաշտոնական տվյալների համաձայն՝ ապրանքների գները Յերևանի շուկայում հետեւյալ պատկերն են ներկայացնում։

Քարաղ՝ փութը 1500 ո., ցորեն՝ 5000 ո., գետնախնձոր՝ 3000 ո., վոչխարի միս՝ Փունտը 250 ո., նավթ՝ 50 ո. և այլն։

10.—Ալեքսանդրովում գտնվող ամերիկյան կոմիտեի արհեստանոցներ ամերիկյան ներկայացուցիչ կապիտան Հեկմանի կարգադրությամբ փակվեցին, մոտ 430 բանվոր փողոց նետվեցին։

— Ղարսի արտակարգ գատարանը մի շարք բոլշևիկների դատապարտեց բանտարկության և տաժանակիր աշխատանքի:

10—12.—Քանաքեռում դաշնակցական բանակի մեջ տեղի ունեցան մասսայական դժբհություններ ու առանձին յելույթներ դաշնակցական կառավարության դեմ։ Մի շարք բանտարկություններ կատարվեցին։

11.—Դիլիջանից խմբավետ Սեպուհը մինիստր նախադահին հեռադրում եւ «Յերեկի ինձ հայտնեցին, վոր կապիտան Մուսայելյանի մահվան պատիժը փոխարինված և հարյուր մեկ տարվա տաժանակիր աշխատանքով։ Նկատի ունենալով, վոր նա խոռվության պարագաներն եր, իր զրահապատով չարիքի աղբյուրը և դուրս յեկալ կառավարության զորքերի դեմ ու պատճառ դարձավ շատ մարդկանց գնդակահարման, խնդրում եմ մահվան պատժի վճռն ի կատար ածել։»

12.—Յերևանի գործարանների ու արհեստանոցների բանվորները գործադուլ հայտարարեցին։

17.—Զորամասերում դասաւրությունը մասսայական չափերի համերու հետեանքով ներքին գործոց մինիստրը կարդադրում և նահանգութեաներին՝ ամենազաժան միջոցներ ձեռք առնել դաստիքների դեմ և գործադրել մահվան պատիժ։

— Յերևանի բանտերում տաժանակիր աշխատանքների դատապարտված կոմունիստ բանտարկյալները բանտի տեսչի ողնականի բանտ այցելության կապակցությամբ՝ միացյալ յելույթ կազմակերպեցին։

— «Հասած»-ն իր «Դարձյալ Զանդիրասարը» վերնադրով աւանորդողում պահանջում ե՝ վոշուն հավասարեցնել Զանդիրասարը։

18—20.—Քաղաքացիական կոիմիներ են տեղի ունենում Ղաղախ-Շամշադինում՝ բոլշևիկների զեկավարությամբ գործող գյուղացիական ջոկատների և դաշնակցական բանդաների միջն։

— Իջևանի ըրջանի ապստամբ գյուղացիները և նրանց միացած զորամասերը՝ դաշնակցական խմբագետների հետ ունեցած բնդէրումներից հետո գրավում են իջևանի։

18—21.—Ղաջնակցական կառավարության զորքերը և խմբագետներն, մասուցերիստական խմբերը հրի ու սրի յեն մատնում Զանդիրասարի մոտ 15 թուրքական գյուղերը, թալանում, ավերում են թուրք աշխատավորության տները և բարբարոսական կոտորածի յենթարկում թուրք աղդաբնակչությանը։

— «Խնամատարության» նախարարությունը նոր-Բայազետից, իջևանից, Ղարաքիլիսայից և այլ ըրջաններից բաղմաթիվ հեռադրեր և ստանում լայն ծավալ ընդունած սովոր մասին։

21.—Եջմիածնի և ըրջակա գյուղերի հասած ցորենի ու առավելու արտերը դաշնակցական զորքի կողմից տրորելու և ձիերին կերցնելու պատճառով մասսայական բողոքներ առաջ յեկան

և ընդհարումներ տեղի ունեցան դյուղացիների ու դաշնակ խըմ-քաղետների միջև։

— Նոր-Բայազետից հեռադրում են, վոր ըրջանում սովորա-հությունը մասսայական, սպառնալից չափերի յև հասել։

22.—Իջևանի ապստամբները թշնամու գերազանց ուժեւը աղդեցության տակ տեղի յեն տափա: Յերկար և կատաղի կրիվ-ներից հետո գաշնակներին հաջողվում ե իջևանը գրավել:

— Դիլիջանում և հայկական Ղաղախում, մայիսյան ապրատամբությունից հետո ծավալվող հեղափոխական շարժումները խեղզելու համար, Դիլիջան և մտնում շարդարար Սեպուհը և հրապարակում ե հակաբոլշևիկյան կոչեր: Համախմբելով տեղի ունեկցիոն տարբերին, Սեպուհը ձգտում ե շարժումները ճնշել և «արմատախիլ» անել բոլշևիզմ։

— «Հայաստանի ձայն» լրադիրը գրում ե. «Ժողովուրդն ապրում ե տագնապալի կացություն կենսամթերքների պակասության պատճառով, չնչին տրվում ե ¼ Փունտ հաց, այն ել վոչ կանոնավոր. ավելի վատ ե գրությունը վորքանցներում։

23.—Ապստամբ գյուղացիները և կարմիր զորամասերը գրավեցին Շամշադինը: Յերևանում հրատարակվող «Ժողովուրդ» լրադիրը հայտնում ե. «Դիլիջանի գավառում նորից տեղի ունեցել հակապետական շարժում: Մոտ 300 հայեր և թուրքեր մտել են Քարվանսարա և ցանկացել Դիլիջանի վրա»։

27.—Յերևանի ազգաբնակչությանը արված 200 գրամ հացի բանակն իջեցվեց 100 գրամի, վորի պատճառով ծագեցին նոր գժգոհություններ ու խորվություններ, մասնավորապես գաղթականության մեջ։

28.—Ղաղախ-Շամշադինի ապստամբները և կարմիր զորամասերը ժամանակավորակես թողնում են Ղաղախ-Շամշադինը և անցնում նորհրդային Ադրբեջանի սահմանները։

29.—Վրաստան մտավ գաշնակցական կառավարության հայածաներից ու հետապնդումներից փախած՝ Հայաստանի ուսուագարանական միավոր՝ բաղկացած 250 հոգուց։

29—30.—Ղաղախ գավառի ծամբարակի յենթարջանի ապրատամբները Սեպուհի գեմ սկսած անհավասար կովում տեղի տալով, նահանջեցին Ադրբեջան: Ապստամբներն իրենց հետ տարան իրենց ընտանիքներին: Սեպուհի հրամանով ապրատամբների տները հրդեհի մատնիկցին։

30.—Հակապետական շարժումներին մասնակցելու մեղադրանքով Յերևանի արտակարգ գատարանը բանտարկության գատապարտեցի, մի չափեր հեղափոխականների։

30.—«Հասած»-ում զետեղված «Դնդակների սարափը՝ Յերեկանում» վերնագրով հոդվածը, խոսելով Յերևանում տիրող անկարգությունների մասին, սկելացնում ե. «Ամեն որ ժամը

5—ից սկսած՝ Յերեան քաղաքն այս ու այն կողմից արձակված քրացանների և ատրճանակների ձայնից ներկայացնում ե վորպես մի կուլի վայր»:

### Հ Ո Ւ Լ Ի Ւ Ս

1—3.—Կատաղի կոփմներ տեղի ունեցան Զանդեղուրի ապրում տամբների և դաշնակցական հակահեղափոխական բանդաների միջև։ Դաշնակների գերազանց ուժերի ազդեցության տակ ապստամբները տեղի տվին և դաշնակները գրավեցին Գորիսը։ Ապստամբները քաշվեցին Խնձօրեսկ, ապա՝ Զարուղ։

1—5.—Ռւժեղ քաղաքացիական կոփմներ դաշնակցական բանդաների և Ղաղախ-Շամշադինի հեղափոխական աշխատավորության միջև։ Յերկար և կատաղի կոփմներից հետո, դաշնակցական բանդաները կարողացան գրավել շրջանը։

2.—Նախարարների խորհրդի անունով՝ ուղարկված իր մի զեկուցման մեջ ներքին գործոց մինիստրի ողնական Ս. Թորոսյանն ի միջի այլոց գրում ե հետեւյալը։ «Երակի գյուղերում սարսափելի բռնություններ են կատարվում։ Մանր ե մանավանդ այլազգիների գրությունը։ Ղարսի ոռւս գյուղերի ներկայացուցիչները Հունիսի 29-ին ներկայացան ինձ և արտասվելով նկարագրեցին իրենց գրությունը։ Նրանք այնտեղ գտնվում են որենքից դուրս։ Ամեն որ հափշտակում են նրանց ձին, կովը, յեղը և այլն»։

3.—Յերեանի արտակարգ դատարանը Ղարսի մայիսյան պլստամբությանը մասնակցած մի շարք բոլշևիկ ընկերների տաժանակիր աշխատանքի դատապարտեց։

5.—«Հառաջ»-ը հաղորդում ե. «Հուլիսի 5-ին, համաձայն Բաթումի ֆրանսական հանրապետության կոմիսար գը Մարտելի հարանգի, հրացաններով ու գնդացիներով զինված ֆրանսական զորամասը գրավել ե Հայաստանի հանրապետությանը պատկանող 25 հազար փութ բամբակը, բարձել այն նամին մրա և ուղարկել ֆրանսիա։

7.—Զարուղում Գորիսի ապստամբները, տեղական թուրք յերիտասարդները և Ղարաբաղի կարմիր պարտիզանական խմբերը կազմակերպեցին կոմինիստական ջոկատ, մորը շարժվեց Գորիսի ուղղությամբ՝ Նժդեհի բանդաները ցրելու համար։

8.—«Հայաստանի ձայն» թերթի Խոր-Բայաղետի թղթակիցը գրում է. «Ժողովուրդը, մասնակորապես դաղթականությունը և տեղացի չքափոր դասակարգը, ծանր որեր կապրի, հացի և այլ մթերքների որեցոր բարձրացող գները, մյուս կողմից՝ դրամի արժեքի ինալը, ամելի շատ կհուսահատեցնե ժողովուրդը»։

12.—Կատաղի կոփմներից հետո դաշնակցական բանդաները գրավեցին Բոյուք-Եղին, չտեսնված կոտորածի, թալանի ու պլերի յենթարկելով այն։

12—13.—Դաշնակցական զորամասերը գրավեցին Դավալուն,

Արարատ կայարանը, Շահաբլու գյուղը և մասսայորեն վոչնչացին թուրք ապստամբներին։

13.—Դաշնակցական խմբագետական զորամասն ամերի, կողպուտի ու թալանի մատնեց Նոր-Բայաղետի դավանի Աղքիլիս, Գյուլջիկյան, Մոկիտուսն և այլ թրքական գյուղերը։

—Նժդեհը գնդակահարում ե Զանդեղուրի կոմիուսակցության կազմակերպության կարգական մի շարք ակտիվ գործիչների։

14.—Դաշնակցական կառավարության ներքին դործոց նախարարին ուղղված իր մի գրության մեջ եջմիածնի գավառի համայնական վարչությունը գրում ե հետեւյալը. «Գավառում զառավելք զինվորներ հավաքելու համար մենք մինչև այժմ ձեռք ենք առել աներևակայելի միջոցներ... դիմել ենք ծեծի... բռնադրագել, նույնիսկ այրել դեղերն ու աները։ Թեկուզ այլպիսի միջոցներով, համենայն դեպս մենք միշտ կարողացել ենք մեծ բանակությամբ զեղերտիբներ հավաքել և ճամբել զնդերը, բայց նրանց թիվը գավառում չի պակասում յերբեք, վորովհետև գընդերում նրանց համարվոր չի լինում պահել, և մենք միենույն դասալիք զինվորներին ստիպված ենք լինում փնտռել և գտնել 10—15 անգամ»։

16.—Յերեանի քաղաքային ինքնավարությունը քաղաքում ուրական բաց թողարկությունը 600 փութ ալյուրն իջեցրեց 500 փթի։ Թերթերն այդ առթվով գրում են. «Կիսաքաղցից հետո ծովապահություն»։

20.—Խորհրդային թուսաստանի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Զիչերինը Հայաստանի դաշնակցական կառավարության արտաքին գործոց մինիստրության հասցեյով ուղարկեց Հայուղագիր, վորովի առաջարկում ե բարեկամական հարաբերություններ ստեղծել յերկու կառավարությունների միջև։

20.—Յերեանի արտակարգ դատարանը հակապետական գործուներության մեղադրանքով մի շարք անձնավորությունների բանտարկության դատապարտեց։

23.—Ղարմիք բանակի զրբամասերը մտան Նախիջևան։ Դաշնակցական բանդաների առաջնակացումը դեպի Նախիջևան դադարեց, և այսպիսով աշխատավոր թուրք գյուղացիությունն աղատվեց բնաջնջումից։

27.—«Հառաջ»-ը պահանջում ե չընդունել Խորհրդային թուսաստանի կողմից Հայաստանում նշանակված պատվիրակ Լեզրանին և ընդհանրապես չմերձենալ Խորհրդային թուսաստանին։ Թերթը զանազան պրոպրկացիաներ և հնարում թուսաստանի և Լեզրանի հացելին։

27.—Դաշնակցական կառավարության արտաքին գործերի նախարար Հ. Ռհանջնայանը, ի պատասխան Զիչերինի հուլիսի 20-ի հայուղագիր, խուսափողական պատասխան և տալիս։

27.—Արտակարգ դատարանը հատուկ գորոշամբ «Հակապետական զրութանդաշից» կոմունիստական պրոպրկացիայի

և մայիսյան շարժումներին մասնակցելու և ղեկավարներու համար մի շարք հեղափոխականների և բոլշևիկների դատապարտեց 10—15 տարվա տաժանակիր աշխատանքի, դատապարտվածների թվում եր նաև Լիպարիա Միջանը:

31.—Ղարանլուզ դյուզում (Մարտունի) դյուզացիների և դաշնակցական սպայության միջև տեղի յե ունենում ղինված լույսարում: Տեղի ուղարկված արտակարդ կոմիսարն այդ ժաման Ն. Գ. մինիստրությանը գեկուցում ե. «Ղարանլուզի դեպքերը մի բողոք եր սպայության դեմ, վորը դյուզում մեծամեծ թալաններ ե արել»:

#### Ո Գ Ո Ս Ա Ս

1.—Դաշնակցական զորամասները Դրոյի ղեկավարությամբ հարձակեցին Զանդեղուրի խորհրդային ըրջանների վրա:

2.—Ռւժեղ կոխիներ Գորիսի մոտ՝ դաշնակցական զորամասների և Զանդեղուրի ապստամք աշխատավորության միջև:

2.—Յերևանում, յերկամսյա դադարից հետո, բացինց դաշնակցական պառամենտի առաջին նիստը, վորը և վորոշից պառամենտի պարապմունքները դադարեցնել Յ ամսով՝ մինչև հոկտեմբերի 31-ը:

3.—Դաշնակցական բանդաները յերկար ու կատաղի կոխիներից հետո կարողացան դրավել Գորիսը:

4—5.—Ռւժեղ կոխիներ Զանդեղուրի և Ղարաբաղի սահմանամերձ մասերում՝ ապստամբների և դաշնակցական ուժերի միջև:

5.—Զորավար Հովհանիսյանը Ղարսի նահանգապետին հեռագրում ե: «Իսասալքությունն ուժեղանում ե, տասն որվա մեջ փախել են 140 մարդ, զինվորական իշխանության դիմուններն աղմինիստրացիային՝ մնում են անհետուանք:

6.—Զանդեղուրում քաղաքացիական կոխիները շարունակվում և ավելի յեն ծավալվում: Կարմիր զորամասներն ու առջևատամբները վերադրավում են Գորիսը:

6.—Յերևանի արտակարդ դատարանը տաժանակիր աշխատանքների և բանտարկության դատապարտեց մի շարք բոլշևիկ ընկերների, վորոնց թվում նաև Արմենակ Բուդայյանին:

7.—Յերևանի արտակարդ դատարանը տարբեր ժամանակներում տաժանակիր աշխատանքի և բանտարկության դատապարտեց մի շարք բոլշևիկի դործիների:

8.—Դաշնակցական կառավարությունը դիմեց դաշնակից պետություններին՝ ռազմական ողնություն ստանալու իր «ներքին և արտաքին ֆրոնտները պաշտպանելու համար»:

8.—Վառելանյութ չինելու պատճառով բնդհատվեց զնացքների յերթեկությունը Թիֆլիսի ու Յերևանի միջև:

10.—Սեպտեմբերի կնքմեց դաշնակիր, վորի 6-րդ հոդվածի 88—

93 հատվածների համաձայն, դաշնակից պետությունները ճանաչում են Հայաստանի «անկախությունը»:

10.—ՌՍՖԽՀ Անդրկովկասի ներկայացուցիչ Լեզբանը և Հայաստանի դաշնակցական կառավարության ներկայացուցիչները կնքեցին ժամանակավոր դաշնադիր:

11.—«Հառաջ»-ը գրում ե, վոր հարկավոր և ե'լ ավելի մոտենալ վրացական մենչնիկներին՝ ընդհանուր թշնամու՝ Խորհրդային Ռուսաստանի և տեղական հեղափոխական շարժումների դեմ կովելու նպատակով:

12.—Ղարսի քաղաքացիական նահանգապետը զեկուցում ե. «Ղարսի շրջանի տարրական գպրոցների պաշտոնյաններից մայիսյան դեպքերի առթիվ դատապարտական կամ վարչական կարգով դատապարտված են հետեւյալ անձինք. 1. Ղարսի 1-ին գպրոցի ուսուցչուհի Արշանուշ Փորսույշյանը—դատապարտված չորս տարով բանտարկության՝ հունիսի 8-ից: 2. Սարիղամիշից գպրոցի ուսուցիչներ՝ Հայկ Մկրտչյան, Հռեփոխմե Մինասյան և Կաղըդվանի գպրոցից Արտաշես Կոստանյան, Արամ Մտեփանյան ձերբակալված են, վորոնցից վերջին յերեքն արձակված են ընդ (հանուր) հսկողությամբ: 3. Սելիմի գպրոցի ուսուցիչը Մաքսիմ Խողինովը դատարանով զնդակահարված ե: 4. Ղարսի հունաց գպրոցի ուսուցչուհի Մ. Ռիբնառպուլը, Սարիղամիշից Վարդան Տեր-Գրիգորյանը, Վարդան Բայրուրացյանը և Մալո-Վարանցովկայի՝ Վասիլիկ Բողդանովն անհայտացած են, իսկ Ղարսի հունաց գպրոցի ուսուցիչը Պյոտր Յաֆրակովն սպանված է ձերբակալելու ժամանակ»:

13.—Յերևանի բանտում ձերբակալված բոլշևիկները կոնֆլիկտի մեջ մտան դաշնակցական կառավարության ներկայացուցիչների հետ և հրաժարվեցին ընկալվերդյանին, Մուսայելյանին և Ղարիբջանյանին հանձնել նրանց ձեռքը: Բանտարկյանների և բանտարյալների հանուային տեսչության միջև տեղի ունեցած բանականական կոչությունները հայտնեցին, վոր վոչ մի կերպ չեն զիջի: Բանտարյանները հայտնեցին, վոր վոչ մի կերպ չեն զիջի: Բանտարյանները դրան դիմադրություն ցույց տվեցին: Կամերայում յեղած իրերը լցրին դռների հետևելը, ընտրեցին Յ հոդիությունը բաղկացած կոմիտեն և վճռեցին Հայրավորության սահմաններում դիմադրել մինչև վերջը: Դաշնակցականներն այդորը հրաժարվեցին Ալլահվերդյանին և ընկերներին բանտից դաշնակցականների միտինդ, վորը վորոշեց դաշնակների կողմից գործադրություն ցույց տալ:

13.—Խորհրդային Ադրբեյջանի արտաքին դորձերի կոմիտեի ներկայացուցիչներ Դովլաթյանը և Գասպարյանը Յերեվանում տեսակցություն ունեցան նախարարապետ Հ. Ուանջանյանի հետ:

14.—Յերևանի Քանաքեռ տանող խճուղու վրա, Նորքի սահ-

մաններում, դաշնակցականների ձեռքով զիշերը գնդակահարվեցին Հայաստանի կոմիուսի ականիվ գործիչներ և մայիսյան ապօստամբության ղեկավարներից Ստ. Ալլահվերդյանը, Դ. Ղարբջանյանը և Ս. Մուսայելյանը:

16.—Թիֆլիսից ՌԱՅԻՆ Հ լիազոր ներկայացուցիչ Լեզրանը բողոքի հեռագիր ուղարկեց Յերեան՝ դաշնակցական կառավարության արտաքին գործոց նախարար Ռհանջանյանին: Հեռագում Լեզրանը բողոքում եր Ստեփան Ալլահվերդյանի և մյուսների գնդակահարության փաստի գեմ:

17.—Ի պատասխան Լեզրանի սպասուսի 16-ի հեռագրի, դաշնակցական կառավարության արտաքին գործերի նախարար Ռհանջանյանը թիֆլիս՝ Լեզրանին հեռագիր ուղարկեց, վորով նա իրականությունը խեղաթյուրող պատասխան եր տալիս Ստեփան Ալլահվերդյանի վիճակի և նրա գնդակահարության մասին:

17.—Ալեքսանդրոսովում հրատարակվող «Շիրակի աշխատավոր» դաշնակցական լրագիրը բոլշևիկների գեմ Ալեքսանդրոսովում տեղի ունեցած հալածանքների մասին գրում ե. «Մայիսի 14-ից մինչև որս բանտարկվել են 234 հոգի, վորոնցից 120 հոգի արձակված են, մահվան պատճի յեն յենթարկված 3 հոգի և մնում են բանտում դատավարակած տարբեր ժամանակմիջոցով 13 հոգի, տեղափոխված այլ վայրեր և բանտեր՝ 61 հոգի, քննության յենթակա մնում են 50 հոգի, աքսորվելիք Հայաստանի սահմաններից գուրս՝ 50 հոգի»:

18.—Ալեքսանդրոսովում յերկաթղծի բանվորության մեջ մի շարք ձերբակալություններ կատարեց դաշնակցական կառավարության յերկաթուղային մելիցիան:

20.—Վառելանյութի բացակայության և բանվորների սարումաժի պատճառով դադարեց յերկաթուղային հաղորդակցությունը բոլոր ուղղություններով:

20.—Հայաստանի կե(թ) կենտրոնական կոմիտեն Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին ուղղված կոչ հրապարակեց, վորը վերջանում եր հետեւյալ տողերով. «Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաներին, նրանց հեղափոխական կորովին ու դասակարգային գիտակցությանը՝ կաղմակերպիլու կոմկուսակցության դրոշակի շուրջը, հայրաքելու ցրված հեղափոխական ուժերը, վորպեսդի ձեռք-ձեռքի տված Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի հետ՝ միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմասերիալիզմի հայկական դաշնակցական հատվածի լուծը և նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշակը Հայաստանում»:

21.—Դաշնակցական Հայաստանի ճանաւարհների հազոր-դակցության մինիստրությունը հայտարարում ե. «Այսու հազորդակցության նախարարությունը հայտարարում ե, վոր վառելանյութի բացակայության պատճառով բոլոր յերթեկությունները յերկաթուղու վրա ամսի 20-ից դադարեցվում ե»:

24.—Յերեանի քաղաքային ինքնավարության խորհրդի վորչման համաձայն պարիհանգործան թերթիկներով հասարակությանը բաց թողնված հացի մեկ փունտի գինը բարձրացվեց 16 սուրբուց 70 սուրբու:

25.—Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեն կոչ հրապարակեց դաշնակցական Հայաստանում գործադրվող սպիտակ տեսողի գեմ:

25.—Եջմիածնի դավանի 2-րդ և 5-րդ մասերում դասալիք զինվորների և դաշնակցական միլիցիայի միջև տեղի յեն ունենում զինված ընդհարումներ:

25.—Դաշնակցական կառավարության մինիստր նախագահ Համբ Ռհանջանյանի անունով Արարանից ստացված մի նամակի մեջ, ի միջի այլոց, ասված ե հետեւյալը. «Եջմիածնի գալմուխ 2-րդ և 5-րդ մասերում նորից սկսվել են անկարգություններ, վորոնց կատարողները դասալիքներն են դիմավորապես: Կարբի գյուղում դասալիքները կատարում են ամեն տեսակ անկարգություններ: Ութ որ առաջ նրանք ամբանալով իրենց ձարում, հրացանաձգության են բռնվում միլիցիայի հետ»:

28.—Ղարսում դաշնակ պրովկատորների միջոցով ձերբակալվեցին Ղարսի կոմ. (թ) կուսակցության կաղմակերպության անդամներից 28 հոգի:

28.—Յերեանի արտակարդ դատարանը վորոնցից բանտարկության դատապարտել մի շարք բոլշևիկ գործիչների:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

1.—Բագվում բացվեց արեելյան ժողովուրդների համագումարը, վորին մասնակցում եյն նաև Հայաստանի աշխատավորության ներկայացուցիչները:

1.—Յերեանի արտակարդ դատարանը, բոլշևիկյան գործունելության համար, մի շարք բոլշևիկների բանտարկության դատապարտեց տարբեր ժամանակներով:

1.—Վրաստանի կոմունիստական (թ) կուսակցության Թիֆլիսի կոմիտեն դիմում հրապարակեց, վորով բողոքում եր դաշնակցական Հայաստանում գործադրվող սպիտակ տեսողի գեմ և պահանջում եր գադարեցնել այն:

1.—Դաշնակցական Հայաստանում զդացվում ե նավթի, բենզինի և ընդհանրապես վասերանյութի խիստ ճիշճամ, վորի հետեւյանքով դաշնակցական կառավարության նախարարակեալ կարգադրում ե կատեղորիկ կերպով արգելել, բացի վարչապետի ավարմորթիկց, վորեւ մեկին բենզին և բնդ հանրապես վառելանյութ բաց թողնել:

2.—Ղարսում շրջանում վերսկավեցին կոխմերն ապստամբերի և Նժղոհնի գլխավորությամբ գործող դաշնակցական բանդաների միջև:

2.—Դաշնակցական բանդաները թալանում են Շամշադինի գյուղերը և այլում կոմունիստների տները:

2.—Եկրանի միսիայի քարտուղար՝ խոտոմինը կարճատե տեսակցություն ունեցավ նախարարապետ Հ. Ոհանջանյանի հետ:

5.—Զանդեղուրում, Զախմախիջաղ լիուան շրջակայքում կոփիներ տեղի ունեցան ապստամբների ու դաշնակցական ուժերի միջև:

5.—Արաստանի կոմունիստական (թ) կուսակցության Փոթու քաղաքային կոմիտեյի նիստը՝ յաչելիաների ներկայացուցիչների հետ միասին, վոտքի կանդնելով հարդեց Հայաստանի սպիտակ տեսորի զոհերի, հեղափոխական անձները հերոսներ Սուլահվերդյանի, Մուսայելյանի, Ղարիբջանյանի և ուրիշների հիշտառակը, վորից հետո ժողովը հետեւյալ բանաձևն ընդունեց. «Մենք պահանջում ենք՝ սպիտակ տեսորին անմիջապես վերջ տալ: Դադարեցեք կոմունիստներին հալածել և անմիջապես մեր բոլոր ընկերներին բանտերից ազատեցեք: Պարօններ, հավատացած յեղեք, վոր մեր ընկերների դեմ ուղղված սպիտակ տեսորը Հայաստանի սոցիալիստական հեղափոխության մոտենալու ըստեներն եւ արագացնում: Գահիձներ, ձեր դաժան դատի ժամն եւ մոտենում»:

6.—Պաշտոնական տվյալների համաձայն, չուկայում վաճառվող ապրանքները հետեւյալ զներն ունեն. ցորեն՝ փութը 7000 ռ., լորի՝ 6000, դարի՝ 5000, դետնախնձոր (Փունտը)՝ 100 ռ., յուղ (Փունտը)՝ 120 ռ.:

7.—Հացի խիստ ճգնաժամ Յերևանում: Ազգաբնակչությանը հաց ստանալու համար դիմերկա ժամը մեկից հերթի յի կանդնում վուերի դրանը:

9.—Դաշնակցական բանակը դրամից կողը և աղահանքերը:

10.—Բազմի «կոմունիստ»-ում հրատարակվում եւ Հայաստանից գրված մի նամակի, վորը հետեւյալ կերպ և պատկերացնում Հայաստանում տիրող գրությունը. «Ընկերներ, սպիտակ տեսորը Հայաստանում սոսկալի չափերի յի հասնում: Վերաբերմունքը դեպի ձերքակալված կոմունիստները գնալով ավելի վատթարանում, ավելի լւափի կերպարանք եւ ընդունում: Առանց չափազնեցնու կարելի յի առել, վոր մայիսյան սարսափները վոչինչ են այն ամենի առաջ, վոր տեղի յի ունենում այժմ Հայաստանում: Առանց գատի ու քննության՝ վերջին յերեք որվա ընթացքում բանտից զուրս են տարված ու զնուակահար են արված մեր ամենալավ 11 ընկերները: Հայաստանի բանտերում դաշնամում են մոտ 500 հոգի: Ծեծն ու չորչարանքը սովորական յերեւյթներ են: Խակ բանակից դուրս, Հայաստանի խուլ գյուղերում և քաղաքներում կառավարությունն իր ապենուների միջոցով վոչնչացնում եւ ձեռքն ընկած կոմունիստներին (յուրաքանչյուր կոմունիստի գլուխը գնահատված եւ 5000 ռուբլի):»

10—13.—Յերևանի արտակարդ դատարանը բոլշեվիկյան պրո-

պագանդի ու գործունեյության համար մի շարք անձնավորությունների դատապարանը բանտարկության՝ տարբեր ժամանակ-ներով:

10.—Եիրակի նահանգապետ Կարո Սասունին դաշնակցական կառավարության նախարարապետ Ոհանջանյանին ուղղած իր զեկուցման միջ ասում եւ հետեւյալը. «Յերկրում հակապետական ուժերը ցանկանալով նորեն դուրս բարձրացնել, անընդհատ աշխատում եյին այդ ուղղությամբ»:

Ի նկատի ունենալով այդ ամենը, անմիջապես կաղմեցի ուսանողությունից և ընդհանրապես դիտակից, վատահելի անձնավորություններից 12 հոգուց բաղկացած մի խմբակ, վորը և էռկույն անցավ գործի: Այդ լսմբակն անկախ է գործում միլիցիայից՝ իմ անմիջական հսկողության տակ:

Նրանց հաջողվեց առաջն հերթին մաքրել Ալեքպովը և ըրբանը հակապետական ուժերից՝ չորրհիվ իրենց անաշառ գործունեյության: Ապա ուղարկել եմ Ղարաբղիմսա, վորտեղ նույնպես կարողացի են իրականացնել հանձնված պարտականությունները, մեծ աշխատանքներ են կատարված և յերկաթուղու մրա: Վերջերս պարզելով, վոր մեծ աշխատանքներ են ձեռնարկել Ղարսում, անմիջապես ուղարկվում են Ղարս-Կաղզվան, վորտեղ հաջողվում է բանտարկել մոտ 28 հոգի՝ գլխավորապետական դրանց ղեկավարներից»:

11.—Հայ-թուրքական պատերազմ ամբողջ ճակատի վրա՝ Արդվին-Սարիղամիշ-Կողբ-Սուրմալու:

13.—Թուրքական գործերը գրավեցին Սարիղամիշը:

14.—Սոսկվայից Յերևան վերադարձան դաշնակցական կառավարության պատվիրակներ և Հանթի, Հ. Տերեհյանը, Վ. Զառաֆյանը: Նրանց հետ միասին Յերևան ժամանեցին չեխուղովակների պատվիրակության անդամները:

14.—Դաշնակցական կառավարությունը հաստատեց հետեւյալ որենքը. «Վանանդի նահանգը հայտարարել զինվորական դրության մեջ, քաղաքացիական և զինվորական իշխանությունները կենտրոնացնել Ալեքսանդրովովի դորամասի պետ, ամագ պարագար Փիրումյանի ձեռքում»:

15.—Թիֆլիս ժամանեց Յերկրորդ ինտերնացիոնալի պատվիրակությունը:

15.—«Հառաջ»-ն իր «Պոչերը» խմբագրականում գրում և. «Մայրաքաղաքի ազգաբնակչությունն ապրում է դժոխային պայմաններ: Հացի և մսի պակասության պատճառով նա ստիպված է կազմել յերկար պոչեր՝ իր բաժինն ստանալու համար»:

19.—Քաղաքացիական կոխներ Շամշադինի շրջանի Աքսիբարա գետի հովտում:

19.—Յերևան ժամանեց Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը:

20.—Անդրեակասպան արհմիության խորհրդին կից Առհմիությունների արեւելյան բյուրոն, Անդրկոսիկասի արհմիություննե-

րի նախագահությունը և Հայաստանի Կոմ. (բ) կուսակցության կենարոնական կոմիտեն միացյալ մի կոչ հրապարակեցին, վորտեղ դիմելով Անդրկոմիկասի և վողջ աշխարհի բանվորներին ու դյուդացիներին, կոմունիստական ինտերնացիոնալին, Արհեստական միությունների միջազգային խորհրդին՝ կոչ են անում բոլորի ձայն բարձրացնելու բոլցելիների, հեղափոխական բանվորության և աշխատավորության նկատմամբ դաշնակցական Հայաստանում կատարվող սպիտակ տեռորի դեմ:

21.—Նորից սկսվեցին գյուղացիական լայն ապստամբություններ Զանգեզորում:

22.—Իշխանի շրջանում քաղաքացիական կոիվները չարունակվում են: Դաշնակները հետ են զարավում և ապստամբները գրավում են ֆարահի և Մարտմի գյուղերը:

23.—Ընդհանուր կոիվներ թյուրքիայի և դաշնակցական զինյալ ուժերի միջև:

23.—ՌՍՖՀ լիազոր-ներկայացուցիչ լեգրանի բողոքի նորուականակցական կառավարությանը:

25.—Դաշնակցական կառավարության վորոշմամբ «Պետական ինքնապաշտպանության Համար» նշանակվեց պետական միանվադառուք՝ յերկու և կես միլիոն ուռելու չափով:

30.—Հայաստանում Հայտարարվում ե զինվորական գրության: Զենքի տակ են կանչվում 1884 թվին և հետագա տարին ծնվածները:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

1.—Ներքին գործոց նախարար Սարգս Արարայանի մոտ ուղի ունեցավ դաշնակցական Հայաստանում լեզալ կուսակցությունների ու թիրթերի ներկայացուցիչների խորհրդակցությունը, վորը վորոշեց միացյալ ուժերով կովել «ներքին ու արտաքին թշնամու դեմ և ամեն կերպ պաշտպանել կառավարությունը»:

2.—Յերեանում, պառլամենտի գահին ում, կայացավ գաշնակցության, հայ ժողովրդական, սպիտիքիկների և այլ հակառական կուսակցությունների միացյալ միունդ, վորտեղ հրապարակ յեկան այլ կուսակցությունների լիդերները, կոչ անելով ողնել, պաշտպանել կառավարությանը և անխնա կովել այդ կառավարության ներքին ու արտաքին բոլոր թշնամիների դեմ:

3.—4.—Յերեանում և շրջանում դաշնակցությունը և «քույր» կուսակցությունները միացյալ միունդներ են հրավիրում գաշնակցական կառավարության շուրջը համախմբելու և պետությունը պաշտպանելու համար:

4.—Անդիխական գերագույն կոմիտարը կովկասում՝ զնդապետ Ստոկոր՝ Յերեանից մեկնեց Ղարս: Նրա հետ մեկնեց նուև կապիտան Գրիսոս:

5.—Դաշնակցական կառավարության ներքին գործոց մինիստրը հրաման հրապարակեց, ըստ վորի բոլոր դասալիքները զինվորական դաշտային դատարանի միջոցով յենթարկվում են մահվան պատճի, և զրավվում ե նրանց ամբողջ շարժական ու անշարժ գույքը:

5.—Յերեանում ներքին գործոց մինիստրի նախաձեռնությամբ ստեղծվեց միջկուսակցական խորհուրդ:

5.—Ղարս ժամանեց Անդիխայի գերագույն կոմիտարն Անդըրկովկասում՝ զնդապետ Ստոկոր և Անդիխայի ներկայացուցիչը Յերեանում՝ Գրիսոսը:

5—8.—Քաղաքացիական կոիվները Ղափանում շարունակվում են: Ապասամբները կարողանում են զրավիլ միքանի գյուղեր:

7.—Յերեանի պարետ Շահնամերումնին հրապարակեց մի պող, վորով հայտարարում եր, թե Յերեանը լինելով զինվորական դրության մեջ, ինքը հիմնում է զինվորա-դաշտային դիմումը և զինվորա-դաշտային դատարան:

7.—Սպեցիֆիկների կենտրոնական կոմիտեյի, դաշնակցության ու հաշակյան կուսակցության Յերեանի կենտրոնական կոմիտեների, հայ ժողովրդական կուսակցության, հայ առմկավարների, սոցիալիստ-հեղափոխականների կենտրոնական կոմիտեների ստորագրություններով հրապարակվեց մի կոչ ուղղված «հայ ժողովրդին՝ պաշտպանելու կառավարությունը», կովելու նրա բոլոր թշնամիների դեմ և դուրս գալու պատերազմի Փրոնս»:

7.—Գրիմի (գեներալ Վրանդելի) ներկայացուցիչ զնդապետ Զինկելիչը Յերեանում այցելեց նախարարապետ Հ. Ուանջանյանին:

7.—Լույս ե աեսնում Հայաստանի կոմկուսակցության կենտրոնի կոչը՝ ուղղված դաշնակցություն կուսակցության և կտուակարության գեմ:

10.—Յերեանում, պառլամենտի գահին ում, տեղի ունեցավ հակառակափոխական կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված միջկուսակցական խորհրդի միտինդ, վորն ընդունեց կետեյալ բանաձեռը. «Հայտնել լիակատար վստահություն Հայաստանի կառավարությանը»:

10.—Յերեանի հրապարակում կառուցվող կախաղանի կապակցությամբ հուզումնալից արամադրությունների նոր ալիք ե բարձրանում:

11.—Յերեան ժամանեց Խորհրդային Խուսաստանի պատուամակորությունը՝ Լեզրանի գլխավորությամբ: Նույն որը Լեզրանը աեսակցություն ունեցավ Հ. Ուանջանյանի հետ:

12—15.—Դաշնական վորսալու նպատակով Յերեանում և շրջաններում հաճախակի յեն դառնում շուրջկաները:

14.—Յերեանի արտակարգ դատարանը մի շարք ընկերների դատապարեց բանտարկության:

14.—Պաշտոնական տվյալների համաձայն, չուկայում ցորենի փութը ծախվում է 10.000 ռուբլով, գարին՝ 7.000 ռուբլով, կորեկը՝ 4.000-ով, գետնախնձորը՝ 5.000-ով, լորին՝ 12.000-ով և այլն:

15.—Յերեան ժամանեց Բրիտանիայի անդրկովկասյան գերագույն կոմիսար միստր Ստոկսը:

18.—Յերեանի դաշնակցական կոմիտեի հրամիրած խորհրդակցությունը վորոշեց. «Մայրաքաղաքում զանվող 16 տարեկանից փոքր բոլոր գլորոցականները պարտավոր են զրվել սկսում, իսկ 16 տարեկանից վեր պետք է մտնեն աշակերտական դժաբդիայի մեջ և վարժվեն զինավարժության և պատերազմական արվեստին»:

20.—«Բանվորի կոմիլ» լրագիրը դրում է. «Վերջին ժամանակներս դաշնակցական կառավարությունը չբավականանալով բանտերով և զնդակահարություններով, Աստաֆյան փողոցի վրա կախաղաններ եւ բարձրացրել՝ կոմունիստներին կախելու համար: Բանտերը լցված են կոմունիստներով: Կոմունիստներ են աքսորված Սևան: Ալեքպոլի բանտից կոմունիստներ են տեղափոխել Յերեան: Ալեքպոլում զինվորական դրություն եւ հայտարարված: Վերջին ժամանակներս բավականաչափ կոմունիստներ են զնդակահարված, նրանց թվում՝ 2 կին: Բանտարկյալներն ստանում են ¼ ֆունտ հաց: Դիլիջանից մի շարք կոմունիստների փոխադրել են Յերեան՝ տաժանակիր աշխատանքի համար»:

21—22.—Ռւժեղ քաղաքացիական կոխմներ Զանգեզուրի Անգեղակոթ գյուղի շրջակայքում:

24—25.—Քաղաքացիական ուժեղ կոխմներ Գորիսում:

25.—Մինիստրների խորհրդին զեկուցում են. «Գետական պաշտոնյանների ներկայումս ստացած առնիկները չեն կարող ապահովել նրանց ամենատարրական կարիքները՝ նույնիսկ նվազագույն չափերով: Այս հանդամանքն անդրադառնում ե ամսիթապես պետական դորձերի վրա: Պաշտոնյանները չեն կատարում ու չեն ել կարող կատարել բարեխղճորեն իրենց պարտականությունները: Նրանց ամբողջ յեռանդը, ուշքն ու միտքը կենարունացած են որքա ապրուստը հայթայթելու վրա և պետական աշխատանքով լրջորեն պարապելու համար գո՞չ յեռանդ և մնում, զո՞չ ժամանակ: Մյուս կողմից՝ ծայրահեղ կարեքը ծնունդ է տալիս ամեն տեսակ զեղծարարությունների, կաշառակերության, ու գողության: Զեղծարարությունները խոշոր ծավալ են ստանում նաև այն պատճառով, մոր պաշտոնյան, վտակ վարձարիբելով, արժեք չի տալիս իր պաշտոնին, չի վախենում կորցնել այն: Իոհի հասարակական կարծիքի կամ դատական հետապնդման յերկյուղը շատ չնչին է, վորովհետեւ յերեւոյթն ընդհանուր է ու լայնածավալ: Այս գրությունը շատ վտանգավոր է, նույնիսկ սպառնալի պետության համար:

26.—Դաշնակցական կառավարությունը վորոշեց զորաժողովի յնթարկել 36—37 տարեկաններին:

26.—Յերեանում միջկուսակցական կենտրոնական խորհուրդը կազմակերպեց միտինդ, ուր հանդիս յեկան դաշնակցության, սպեցիֆիկների, եսերների, հնչակյանների և ուժիավարների ներկայացուցիչները, վորոնք բալորը միաբերան կոչ ելին անում աղաշտպանել կառավարությունը:

27.—Բազմաթիվ գնդակահարումներ են կատարվում Նոր Բայազետում, Սուրբալվում, Դիլիջանում, Ղարաքիլիսայում, Ալեքսանդրովում, Ղարսում և այլն:

28.—Հայաստանի մի շարք ըլջաններում ապստամբական շարժումները սպառնալից կերպարանք են ստանում, վորի հետևանդուք «Հառաջ» թերթը կոչ ե անում «Ամեն վոք պետք ե ամբանդի մեր ներքին ճակատը»:

28.—Յերեանի արտակարգ դատարանը մի շարք բուշելիների դատապարտեց տաժանակիր աշխատանքների: 10 տարվա տաժանակիր աշխատանքի յե դատապարտվում Ա. Խանջյանը, 5 տարվա՝ Վահան Շահգելլյանը և այլն:

28.—Յերեանի միջկուսակցական խորհուրդը կոչ հրապարակեց, վորով դիմում եր «Հայ ժողովրդին՝ համախմբվել կառավարության շուրջը և Փրոնտ մեկնել»: Կոչն ստորագրել են դաշնակցության Յերեանի կենտրոնական կոմիտեն, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության Հայաստանի կոմիտեն, հայ ժողովրդական կուսակցության կենտրոնական կոմիտեն, հայ սոմկավար կուսակցության Հայաստանի խորհուրդը և հնչակյան կուսակցության Յերեանի մասնաճյուղը:

29.—Ծագմական նախարարի և պարետի կարգադրությամբ զենքի տակ են կանչվում մինչև 50 տարեկանները՝ քաղաքի ինքնապաշտպանության համար: «Հայաստանը վերածվում է կատարյալ գրանոնցի» գրում են թերթերը:

29.—Յերեանից Մոկմա ճանապարհվեց Խորհրդային Թուսաստանի միսիան՝ Լեզրանի գլխավորությամբ:

30.—Ղարսում գտնվող Հայկական մի գունդ մերժեց ի կատար ածել հրամանատարության հրամանը՝ ճականացարձակման անցնելու մասին:

30.—Թուրքերը գրավեցին Ղարսը:

30.—Ալեքպոլի (Լենինականի) տպագրական գործի բանվորների արեսատակցական միությունը տպարանատերերին պահանջագիր ներկայացրեց, վորի մեջ շեշտվում է կենսական մթերքների շարունակարար թանգանալը և պահանջմում ե ոռնիկների հավելում կատարել:

## ՆՈՅԵՄԲԵՐ

1.—Ղարսի գրավումից հետո թուրքերն իրենց գործողությունները ծավալում են Ալեքպոլի ուղղությամբ, վորի հետեւ

վանքով Հայաստանի կառավարական ըլչաններում մեծ խուճապ և սկզբում:

1.—Էայրացավ պառլամենտի արտակարգ նիստը, վորտեղ զեկուցեց մինիստր նախադահ Հ. Ռհանջանյանը և պաշտպանեց այն տեսակետը, թե պիտի շարունակել պատերազմը: Պարլամենտը վորոշում և պատրամավորներին արձակուրդ տալ յերեք ամսով:

1.—Յերկաթուղարքին բանվորները հրաժարվում են կատարել Հաղորդակցության մինիստրի կարգադրությունները:

1.—Մայիսյան ապստամբության մասնակիցները պարուիզանական ջոկատ կազմեցին, իջևանի և Շամշադինի ուղղությամբ ճեղքեցին դաշնակցական զինվորական-պահակային շղթան և մանելով իրենց գյուղերը, ստեղծեցին քաղաքացիական կովկի ճակատ:

1.—Զանգեղուրից հաղորդում են Բագվի «Կոմունիստ»-ին, վոր կարմիր զորքերը Հանդը մտնելուց հետո, տեղում ինչպես մյուս գյուղերում կազմում են հեղկոմներ:

1.—Գորիխում կազմակերպվեց աշխատավորական տարրերից բաղկացած բողոքի մեծ միտինգ՝ ծափալված դաշնակցական տեսողի գեմ: Միտինգում կազմակերպվեցին կոմունիստական ջոկատներ՝ Նժեհի բանդաների գեմ կրվելու համար:

2.—«Մշակ» թերթը (ժողովրդական կուսակցության որդան), նկատի առնելով յերկրի ծանր դրությունը, բոլշևիկների ակտիվացումը և հիշեցնելով մայիսյան շարժումները, պահանջում է անմիջապես կազմել կոալիցիոն կառավարություն՝ «վերահասվանդի» առաջն առնելու համար:

2.—«Մշակ» թերթը (ժողովրդական կուսակցության որդան), գուցե—ինչո՞ւ ծածկել, մեր վիճակն ավելի ծանր ե...»:

2.—Կոմունիստական ջոկատները Գորիխից շարժվում են Նըդղեկի բանդաների գեմ:

2.—Գեներալ Սիմերգովն իր գեներալ Սիլիկովի անունից հաղորդում ե գլխավոր համանատարին զեկուցագրով: «Դարսի տակ մեր կրած անհաջողության և զորքի ներկա դրության պատճառը յես այն եմ համարում, վոր, առաջին՝ զնդերը յերկու յերկու կրածականներով լի յեն դասավեճներով: յերկրորդ՝ ոփեցերների մեծ մասը թույզ են և կոմի մեջ չեն վայելում զինվորների վատահությունը. յերրորդ՝ հրամանատարները նույնակես թույզ են և անշնորհք հրամաններով սպանել են զինվորների հավաքը դեպի կառավարությունը»:

2.—Բուրժուական «Հայ ժողովրդական կուսակցության» կենտրոնական որդան «Ժողովուրդ»-ը կոչ ե անում ոժանդակել կառավարությանը՝ ներքին ֆրոնտն ամրապնդելու համար:

2.—Վեդիի ըրջանի Ալշար գյուղից, դիմում են կառավարությանը, Հայտնելով, թե «իրենք սնվում են միայն կորեկով և մահացության դեպքերը շատացել են»:

2.—Եջմիածնի զավառում մասսայական դժուհություններ են առաջ դալիս «Հողալին հատուկ մարմնի» դեմ:

3.—Յերկանում սովորականության դու են գնում 28 հոգի:

3.—Շարունակվում են քաղաքացիական կոիլները Զանգեղում:

3.—Ալեքսանդրովովի Մջանում տեղի յե ունենում ուժեղ թնդանոթաձություն, քաղաքացին ինքնավարությունը և քաղաքացիական իշխանությունները խուճապի մատնած թողնում են քաղական իշխանությունները:

3.—Բանվորները մասսայորեն «Լքում են» աշխատանքը: Հազորդակցության մինիստրն իր համանում դրում ե. «Հրամայում եմ, վոր այսորվանից բոլոր ծառայողներն ու բանվորներն անցնեն գործի... Հրամանին չենթարկվողները, իբրև հայրենիքի դավաճաններ, անինա կդնդակահարվեն»:

4.—Որինադիմ և ընդունվում պառլամենտի նիստերը դադարեցնելու մասին: Այդ առթիվ պատղամավոր Գ. Քալաշյանն ու բնական հանձնաժողովի կողմից զեկուցում և պառլամենտին հետեւյալը. «Պարոնայք պատղամավորներ, մայիսյան դեպարտին, յերբ յերկրու ներքին խոռվությունների թատերաբնակը, պարագաները, վորպեսի դրանով հնարավորություն տա կառավարությանը՝ մինելու արագաշարժ և ավելի վճռական, իսկ պատղամավորներին ցրվելու դավանաները... Այժմ մեր յերկրի պայմանագրին մի նոր փոթորիկ ու ներքին կազությունն այնպիսի պայմանների մեջ դրվեց, վոր խաղաղ աշխատանքն այլևս պարագաների անհնարին:

5.—Ռուբեն Փաշան Ալեքսանդրովովից վարչապետ Ռհանջանյանին գրում ե. «Մեր զորքերը չեն կամենում կովկել, ուզում են հաշտություն: Այս պայմաններում անհնարին և շարունակել պատերազմը»:

5.—Ռուբերը գրավեցին Ալեքսանդրովը:

5.—Արագմաճակատից գեներալ Սիլիկովը հաղորդում ե կառավարությանը. «Զորամասերն ինքնակամ թողնում են ուզումաճակատը և խմբերով զասալքում են. նույնիսկ չեն կատարում իրենց անմիջական պետերի համանները. լքումն ու կազմալուծումը զարգանում են արագ տեմպով»:

5.—Շիրակի միքանի վայրերում տեղի յեն ունենում գյուղացիական ակտիվ յելույթներ, փորձելով Հայտարարել Խորհրդական իշխանություն:

5.—Ալեքսանդրովովի բանտից ազատվեցին բոլշևիկները: Նրանք հրապարակեցին «Հայաստանի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին» ուղղված մի կոչ, վորի մեջ ասում է յին. «Ալերգած ժողովրդի բռնկվող զայրությոց ազատվելու համար՝ դաշնակցական շեֆերը՝ զցելով ձեզ կրակի, արյան և Հուսահատության մեջ խախտակ փախուստի դիմեցին: Մենք, Հայա-

տանի կոմունիստներս, խոստանում ենք մեր կողմից ամեն միշտ ջոց գործադրել փրկերու Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին զաշնակցության ստեղծած այս գժոխային դրությունից։ Ողնեցեք մեզ, մասցեք հանդիսա, մի յենթարկվեք խմբապետական կառավարության պրովիլացիաներին»։

5.—Քաղաքացիական կրիմներ Զանդեղուրում՝ տեղական բոլչեկների, վերջններիս ոգնող կարմիր բանակի և խմբապետ Նժդեհի միջև։

6.—Հայ-թուրքական զորահրամանատարների միջև կնքմեց ժամանակավոր զինադարձը, վորի հիման վրա թուրքերը գրավեցին Ալեքսանդրոպոլի բերդը և կայարանը՝ 10 կիլոմետր շրջագծով։

6.—Դաշնակ-խմբապետական կառավարությունը, նկատի ունենալով ոպղմական մինիստրի և հրամանատարության պատճառաբանությունները՝ «զորքի լքման», «ճակատի թուրացման» մասին, բանակի հակապետական տրամադրությունները, վորոշեց ընդունել կարաբեքիր վաշշայի հետեւյալ առաջարկը։ «Հայ-կական զորքերը պետք ե դատարկեն Ալեքսովլը և նրա բերդերն ու կայարանը, վորոնք պիտի գրավիլն թուրք զորքերի կողմից։ Հայկական զորքերը պարտավոր են 10—15 կիլոմետր շրջագծով հեռանալ Ալեքսանդրոպոլ քաղաքից» և այլն։

6.—Շիրակի գյուղացիությունը շատ տեղերում հայտարարում և Խորհրդային իշխանություն։

6.—Քյավթառույի շրջանի գյուղացիները, վորոնք ակտիվ կերպով մասնակցել ելին մայիսյան շարժումներին, հայտարարում են «Խորհրդային իշխանություն»։

7.—Գյուղացիական ապստամբություն Աղքարայի թրքական գյուղերում։

7.—Կառավարությունը հայտարարում է Յերևանի դպրոցների 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ դասարանների աշակերտների պարտադիր զորահավաք։ Ծառայության կանչված աշակերտները պետք ե սպառեն և ապրեն իրենց բնակարաններում։

7.—Յերևան քաղաքի ինքնապաշտպանության համար գենքի տակ են կանչվում մինչև 55 տարեկանները։

8.—Կորիմներ Շարուրում (Վոլչիե-Վորոտա), Սուրմալվում (Որդով) և այլն։

8.—Խախտվում են զինադարի պայմանները. թուրքերն առաջարկում են զինադարի նոր պայմաններ։

8.—Ղարաբեկիսայի և Սանահնի շրջանի բնակչությունը, ինչպես և գաղթականությունն ըմբոստանում են դաշնակցական կառավարության դեմ։

8.—Եջմիածնի գալառում դասավիճներ հայաքելու պատըրվակով միլիցիոնները կատարում են մի շաբ բռնադրություններ ու թալաններ։

8.—«Հայաստանի ձայն» (ռամկավարների որդան) թերթը յերկում իշխող խուճապի մասին «Զգորացնեք խուճապը» խթմագրականում գրում ե. «Վերջին որերու ընթացքին մեր բանակի կրած կարդ մը անհաջողությունները ժողովրդի լայն խափերի մեջ առաջ բերած անդամական տրամադրություն... ժողովրդի վարի խավերու մեջ խուճապային տրամադրության ուժեղացումը հասկանալի յե. բայց նույնպիսի խուճապային տրամադրություն կա կառավարական շրջաններում»։

9.—Ռւլուխանուրու կայարանում կուտակված գաղթականությունը հակակառավարական ցույցեր կազմակերեց։

10.—Քաղաքային ինքնավարության արտակարգ նիստում պարհավորման բաժնի վարիչ Ալ. Շարաֆյանը զեկուցում ե, վոր «քաղաքային վարչությունը հաղիկ յերկու որվա հաց ունի բաժանելու քաղաքի աղքարնակչությանը»։

10.—Հեղափոխական բոնկումների անխուսափելիության և յերկրի կատասարության հետեւանքով արտասահման մեկնեցին իտալական միսիայի ներկայացուցիչ Մարկիլ Նիկոլա Պը Ալբեցին։ Լոնդոնի Լորդ Մերլի կոմիտեի ներկայացուցիչներ Հարբորդ և Բրաոն ու Վրանդելի ներկայացուցիչ Զինկելիշն իրենց աշխատակիցներով։

10.—Արարանից տեղեկացնում են մինիստր-նախագահ Ոհան-ջանյանին, վոր Արարանի վրայով գեպի Արարատյան դաշտն և շարժվում հսկայական թիվով գաղթականություն, վորն իր հետ բերում է 1918 թ. սովոր ու հիվանդությունները։ Մեծ չափերի յե հասել նաև դասալքությունը զորքի մեջ։

10.—Նոր-Բայազետի շրջանում շարունակվում են հակակառավարական գործողություններ։ Կոմոնիստների ու աշխատավոր գյուղացիների մասսայական ձերբակալություններ են տեղի ունենում Նոր-Բայազետում և շրջակա գյուղերում։

12.—Կորիմներ «Վոլչիյե Վորոտայի» կողմերը։

12.—Պատերազմական գործողությունները ծավալվում են Շարուրի և Դարալագյաղի ուղղությամբ, Դանչիկ գյուղն ավերվում է։

12.—Ռազմական գործողություններ Բասարգեչարի թուրքական շրջաններում։ Թուրքական Զոդ գյուղն ավերվում է։

12.—Կառավարությունը նոր թափով սկսում է բռնադրավուները, այսպես, Կոտայքի գյուղացիությունից բռնադրավում է 1000 փութ ցորեն, 2000 փութ դարի, Հրազդանից՝ 500 փութ ցորեն։ Բռնադրավուներ կատարվում են նաև մյուս շրջաններում։

13.—Ընկ. Զիչերինը գիմեց Անգորայի կառավարությանը. «Խորհրդային կառավարությունը հարոնում է, ձեզ, վոր համաձայն է իր ներկայացուցիչ ընկ. Մդիվանուն ուղարկել ձեզ մոտ՝ Անդորրայի կառավարության և Հայաստանի կառավարության մի-

շև տեղի ունեցող պատերազմական գործողություններին վերջ տալու և հաշտեցնելու համար»:

13.—Հաղորդակցության նախարարին զեկուցում են յերկաթսուղում տիրող անիշխանության մասին, ինչպես և բանվորների հակապետական գործունեյության, բոլչելիկ առարկերի քայլքայիչ աշխատանքների մասին, պահանջելով վճռական և ամենախիստ միջոցները ձեռք առնել այդ բոլորի դեմ:

13.—«Հառաջ» թերթի հոդվածադրերից մեկը հետևյալ կերպ է նկարագրում գաղթականության դրությունը. «Տեսա ընտանիքներ, վորոնք իրենց հետ բերած ամանների մեջ պատրաստում ենին կերակուր, վորի մեջ վոչ մի բան չեր նկատվում, բացի ցեխախառն ջրից, միքանիսն ունելին դարու ալուր, վորը շաղախում ելին տաք ջրով և այնպես ուտում, շատերը փողոցներից և շրջակա բանջարանոցներից հավաքել ելին կազմմի փոտած կանաչավուն տերեները, վորոնց վրա հոդվախառն աղ լցնելով, ուտում ելին, միքանիսը, վորոնք հնարավորություն ունելին կրակ անելու, այդ տերենները խաշում ելին և այնպես ուտում»:

13.—Տեղի ունեցալ դաշնակցության պառամենտի արտակարդ նիստը:

14.—Բնադրավումների պատճառով Արարանի շրջանում եքսցեններ են տեղի ունենում խմբապետների և դուղացիների միջև, սպանվում և մի խմբապետ և վիրավորվում են միքանի գյուղացիներ:

15.—Նոր-Բայաղետից հեռագրում են. «Ակտիվորեն աշխատում են մեծամանականները, յեթե միջոցներ ձեռք չառնեք դավառ կորած կլինի Հայաստանի համար»:

15.—Աշտարակից տեղեկացնում են Արարատյան նահանգապետին, վոր Աշտարակ—Յերևան խօսուդու վրա գոյություն ունեցող ավաղակությունները, մարզապանությունները խոչընծավալ ու սարսափելի բնույթ են ստացել:

15.—Տաճկական գորքերը գրավում են Զաջուռ լեռնանցքը, և դաշնակ դորքերը հետ են քաշում դեպի Համամլու դյուզը:

15.—Շարուր-Դարալազյաղի ֆրոնտում ամբողջ որը կոիմներ են տեղի ունենում:

16.—Հաղորդակցության նախարարությանը հեռագրում են, վոր «յերկաթքի ամբողջ յերկարությամբ մեծամանականների կողմից խոչընող պրոպագանդ և տեղի ունենում, բանվորներն ամբողջովին վարակվել են և կաղմակերպում են հակապետական յելույթներ»:

16.—Ներքին գործոց մինիստրությանը հեռագրում են, վոր գավառում տիրում և անիշխանություն, դյուզացիության մեջ նկատվում են հակապետական խմբումներ:

16.—Շարուրի Փրոնտից գեներալ Շելկովնիկովը զեկուցում է. «Զինվորները բոլորովին չեն կովում և ամբողջ վաշտերով

շիախուսափի յեն զիմում՝ թշնամու հեծելագնդերի՝ լյուիսի գընդացիրներով և կարմիր դրոշակներով փոքր խմբեր յերկարուն պես»:

17.—Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Խատիսյանը համում և թիֆլիս և տեսակցություն և ունենում գաշնակից պետությունների ներկայացուցիչների հետ, վորոնք և խորհուրդ են տալիս «լավ և հաշտվել թուրքերի հետ, քան թե սովորականների»:

17.—Ներքին գործոց մինիստրը գավառական իշխանություններին կարգադրում և, վորակեսից «հուսալի տարրերից կազմեն կամաց վորական խմբեր և ձնշեն ամեն մի հակապետական յելույթ»:

17.—Գեներալ Շելկովնիկովն Ավշար գյուղից հաղորդում և. «Մակեդոնը զեկուցում և անձամբ, վոր յերկրորդ զնդի զինվորները խոսքի բռնվելով իր ձիավորների հետ, հայտնել են, թե իրենք չափակ կովեն, վորովհետեւ նրանց դեմ կանգնած են ուսուբուժները և թե նրանք նույնիսկ ագիտացիա յեն արել իր (Մակեդոնի) ձիավորների մեջ»:

17.—«Հառաջ»-ում լույս և տեսնում ՌՍՖՌՀ ներկայացուցչության տեղակատու բյուրոյի նամակը խմբագրության, վորակեղ, հակառակ դաշնակ տղերքի հավաստիացումներին, փաստերով ցույց և տրվում դաշնակցական հառավարության բանտերի գժոխային դրությունը, նրանց մեջ գտնվող բազմաթիվ կոմունիստների սոսկալի կացությունը, վորոնք պահպան են քաղցած, խոնավ ու մութ կամերաներում, ծեծի ու բռնության պայմաններում և այլն:

18.—Դաշնակցական կառավարությունը համաձայնում և թուրքական առաջարկներին, և կնքվում և նոր զինադադար:

18.—Ներքին գործոց մինիստրությունը հաղորդում են Թեշիշքենդից, վոր Սիսիանում բոլչեկիները գյուղացիական շարժման գլուխ անցնելով, ընդհարումներ են ունեցել կառավարական զորքերի հետ: Դարալազյաղի գյուղերից աղմինիստրացիան փախել և Քեշիչքենդ:

18.—Նոր-Բայաղետից հեռագրում են, վոր միքանի գյուղերում գյուղացիները դուրս են քչել կառավարական կոմիսարներին ու դաշնակցական լիազորներին:

19.—Սկսվում և դաշնակցական կառավարության կողմից ղենքերի և ռազմամթերքների հանձնումը թուրքական կառավարությանը:

19.—Բաղաքացիական ուժեղ կոխվներ Զանդեղուրում:

19.—Ախուայից հեռագրում են, վոր շրջանում ընդհարումներ են տեղի ունեցել զաշնակցության և գյուղացիության միջև: Միքանի գյուղերից քչել են դաշնակցական կոմիսարներին:

19.—Դիլիջանից հեռագրում են. «Հակապետական» շարժման ներք վերջերս ավելի ուժեղացել են. գյուղացիները հետու-

թյամբ յենթարկվում են բոլշևիկների պրոպագանդին և չեն յենթարկվում մեր ներկայացուցիչներին:

20.—Դաշնակցական կառավարությունը Յերևանի բանտիք ետապով Ախտա աքսորեց 18 կոմունիտաների:

20.—Հայաստանի մերթերն սկսում են փոխել իրենց վերաբերմունքն ու տոնը թուրքական կառավարության հանդեպ: «Հառաջ» թերթն իր «Հաշտության խնդիրը և մեր որինատացիան» խմբագրականում դրում է. «Իր փրկության համար Հայաստանն ունի միայն մի ճանապարհ, անմիջական կերպով մի ընդհանուր լեզու գտնել հարեան թուրքի հետ: Յեթե հայ ժողովուրդը կամ ենում և ապահովել իր պետական ու ֆիզիկական գոյությունը հարատեղորին՝ նա պետք է ունենա վոչ թե ուստական, այլ թուրքական որինատացիա»:

21.—Ակավում և կառավարական ճշնաժամ, խոսվում և այն ժամին, վոր գայնակցական կառավարության մի շարք պատասխանառու պաշտոնյաներ քաղաքը թողել ու փախել են:

22.—Ներքին դործոց մինիստրը տեղեկացնում է վարչապետին բոլշևիկների դործունելության աշխուժացման մասին: «Դրությունը կրիտիկական ե»՝ վերջացնում և մինիստրն իր զեկուցումը:

22.—Զանդիրասարի շրջանում ապրող գաղթականությունն իր ներկայացուցիչների միջոցով զայրույթով լի բողոքագիր և ուղղում կառավարությանը:

22.—«Հայաստանի առևտրա - արդյունաբերական պալատի» № 33 առևտրական բյուլետենը շուկայում յեղած ապրանքների որչա գների մասին հաղորդում ե.

«Քարյուղ՝ փութը 120.000 ռ., լուցկի՝ հատը 250 ռ., ցորեն՝ փութը 25.000 ռ., դարի՝ փութը 15.000 ռ., սիսեռ՝ փութը 26.000 ռ., լորի՝ փութը 26.000 ռ., վոսպ՝ փութը 20.000 ռ., կարտոֆիլ՝ փութը 16.000 ռ., կազմ՝ փութը 10.000 ռ., սոխ՝ փութը 15.000 ռ., փայտ՝ փութը 5.000 ռ., ածուխ՝ փութը 18.000 ռ.» և այլն:

23.—Թուրքերի հետ հաշտություն կնքելու համար ցերեկվաժամը 2-ին Ալեքսանդրոսով մեկնեց կառավարական պատվիրակությունը՝ Ալեքսանդր Ռատիսյանի գլխավորությամբ:

23.—Գավառներում շարունակվում են դյուլացիության ահբեկումներ՝ դասալիքներ հավաքելու պատրիվակի տակ:

23.—Յերևանում կուտակված գաղթականության մեջ տեղեւնեցավ անկարություն, վորի հետեանքով 300 «անկարգ ու բժբխու» գաղթականներ փոխադրվեցին հեռավոր շրջանները:

23.—Վարչապետ Ռահնջանյանի և ռազմական նախարար Տերթինայանի ստորագրությամբ որենք և հաստարակվում քրեական Հանցագործներից զինվորական նոր ուժեր կազմակերպելու և հեղափոխական շարժումների դեմ դուրս բերելու համար:

23—24.—Տեղի ունեցան գայնակցական պատրամենուի արտա-

կարգ նիստեր: Ընդունվում ե Հ. Ռահնջանյանի կառավարության հաստարականը և հաստատվում ե կառավարություն՝ վրացյանի նախագահությամբ: Հրապարակելով իր կառավարական դեկլարացիան, Վրացյանը դաշնակցական Հայաստանում տիրության մասին, ի միջի այլոց, հաղորդում ե. «Պետության ներսի կյանքի բնականոն ընթացքը խանդարված ե: Վարչական մեքենան թուլացած ե մեծապես, Փինանսական և հաղորդակցության միջոցները՝ քայլայիլած: Արդարադատությունը՝ անհնարին վիճակում, պարենի մուտքը դրսից կանդ ե առել, իսկ ներսի աղբյուրները ցամաքում են արագությամբ: Կայտն չե և ժողովրդի հոգեկան զրությունը... Յերկիրն ապրում և ներքին ծանր տաքնապայ»:

24.—Ալեքսանդրովովից գեներալ Ախովերդովը կառավարությանը հաղորդում ե. «Փլուարի և Քյափանակ գյուղերում պարզվում են կարմիր գյուղակներ»:

25.—Զինաթթափում են գայնակցական զորամասերը՝ ռազմացիրքները թուրքերին հաճնելու համար:

25.—«Հառաջ»-ն իր «Ներքին ֆրոնտը» վերտառությունը կրող խմբադրականում դրում է. «Յերկրի կառավարությունն իր կարսոր հոգսերից մեկը պետք և դարձնի ներքին ֆրոնտի ամրապնդումը... ավելի քան նույնիսկ մայիսյան որերին, մեր կուսակցությունը պարտավոր և ուժեղ լինել ամեն մի ներքին բարդություն բնի մեջ խեղդելու համար... անհրաժեշտ ե իրաւուկացական մորիլիկացիա մեր յերկրի ներքին կարգն ու դիցություննան ապահովելու համար»:

25—26.—Յերևանում «Հակապետական տարրեր» և «Պասալիք դիմուրներ» բանելու նպատակով հաճախակի յեն զանոնում շուրջկալիները:

26.—Նոր-Բայազետի և Արարանի մի շարք գյուղերում հակակառավարական խոչոր ընդհարությունը են տեղի ունենում հոգային Հարցերի շուրջը:

26.—Դաշնակցական կառավարության կազմում խիստ խուճապային դրություն և տիրում: Կառավարության շատ անդամներ իրենց կաշին գրեկելու համար հաստարվում են կառավարական կազմից և փախչում Յերևանից: Այսպես, որինակ, Հրաժարական են ներկայացնում խնամատարության նախարար Ռ. Քաջըրերունին, Փինանսների նախարարի ոգնական Շաթիրյանը և այլն:

27.—Եիրակում, Նոր-Բայազետում, Եջմիածնում և մանավային Դիլիջան-Խջևանում գյուղացիական խովություններ ու մասսայական յերայթներ են տեղի ունենում: Դիլիջանի ու Ղաղաբ-Շամշադինի գյուղացիական-Հեղափոխական շարժումների մասին տեղի իշխանությունները Գեռագրում են ներքին դործոց մինիստրին: Ի պատասխան այդ հեռագրի՝ կառավարությունն առաջարկում և այդ ժամանակ Դիլիջանում դանդող խմբադրել Սեպուհին՝ վոչ միջոցի առաջ կանգ չառնել՝ հեղափոխական

շարժումներն իրենց բնում անողոք կերպով խեղդելու համար։  
27.—Նոր-Բայազետում, Եջմիածնում բանտարկվում են ժիշտարք մարդիկ՝ բոլցելիյան աշխատանք կատարելու, մասսաներին հեղափոխական կոչ անելու պատճառով։

27.—Յերկաթդի բանվարության մեջ կատարվում են բանտարկություններ։

27.—Գավառներից ստացվող «գլուխիչ» լուրերի հետևանքով՝ Յերևանում դրությունն ել ամենի յեւ լարվում։ Խուճապն ամենի յեւ սաստկանում։ Կառավարությունը գլուխը կորցրել ե և ընդհանուր տպավորությունն այն ե, վոր կարծես թե կառավարություն գոյություն չունի։

27—28.—Ներքին գործոց նախարարի ողնական Քրմոյանը հափշտակում ե 170 միլիոն չեկ, 1500 ճատկական լիրա թղթադրամ, պետական բանկից հանրային կրթության նախարար Գ. Ղազարյանը հափշտակում ե 5000 դոլար վոսկով, 150 միլիոն ուռելու թղթադրամ չեկ, խոչըր գումարներ են հափշտակում դաշնակցական մյուս գործիչները, վորոնց գեմ միայն Հայաստանի Հեղկոմը և ՀՍԽՀ պետական վերահսկողությունը հետագայում գործ բաց արին։

28.—Մարտապետ Սեպուհը Դիլիջանից ուղիղ հեռագրով հազորում ե Յերևան, զորահրամանատարին։

«Այս բովելիս, —զեկուցում ե խմբակետը, —կապիտան Խաչատրյանը հաղորդում ե, վոր յերկորդ, վեցերորդ և առաջին սաղմա-միլիոնի վաշտը լրել են դիրքերը և ցրվել առն։ Այսոր թողել են և գնացել նաև հինգերորդ և յերրորդ վաշտերը։ Պահատում (գիրքերի վրա) մնում ե չորրորդ վաշտը, վորի վրա հույս դնել չեմ կարող։ Հայտնում ե, վոր դասավեճները փախչեմ, գյուղերում հայտարարում են իրենց կառավարությունը։ Շրջանում աղմինիստրացիան իշխանություն չունի։ Ճանապարհները կարված են և վնասված։ Բայականաշախ ուժ չունենալով, չեմ կարող համապատասխան միջոցների դիմել։ Կապիտան Խաչատրյանը կեկուցում ե, վոր Գրոնտը միանգամայն բաց և մնացել։ Պրովոկացիան և ադխոտացիան մեծ չափեր են ընդունել։ Պահանջվում ե լուրջ միջոցների դիմել դասավեճությունը վերացնելու համար։ Ներկայիս այդ շրջանը յենթարկվում ե գեներալ Խանկալամովի զորաբաժնին։ Իմ կողմից վոչինչ ձեռնարկել չեմ կարող, մանավանդ, վոր կապիտան Խաչատրյանը դրսությունը վերականգնելու համար պահանջում ե 300 ձիավոր, 2 թնդանոթ և գնդացիներ։»

28.—Շրջաններում և գյուղերում նստած գաշնակցական խրմերը, վորոնք կերակրվում ենին գյուղացիության հաշվին, կատարում են միաժամանակ թաղան, բռնություն և դադանություններ։ Այդ մասին «Հառաջ»-ի Եջմիածնի թղթակիցը գրում ե։ «Զինված խմբերի գյուղերում մնալը ծանրանում ե գյուղացիների վրա»։ Ապա հարավերելով կառավարության ուշադրությու-

նը, թղթակիցն առում ե, վոր այդպես շարունակել անհնար ե, ողեաք և վերջ տալ այդ գրության։

29.—Ապատամբ գյուղացիները և զինվորները բոլցելիների դեկավարությամբ գրավեցին Քարվանսարայը։

29.—Ղագախի ապատամբությունը հնչելու նպատակով, խրմ-բապետ Սեպուհը հեռագրում ե Յերևան՝ կառավարությանը. «Յեթէ կառավարությունը թույլ տա ինձ, թնդանոթներով անմիջապես 300 ձիավոր կուղարկեմ այնտեղ կարգը վերականգնեմ համար։ Ներկայիս հնարավոր եմ համարում ձիավորներ ուղարկելու այնտեղ, վորովհետեւ մինչև զինադադարի վերջը դեռ ժամանակ կա։ Յեթէ միջոցների չգիմենք, նրանց գործողությունները կանդրադառնան այստեղի զորամասերի վրա»։

29.—Հեղափոխական զորամասերը շարժվում են զեպի Դիլիջան։ Աղբաբնակը չունությունն ամենուրեք նրանց ընդունում ե խանդամառությամբ։

29.—Իջևանում սազմա-հեղափոխական կոմիտեն, կոմիտեյի նախագահ Կասյանի և անդամներ Ավետիք, Բեգզադյանի, Դոլլաթյանի, Մոավյանի ու Ս. Տեր-Գարբիի լյանի սաորագրություններով հրապարակում ե իր գեկլարացիան, վորով Հայաստանում հայտարարվում ե Խորհրդային իշխանություն և դաշնակցական իշխանությունը տապալված։

30.—Հայաստանում Խորհրդային իշխանությունը հաստանելու մասին Հայաստանի Հեղիոմի անդամների ստորագրությամբ հեռադիր ե ուղարկվում ընկ. Լենինին։

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

2.—Յերևան են մտնում ապատամբ կարմիր զորամասերը և կարմիր բանակի 11-րդ գունդը։ Քանաքեռի ճանապարհին և քաղաքի մուտքի մոտ բանվորական ու աշխատավորական բաղմաղաք մասսաները ցնծությամբ վողջունում են աղատարար բանակի գալուստը։ Յերեկոյան քաղաքացին այդու մոտ միտինդ և տեղի ունենում։ Կոմունիստական կուսակցության կողմից բանակին վողջունում ե դաշնակցական բանտից նոր աղատված, կուսակցության Յերևանի կոմիտեյի քարտուղար ընկ. Աղասի Խանջյանը։

— Յերևան են վերադառնում դաշնակցական կառավարության կողմից Ախտարում բանտարկված բոլցելիներից 18 հոգի։ Յերևանի կենորունական բանտից աղատվում են դաշնակցական կառավարության որով բանտարկված կոմունիստները։

— Հայաստանի Խորհրդայնացման առթիվ ընկ. Լենինը Հայաստանի Հեղափոխական կոմիտեյին վողջունի հեռագիր և ուղարկում։

3.—Իջևանում աեղի յեւ ունենում աշխատավոր գյուղացիա-թյան բաղմամարդ միտինդ։ Միտինդն ընդունիված բանում է

իրենց տրամադրում և Հայաստանի Հեղկոմին՝ հակահեղափոխության դեմ կռվելու համար:

5.—Աւելքսանդրոսովի Զեղոք գոտին (Հաջի Խալիլի յենթաշըշան) ուղարկված ընկերները, կոմունիստական կուսացության Կոմիտեյի համանդների համաձայն, զինաթափ արին Զեղոք-գոտում կուսակիված զաշնակցական ուժերին ու Բաշքենդի դաշնակցական պահակախմբին:

— Յերեանում սկսվեց լույս տեսնել Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական Կոմիտեյի որդան «Կոմունիստ» որաթերթը:

6.—Հայաստանի Հեղկոմի № 3 հրամանով կազմակերպվեց Արարատյան նահանգի ժամանակավոր ռազմա-հեղափոխական կոմիտե (Հեղկոմ):

— Դեկտեմ հրապարակվեց Կարմիր բանակ կազմակերպելու մասին:

— Հայաստանի Հեղկոմի № 5 հրամանով հակահեղափոխության դեմ կռվելու համար կազմակերպվեց Արտակարդ հանձնաժողով:

— Յերեանում տեղի ունեցավ բանվորների, դինվորների և աշխատավորության բաղմանարդ միտինդ: Միտինդը Խորհրդավին Հայաստանի ամբազնդման և շինարար աշխատանքի անցնելու մասին հեռազիր ուղարկեց Լենինին, Ռուսաստանի Կոմունիստական (թ) Կուսակցության կենտրոնական Կոմիտեյին, Կոմունիստական ինտերնացիոնալի նախագահությանը և Ադրբեջանի Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի նախագահ Նարիմանովին:

— Խորհրդավին Հայաստանի Հեղկոմի № 4 հրամանով Հայաստանի հանրապետության սահմաններում պետական լեզուն հանաչվեց Հայերեն, իսկ թրքական շրջաններում՝ Հայերենին կից՝ նաև թուրքերենը:

— Հայաստանի Հեղկոմի № 2 հրամանով Նոր-Բայազետում կազմակերպվեց ժամանակավոր ռազմա-հեղափոխական կոմիտե (Հեղկոմ):

— Արարատյան նահանգի Հեղկոմը հրապարակեց № 2 հրամանը, ուր ասված ե, թե պրովոկատորները, թալանչիներն ու թալանի կոչողները, քաղաքի հանդիսատ կյանքը վրդովողները՝ կդատին հեղափոխական ժամանակների ամենախիստ որենքներով:

7.—«Կոմունիստ»-ում հրապարակվեց Ադրբեջանի Հեղկոմի յողջույնի հեռագիրը՝ Հայաստանի խորհրդայնացման առթիվ: Ադրբեջանի և Հայաստանի խորհրդայնացման ակտերով լուծված համարելով յերայրական կոիմերը, Ադրբեջանի Հեղկոմը կոչ և անում աշխատավորությանը՝ յերգայրական ոժանդակությամբ վերաշնել մուսավաթական և դաշնակցական կառավարությունների կողմից ավերված յերկիրները:

— «Կոմունիստ»-ի № 2-ում հրապարակվեց Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Հեղափոխական Կոմիտեյի կոչը՝ ուղղված Հայաստանի աշխատավորությանը՝ շնարար աշխատանքի անցնելու և հակահեղափոխության դեմ՝ կատաղի պայքար մղելու մասին:

— Յերեանում, ալտո-դարածի և փոստ-հեռադրական բանվոր-ծառայողների ընդհանուր ժողովում քաղաքական ընթացիկ մոմենտին նվիրված զեկուցումով հանդես յեկավ ընկ. Ազատի մանջանը: Ընդունված բանաձևում բանվորներն ու ծառայողները գործում են, վոր իրենց բովանդակակ ուժը տրամադրում են դրբան կարգավորությանը և խոստանում են մինչև արյան Խորհրդավին իշխանությանը և խոստանում են մինչև արյան վերջին կաթիլը կռվել կոմունիզմի և բանվոր գասակարգի բոլոր թշնամիների դեմ:

— «Կոմունիստ»-ում հրապարակվեց Վաղարշապատի կայա- հեռագիրը՝ ժողովրդի միտինդի բանաձևը, վորի մեջ ասված երգորի և ժողովրդի միտինդի բանաձևը, վորի մեջ Խորհրդավին Հայաստանի «Յերդկում» ենք Հավատարիմ լինել Խորհրդավին Հայաստանի հանրապետությանը և աչալուրջ հոկել հեղափոխության ու նրա նվաճումներին»:

— «Կոմունիստ»-ում հրապարակվեց Հայաստանի Հեղկոմի Հեղափոխական կոմիտեյի կոմիտարիմ և սուլդատականի Հեղկոմի նախագահ Նարիման Դաշտիրի:

«Մենք համոզված ենք, — ասված է հեռագրի մեջ, — վոր մեր հարեւան դաշնակից Սոցիալիստական Խորհրդավային Ադրբեջանը, հարեւան դաշնակից հաջակցի մեղք՝ մեր նպատակին հառարարյապես և նյութապես կաջակցի մեղք՝ մեր նպատակին հաջակցի անդամուր կազմող Հայաստանի Խորհրդավային կազմին իշխանությունն ամրապնդելու գործում»:

8.—«Կոմունիստ»-ը հաղորդում է, վոր Դիլիջանում տեղի ունեցած աշխատավորական միտինդը հավատարմության հեղափոխի և ուղարկել Հայաստանի Հեղկոմին:

9.—«Կոմունիստ»-ում տաղաքրվեց ընկ. ընկ. Որշոնիկիձեյի և կասյանի միջն ուղիղ գծով տեղի ունեցած խոսակցությունը, ուր ընկ. Ուղոնիկիձեն, ի միջն այլոց, ասաց հետևյալը.

«Թույլ տեղի մի անգամ ևս Հայտնել Խորհրդավին Հայաստանի աշխատավորությանը և կարմիր բանակին իմ յեղայրական վողջույնը և խորին համոզմունքը, վոր չնայած բոլոր դժվարություններին, յերիտասարդ բանվորա-դյուղացիական Հայաստանի հաղորդող դուրս կդա աշխատավորական յերգանիկ կյանքի չի- նարարության փառավոր հանապարհին: Թող Հայաստանի բանակուներն ու դյուղացիներն իմանան, վոր Խորհրդավային Ռուսաստանի ամբողջ ուժն ու յեռանդը արամադրված ե Խորհրդավային Հայաստանին ծառայելու, վոր Ռուսաստանի բանվորությունը հակածիր բանակին իրենց հացի խղճուկ պահարը կրածանեն Հայաստանի բանվորների և գյուղացիների հետ:

Գործի անցեք լի յեռանդով և հավատուի դեպի սուրբ դորձը...»:

10.—«Կոմունիստ»—ում հրապարակվեց Ուլուսանը՝ յենթա-  
շրջանի թուրք աշխատավորության հեռագիրը՝ Հայաստանի Հեղ-  
կոմին։ Թուրք աշխատավորությունն այդ հեռագրով իր նող-  
կանքն ե Հայոնում դաշնակների տիրապետության նկատմամբ և  
խոստանում ե իր ուժերը դնել Հայաստանի Հեղկոմի տրամա-  
դրության տակ և «իր յեղբայրական ձեռքը մեկնելով հայ դյու-  
զացուն ու բանվորին, ծաղկեցնել Ասրհեղային հայրենիք Հա-  
յաստանը»։

— «Կոմունիստ»-ում հրապարակվեց «Մուսայելյան» գրահա-  
պատի անձնակազմի Հռոադիրը, վորով մայիսյան ապստամբու-  
թյան մարտերում հեղափոխական առաջավոր դիրքերում կավող  
զրահապատի անձնակազմն իր ուժերը արտամադրում և չայտո-  
ւանի Հեղիսօնին:

— «Կոմունիստ»-ը ում հրապարակվեց 11-րդ կարմիր բանակի հրամանատարության և Ռազմա-հեղափոխական Խորհրդի անդամ Միխայելովսկու հեռագիրը Հայաստանի կարմիր բանակին։ Հեռադրի մեջ ասված ե, վոր քաղաքացիական կորիների բովով անցած 11-րդ բանակը, Հայաստանի կարմիր բանակի հետ ձեռք ձեռքի տված կպաշտպանի Խորհրդային Հայաստանը։

11.—Ոչականում և Աշխարհակալում տեղի ունեցան աշխատավորության միտինգներ, ուր աշխատավորները լսելով Կարմիր բանակի և նրա պարենավորման անհրաժեշտության մասին՝ խանդավառությամբ սայլեր և մթերք տրամադրեցին Կարմիր բանակին:

12.—Նկատի ունենալով յերկաթուղարին յերթևեկության անմիջական պահանջմանը և յենենալով այն վերականգնելու անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հեղիոմի հրապարակած դեկրետով յերկաթուղիները հայտարարվեցին զինվորական գրության մեջ։  
Կոմունիստական խոտերնացիոնալի Գործադիր կոմիտեն փողությունի հեռադիր ուղարկեց Հայաստանի աշխատավորությանը՝ Հայաստանի խորհրդայնագրման առթիվ։

13.—Հեղիսոմը դեկրետ հրապարակեց՝ Ներքին Գործերի Ժողովրդական կոմիսարիատ կազմակերպելու մասին:

— Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի № 3 հրամանով վերացվեցին նահանգապետությունները, քաղաքային ինքնակարությունները, նախկին ներքին գործոց նախարարության արտակարգ մագորիները, միլիցիայի անսուժները, նահանգական ատյանները, հանրապետական միլիցիայի պահեստոր։

— Բաղվից հեռագրում են, յոր Աղմտափայից Հայաստան եւ ուղարկված 10 վագոն ցորեն, Վրաստանի վրայով ևս ուղարկված 25 վագոն ցորեն, 5 վագոն դարի և 5 մատոն նաև 10.

14.—*Բացլեց Դարձագլացի աշխատավորությունը*

Համարակալիքի աշխատավորության համագումարը, պարզ մշակեց Խորհրդավային իշխանության շինարարական աշխատանքի ծրագիրը։ Ըստում առաջարկված է աշխատավորության համագումարը, պարզ մշակեց Խորհրդավային իշխանության շինարարական

15.—ՀԱԽՀ ՀԵՂԿՈՒՄ պարենալորման գործը կենտրոնացնե-

լու համար հրապարակեց իր № 11 գեղրետը՝ Պարենավորման Հայուսական Կոժիասրիատ կազմակերպելու մասին:

— Նույն որը տեղի ունեցավ «Արարատ» գործարանի բան-  
վորների յերկրորդ ընդհանուր ժողովը, վոր զբաղվեց արտա-  
գրողականության բարձրացման, Խորհրդային իշխանությանն ո-  
ժամկետ և կարմիր պլոտֆմիություն կազմակերպելու հար-  
ցելով։

— Յերևանում տեղի ունեցավ «Արամազդ» կուսական օր՝ խոտանդործաբանի բանվորների բազմամարդ ժողովը։ Ժողովի բանաձեռի մեջ ասված է. «Մենք, «Արամազդ» ծխախոտագործաբաններ, մեր վիճակի տնորինողը դառնալով և գիտակցելով այս, վոր Խորհրդադաշին կշխանաւթյան ամբազնդումն ու հաղթանակն ամենից առաջ մեզանից և կախված, պատրաստ ենք այսուհետև կրկնակի յեռանդով աշխատել և չխնայել մեր ուժերը կոմունիզմի ներքին և արտաքին թշնամիների դեմ կովետությամբ»։

16.—ՀՍԽՀ Սոցիալիստական Ազգահռվադրության ժողովրդական կոմիսարիատը հրապարակեց № 4 հրամանը՝ հակածեզափոխությունից հալածվածներին նյութական ոժանդակություն տույց տալու և այդ նպատակով գավառական հեղկոմներին կից սոցիալական ազգահռվադրության բաժիններ կազմակերպելու մասին:

— Տեղի ունեցավ ռազիո-կայանի կոմունիստանիր. ԵՐԵՎԱՆԻ ՊԱՆՐԱԳ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ժողովում հանդես յեկավ Աղասի Խանջյանը՝ «ՄԵՐ ԿՈՒՆԱԿԳՈՎԹՅԱՆ անցյած ուղին» զեկուցումով։ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ կառավարությանը և կունակգովթյան կենտրոնին խոստում տվեց աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել, խստագույն կարգապահություն հաստատել և բանվորա-գյուղացիական կառավարությանն ամեն կերպ ոժանդակել։

— Հկ(բ)կ կենտրոնական կոմիտեյի նախաձեռնությամբ Յերևանում աեղի ունեցավ թուրք ազգարնակության միտինդ Միտինդը թուրք աշխատավորության անոնից հայտարարեց վոր իր ուժերը կդնի Հեղլիսմի տրամադրության տակ՝ հակածեղափոխության դեմ կռվելու համար :

— Հեղկոմի կարգադրությամբ պետականացված Շուստառվի էլեկտրոկայանն անցավ Փոստ-Հեռազբական Կոմիսարիատի իրավասության տակ:

— Նկատի ունենալով, վոր ՀՍԽՀ փոստը, հեռադիրը և հեռախոսը գտնվում են քայլայված դրության մեջ, ՀՍԽՀ Հեղկոմը դեկրետ հրատարակեց վիստ-Հեռադիրը և հեռախոսը զինվորական դրության մեջ մտցնելու մասին:

— Հրապարակվեց ՀՍԽՀ Պարգողկոմատի № 3 հրամանը, ըստ վորի Հայտատանի նախկին կոոպերատիվների միության՝ «Հայկոմպի» կազմը համարվում և Սոցիալիստական Խորհրդային Հայտատանի Հանրապետության իրավակարգին անհամապատասխան և հայտարարում է լուծված: Հրամանով կազմից ժամանակավոր վարչություն և Հայկոմպի գույքը հանձնվեց այդ վարչությանը:

— Հեղկոմի դեկրետով բոլոր կուլտուր-կրթական և դպրոցական հաստատությունները վերակազմվում, պետականացվում և ամրող կայքով անցնում են նոր կազմակերպված Խուսավորության ժողովրդական Կոմիսարիատի արամագրության տակ:

— ՀՍԽՀ Հեղկոմը դեկրետ հրապարակեց՝ վանքապատկան և յեկեցական հաստատությունները պահպանող կուլտուր-կրթական հիմնարկությունների պետականացման մասին:

— Բազվից ժամը 4-ին դեպի Հայտատան ուղերձից մի գնացք պարենով, յերկու մարդատար վագոններով ու նավթի 5 շիստերնով:

— «Կոմունիստ»-ը հաղորդում ե, վոր «Ներքին Ախտայի Հասարակության բազմամարդ ժողովում բանաձեռ և հանված կարմիր բանակին պարենավորելու և հակածեղափոխության դեմ կովելու մասին»: Ն. Ախտայում և շրջանի գյուղերում գյուղացիների և զինվորների տրամադրությունը շատ բարձր է: Խորհրդային իշխանության պաշտպան գյուղացիությունը տեղն ու տեղը վոչչացնում և ամեն մի հակածեղափոխական փորձ, կրովելով թալանի, գողությունների գեմ:

— Խուսավորության ժողովրդական Կոմիսարիատի № 2 հրամանով կազմակերպվեց Յերեանի համալսարանը:

— Յերեանում, նախկին պառլամենտի դահլիճում, տեղի ունեցավ կաշեղործ բանվորների բարձամարդ ժողովը՝ կարմիր պրոֆեսիոնալ միություն կազմակերպելու համար:

— «Կոմունիստ»-ը հաղորդում ե. «Զերպայի և Ալիքելու գյուղերի հասարակությունն անհուն բերկրանքով վողջունում են Կարմիր բանակին և պատրաստակամություն են հայտնում իրենց հացի չնչին պաշարը և մթերքները տրամադրել նրա կարիքներին»:

18.—ՀՍԽՀ Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատը հրաման արձակեց Հայաստանի հանրապետության սահմաններում գյուղություն ունեցող բոլոր դատական հիմնարկները լու-

ժարքի յենթարկելու մասին: Այդ հրամանով արձակվեցին նախկին դատական պաշտոնյաները, բացի քննիչներից և դիվանական ծառայություններից: Դատական բոլոր գործերը հանձնվեցին Հեղափոխական արբանալին ըստ պատշաճ ընդդատության:

— Բասարգեցարի 12-րդ գունդը լսելով նոր-Բայազետի ուղղմանը կազմում ի անդամների հայտարարությունները՝ յերկրում Խորհրդային իշխանություն հաստատելու մասին, Ավելիությացիցին դաշնակների որով Ադրբեյջանի դեմ կարմակերպված Փրոնտը և իրենց գուժերը ուրեցին Հեղկոմի տրամադրության տակ:

— Ալեքսանդրովուլում, Հանրային կրթության քաղաքային կոմիսարիատի նախաձեռնությամբ և Կոմիերիտմիության մատնակցությամբ Պոլիտոնի վորբերի մեջ կազմակերպվեցին զեկունակություններ, ցերեկույթներ, վորբերին հասարակական-քաղաքական կյանքի հետ կապելու նպատակով:

— Ռազմա-հեղափոխական Կոմիտեյի վորոշմամբ ՀՍԽՀ տերիուրիայի վրա Հակահեղափոխական վառնձգությունները ճշնդեմ համար կազմակերպվեց բարձրագույն հեղափոխական տրիբունալ:

20.—Հեղկոմը դեկրետ հրապարակեց ԽՍՖԽՀ դրամանիչները Հայաստանում գործառնության մեջ դնելու մասին:

21.—Հեղկոմը դեկրետ հրապարակեց՝ Խուսաստանի Սոցիալիստական Ֆերերատիվ Խորհրդային Հանրապետության որենսդրությունը Հայաստանում գործադրելու մասին:

— Բազվից ուղեղի հեռագույն ՀԿԿԿ ներկայացուցիչը հայնեց, վոր ՌԿ(Բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի վորոշմամբ Հայաստանի Կենտկոմի տրամադրության տակ են ուղարկվում 182 յաստանի Կենտկոմի տրամադրության տակ են ուղարկվում 182 յաստանի Կենտկոմի տրամադրության տակ են Բազու, միաժամանակ Կ(Բ)Կ Կենտրոնական Կոմիտեն Հայաստանի Կենտկոմի տրամադրության տակ են ուղարկում 300 կոմունիստների:

22.—Հեղկոմը հրաման արձակեց, վորով Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում գուստաց կայսրության հավատք որինացը» այն բոլոր դիտողություններով հանդերձ, վոր մտցրել ելին Ժամանակավոր կառավարությունը, Անդրկոմիկասյան սեյմը և Հայաստանի խորհուրդը, պառակմենտն ու կառավարությունը, վերանում ե: Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում գործող որենքները համարվում են իրացումներով ու լրացումներով, վոր կմտցնեն Հայաստանի Հեղկոմն ու այլ իրավաօւ մարմինները:

— Հրապարակվեց ՀՍԽՀ Հեղկոմի հրամանը՝ քաղաքացիական դրության ակտերի վավերացման դորձը Հոգմեոր իշխանությունից վերցնելու և Ներքին Գործերի ժողովրդական Կոմիսարիա-

տին կից Քաղաքացիական ակտերի վավերացման կենտրոնական բաժին հաստատելու մասին:

— «Կոմունիստ»-ը հաղորդում է, վոր Բեջազլու, Արտաշատ, Վերին և Ներքին Քյորքյանդ, Թափարաչ գյուղերում կազմված և վերակազմված են կուսակցական բջիջները: Հիշյալ գյուղերի աշխատավորները կարմիր բանակին պարենով և փոխադրական միջոցներով ողնելու համար չեն խնայում վոչ մի միջոց:

23.—Համառուսական խորհուրդների 8-րդ համադումարի անդրանիկ նիստում հանդես յեկավ Խորհրդային Հայաստանի հանրապետության ներկայացուցիչը և Հայաստանի աշխատավորության անունից վողջունեց համադումարը:

— Քանաքեռում տեղի ունեցավ առաջին շաբաթորյակը:

24.—«Կոմունիստ»-ը հաղորդում է, վոր բանվորա-գյուղաշխական յերիտասարդ՝ կոմունիստների Յերեանի միությունը, կազմակերպչական աշխատանքներ տանելու համար, ընտրեց կազմակերպիչ բյուրո:

— «Կոմունիստ»-ը հաղորդում է, վոր Վաղարշապատում հիմք և գրված յերիտասարդ՝ կոմունիստների կազմակերպության՝ բաղկացած 25 ընկերներից: Կոմյերիտական բջիջներ են կազմակերպված Սամաղարում, Ալթաղում և Քյորիալիում: Բջիջներն ընդգրկում են 20-ի չափ յերիտասարդներ:

25.—Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեյի նախաձեռնությամբ Յերեանի յերկաթուղային կայարանում տեղի ունեցավ առաջին շաբաթորյակը, վորին մասնակցում ելին Յերեանի բանվորները, կուսակցական բջիջները և աշխատավորական խավերը:

26.—Յերեանի բոլոր թաղամասերում տեղի ունեցան բանվորների և աշխատավորների բազմամարդ միախճներ՝ նիմիրված Խորհրդային իշխանությանը բարոյական ու նյութական կոնկրետ ոժանդակություն ցույց տալու հարցին:

— «Կոմունիստ»-ը հաղորդում է, վոր Գիլիջանի շրջանի բոլոր գյուղերում վերակազմված և կազմակերպված են կոմունիստական բջիջներ, բացի և կուսակցական ակումբ՝ դաշնակերպությունից սպանված Յենքի, Վաղինակի և Ալեքսեյելի անվան:

— «Կոմունիստ»-ը հաղորդում է, վոր Կարմիր բանակի համար Մեհրաբլու գյուղի աշխատավորության կողմից նվիրաբերված ու Հավաքված պարենը սեփական միջոցներով փոխադրվեց Պամարլույի պահեստը:

27.—Սարդարաբատ կայարանում կազմակերպվեց կոմունիստական բջիջ՝ յերկաթզի հին կոմունիստներից:

28.—Դեկտեմբեր հրատարակվեց, ըստ վորի «բանվորա-գյուղաշխական աղքարնակության հողագործ և սակավահող մասը Հողարածիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ դրազիկ ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև հանրապետության բոլոր կարիքները բավարարելու համար արքունական,

նադելի, յեկեղեցական, վանքային, վակուֆային, մեջտային, իրավաբանական անձերի և մասնավոր հողերը գառնում են Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սեփականությունը»:

— Հրապարակվեց Հայկամկումի Կենտկոմի կոչ՝ ուղղված բոլոր կուսակցական կազմակերպություններին և ընկերներին: Կոչի մեջ ընդգծելով մոմենտի պատասխանատվությունը և նշելով գաշնակների կողմից պատրաստվող ընդհատակյա գավագրությունը, կենարոնական կոմիտեն կոչ և անում կուսակցական կազմակերպություններին՝ անշեղ ընթանալ Հոտեմբերյան Հեղափոխության գծած ուղիով, վորը Խորհրդային Խուսաստանի բանվորներին ու գյուղացիներին տվել և մեծամեծ Հաղթանակներ:

29.—Արհեստակցական միությունների կազմակերպիչ բյուրոն կոչ՝ հրապարակեց արհեստակցական միություններ կազմակերպելու մասին:

— ՀՍԽՀ ուղղմանողումի № 45 Հրամանով՝ Պարժողկոմատին կից կազմակերպվեց ուղղմական բաժին՝ Խորհրդային Հայաստանի գորքի պարենամորման գործով գրաղվելու համար:

— Յերեանի կոմյերիտմիության կազմակերպիչ բյուրոյի նախաձեռնությամբ գումարվեց թուրք կոմյերիտականների ժողով: Այս ժողովով Յերեանի կոմյերիտմիության կոմիտեյին կից հետնադրվեց թուրք կոմյերիտականների գրուպան:

— Ուլուխանի գումար տեղի ունեցավ չորս գյուղերի կոմբջիջների միացյալ նիստը, վորը քննեց գյուղական կուլակների և հակածեղափոխական ապրուերի պրովոկացիոն գործողությունների գեմ կոմիելու ձեռնարկումները:

30.—Պետականացվեց Շուսառվի գինու-կոնյակի և կոնսերվի գործարանները: Կոնսերվի գործարանը, նրան կցված հողամասավ, շինություններով, ինիենտարով և բոլոր շարժական ու անշարժ ունեցվածքով անցնում և Գյուղատնտեսական կոմիսարիատի տրամադրության տակ:

31.—Նախկին պառամենակի գահվեճում տեղի ունեցավ խորհրդային ծառայողների կարմիր պրոֆմիության ընդհանուր ժողովը:

— Լուսադոկոմատը № 1 Հրամանով արգելեց կրոնական ծեռակատարությունն ու կրօնական առարկաների դասավանդումը դպրոցներում: Նույն Հրամանով Հոգեմոր կոչում ունեցող անձանց արգելվեց դպրոցներում և կուլտուր-կրթական Հիմնարկներում պատունավարել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Յերկու խռոք	7
2. Յարիզմի լծի տակ	9
3. Փետրվարյան հեղափոխությունից հետո	14
4. Հոկտեմբերը և դաշնակց «պետականության» ձնունդը	18
5. Իմայերիալիզմը և դաշնակցական Հայաստանը	23
6. Անվերջ պատերազմներ ու չարդեր	33
7. Բանվորական հարցը դաշնակցական Հայաստանում	41
8. Դաշնակցության ագրարային-գյուղացիական քաղաքականությունը	49
9. Դաշնակցության «պետականության» «գոհարները»	57
10. Տնտեսական անկումը դաշնակցական Հայաստանում	65
11. Սով և մահ	71
12. Հեղափոխական շարժումները Հայաստանում մինչ մայիսյան ապստամբությունը	85
13. Մայիսյան ապստամբությունը	92
14. Հերոսական մայիսից դեպի Հաղթական Նոյեմբերը	103
15. Նոյեմբերյան հեղափոխությունը	110
16. Պայքարը Նոյեմբերից հետո	125

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ա) Դոկումենտներ	133
բ) Խրոնիկա	144

ՀՀ Ազգային գրադարան



NL0410901

13628

ԳՐԱԾ 2 Ռ. 50 Շ.